2820

491 99
Q - 13

1931

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԱԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

51

ՊՐՈՖ. Ս. ՍԻՒՂԱՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀՀՇՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՅԱՐԿԻ

Երևան — 1931

491.99
Q-14

2304

ՀՍՀՀ ԼՈՒՍԱԺՈՂՈՎՄԱՆ
ԳԻՏԱԽԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

91.99
-13

ՊՐՈՖ. Մ. ԱԲԵՂՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

491

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ
ՋԵՐԵՎԱՆ—1931

4 .03. 2014

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊԳԼԽ. 4096 (բ)
ՊԱՏՎԵՐ 2500
ՏԻՐԱԺ 1000

6015
38

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Այս աշխատանքը վաղուց պատրաստված եր և 1922–23 թ. միայն վերամշակված և Հայաստանի ՍԽՀ Համալսարանի համար: Վերնագիրը «Հայոց լեզվի տեսություն» ավելի ընդարձակ է, քան բերվողը կըգտնի այս գրքի մեջ. պակասում է սրա վեցերորդ մասը, «կապակցություն ձևերը» կամ «Շարահյուսություն», որ դեռ 1912 թ. տպագրված է առանձին՝ «Աշխարհաբարի շարահյուսություն» վերնագրով. որ և, թեպետ սպառված, հնարավոր չեղավ վերամշակելով նրա հետ ևորից հրատարակել: Մյուս կողմից՝ «Հայոց լեզվի տեսության» մեջ բավական տեղ է տրված ընդհանուր լեզվաբանական գիտելիքներին, վորոնք իմ կարծիքով անհրաժեշտ են հայերենի գիտական ուսումնասիրության համար: Բացի այդ՝ առանձնապես ընդարձակ է բազմաթիվ օրինակներով և բառակազմության մասը այն նկատմամբ, վոր վերջերս նորանոր բաներ են կազմվում: Զգետք է մոռանալ և այն, վոր այս աշխատանքը կատարված է նաև ուսանողների համար, ինչպես և իմ «Աշխարհաբարի շարահյուսությունը» իր ժամանակին կազմված է յեղել դպրոցի համար:

Մ. Ա.

1929 թ. հունվար 10:

Ա. ՌԱՋԻՆ ՄԱՍ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա.

ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *ԲԱՌԵՐԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։*— Մեր հոգևոր վիճակները՝ զգացումներն ու զվարճալարսիս մրտվերը հաղորդում ենք ուրիշներին և նրանցն ընդունում ենք դանդաղ միջոցներով, ինչպես՝ ժեստերով, միմիկայով և այլն։ Ամբերի փոխանակության ամենակատարյալ միջոցն է լեզուն կամ խոսվածքը, որի համար իրրև նշանակներ ծառայում են բառերը։ Մենք խոսում ենք բառերով։

Բառն է նշանակության ունեցող մեկ հնչյունը կամ մի քանի հնչյունների կապակցությունը։ Բառերի մեջ ամենից առաջ պիտի նկատի առնել յերկու կողմ. 1) բառերի հնչյունները և 2) բառերի նշանակությունները։

2. *ԲԱՌԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՈՒ ՁԵՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ ԲԱՌ ՅԵՎ ՁԵՎԱԿԱՆ ՄԱՍ։ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԱՆ ՄԱՍԵՐ ՅԵՎ ԱԾԱՆՅԱԿԱՆ ԲԱՌԵՐ։*—Բառերը, որինակ՝ սեղան, կարող են վերածվել լոկ հնչյունական մասերի, որ է՝ վանկերի՝ սեղան կամ հնչյունների՝ ս–ե–ղ–ա–ն։ Բայց չատ բառեր կարող են վերածվել նաև այնպիսի հնչյունական մասերի, որոնց յուրաքանչյուրն առանձին նշանակություն ունի։

Առնենք, որինակ, հետևյալ յերեք բառերը՝ քաղաքացի, քաղաքային, քաղաքիկ։ Այս բառերի մեջ գտնում ենք մի ընդհանուր հնչյունական մաս՝ քաղաք, որ և մեր գիտակցության մեջ վոչ միայն հնչյուններով, այլև նշանակությամբ նույն և յերեք բառերի մեջ էլ։ Ուրեմն և այդ բառերը բաժանվում են յերկերկու մասի՝ քաղաք–ացի, քաղաք–ային, քաղաք–իկ, որոնց յերկրորդ մասերը՝ ացի, ային, իկ վոչ հնչյուններով և վոչ նշանակությամբ չեն նույնանում։ Առնենք ուրիշ յերեք բառ էլ՝ քաղաքացի, գյուղա-

ցի, գավառացի: Այս բառերի մէջ ևս պահում ենք հնչյուններով և նշանակութեամբ մի ընդհանուր մաս՝ ացի, վորով այդ բառերն ևս բաժանվում են յերկերիկու մասի՝ քաղաք–ացի, գյուղ–ացի, գավառ–ացի: Այս բառերի ել առաջին մասերը՝ բաղաք, գյուղ, գավառ վո՛չ հնչյուններով և վոչ ել նշանակութեամբ չեն նուլնանում: Միմյանց հետ համեմատելով առաջին յերեք բառերի ընդհանուր մասի (բաղաք) և յերկրորդ յերեք բառերի ընդհանուր մասի (–ացի) նշանակութիւնները՝ տեսնում ենք, վոր առաջին յերեք բառերի ընդհանուր մասն իր հնչյուններով ու նշանակութեամբ նուլնանապես բաղաք բառի հետ, ցույց է տալիս մի վորոշ առարկա, ունի իրական կամ նյութական նշանակութիւն, համապատասխան իրական աշխարհի պատկերացումներին. իսկ յերկրորդ յերեք բառերի ընդհանուր մասը՝ ացի չունի նյութական, իրական նշանակութիւն, վորոշ առարկա չի ցույց տալիս, այլ միանալով բառերի առաջին մասի հետ, նրանց նշանակութեան մէջ փոփոխութիւն է մտցնում՝ ցույց տալով մի տեղում ապրող կամ մի տեղից ծագում ունեցող անձ:

Բառերի նյութական նշանակութիւնը ձեվափոխող այսպիսի ընդհանուր հնչյունական մասերի նշանակութիւնը կոչվում է ձեվական նշանակութիւն, ձեվական նշանակութիւն ունեցող բառամասն ինքը կոչվում է ձեվական մաս, իսկ իրական կամ նյութական նշանակութիւն ունեցող բառամասը՝ բառի բուն:

Այսպիսի ձեվական մասերով կազմվում են բառերի բնաիից նոր բառեր, վորոնք այլևս նուլն նշանակութիւնը չունեն, ինչ վոր բնիկը, այլ ցույց են տալիս մի ուրիչ զաղափար, մտքի մի ուրիչ առարկա: Որինակ՝ բաղաք բառի նշանակութիւնն ացի, ային, իկ ձեվական մասերով այնպես է փոխվում, վոր բաղաքացի բառն այլևս քաղաք չի ցույց տալիս, այլ քաղաքում ապրող կամ քաղաքից ծագում ունեցող մի անձ, բաղաքային՝ քաղաքում յեղած կամ քաղաքի վերաբերյալ (մի բան), իսկ բաղաքիկ, նշանակում է վոչ թե քաղաք, այլ վոքր քաղաք: Դրանք բոլորովին տարբեր բառեր են տարբեր նշանակութեամբ, դրա համար և այնպիսի ձեվական մասերը, վորոնցով կազմվում են տարբեր նշանակութեամբ նոր բառեր, կոչվում են բառակազմութեան ձեվական մասեր (մասնիկներ) կամ ածանցներ (ածանցական մասնիկներ), իսկ նրանցով կազմված բառերը կամ ձեվերը՝ բառակազմութեան ձեվեր կամ ածանցական բառեր:

3. ԲԱՌԱՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿԱՆ ՄԱՍԵՐ ՅԵՎ ԲԱՌԱՁԵՎԵՐ:—Առնենք մի ուրիչ շարք բառեր՝ քաղաքի, քաղաքով, քաղաքում: Այստեղ ել այս բառերի բունն է բաղաք, վորի մէջ է նրանց նյութական նշանակութիւնը, իսկ ձեվական մասերն են՝ ի, ից, ով, ում, վորոնք ավելանալով բաղաք բնի վրա՝ ձեվափոխում են նրա նշանակութիւնը և կազմում նոր բառեր: Բայց այս ձեվափոխութիւնն իր բնավորութեամբ տարբեր է նախորդից: Մինչդեռ բառակազմութեան ձեվական մասերով կազմված ածանցական բառերը տարբեր նշանակութիւն ունեն, քան իրենց բնիկը,—քաղաքացին այլևս քաղաք չէ, այլ տարբեր առարկա,— այս յերկրորդ տեսակի ձեվական մասերով կազմված բառերի նշանակութիւնը չի փոխվում, և նոր բառերը նոր զաղափարներ կամ մտքի նոր առարկաներ չեն ցույց տալիս, այլ նուլն զաղափարը, ինչ վոր այդ բառերի բունը՝ բաղաք: Որինակ՝ յերբ ասում ենք՝ յես (Յերևան) բաղաքում եմ կենում, (Յերևան) բաղաքի տները, նա (Յերևան) բաղաքից հեռացավ, այս բաղաքից, բաղաքի, բաղաքում բառերը նշանակում են նուլն առարկան, նուլն զաղափարը, ինչ վոր բաղաք բառն է ցույց տալիս:

Այս յերկրորդ տեսակի ձեվական մասերը՝ ի, ից, ով, ում միանալով մի առարկայի անվան՝ վոչ թե նոր նշանակութեամբ բառեր են կազմում, այլ ցույց են տալիս միևնույն առարկայի վերաբերմամբ՝ խոսքի կամ խոսքի մասերի կապակցութեան մէջ: Ուստի և այս բաղաքի, բաղաքից ... բառերի ի, ից, ով, ում ձեվական մասերի ձեվական նշանակութիւնը, նրանց ցույց տված հարաբերութիւնը պարզ կերպով յերևան է գալիս, յերբ դրանք առում են վոչ թե առանձին, այլ խոսքի մէջ ուրիչ բառերի հետ կապակցված:

Առնենք մի ուրիչ շարք բառեր ևս՝ տեսա, տեսար, տեսավ, տեսանք, տեսաք, տեսան: Այս բառերի ընդհանուր մասն է տես, վոր բոլորի մէջ ել ցույց է տալիս միևնույն նյութական նշանակութիւնը—տեսնելու գործողութիւնը: Ձեվական մասերը՝ ա, ար, ավ, աիք, աք, ան ավելանալով «տես» բնին՝ սրա նշանակութիւնն այնպես չեն ձեվափոխում, վոր մի նոր գործողութիւն ցույց տան. այլ «ա» ձեվական մասն ավելանալով «տես» բնին՝ ցույց է տալիս, վոր տեսնելու գործողութիւնը մի անցած

ժամանակակիտում վերապրվում է առոչին գեմքին (խոսող անձին), «ար» ձեվական մասն ավելանալով նույն «աես» բնին՝ ցույց է տալիս, որ նույն աեսնելու գործողությունը մի անցած ժամանակակիտում վերապրվում է չերկրորդ գեմքին (խոսակից անձին)։ Այսպես և մյուս ձեվական մասերը. պրանցով կազմված նոր բառերի համար ես հետևյալ աեսնելու գործողություններ։

Մի անգամ որ այս չերկրորդ աեսակի ձեվական մասերով կազմված նոր բառերը նույն դաղափարն են նշանակում, ինչ որ պրանց բուները, այդ պատճառով պրանք սովորաբար նոր բառեր չեն համարվում, այլ բառի փոփոխված ձեվեր։ Ուստի և այս չերկրորդ աեսակի ձեվական մասերը կոչվում են բառափոխության ձեվական մասեր (մոռնիֆներ) կամ վերջավորություններ, իսկ նրանցով կազմված ձեվերը՝ բառափոխության ձեվեր կամ բառաձեվեր։ «Բառափոխություն» բառը վոխանակ գործածվում է նաև բառերի գեհում, իսկ բառափոխության ձեվերը կոչվում են նաև գեհման ձեվեր, չերբեմն նաև շարահյուսական ձեվեր. վորովհետև, ինչպես ասվեց, պրանց նշանակությունը վորոշ կերպով չերևվում է բառերի կապակցության կամ խոսքի չարահյուսության մեջ։

4. ԱԺԱՆՅԱԿԱՆ ՅԵՎ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲՆԵՐ։ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԵՐ ՑԵՎ ԲԱՌԵՐԻ ԱՐՄԱՏՆԵՐ։—Վորպեսզի մեր պլուսակցության մեջ բառը բաժանվի բնի և ձևական մասի, պետք է նույն բուներ նույն նշանակությամբ կամ մենակ գործածվելիս լինի իրրև անկախ բառ, կամ չերևման գա նաև ուրիշ ձևական մասեր ունեցող ուրիշ բառերի մեջ։ Որինակ՝ գեղեցիկ բառն ածանցական է, բաժանվում է գեղ բնի և եցիկ ձևական մասի, վորովհետև կա գեղ բառը, վորից՝ իրրև բնից՝ ածանցվում է վոչ միայն գեղեցիկ այլև գեղանի, գեղավոր, գեղուհի։ Ածանցական է նաև նավակ, վորի բունն է նավ, վորից՝ նավակ, նավակաև, նավել, նավորդ։ Ածանցական է նույնպես սեռնչելի բառը. վորովհետև թեպետ չկա առանձին «սքանչ» բառ, բայց կան նաև սեռնչական, սեռնչանիվ, սեռնչացում, սեռնչանալ և այլն։ Իսկ, ընդհակառակն, դանակ բառը չենք կարող բաժանել բնի և ձևական մասի, վորովհետև թեպետ և ակ մասը գտնում ենք «նավակ», «անակ» և բազմաթիվ ուրիշ բառերի մեջ, բայց սրդի լեզվի մեջ չկա,

«դան» բառ «գանակ» նշանակությամբ և վոչ էլ այդ «գան» մասից՝ իրրև բնից՝ ուրիշ բառեր կան կազմված ուրիշ ածանցներով։ «Դանակ» բառն ուրեմն այժմ մեր լեզվական զգացումով չենք կարող համարել ածանցված, այլ բնի՝ «ակ» ձևական մասով կազմված բառ։ Նույնպես ավանակ բառը կարելի չէ բաժանել «ավան» բնի և «ակ» ձևական մասի, վորովհետև թեպետ մեջ կա ավան (գյուղ) բառը, բայց դա իր նշանակությամբ վոչ մի կապ չունի ավանակ (էշ) բառի նշանակության հետ։

Առնենք հետևյալ բառերը՝ մեծություն, բախտավորություն, գյուղացիություն. սրանց ծանոթ «ություն» ածանցն անջատելուց հետո՝ առանում ենք մեծ, բախտավոր, գյուղացի բները։ Այդ, այս բներն իրար հետ համեմատելով, առնում ենք, վոր «մեծ» բունն այնպիսի չի, վոր այլևս չի կարող բաժանվել մի բնի և մի ծանոթ ածանցական մասի. իսկ «բախտավոր», «գյուղացի» բները կարող են իրենց կազմից վերացվել ծանոթ «ավոր», «ացի» ածանցներին, վոր գտնում ենք բազմաթիվ ուրիշ բառերի մեջ էլ, և բախտ, գյուղ բներին։ Իսկ այդ վերջին երկու բներն այլևս չեն կարող բաժանվել մի բնի և մի ձևական մասի։ Այստեղից առնում ենք, վոր բառերները լինում են երկու առակ՝ 1. ածանցական բներ, վորոնք իրենց կազմից կազմված են մի բնից և մի ձևական մասից (լինի ածանց թե վերջավորություն), և 2. նախասիպ կամ արմատական բներ, վորոնք այլևս չեն վերածվում բնի և ձևական մասի։ Այս չերկրորդ առակի բները կոչվում են նաև բառերի արմատներ, վորոնց մեջ և պարունակվում նույն իմաստի պատկանող բառերի պլուսավոր նշանակությունը։

Արմատներ կան, վոր լեզվի մեջ գործածվում են իրրև առանձին անկախ բառեր, վորոնք կոչվում են պարզ կամ արմատական բառեր, ինչպես որինակ՝ բախտ, նավ, մեծ և այլն։ Արմատներ էլ կան, վոր չեն գործածվում իրրև առանձին բառեր, այլ միայն միացած ուրիշ բառերի կամ ձևական մասերի հետ, ինչպես որինակ՝ չկա մենակ գործածվող «հե» բառ, բայց սրանից, իրրև մի արմատական բնից, առնենք ձևական մասերով կազմված՝ հիանալ, հիացում, և ուրիշ բառերի հետ բազադրված՝ հիասթափվել, հիասքանչ։

Բառերի արմատները վորոշելիս պետք է միշտ նկատի ունենալ լեզվի պարզացման չրջանները, վորովհետև լեզուն միշտ փոփոխա-

վում է, ուսաև ինչ վոր արդի լեզվի մեջ արմատ է, լեզվի մի անցյալ շրջանում կարող է մի ածանցված բառ լինել. ինչպես օրինակ՝ «դանակ» բառը, ինչպես տեսանք, այժմ այլևս մեզ համար ածանցական բառ չէ, այլ մի արմատական բառ, քանի վոր մեր լեզվի մեջ այժմ «դան» բառ չկա «դանակ» նշանակությամբ և «դանակ» չի նշանակում վոքը դանակ, ինչպես վոր յեղել է հին լեզվի մեջ, յերբ անկախ գործածվելիս և յեղել «դան», վորից «դանակ» ածականը:

Բացի մեր լեզվի դանագան շրջաններից նկատի ունենալուց՝ պետք է տարբերել նաև հայերենի արմատները լեզվարանական կամ սկզբնական արմատներից, վորոնք առացվում են հնդեվրոպական լեզուների համեմատությամբ և մեր լեզվի ու սրան ցեղակից լեզուների հնագույն բաղադրիչ մասերն են: Ինչպես վոր մի բառ կարող է այժմ դադարել իբրև պարզ բառ, բայց հին լեզվի մեջ կարող է պարզ չլինել,—նույնպես և ինչ վոր հայերենում կարող է պարզ լինել, լեզվաբանորեն կարող է ածանցված լինել: Հայերենի տեսակետով արմատ և պարզ կամ արմատական բառ և ամեն բառամաս կամ բառ, վոր առացվում է բոլոր ձևական մասերը դուրս ձգելուց հետո և վորի ինչ մասերից կազմված լինելն այլևս հայերենով միայն չի իմացվում և վոր բառ յերևակայելին վոչ մի ուրիչ բառից կամ մասից չի կազմված:

Լեզվի մեջ նոր արմատներ այլևս չեն առաջանում, բացի նմանաձայնության կամ բնաձայնության արմատներից, ինչպես՝ դլաղ, դռռալ և այլն, վորոնց կազմությունը դեռ ևս կենդանի է՝ բնության թոդած անմիջական ապավորության տակ. այլ յեղած արմատներից և բառերից, վոր հայերենին անցել են հնդեվրոպական նախալեզվից կամ առնվել են ուրիչ լեզուներից, կազմվել են և կազմվում են նոր բառեր:

5. ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ:—Բառաձևերը կան մարդկային լեզուների մեծ մասի մեջ: Կան լեզուներ, վորոնք վոչ մի բառաձև չունեն («արմատական» կոչված լեզուները). կան լեզուներ էլ, վորոնց մեջ բառաձևերը համեմատաբար պակաս են, քան ուրիշների մեջ: Բառափոխության ձևերով արտահայտված հարաբերությունները այսպիսի լեզուների մեջ արտահայտվում են ուրիշ միջոցներով — բառերի կապակցության ձևերով, ինչպես են՝ բառերի չարադասության, բառերի համաձայնության, դլխավոր և յերկրորդական շեշտերի դրության, բառաշեշտերի տարբերության և այլն: Վորքան հարուստ է մի լեզու բառաձևերով, այնքան պակաս կարիք ունի այսպիսի կապակցության ձևերին, և ընդհակառակն, վորքան քիչ են մի լեզվի բառաձևերը, այնքան ավելի նշանակություն ունեն կապակցության այս ուրիշ յեղանակները: Առնենք մի օրինակ:

Ֆրանսերենում չկան գոյական անվան բառաձևեր կամ հոլովներ. դրանց պաշտոնն արտահայտում է կա՛մ նախդիրներով, կա՛մ բառերի վորոշ և անփոփոխ դասավորությամբ. օրինակ՝ յենթակայի և կրող խնդրի հարաբերությունները իմացվում են միայն նրանով, վոր յենթական դրվում է բայից առաջ, իսկ խնդիրը հետո. Pierre aime Paul, «Պետրոսը սիրում է Պողոսը», այսինքն՝ Պետրոսը սիրում է Պողոսին. Paul aime Pierre «Պողոսը սիրում է Պետրոսը», այսինքն՝ Պողոսը սիրում է Պետրոսին: Մեր լեզվի մեջ յենթակայի և կրող խնդրի համար այսպիսի հատուկ դասավորության կարիք չկա, վորովհետև յենթակայի և կրող խնդրի հարաբերությունները արտահայտվում են վորոշ բառաձևերով: Ուսաև հայերենում յենթակայի և խնդրի դասավորությունն ազատ է և հնարավոր է վոչմիայն «Պետրոսը սիրում է Պողոսին» ձևով, այլև «Պողոսին սիրում է Պետրոսը» «Պողոսին Պետրոսը սիրում է», «Պետրոսը Պողոսին սիրում է», «սիրում է Պետրոսը Պողոսին», վորոնց բոլորի մեջ Պետրոսը յենթակա է, իսկ Պողոսը՝ կրող խնդիրը: Ֆրանսերենում, քանի վոր չկա բառաձև, բառերի դասավորության կարգն ունի ձևական նշանակություն. ուսաև անհնարին է յենթակայի և խնդրի դասավորության տեղի այսպիսի փոփոխություններ:

Հայերենում էլ, սակայն, կան դեպքեր, վորոնց մեջ յենթական և խնդիրն առանձին բառաձևերով չեն արտահայտվում և վորովհետև յենթակայի և խնդրի համար հատուկ բառապատությունը չկա, ուսաև այդպիսի դեպքերում թյուրիմացություն է առաջ գալիս. ինչպես՝ «քարը կտրեց փայտը», «նպատակն արդարացնում է միջոցը»: Այս խոսքերի մեջ կապակցության ձևերից չի հասկացվում, թե ինչն է ինչով կտրվել, ինչն է ինչով արդարացվում: Այսպիսի դեպքերում կա՛մ մտքից դուրս իմանում ենք, թե վորն է յենթական և վորը կրող խնդիրը, կամ թե խոսքն ուրիշ ձևերով ենք կազմում: Արեվմտյան գրական լեզ-

վի մէջ, քանի մը ամէնէն հաճախ են առաջ դալիս այսպիսի յեղափոխական կամքաւթիւններ, որդեն ձգտում կա յենթական խոսքի սկզբում դնելու, ինչպես ֆրանսերէնում է:

6. ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ:— Ամեն լեզուի մէջ լեզուական բոլոր իրակաւթիւնները (ֆակտները), այդինքն հնչիւնները, բառերի նշանակաւթիւնները և բառերի կապակցութեան, բառակազմութեան ու բառափոխութեան ձևերը մշտ որևէնիներով միշտ և անընդհատ փոխոխում են խոսողների բանին խոսողների կամքից բոլորովին անկախ: Այդ փոխոխութիւնը, սակայն, այնքան դանդաղ և կաստիճում, որ խոսողների համար անդգալի յի մնում. միայն առանձին անհատներ, որ սուր զգաստութիւն ունեն և հետաքրքրվում են լեզուով, նուիրական և մասնագէտ գիտնականները, նկատում են լեզուի մէջ իրենց կարճ կյանքի ընթացքում տասը փոխոխութիւնները: Մարդկանց մեծ մասն ուշադրութիւն չի դարձնում իրենց խոսած լեզուի փոխոխութեանը: Յերկար ժամանակ և նուիրիսկ դարեր անցնելուց հետո միայն՝ փոխոխութիւնն այնքան մեծ և լինում, որ լեզուի հին և նոր ձևերը խոսա տարբերվում են իրարուց:

Այսպիսի փոխոխութեան հետևանքով՝ այժմ առանց առանձնագես սովորելու՝ այլևս չենք հասկանում մեր հին լեզվով գրված գրքերը, չնայելով որ գրաբարը կազմում ենք մշտ հին արտասանութեան համեմատ, այլ մեր արդի արտասանութեամբ. օրինակ՝ հին լեզուի «ևկեալ է նա ի տունն» խոսքն այժմ տալիս ենք՝ «նա յեկել է տուն», «եկեալ է» բայի հնչիւնները, ուրեմն, փոխվել են և «ի» նախդիրը նոր լեզուից դուրս է ընկել: Նուիրական մեծ փոխոխութեան և յենթարկված յերեք բանից կազմված այս կապակցութիւնը՝ «բանք հարցն մերոց», որ աշխարհաբար լինում է՝ «մեր հայրերի խոսքերը»: Նախ՝ քանի բառ ունէ անցել և խոսք բառը, իսկ քանի բառն աշխարհաբարում նշանակում է գրիչ և միայն մտոչ կապակցութիւնների մէջ պահում է իր հին խոսք նշանակութիւնը, ինչպես՝ «բան եմ առում» և բարդութիւնների մէջ, ինչպես՝ «հոգեբանութիւն» և նմանները: Ապա հոդնակին կազմվում է մշ թիւ «ք», այլ «եր» վերջավորութեամբ, նուիրական հայր բառի հոդնակի սեռականը մշ թիւ հարց ձևով է լինում, այլ հայրերի. «ն» հոդն էլ դրվում է մշ թիւ սեռականի վրա, ինչպես պրաբարում է, այլ սեռականի

հոդը դրվում է միայն մշ թիւ «ն» է, այլ «ը» (խոսքը): Յեվ վերջապես սեռականն ընկնում է իր հոդից առաջ, ինչպես և մեր առաջական ածականն իր գոյականից առաջ է դրվում, այն էլ անփոփոխ ձևով, մինչդեռ պրաբարում թիվով և հոլովով համաձայնում է իր գոյականին:

7. ԻՆՉԻՑ Է ԱՌԱՋԱՆՈՒՄ ԼԵԶՎԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ:—Կարելի չէ մերժել անհատների վիճակագրաբար մտցրած փոփոխութիւնները. քերականութիւնն ու բառարանները չարունակ աշխատում են գրական լեզուի ճշտման ու կանոնավորման համար: Բայց դա շատ փոքր նշանակութիւն ունի, և նրանք խիստպես մշ թիւ առնդապարծում են, այլ գլխավորապես ճշտում ու կանոնավորում են մտոչև լեզվական իրակաւթիւն, որի մէջ կիրառութիւնը առաջանում է: Նուիրական և պետութիւնների քաղաքականութիւնն ու պարտմածները առնդվում, կանոնավորվում և հարստանում են մասնագէտների ձեռով, ինչպես և առանձին անհատներ առնդում են ուրիշ նոր բառեր ու պարտմածներ, որ ընդհանրանում են լեզուի մէջ: Բացի այդ՝ լեզուի փոխոխութեան մեծ պարծոններից մեկն և նաև առաջ լեզուների ազդեցութիւնը, որի մասին ներքեվում կիրառվի: Բայց այդ ամենը չատ չնչին և լեզուի այն դանդաղ, ակամա և անդիտակից փոխոխութեան դիմաց, որին չարունակ յենթարկա յեն լեզուի բոլոր իրակաւթիւնները:

Այս փոխոխութեան իսկական պատճառն ուրիշ բան չէ, բայց եթե լեզուի սովորական գործունեութիւնը, որով սովորում և գործածում ենք լեզուն: Այսպես արդեն չկա մտոչև պետական նպատակ, բացի վայրկյանի կարիքից, որ և՝ գանկութիւններն ու մտքերը հասկանալի գարձնել ուրիշին: Լեզուի այս սովորական կիրառութեան, սովորական կենդանի խոսակցի ժամանակ ահա ծագում են լեզվական նոր ձևերը, և ինչպես օրգանական բնութեան գարգացման մէջ, նուիրական և լեզուի գարգացման մէջ ծագած նոր լեզվական իրակաւթիւնների ավելի կամ պակաս նպատակահարմարութեամբ վարքվում և նրանց պահպանութիւնը լեզուի մէջ կամ կորուստը: Ուսան լեզուի գարգացումն, այդինքն նրա կրած փոխոխութիւնները ըմբռնելու համար՝ պետք է ամենից առաջ ուսանել, թե ինչպես ենք սովորում խոսել, և ինչպես և ընթանում խոսակցի գործունեութիւնն ընդհանրապես:

Բ.

ԽՈՍՎԱԾՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

8. ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ ՅԵՎ ԻՐԵՆՑ ԶՈՒԳՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ։— Ուրիշի խոսքը հասկանալու և խոսելու հոգեկան գործունեությունն ամբողջ հիմնված է մտապատկերների կամ պատկերացումների գոյության վրա, որի ուսումնասիրությունը հոգեբանության խնդիրն է։

Մեզ շրջապատող արտաքին առարկաները մեր զգայարանների վրա թողնում են տպավորություններ, որ նյարդերի միջոցով հաղորդվում են ուղեղին։ Այս բնախոսական լեզվությունը—զրկանների իրրև հետեվանք մեր մեջ ունենում ամենապարզ հոգեկան լեզվությունը կամ գործողությունը, այն է՝ զգայությունները (գույնի, ձեվի, տաքության և այլն)։ ուշադրության գոյանալով զրանք՝ մենք գաղափար ենք, թե այդ զգայություններն ծագում են այս կամ այն առարկայից, որին և վերագրում ենք այնքան հատկանիշներ, քանի տեսակի զգայություններ որ ունենում ենք մեր մեջ։ Դրա հետեվանքը լինում է այն, որ մենք նմանում կամ ճանաչում ենք արտաքին առարկան կամ նրա գոյությունը։ Այս նմացման կամ ճանաչման գործողությունը կոչվում է ըմբռնում։ Որինակ՝ լսանից լեկած լսյալ լսանին նայողի տեսողության զգայարանի մեջ հարուցանում է վերջ զրկիններ, որ նյարդերը հաղորդում են ուղեղին. զրան իրրև հետեվանք՝ նայողն ունենում է զանազան զգայություններ գույնի, ձեվի, մոմի կեսերի և այլն մասին, և նա ուշադրության զարձնելով զրան՝ ճանաչում կամ ըմբռնում է այդ զգայությունների ամբողջը—լուսինը։

Այսպես և խոսողի խոսքի օրգանների չարժումներն առաջացնում են ոչ միայն ուրիշների—ձայնի առաջացումներ։ Սրբանք լսողի լսողության զգայարանի մեջ հարուցանում են վերջ զրկիններ, որ նյարդերի միջոցով հաղորդվում են ուղեղին և առաջ բերում լսողի մեջ լսելիքի զգայությունների մասին, ապա և լսողն ուշադրության զարձնելով զրան՝ ունենում է լսած հնչյունների ըմբռնումը, որ կարևոր նշանակություն ունի լեզվի տեսակետից։

Արտաքին առարկաներից առացած զգայությունները յերբեք միմյանցից չոկ և առանձին—առանձին չենք ունենում, այլ մի չարք զգայություններ միասին, և այսպես միայն մեկնաբանի զգայարանի զգայություններ, այլ սովորաբար նաև մի քանի զգայարանների։ որինակ՝ խնձորից կարող ենք ունենալ զգայություններ՝ տեսողության (գույն, ձեվ), հոտառության (հոտ), ճաշակելիքի (համ), չոչափելիքի (կոշտություն, կակուղություն), որոնց բոլորի հետեվանքը միասին լինում և այդ առարկայի ըմբռնումը։

Բացի մեր հինգ զգայարանների միջոցով ունեցած զգայություններից, ունինք նաև ներքին օրգանական զգայություններ ու ըմբռնումներ, ինչպես են՝ մարսողության, արյան շրջանառության, մկանների կծկման և այլն։ Այսպես որինակ՝ խոսելիս չարժվում են խոսողի խոսքի գործարանները (լեզու, շրթունք, կոկորդ և այլն)։ խոսողն այս չարժումների իրրև հետեվանք ունենում է որոշ զգայություններ, ապա և ըմբռնումներ խոսքի գործարանի վրայի մկանային չարժումների մասին։ Դա ևս կարեվոր նշանակություն ունի լեզվի տեսակետից։

Մի անգամ ունեցած զգայություն կամ ըմբռնումը յերբեք անհետ չի կորչում, այլ պահվում է մեր մարդի մեջ և կարող է վերարտադրվել այն ժամանակ, յերբ չկա այն առարկան, որից առացել ենք զգայությունը։ Զգայության կամ ըմբռնումի այս պահի նորոգումը մեր մեջ՝ կոչվում է մտապատկեր կամ պատկերացում (կամ գաղափար)։ Որինակ՝ մենք կարող ենք վերարտադրել կամ պատկերացնել մի վորևե ձայն, հնչյուն, որ առաջ լսել ենք, այսպես և մեր տեսած մի առարկա, մի ծանոթ անձ, մեր տեսած մի վերջալույս, մեր կերած մի քանի հոտը, համը, և այլն։ Ձեվ վերջապես կարող ենք պատկերացնել նաև մեր ներսում տեղ ունեցած զգայությունները, որինակ՝ աչքերի կայծը, որ մենք ունեցել ենք մի որ մեր աչքերի մի բանի պիսկելուց, ականջի զոռոցը, նույնիսկ մեր մարմնի մի մասում ունեցած ցավը։

Առարկայի մտապատկերը (գաղափարը) չպիտի չփոթել առարկայի իրեն հետ. առարկան մեզնից դուրս է, իսկ մտապատկերը կամ պատկերացումը գիտակցում ենք միայն մեր մեջ՝ հիշելով մեր առաջուց գիտած առարկան։ Նույնպես չպիտի լսելու հետ չփոթել առարկայի ըմբռնումն ու պատկերացումը. ըմ-

ֆլյունամը տեսի չի ունենում մեր մեջ անմիջապես, երբ պիտում ենք վարեի բան, մինչդեռ պատկերացումը ծնվում է մեր մեջ այն ժամանակ, երբ աստիկան այլևս մեր աչքի առջեվ չե. այլ առաջ, նույն իսկ աստիճներ առաջ ենք տեսել, լսել, չուշափել և այլն: Որինակ՝ երբ նայում և տեսնում ենք Մասիս սարը, մենք ունենք նրա պատկերացումն, ապա և ըմբռնումը. իսկ երբ Մասիսը մեր աչքի առաջ չե, քանի որ տեսել ենք այն, մեր մտքում պատկերացնում ենք կամ, ինչպես ասում են, մտքով տեսնում ենք այդ լեռը: Այդ ժամանակ մենք ունենք դրա մտապատկերը կամ պատկերացումը:

Ապա գործում աստիկան և աստիկայի ըմբռնումն ու պատկերացումը չպիտի չխոթել բառերի, այսինքն աստիկայի անվան հետ: Սեղան աստիկան, որինակ, աստառին աշխատելի մի կարանիք և, որ կարող ենք տեսնել, չուշափել և նրա ըմբռնումն ունենալ: Ապա կարող ենք տեղան աստիկան հիշելով՝ ունենալ նրա պատկերացումը, որ որչ տեսնել և որչ չուշափել կարող ենք և որչ էլ լսել: Իսկ «տեղան» բառը հինգ հնչյուններից կազմված մի կապակցություն է միայն, որ որչ տեսնել կարող ենք և որչ չուշափել, բայց մենք լսում և ստառանում ենք և ունենում նրա ըմբռնումը և ապա կարող ենք այդ հնչյունների հիշելով՝ ունենալ նրանց պատկերացումը, որ անկախ է տեղան աստիկայի պատկերացումից: Թե աստիկայի անվան և աստիկայի պատկերացումները ստորեր և անկախ են, այդ չատ պարզ յերևում է նրանից, որ մենք հաճախ կենդանի կերպով պատկերացնում ենք մի աստիկա, մի մարդ, նույն իսկ նկարագրում ենք աստիկան, պատմում ենք նրա մասին, բայց անունը չենք հիշում և ասում ենք՝ «ես երբ», կամ ասում ենք՝ «անունը լեզվիս ծայրին է, բայց միտս չի գալիս»: Կան և չատ աստիկաններ, որ մենք տեսնում ենք և ունենում ենք նրանց մտապատկերները, բայց նրանց անուններն չգիտենք կամ նույն իսկ լեզվի մեջ նրանց համար անուն չկա:

Պատկերացումները կարող են պարզ և բարդ լինել, որինակ՝ մեկ դույնի պատկերացումը պարզ է, բայց մի վարեի աստիկայի պատկերացումը բարդ է, կազմված լինելով մի չարք պատկերացումներից, ինչպես՝ մի ծառի պատկերացումը բարդ է, կազմված լինելով բնի, ճյուղերի, տերևների և այլ պատկերացումներից: Նույն իսկ [illegible] մասնավորը մի մասի, որինակ մի տերևի պատկերացումը նույնպես բարդ է, քանի որ մենք միաժամանակ ունենում ենք այդ մի տերևի մեծության, ձևի, գույնի, կոթի և այլ պատկերացումները:

Յերբ մի ըմբռնում ենք ունենում, կամ մեր պատկերացումներից մեկը վարեի պատճառով վերարտադրվում է, այսինքն յերևան և գալիս մեր մտքի մեջ, դա իր հետ, այսպես ասած, բերում աստղ և բերում մի ուրիչ պատկերացում: Ուրիչ խոսքով, ամեն պատկերացում վերարտադրվում է կապվելով մի ուրիչ պատկերացման հետ: Պատկերացումների այս միացումը հոգեբանության մեջ կոչվում է պատկերացումների (մտապատկերների) զուգորդություն, հաճախ նաև գաղափարների զուգորդություն:

Պատկերացումների զուգորդությունը պատահական չի լինում, այլ կատարվում է կամ նմանության, կամ կցորդության: Նմանական զուգորդությամբ մի ըմբռնումին կամ պատկերացումին հետևում է մի ուրիչ պատկերացում, որ վարեի նմանություն ունի առաջինի հետ. որինակ՝ մի կարմիր գնդակի տեսքը կամ պատկերացումը կարող է մեր մեջ վերարտադրել մի կարմիր խնձորի պատկերացում, որ իր գույնով ու ձևով նման է կարմիր գնդակին: Լուսնին նայելով կարող ենք հիշել մի բոլորակ մակերեվույթ, մի ափսե (տեպսատակ): Կցորդական զուգորդությամբ աստղին պատկերացման կամ ըմբռնումի հետ միացած վերարտադրվում է այնպիսի մի պատկերացում, որ աստղ ունեցել ենք աստղինի հետ միաժամանակ, կամ անմիջապես նրանից հետո, կամ միևնույն պարագաների ու չրջապատի մեջ: Այսպիսի ըմբռնումները մեր մտքում պահվում են իրար հետ սերտ կապված և յերբ նրանցից մեկը կրկնվում կամ վերարտադրվում է, յեռևելից վերարտադրվում է նաև իր հետ կցված պատկերացումը: Որինակ՝ մի ծանոթ տան պատկերացումը, կամ ըմբռնումի կրկնությունը մեզ հիշեցնում է այդ տան մեջ մի ժամանակ բնակվողին, վերջինիս հետ զուգորդված վերարտադրվում է մեր մտքի մեջ մի ուրախ յերեկոյի պատկերացում, որ մի ժամանակ միասին ունեցել ենք այդտեղ. դա հիշեցնում է մեզ մեր ընկերներից մեկին, որ մասնակից է յեղել այդ յերեկոյին և այլն:

Հաճախ այս յերկու սեռակի՝ նմանական և կցորդական զուգորդությունները սերտ չեն ունենում միմյանց հետևից վրա-

60/55
38

վոխ, այլինքն պատկերացումների զուգորդությունը կատարվում է մերթ նմանությամբ, մերթ կցորդությամբ. օրինակ՝ կարմիր խնձորը կարող է հիշեցնել մեզ կարմիր գնդակ, գնդակը հիշեցնել մի մանկական խաղ, իսկ վերջինս՝ մեր մանկական խաղընկերներից մեկին և այլն: Նույնպես մեր տեսած վտակը հիշեցնել մի ուրիշ վտակ, վերջինս կարող է մեզ մեջ վերարտադրել մեր մի ժամանակ տեսած մի հրվեհ. վերջինս կարող է հիշեցնել մի մոր հիշ, այս հիշը այն յերեխային, որը հրվեհի վտանգի մեջ եր. այս յերեխայի պատկերացումը հիշեցնել մի ուրիշ յերեխայի, այս յերեխան էլ՝ իր հորը, սա էլ՝ իր հեղինակած գործը, այս գործն էլ՝ մեր մի ընկերին, որի հետ մի ժամանակ միասին կարդացել ենք, այս կարդալու գործողությունն էլ՝ այն քաղաքը, ուր կարդացել ենք: Յեվ այսպես յերկար շարքով մի պատկերացման հետ զուգորդվում է մի ուրիշը, և մենք սովորաբար չենք էլ նկատում, թե ինչու մեր մտքի մեջ մի պատկերացումով վերարտադրվում է մի ուրիշը:

Յերբ յերկու պատկերացում հաճախ կրկնվում են իրար հետ կապված, այդ ժամանակ դրանց զուգորդությունը սերտ է լինում և հեշտությամբ է մի պատկերացման հետ մեացած յերեվան գալիս մյուսը: Նույնպես հեշտությամբ է վերարտադրվում և այն պատկերացումը, որից մարդ սոսկիք ազդվում է. որովհետև՝ մահվան առաջ միշտ հիշում ենք մեր սիրելիների մահը: Իսկ, ընդհակառակն, կյանքի մեջ մեկ անգամ միայն պատահած մի աննշան գործ, մի առարկա, որ մեր ուշադրությունը չի գրավել առանձնապես, թույլ կերպով է զուգորդվում ուրիշ պատկերացումների հետ և թույլ կերպով է յերեվան գալիս մեր հիշողության մեջ, կամ նույնիսկ յերեվան չի գալիս. ինչպես օրինակ՝ մենք սովորաբար չենք հիշում այն անձերին, որոնց պատահաբար հանդիպել ենք կարճատև ժամանակով:

9. ԼԵԶՎԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶՈՒԳՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:—Լեզվի սեռակիսից, ինչպես սեռանք, կարևոր նշանակություն ունեն լսելիքի պատկերացումները խոսքի հնչյունների վերաբերյալ, ինչպես և խոսքի գործարանների մկանային չարժման պատկերացումներն ու ըմբռնումները, որ ունեն նույնպես զուգորդվում են այդ հնչյունները արտասանելիս. հետևաբար կարևորություն ունեն նաև հնչյունների ու խոսքի գործարանի մկանային չարժման պատկերացումներն ու նրանց զուգորդությունը:

Լեզու սովորելիս, յերբեմն ժամանակ, մենք լսում ենք մեր չրջապատողների խոսվածքը և մեր գիտակցության մեջ ունենում ենք իրար հաջորդող հնչյունների կապակցություններ պատկերացումներ, ինչպես՝ սեղան հինգ հնչյունների մի մյուսից հետ կցորդությամբ զուգորդված պատկերացումը: Հաճախակի կրկնության պատճառով այս հնչյունների զուգորդությունը սերտ և լինում և հեշտությամբ կարող է վերարտադրվել մեր հիշողության մեջ: Այսպիսով մենք ունենում ենք բառերի՝ իրենց հնչյունների՝ պատկերացումները: Բայց դրա հետ միաժամանակ մենք ունենում ենք նաև առարկաների, ինչպես օրինակ՝ սեղան կարասիքի ըմբռնումն ու պատկերացումը: Յեվ յերբ հաճախ սեղան հնչյունների կապակցությունը լսելիս մեզ ցույց է տրվում և մենք տեսնում ենք այդ կարասիքը, որի համար այդ հնչյունների կապակցությունն իրրև նշանակ է ծառայում, այն ժամանակ մենք սեղան հնչյունների պատկերացումը զուգորդում ենք սեղան կարասիքի պատկերացման հետ և ամեն անգամ յերբ նորից տեսնում ենք սեղան առարկան և կամ մեր գիտակցության մեջ ծնվում է դրա պատկերացումը, միաժամանակ ծնվում է զուգորդությամբ նաև սեղան հնչյունների պատկերացումը: Յեվ ընդհակառակն, ամեն անգամ յերբ մեր մտքի մեջ ծնվում է սեղան հնչյունների պատկերացումը և կամ ուրիշներից լսում ենք սեղան հնչյունների կապակցությունը, դրա հետ զուգորդված վերարտադրվում է նաև այդ կարասիքի պատկերացումը: Այսպիսով սեղան հնչյունները կապվելով սեղան առարկայի պատկերացման հետ բովանդակություն կամ նշանակություն են առնում, և մենք հասկանում ենք ուրիշների արտասանած այդ բառը, ինչպես և նման յեղանակով նաև ուրիշ բառեր, որոնք մեր մտքի մեջ յերեվան են բերում համապատասխան առարկաների, գործողությունների և այլ պատկերացումներ: Բայց այսպես մենք դեռ միայն ուրիշներին հասկանում ենք: Բայց այսպես մենք դեռ միայն ուրիշներին հասկանում ենք, իսկ մենք ինքներս դեռ չենք խոսում և մեր մտքերն ուրիշներին հասկանալի դարձնում: Այս վերջինիս համար անհրաժեշտ են ուրիշ զուգորդություններ:

Մանկության առաջին տարիներում սրդեն փորձում ենք մեծերին նմանվելով՝ արտասանել հնչյուններ ու բառեր: Յերկար ժամանակ յերեխայի այս փորձերն անհաջող են անցնում,

մինչեվ վոր նա կարողանում է մեծերի նման ճիշտ արտասանել, վորի համատեղությամբ լսելիան ունենում է իր լսելիքով: Բառերի արտասանության հետ միաժամանակ տալիս են գործ և խոսքի դրծարանների չարժումները, վորոնք անհրաժեշտ են արտասանության համար, ապա և այդ չարժումների մկանային պատկերացումներ ու պատկերացումները, վորոնք իրար հետ զուգորդվում են կցորդության: Այս չարժումների մկանային պատկերացումները զուգորդվում են նաև համապատասխան հնչյունների լսողական պատկերացման հետ, քանի վոր մենք, օրինակ՝ սեղան արտասանելիս՝ դրա համար անհրաժեշտ մկանային չարժումների հետ յում ենք մեր ականջով արտասանած սեղան հնչյունների կազակցությունը: Ուրիշ խոսքով, մենք ունենում ենք բարդ հնչյունական կոմպլեքսների պատկերացումը, այսինքն՝ բառ հնչյունների թե՛ լսողական և թե մկանային պատկերացումները, վորոնք զուգորդված են միմյանց հետ, և մեկի հետ կապված վերարտադրել կարող է մյուսը: Նոր խոսել սկսող երեխայի մեջ, հասկանալի է, ամեն մի բառի լսողական պատկերացման հետ հաճախ դեռ կապված չէ համապատասխան մկանային պատկերացումը, ինչպես և չափահասների մեջ(*): Այդ, իհարկե մենք ունենում ենք մի առարկա, օրինակ՝ սեղան կարտասիքը, կամ մեր մեջ վերարտադրում և այդ կարտասիքի պատկերացումը, դրա հետ զուգորդված, ինչպես սեռանք, վերարտադրում և և սեղան հնչյունների լսողական պատկերացումը, իսկ այս վերջինի հետ, ինչպես սեռանք, զուգորդված և խոսքի դրծարանի համապատասխան չարժումների մկանային պատկերացումը, վոր և վերարտադրվում է մեր մեջ: Ցեվ հիրկ այդ ժամանակ գիտակցարար, մտադրված կերպով, նորից կատարում ենք մեր հիշած համապատասխան մկանային չարժումները, մենք արտասանում ենք սեղան բառը, վորի հետ կապված և այդ առարկայի պատկերացումը: Ուրիշների լսելով մեր արտասանած այդ բառը՝ հասկանում են մեզ, վորովհետև նրանց համար էլ այդ հնչյունների հետ կապված և միևնույն բովանդակությունը, նույն առարկայի պատկերացումը, վոր և նրանց մեջ վերարտադրվում է այդ հնչյունները լսելով: Այսպես ուրեմն մենք խոսում ենք, այսինքն՝ ուրիշներին մեր միտքը հայտնում ենք բառերով: Այս ձևանակով միմյանց հետ զուգորդվում են նաև չարտհյուսական կազակցությունների և ամբողջ խոսքերի, ուրեմն մի չարք բառերի հնչյունների պատկերացումները և նրանց արտասանության համար հարկավոր մի չարք իրար հետ կապված մկանային պատկերացումը զուգորդում է «սուռ» հնչյունների հետ, թյունը, վոր պրվում է նրանց մեջ:

Լեզվի այս հիմնական գուգորդությունները, վորոնցով մենք սովորում ենք հասկանալ ուրիշներին և խոսել, լինում են միայն կցորդությամբ, թե չէ՝ վոչ մի նմանություն չկա արտասանած հնչյունների և արտասանության համար հարկավոր չարժումների մեջ, վոչ էլ առարկայի պատկերացման և նրա անվան, այսինքն՝ այն հնչյունների մեջ, վոր զուգորդվում են առարկայի պատկերացման հետ: Մենք լեզուն սովորում ենք մեծերից լսելով պարզապես բառեր և բառերի կազակցության ձևերը. ինչպես օրինակ՝ սեղան հնչյունների հետ վորոշ կարտասիքի պատկերացում ենք կապած, վորովհետև մանկությունից սովորել ենք մեր շրջապատողներից՝ այդ հնչյունների հետ այդ նշանակությունը զուգորդել. մինչդեռ, օրինակ, ռուսը նույն պատկերացումները, ինչպես և այն մտածության մանացին՝ «թիչ» և այլն, վորոնք հայի համար աննշանակ հնչյուններ են: Լեզվի մեջ կան, ի հարկե, վորոշ թվով բառեր, վորոնց հնչյունները նման են իրենց նշանակած բնական հնչյուններին, դրանք բնաձայնություններ են, ինչպես՝ խշշալ, գոռալ և այլն: Միայն պետք է նկատի ունենալ, վոր կան բառեր էլ, վորոնք բուն լեզվությին միայն բնաձայնություն են, վորովհետև բոլորովին ուրիշ ծագում ունեն և ակզբնապես կապ չեն ունեցել բնաձայնության հետ: Թե ինչպես այս կամ այն հնչյունների կազակցության հետ զուգորդված և այս ու այն առարկայի կամ գործողության մտապատկերը, դա լեզվի ծագման մութ խնդրին է վերաբերում:

10. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ: ԲԱՌԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:— Բնության մեջ գոյության ունեն միայն անհատ առարկաներ, առանձին գործողություններ ու

*) Գրպեհանները, բայց բառերի հնչյունների լսողական և խոսքի դրծարանի մկանային չարժման պատկերացումներից, դրանց հետ զուգորդված ունեն նաև ամեն մի բառերի գրության զրիվ տեսողական պատկերացումներ, այլև մկանային պատկերացումներ ձեռքի չարժումների, վոր անհրաժեշտ են գրելիս: Ի միջի այլոց նաև այս և պատճառը, վոր գրագետները առհասարակ դժվարությամբ են անցում ուղղագրության մեջ մացրած փոփոխությունը:

հատկություններ, որոնք և մեր դիտողության են ենթակա-
վում. ուստի լեզու սովորելիս սկզբում բառի հնչյունների հետ
զուգորդվում են անհատ առարկաների և առանձին գործողու-
թյունների պատկերացումները: Ուրիշ խոսքով՝ բառերն ունեն
սկզբում անհատական կամ հատուկ նշանակություն: Բնության
մեջ գոյություն ունեցող հատ-հատ առարկաները, առանձին
հատկությունները և այլն թվով այնքան շատ են, որ անհնարին
է նրանց ամեն մեկին ջոկ-ջոկ անուններ տալ. ուստի և մեր խոսքը
պիտի լիներ շատ ազքատ, սահմանափակ թվով անհատ առարկա-
ների և անհատ գործողությունների կամ հատկանիշների մասին,
եթե խոսքն այդ դրության մեջ մնացած լիներ: Բայց մենք կարո-
ղանում ենք համեմատաբար սակավաթիվ բառերով արտահայտել ամեն
բանի մասին խոսել, որովհետև ամեն բան նշանակում է միայն
միայն բնության մեջ գոյացած մի հատ իզական առարկա, գոյա-
կան գործողության և այլն, այլ միանման առարկաների կամ
գործողությունների մի ամբողջ անուն: Որինակ՝ երբ ասում ենք
ծառ, այդ բառով հասկանում ենք միշտ կամ ամենից
անհատ ծառը, այլ նույնանման առարկաների մի ամբողջ մեծ
խումբ, որոնցից յուրաքանչյուրն էլ կարող է կոչվել ծառ: Այ-
սպես ուրիշ միևնույն բառով անվանում ենք միայն բնության
մեջ անհատ, թանձրացական (կոնկրետ) մեկ առարկա, այլև նույն
առարկաների ընդհանուր պատկերացումը կամ ընդհանուր գաղա-
փարը: Առաջին դեպքում բառն ունի հատուկ թանձրացական նշա-
նակություն, իսկ երկրորդ դեպքում՝ ընդհանուր վերացա-
կան:

Առարկայի ընդհանուր պատկերացումն ունենում ենք այն ժա-
մանակ, երբ բազմաթիվ միատեսակ ըմբռնումները նույնացնում
ենք միմյանց հետ՝ նրանց աննման մասերը դուրս ձգելով, իսկ
նմանները ընդհանրացնելով, կամ մեր ուշադրությունը կենտրո-
նացնելով բազմաթիվ առարկաների այն հատկանիշների վրա, որ-
ոնք անհատական չեն, այլ ընդհանուր են: Հատկանիշի վրա, որ
ընդհանուր պատկերացումը հետևվանք և հոգեկան բարդ գործո-
ղության. մենք սկսք և առաջուց մի չափ միանման ըմբռնում-
ներ ունենանք, մինչև որ կարողանանք վարժվել ամեն մի նոր
ըմբռնումի մեջ գտնել, ինչ որ ընդհանուր և առաջվա բոլոր նույ-
նանման ըմբռնումներին, որինակ՝ այսինչ անհատ ծառի մեջ տես-
նել, ինչ որ ընդհանուր և մեր առաջուց տեսած բոլոր ծառերի

մեջ: Այսպիսով, ուրեմն, ամբողջ աշխարհի բոլոր առարկաները,
հատկանիշները և այլն ամեն մարդու համար որ խոսում է՝ որոշ
չափով արդեն վերլուծված են լինում և վերածված միատեսակ մեծ
կամ փոքր խմբերի, որ և անընդհատում են բառերի մեջ: Բա-
ռերն ուրեմն նշանակություն են ստանում, երբ նրանց արտաքին
հնչյունական կողմը կապվում է միշտ միայն անհատ, մեկ թանձ-
րացական առարկայի պատկերացման հետ, այլև համապիտի առար-
կաների ընդհանուր պատկերացման հետ, կամ որ մի ենուն է՝
բառերն ունենում են թե հատուկ, թանձրացական նշանակություն
և թե ընդհանուր, վերացական:

Բառերի այս ընդհանուր, վերացական բնավորության շնոր-
հիվ հնարավորություն և տալիս համեմատաբար սակավաթիվ
բառերով խոսել պրեթե ամեն բանի մասին: Բայց բառերի նշա-
նակության այս բնավորությունն էլ դեռ բավական չէ. մենք չե-
կինք կարող խոսել, այսինքն՝ մեր մտածությունը հայտնել բառե-
րով, եթե չլիներ հոգեկան գործունեության մի ավելի բարձր
աստիճան—հոգեբանական գաղտնությունը:

11. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՍՔ:—Մեր մը-
տածությունը հիմնված է պատկերացումների գուգորդության
վրա: Մենք մտածում ենք, երբ իրար հետ գուգորդվող պատկե-
րացումների չարքից անջատելով մեկիկ պատկերացում՝ մյուս-
ները ենք մեմյանց հետ, միաժամանակ և դիտակցում ենք նրանց
մեջ գոյած հարաբերությունը: Պատկերացումների այսպիսի միա-
յնամը հոգեբանության մեջ կոչվում և հոգեբանական գաղտղու-
թյուն: Այն պատկերացումը, որ առաջ և ծնվում մեր մեջ և ու-
րիշ սկսում և գաղտղության գործողությունը, կոչվում և հո-
գեբանական (դատողության) ենթակա. իսկ այն պատկերացու-
մը, որ դիտակցում ենք, թե միանում և ենթակայի հետ, կամ,
ինչպես ասում են, ստորոգվում և ենթակայի վրա, կոչվում և
հոգեբանական ստորոգյալ: Ստորոգյալի միացումը ենթակայի
հետ, կամ ստորոգումը լինում և, երբ մենք դիտակցում ենք այդ
երկուսի մեջ գոյած հարաբերությունը: Այս հարաբերության
դիտակցությամբ և միայն առաջ գալիս մտածությունը և սովորա-
կան գուգորդության երկու անդամները գառնում են գաղտղու-
թյան անդամներ—ենթակա ու ստորոգյալ, և մտածությունը
արբևվում և սովորական գուգորդությունից: Առանց այդ հա-
րաբերության դիտակցության՝ ոչ թե հոգեբանական ստորոգյալ

և յենթակա կըլլինեն, այլ մէյն իրար հետ սովորական յեղանակով զուգորդված յերկու պատկերացում: Այսպես ուրեմն մտածութեան ամենակարեւոր տարրն և հոգեբանական յենթակայի ու ստորոգեալի հարաբերութեան գիտակցութիւնը:

Առարկաների պատկերացումների հետ զուգորդված են բառերի պատկերացումները. մենք կարող ենք հոգեբանական դատողութեան անդամներից մեկը կամ յերկու անդամն էլ արտահայտել բառերով, լինին բառերը բարձր արտասանված, թե մէյն մտքի մէջ ասված: Այդ ժամանակ բառերը կամ թե բառերի պատկերացումները փոխանակում են մտքի առարկաների պատկերացումներին, մենք մտածում ենք բառերով կամ մեր մտածութիւնն արտահայտում ենք բառերով, կամ խոսք ենք կազմում դիտակցելով, վոր դատողութեան անդամների իրար հետ ունեցած հարաբերութիւնը վոչ թե նրանց փոխարինող բառերինն է, այլ մեր մտքի այն առարկաներին, վորոնց փոխարինում են բառերը: Որինակ՝ յերբ դիտում ենք առավոտյան արեգակի ծագման հետ կապված փոփոխութիւնը բնութեան մէջ և ասում ենք «լուսացավ», մենք այդ բառով արտահայտում ենք դատողութեան անդամներից մեկը, հոգեբանական ստորոգեալը, իսկ հոգեբանական յենթական մնում է առանց արտահայտվելու. դա բնութեան մէջ տեղի ունեցած փոփոխութեան ըմբռնումն ու պատկերացումն է, վոր մեր մտքի մէջ առաջ է յերեվան յեկել և վորից սկսվում է դատողութիւնը: Յերբ հետևից ասենում ենք, վոր մեկը գալիս է, բայց չենք վորոշում, թե ով է յեկողը. ապա՝ յերբ ջոկում ենք և ասում՝ «Տիգրանն է», այս դեպքում դարձեալ արտահայտում ենք դատողութեան մեկ անդամը միայն, դարձեալ հոգեբանական ստորոգեալը, իսկ հոգեբանական յենթական մնում է առանց արտահայտվելու. դա գալու գործողութիւնը կատարող անձի պատկերացումն է, վորից սկսվում է դատողութիւնը, ինչպես յեթե ասելու լինենք՝ «յեկողը Տիգրանն է»:—Ամուսիկ ենք լսում դրսից և ուզում ենք իմանալ, թե ինչ է կատարվում դրսում, և իմանալով այդ՝ ասում ենք՝ «յերեխաները խաղում են»,—այս խոսքն ամբողջ հոգեբանական ստորոգյալ է, իսկ հոգեբանական յենթական, վորից սկսվում է դատողութեան գործողութիւնը, մնում է առանց արտահայտվելու. դա մեր առջևից լսած աղմուկի պատկերացումն է: Նայում ենք լուսինն. մի քիչ հետո նա մոնում է ամպերի յետևի, և մեր դիտակցութեան մէջ ծնվում է՝ «լուսինն

ամպերով ծածկվեց» դատողութիւնը բառերով, վոր և կարող ենք բարձր արտասանել: Այս դատողութեան յերկու անդամներն էլ արտահայտված են բառերով. հոգեբանական յենթական է «լուսինը», վորի պատկերացումն առաջ կար մեր մտքի մէջ, իսկ հոգեբանական ստորոգյալն է «ամպերով ծածկվեց», վոր մենք դիտակցելով միացնում ենք լուսնին: Առնենք մի որինակ էլ: Լսում ենք ներս մտնելու ոտնաձայն, և իմանում ենք, վոր մեկը գալիս է, և յերբ իմանում ենք, թե յեկողն ով է, այն ժամանակ մեր մէջ արդեն առաջ ծագած «գալու» պատկերացման հետ դիտակցելով միացնում ենք յեկող անձի այս նոր պատկերացումը և մեր մէջ ծնվում է դատողութիւն, և յերբ ասում ենք՝ «Տիգրանը յեկավ», այդ դատողութիւնն արտահայտում ենք բառերով, կամ խոսք ենք կազմում: Այստեղ դատողութեան հոգեբանական յենթական է «յեկավ», վորի պատկերացումն առաջ է ծնվել մեր մէջ, վորից և սկսվում է դատողութեան գործողութիւնը. իսկ հոգեբանական ստորոգյալն է «Տիգրանը», վորի պատկերացումն հետո է ծնվել մեր մէջ և վոր դիտակցելով միացնում ենք «գալու» պատկերացման հետ:

Այսպես ուրեմն, յերկու պատկերացման այսպիսի դիտակցական միացումով միայն մենք մտածում ենք, և յերբ հոգեբանական դատողութեան անդամներից մեկը կամ յերկուսն էլ արտահայտում են բառերով, այն ժամանակ մենք խոսում ենք: Խոսքը կամ նախադասութիւնն, ուրեմն, հոգեբանական դատողութեան (մտածութեան) արտահայտութիւնն է բառերով:

12. ԲԱՌԵՐԻ ՁՈՒԴՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ:—Ինչպես վերևում տեսանք, մենք լեզուն սովորում ենք՝ ուրիշներից լսելով բառեր և բառերի ամբողջ կապակցութիւններ ու խոսքեր և ապա հիշողութեամբ վերարտադրելով մեր առջևում մի անգամ լսածը: Սակայն անհնարին է, վոր մարդ կարողանա այն բոլոր բառերը և նրանց բոլոր կապակցութիւններն ու խոսքերը, վոր գործածում է՝ լսելով ուրիշներից և հիշողութեամբ միայն վերարտադրելով խոսել: Նույնիսկ 3—4 տարեկան յերեխան խոսելիս գործադրում է չատ ու չատ ավելի բառեր ու խոսքեր, քան թե նա լսել և կամ կարդալ էր յեղել ուրիշներից: Մենք խոսելիս վոչ միայն վերարտադրում ենք, այլև արտադրում ենք, այսինքն՝ մենք ինքներս ստեղծում ենք բառեր ու բառերի կապակցութիւններ և ամբողջ խոսքեր, վոր

առաջ չերբեք չենք լսել ուրիշներից: Իսկ որ մենք կարողանում ենք այդ անել, պատճառն այն է, որ ինչպես մեր պատկերացումներն արտաքին աշխարհի մասին, նույնպես և մեր լսած բառերն ու խոսքերը մեր մարմի մեջ առանձնացած չեն մնում, այլ դուզորդվում են միշտ իրար հետ և կազմում մեծ կամ փոքր խմբեր, որոնց նմանությամբ և խոսելիս առնչվում ենք նոր բառեր ու խոսքեր:

Բառերի դուզորդություններր հիմնվում են կամ լոկ հնչյունների, կամ լոկ նշանակության, կամ թե միաժամանակ թե հնչյունների և թե նշանակության մասնակի նույնության կամ նմանության վրա: Լոկ հնչյունների նմանության վրա հիմնված դուզորդություններով կազմվում են հնչյունների հանդիսության և հանգ առածը (կերթան–դուքան–թան), որը գործադրվում է բանաստեղծության մեջ երբեմն գաշնակավոր դարպարանք. դա կարեվոր չէ բառերի մյուս յերկու տեսակի դուզորդություններր, որոնցով միանում և խմբեր են կազմում բառերը և բառերի կապակցությունները իրենց նշանակության և հնչյունների նմանությամբ կամ նույնությամբ:

13. ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐԻ ՅԵՐԵՔ ՄԵԾ ԽՄԲԵՐ—ԳՈՅԱԿԱՆ, ԱԶԱԿԱՆ և ԲԱՑ:— Մեր բոլոր պատկերացումներն արտաքին աշխարհի առարկաների ու յերեվույթների և մեր լսկ հոգեկան վիճակների մասին՝ իրար հետ դուզորդվելով կազմում են ամենից առաջ յերկու մեծ խմբեր, առանց որոնց չենք կարող մտածել: Այդ պատկերացումների մի մասը ներկայանում են մեզ իրրեվ ինքնուրույն, անկախ գոյություն ունեցող առարկաներ, մյուս մասը՝ իրրեվ վոչ–ինքնուրույն hատկանիշներ—հատկություն, գործողություն, դրություն և այլն, որ մենք դիտում ենք առարկայի վրա, որոնք և անպաժան են կամ առարկայից և կամ նույնիսկ առարկայի հատկանիշից: Որինակ՝ «սպիտակ ձյունը առաջին վայրում է» խոսքի մեջ «ձյունը» պատկերացնում ենք իրրեվ ինքնուրույն գոյություն ունեցող մի բան—առարկա, իսկ «սպիտակ», «վայրում է» բառերի բովանդակությունը՝ իրրեվ ձյունի հատկանիշները, որ ձյունից անկախ չեն, այլ գտնվում են ձյունի մեջ և նրանից անպաժան են. նույնպես և «առաջին» բառը նշանակում է մի հատկանիշ, որ անպաժան է ձյունի «վայրում է» հատկանիշից և որ նույնպես

իրրեվ ինքնուրույն գոյություն ունեցող չի մտածվում, ինչպես և «վայրում է», «սպիտակ» հատկանիշները:

Ամեն ինչ, որ ինքնուրույն առարկաների կատեգորիայի մեջ ենք դնում, հարկավ, բնության մեջ անպատճառ իրոք գոյություն չունեն իրրեվ թանձրացականներ, ֆիզիկական, իրական առարկաներ, այլ հաճախ մենք ենք միայն մտածում այդպես իրրեվ ինքնուրույն գոյություն ունեցող բաներ, ինչպես են՝ ուժ, քաշություն, վառոդ: Դա առաջանում է մեր մտածության պահանջից. մենք այլ կերպ չենք կարող մտածել, քան ամեն ինչ դնել կամ ինքնուրույն առարկաների կամ վոչ–ինքնուրույն հատկանիշների խմբերի մեջ: Այսպես որինակ՝ բնության յերեվույթները մտածում ենք կամ իրրեվ ինքնուրույն գոյություն ունեցող առարկաներ, կամ իրրեվ վոչ–ինքնուրույն հատկանիշներ, ինչպես որինակ՝ ամպրոպի ժամանակ ոդի մեջ յերեվացող լուսեղեն գիծը պատկերացնում ենք կամ իրրեվ առարկա՝ «կայծակ», կամ իրրեվ առարկայի հատկանիշ գործողություն՝ «վայրկառակում է»: Այդ ժամանակ լսած գոռոցն էլ պատկերացնում ենք գարձյալ կամ իրրեվ առարկա՝ «որոտ», կամ իրրեվ առարկայի հատկանիշ գործողություն՝ «որոտում է»:

Առարկան և իր հատկանիշը մեր գիտության համար կազմում են մի անբաժան միություն, որովհետև հատկանիշն առարկայի մեջ գտնվում է իրրեվ նրա բաղադրիչ մասը: Բայց և այնպես մենք մեր մտածողության համար հաճախ հատկանիշն անջատում, վերացնում ենք առարկայից և պատկերացնում ենք իրրեվ ինքնուրույն գոյություն ունեցող բան: Որինակ՝ «սպիտակ» և «սպիտակություն» յերկու բառն էլ գալիս են տալիս առարկայի նույն հատկությունը, նույն գաղափարը. այս յերկու բառերը նշանակության, ուրեմն, նույն են: Բայց մինչ «սպիտակ» բառը նշանակությունը պատկերացնում ենք իրրեվ վոչ–ինքնուրույն հատկանիշ, որ պատկանում է մի առարկայի և նրանից անկախ գոյություն չունի, ինչպես՝ սպիտակ ձյուն, սպիտակ թուղթ,— «սպիտակություն» բառով, ընդհակառակն, մենք նույն հատկանիշը պատկերացնում ենք իրրեվ ինքնուրույն գոյություն ունեցող մի առարկա: Այսպես որինակ՝ յերբ ասում ենք՝ «ինձ դյուր և գալի ձյան սպիտակությունը միայն», այդ ժամանակ մենք մտքով «սպիտակ» հատկությունը ձյունից բաժանում, վերացնում ենք և պատկերացնում իրրեվ մի ինքնուրույն բան և ձյունից միայն այդ հատկությունն ենք առնում իրրեվ դյուրին. մինչդես, ընդհա-

կառակն, կերբ ասում ենք՝ «ինձ դյուր և գալիս սպիտակ ձյունը», այդ հատկութիւնը ձյունից անբաժան ենք մտածում, և դյուրական և վոչ թե «սպիտակ» հատկութիւնը, այլ ձյունը, վորի մեջ կա սպիտակութիւնը: Նույնպես, կերբ ասում ենք՝ «բարձր պատ», «պատը բարձր է», «բարձր» հատկութիւնը մտածում ենք իբրեվ «պատ» առարկայից անբաժան. բայց կերբ ասում ենք՝ «պատի բարձրութիւնը հինգ կանգուն է», նույն հատկութիւնն այս դեպքում մտածում ենք իբրեվ պատից անկախ մի ինքնակա առարկա: Դարձյալ՝ կերբ ասում ենք՝ «ձին վազում է», «վազող ձի», վազելու հատկանիշը, գործողութիւնը պատկերացնում ենք ձիուց անբաժան, բայց կերբ ասում ենք՝ «ձիու վազելը (վազքը) կերկար չտեվեց», այժմ նույն գործողութիւնն անջատում, վերացնում ենք ձիուց և պատկերացնում ենք իբրեվ ինքնակա գոյութիւն ունեցող առարկա: Այսպիսի առարկաներն, անշուշտ, ինքնակա գոյութիւն ունեն միայն մեր մտածութիւնում. դրանք վերացական առարկաներ են և դրանց անուններն էլ կոչվում են վերացական սնուն:

Բոլոր առարկաները խոսողի գիտակցութեան մեջ բաժանվում են կերկու խմբի կամ դեմքի,—ինքը խոսող անձը—առաջին դեմք, իր խոսակիցը, վորին նա ուղղում է խոսքը—կերկրորդ դեմք և մի ուրիշ կերրորդ առարկա կամ մյուս բոլոր առարկաները—կերրորդ դեմք: Ապա՝ նա կարող է իր խոսքն ուղղել վոչ թե միայն մեկ կերկրորդ անձի, այլ նրա հետ և ուրիշներին, և խոսել վոչ միայն իր կողմից, այլ իր հետ նաև ուրիշների, վորով առաջանում է առարկաները բաժանումը կերկու խմբի կամ չորեք դեմքի, և աճեն մի դեմքն էլ առնում է կեզակի և հոգնակի թվով: Համապատասխան ձևով հատկանիշների պատկերացումներն էլ խոսողը մտածում է վորոշ ժամանակի մեջ միացած այդ կերկու թե կեզակի և թե հոգնակի դեմքերից մեկի հետ: Որինակ՝ «կարմրութիւն», «կարմիր», «կարմրեցի», այս կերկու բառն էլ արտահայտում են նույն հատկանիշը, նույն գույնը, բայց մինչ առաջին բառով այդ հատկանիշը պատկերացվում է իբրեվ ինքնակա գոյութիւն ունեցող (վերացական) առարկա, «կարմիր» բառով նույն գույնն առնում է իբրեվ առարկայից անբաժան վոչ–ինքնակա հատկանիշ, ինչպես՝ «կարմիր ծաղիկ»· իսկ «կարմրեցի» բառով նույնպես նույն հատկութիւնն առնում է դարձյալ իբրեվ առարկայի վոչ–ինքնակա հատկանիշ, միայն խոսողն այդ հատկանիշը

վորոշ ժամանակում (անցյալում) դիտակցելով վերագրում է իրեն՝ առաջին դեմքին: Այսպես և «կարմրեցիր» բառով նույն հատկանիշը նա վերագրում է կերկրորդ դեմքին, իսկ «կարմրեց» բառով՝ կերրորդ դեմքին, «կարմրեցինք» բառով՝ հոգնակի առաջին դեմքին և այլն:

Այսպիսով, մեր բոլոր պատկերացումները, վոր կազմում են մեր մտածութեան նյութը, ինչպես և նրանց համապատասխան բոլոր բառերն իրենց նշանակութեամբ բաժանվում են կերեք խմբի.

1) Գոյականներ, վորոնք նշանակում են ինքնակա գոյութեան ունեցող կամ իրբեվ այնպիսին մտածված առարկաներ:

2) Ածականներ, վորոնք նշանակում են վոչ–ինքնակա հատկանիշներ, վոր մտածվում են իրբեվ առարկաներից անբաժան, նրանց մեջ գտնված մի հատկութիւն, գործողութիւն, դրութիւն և այլն, կամ իրբեվ առարկայի հատկանիշի հատկանիշ, ինչպես՝ բարի (մարդ), ծաղկած (ծառ), սատկիկ պինդ (քարի)· այդ պատճառով և այդ բառերը խոսքի մեջ իրբեվ վերագրիչը դրվում են գոյականի կամ ուրիչ հատկանիշ ցույց տվող բառի վրա և կոչվում են «ածական», այսինքն՝ «վերագրական» («ածել» բառից, վոր հին լեզվի մեջ նշանակում է նաև «վրան առնել», «վրան դնել»):

3) Բայեր, վորոնք նույնպես նշանակում են վոչ–ինքնակա հատկանիշներ, բայց այնպիսի հատկանիշներ, վոր խոսողը մի վորոշ ժամանակում վերագրում է կա՛ծ իրեն առաջին դեմքին, կա՛մ կերկրորդ դեմքին, կա՛մ կերրորդ դեմքին,— լինեն այդ դեմքերը կեզակի թե հոգնակի,— միաժամանակ և դիտակցում և այդ–վերագրումը· ուրեմն նա բայերով դատում, մտածում է և իր գործողութիւնն արտահայտելով՝ կազմում է խոսք: «Բայ» բառ հենց նշանակում է «խոսք», այսպես կոչվել են այդ խմբի բառերը, վորովհետև դրանցով ենք միայն արտահայտում մեր մտածութիւնը: Բայերը, ուրեմն, լոկ վոչ–ինքնակա հատկանիշ չեն ցույց տալիս, ինչպես ածականները, այլ նշանակում են նաև մի դեմքի, ուրիշի մի առարկայի պատկերացում, վոր առաջուց ծանոթ է խոսողին, վորին և իրբեվ հոգեբանական կենդանակալի միացում և հոգեբանական առարկայալը, վոր և բայի ցույց տված հատկանիշը (բայիմաստը)· ուրիշ խոսքով՝ բայերը միաժամանակ ցույց են տալիս նաև առարկում, այն է՝ խոսողը դիտակցում է

հոգեբանական յենթակայի (բայի դեմքի) և հոգեբանական առարկայի (բայիմաստի) հարաբերությունը:

Մեր մտածության նյութ կազմող բոլոր պատկերացումները և նրանց արտահայտիչ բառերի այս յերեք խմբերը ընկած են լեզվի մեջ ամենակարևոր տեղը. մենք ամենամաղ հասակից վարժվում ենք մեր պատկերացումները դնել այդ յերեք խմբերից մեկի մեջ, և այդ հնարավորություն է տալիս մեզ, ինչպես կը տեսնենք, խոսել սովորելու և խոսելու:

14. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՆՇՈՒԹԱԿԱՆ ՅԵՎ ԶԵՎԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ:— Գոյականները իրենց նյութական ու ձևական նշանակությամբ, ինչպես և հնչյունների մասնակի նույնությամբ կամ նմանությամբ միմյանց հետ զուգորդվելով՝ կազմում են բազմության մեծ ու փոքր խմբեր: Որինակ՝ առնենք հետևյալ բառախումբը.

քար	քարեր
պատ	պատեր
վայր	վայրեր
ծառ	ծառեր

Այս բառերը մեր մտքի մեջ իրար հետ զուգորդվելով՝ կազմում են մի խումբ նրանով, որ բոլորը նշանակում են առարկա, բայց առաջին ուղղաձիգ չարքի բառերը կազմում են մի առանձին խումբ և ավելի սերտ են միանում միմյանց հետ, ինչպես և յերկրորդ ուղղաձիգ չարքի բառերը միմյանց հետ. դրանց առանձնացնող զուգորդման հիմք կազմում և յեզակի և հոգնակի թվի ձևական նշանակությունը, յերկրորդ չարքի մեջ նաև հոգնակիության նշանակությունը ցույց տվող «եր» հնչյունների նույնությունը:

Առնենք հետևյալ բառախումբը.

քաղաքներ	քարեր	դյուզացիք
վոզոդներ	պատեր	վորովք
պարահներ	վայրեր	քաղաքացիք
աշակերտներ	ծառեր	գավառացիք

Այս բառերն ևս կազմում են մի խումբ վոչ միայն իրրեև գոյականներ, այլև նրանով, որ բոլորի հետ էլ միացած և նաև հոգնակի թվի ձևական նշանակությունը: Բայց ուղղաձիգ չարքերը կազմում են մի–մի առանձին խումբ. վորովհետև դրանց առաջինի մեջ կա հոգնակություն նշանակող ձևական մասի համար «ներ» հնչյունների նույնությունը, յերկրորդի մեջ՝ «եր», իսկ

յերրորդի մեջ՝ նույն ձևական նշանակության համար՝ «ք» հնչյունի նույնությունը: Այսպես ուրեմն, բոլոր գոյականների յեզակի ձևերը զուգորդվելով՝ կազմում են մի ձևական խումբ, ինչպես և հոգնակի ձևերը՝ մի ուրիշ ձևական խումբ: բայց և հոգնակի ձևերն էլ իրենց կազմից, հոգնակիության ձևական նշանակությունը ցույց տվող հնչյունների նույնությամբ բաժանվում են յերկու և ավելի թվով փոքր խմբերի:

Առնենք հետևյալ բառախումբը.

քար	քարեր
քարի	քարերի
քարից	քարերից
քարով	քարերով
քարում	քարերում

Այս բառերը մեր մտքի մեջ վոհասարձարար ձգում են իրար և կազմում են միմյանց հետ զուգորդված մի առանձին նյութական խումբ բոլոր գոյականների մեջ. վորովհետև դրանք նախ՝ նշանակությամբ նույն են, ամեն մեկի համար էլ հասկանում ենք նույն նյութը. ապա՝ բացի նշանակության նույնությունից՝ ունեն նաև հնչյունների մասնակի նույնություն, այն է՝ ամենի մեջ էլ կա «քար» բառը: Բայց այդ մեկ խումբը բաժանվում է յերկու յերկրորդական փոքր ձևական խմբերի, այն է՝ թվի նշանակությամբ մի խումբ կազմում են առաջին ուղղաձիգ չարքի բառերը, մի ուրիշ խումբ՝ յերկրորդ ուղղաձիգ չարքի բառերը: Այս յերկու խմբերի յուրաքանչյուր բառն ավելի սերտ և զուգորդված իր խմբի բառերի հետ, քան մյուսների հետ, վորովհետև այդ զուգորդությունը հիմնված է վոչ միայն նյութական նշանակության, այլև ձևական նշանակության—յեզակիության և հոգնակիության վրա. բացի այդ, յերկրորդ ուղղաձիգ խմբի մեջ ձևական նշանակությունը կապված է նաև «եր» հնչյունական նույնության հետ: Կրնչանակի՝ այդ յերկրորդ խմբի բառերը միմյանց հետ զուգորդվում են թե նյութական և թե ձևական նշանակությունների, և այդ նշանակությունների յուրաքանչյուրի համար նաև առանձին հնչյունական նույնության:

Դարձյալ նույն նյութական խումբը բաժանվում է հինգ ուրիշ յերկրորդական ձևական խմբերի, այն է՝ հոլովական ձևերի նկատմամբ մի–մի փոքր խմբեր են կազմում հոլիզոնական չարքերը՝ քար, քարեր. քարի, քարերի. քարից, քարերից և այլն:

Այստեղ էլ դուգորդությունը հիմնվում է թե նյութական և թե ձևական նշանակությունների վրա: բացի այդ՝ կա նաև ձևական նշանակությունը ցույց տվող ի, ից, ով, ում հնչյունական մասերի նույնությունը: Առաջին խումբը միայն՝ «քար», «քարեր»՝ չունի ձևական նշանակություն ցույց տվող հնչյունական մասի նույնություն, բայց և այնպես այս երկուսը մեր պիտակցության մեջ դուգորդվում են իրենց ձևական նշանակությամբ, որ բնեվան և դալիս խոսքի կապակցության մեջ, ինչպես՝ քար բերել, քարեր բերել: Բացի այդ՝ ձևական մաս չլինելը հենց, մյուս խմբերի մեջ յեղած ի, ից, ով, ում ձևական մասերի հարաբերությամբ, ծառայում և այդ յերկուսը մեր պիտակցության մեջ անջատելու մյուսներից իրրեվ մի առանձին խումբ: Այսպիսի դեպքերում բառի բունն ինքը, առանց վորևե վերջավորության, ցույց է տալիս նյութական նշանակության հետ նաև ձևական նշանակություն և առնվում է իրրեվ մի բառաձև, վոր կոչում են սովորաբար բացասական բառաձև: Այսպես և հոգնակի խմբի՝ ֆարեր, ֆարերի, ֆարերից, ֆարերով, ֆարերում բառաձևերի դիմաց, վորոնք ունեն «եր» ձևական մասը, յեզակի խմբի՝ ֆար, ֆարի, ֆարից, ֆարով, ֆարում բառաձևերի յեզակիության ձևական նշանակությունը վորոշվում և վորևե ձևական մասի չլինելով:

Այս յերկու՝ յեզակի և հոգնակի ձևական խմբերը ջոկ-ջոկ չեն ընթանում, այլ փոխադարձաբար սրամախաչում են իրար, այսինքն, որինակ, ֆարից ձևը մի կողմից մտնում է յեզակի շարքի մեջ՝ դուգորդվելով այդ շարքի մյուս ֆար, ֆարի, ֆարով, ֆարում ձևերի հետ, մյուս կողմից՝ դուգորդվում և հոգնակի ֆարերից ձևի հետ: Այսպես իրար հետ սրամախաչվող ձևական խմբեր են կազմում բոլոր պոյականների հոլովները, ինչպես՝

քար	հայ	վայր
քարի	հայի	վայրի
քարից	հայից	վայրից
քարով	հայով	վայրով
քարում	հայում	վայրում
քարեր	հայեր	վայրեր
քարերի	հայերի	վայրերի
քարերից	հայերից	վայրերից
քարերով	հայերով	վայրերով
քարերում	հայերում	վայրերում

Այս բառերի ուղղաձիգ շարքերը կազմում են մի-մի առանձին նյութական խմբեր, իսկ հորիզոնական շարքերը մի-մի ձևական խմբեր, վորոնք դուգորդվում են թե ձևական նշանակությամբ և թե հնչյունների մասնակի նույնությամբ, բացի առաջին հորիզոնական շարքի բառերից, վորոնք միայն ձևական նշանակությամբ են դուգորդվում: Մյուս կողմից՝ բոլոր ուղղական ձևերը, յեզակի ու հոգնակի, բոլոր սեռական-տրական ձևերը և այլն, մի-մի առանձին խմբեր են կազմում, այսպես՝

քար	հայ	վայր	քարեր	հայեր	վայրեր
քարի	հայի	վայրի	քարերի	հայերի	վայրերի
քարից	հայից	վայրից	քարերից	հայերից	վայրերից
քարով	հայով	վայրով	քարերով	հայերով	վայրերով

Միաժամանակ և այս շարքերից առաջին յերեք ուղղաձիգ շարքերը կազմում են ըստ թվի մի առանձին խումբ, իսկ յերկրորդ յերեքը՝ մի ուրիշ առանձին խումբ, վորով և մեր պիտակցության մեջ մի խումբ կազմում են բոլոր պոյականների յեզակի ձևերը, մի ուրիշ խումբ՝ բոլոր հոգնակի ձևերը. ապա՝ մի խումբ կազմում են բոլոր պոյականների ուղղական ձևերը, մի ուրիշ խումբ՝ սեռական-տրական ձևերը, մի յերրորդ խումբ՝ գործիական ձևերը և այլն:

Առնենք մի ուրիշ շարք ևս.

քար	վայր	այդի	պենի
քարի	վայրի	այդու	պենու
քարից	վայրից	այդուց	պենուց

Այստեղ ևս հորիզոնական շարքերը կազմում են մի-մի ձևական խմբեր, բայց յուրաքանչյուր հորիզոնական շարքի մեջ մտնող առաջին յերկու բառը կազմում են մի խումբ, իսկ յերկրորդ յերկու բառը՝ մի ուրիշ խումբ. վորովհետև առաջին յերկուսը, որինակ՝ ֆարի, վայրի, դուգորդվում են վոչ միայն ձևական նշանակության նույնությամբ, այլև այդ ձևական նշանակությունն արտահայտող «ի» հնչյունի նույնությամբ, մինչդեռ մյուս յերկուսը՝ այգու, գինու՝ ունեն ձևական նշանակությունն արտահայտող «ու» հնչյունի նույնություն: Այսպես և

մյուսները: Ցեվ վերջապես առանձին խմբեր են կազմում նաև ձայնափոխությամբ կամ ձայնափոխման կորուստով կազմված ձևերը, ինչպես՝ ջուր, ջրից, ջրով. կերակուր, կերակրի, կերակրից, կերակրով: Այսպես և բազմաթիվ ուրիշ խմբեր, որոնք մեր դնահատության մեջ դասավորվում են իրար հետ կամ նյութական, կամ ձևական նշանակությամբ, կամ հնչյունների նույնությամբ: Ամեն մի գոյական, որ մենք լսում, սովորում ենք ուրիշներից, բավական և մյուս, որ մենք գնահատում ենք, թե դա գոյական է, այսինքն՝ առարկա է ցույց տալիս,—մեր մտքի մեջ առանձնացած չի մնում, այլ մտնում է այդ խմբերից մեկի մեջ:

15. ԲԱՅԵՐԻ ՆՇՈՒԹԱԿԱՆ ՅԵՎ ՁԵՎԱԿԱՆ ԽՄԲԵՐ:—Նույնպիսի նյութական և ձևական խմբեր, միայն ավելի բազմազան և հաճախ տրամախաչվող կերպով, առաջ են գալիս նաև բայերի ձևերի մեջ, ինչպես օրինակ՝ դնամ, դնաս, դնա, դնանք, դնաք, դնան. դնայի, դնայիր, դնար և այլն կազմում են մի նյութական խումբ՝ դնալու գործողության նյութական նշանակությամբ և հնչյունների մասնակի նույնությամբ: Այսպես էլ կազմվում են ժամանակի և եղանակի ձևական նշանակություններով, ինչպես և ձևական նշանակություններն արտահայտող հնչյունների նույնությամբ. օրինակ՝

դնամ	դնանք
դնաս	դնաք
դնա	դնան

Այսպես առաջին ուղղաձիգ շարքի բառերը, եզակի ձևերը, մի խումբ են, իսկ յերկրորդ ուղղաձիգ հոդնակի ձևերը՝ մի ուրիշ խումբ: Դարձյալ առաջին դեմքերը, եզակի և հոդնակի՝ դնամ, դնանք՝ մի խումբ, յերկրորդ դեմքերը՝ մի ուրիշ խումբ և այլն: Նույնպես ներկա ժամանակները մի խումբ են կազմում, անցյալները՝ մի ուրիշ խումբ և այլն: Բայց և տարբեր ժամանակները, որոնք թվով, դեմքով ու եղանակով արտահայտվում են, ինչպես՝

դնամ	դնայի	դնացի
դնաս	դնայիր	դնացիր
դնա	դնար	դնաց
դնանք	դնայինք	դնացինք
դնաք	դնայիք	դնացիք
դնան	դնային	դնացին

Այսպես մի ընդհանուր նյութական խմբի մեջ ամեն մի ուղղաձիգ չարքը մի խումբ է կազմում. բայց և ամեն մի հորիզոնական չարքը դեմքի ու թվի տարբերությամբ մի ուրիշ խումբ է կազմում և այլն: Նույնպես իրար հետ զուգորդվում են իրենց դեմքով, ժամանակով ու եղանակով բոլոր բայերը, ինչպես՝

դնամ	պրեմ	հեռանամ
դնաս	պրես	հեռանաս
դնա	պրե	հեռանա
դնանք	պրենք	հեռանանք
դնաք	պրեք	հեռանաք
դնան	պրեն	հեռանան

Այսպես ուղղաձիգ չարքերը մի–մի նյութական խումբ են կազմում, բայց և հորիզոնական չարքերը մի–մի ձևական խումբ են դեմքի ու թվի ձևական նշանակությամբ, ինչպես և ձևական նշանակությունը ցույց ավող հնչյուններով նույնությամբ: Կան, որ առանձին, խմբեր, որոնք զուգորդվում են միայն ձևական նշանակությամբ, ինչպես՝ տեսա–դնացի, կամ միայն նյութական նշանակությամբ, ինչպես՝ ուտեմ–կերաբ, կամ մի քանի նյութական և թե ձևական նշանակությամբ, ինչպես ուտեմ–կերա, լինեմ–յեղա, կամ ձևական նշանակությամբ և մասնակի հնչյունական նույնությամբ, ինչպես դնացի–խաղացի, գարմացա–հետացա և այլն:

Այսպես նյութական ու ձևական խմբեր են կազմում վոչ միայն գոյականի և բայի բառաձևերը, այլև բառակազմության ձևերը, որինակ՝ բոլոր կրավորականները՝ գրվել, խոսվել, քանդվել և այլն կազմում են մի խումբ. բոլոր պատճառականները՝ դարմացնել, հետացնել, նստեցնել և այլն՝ մի ուրիշ խումբ: Նույնպես բոլոր նույն ածանցով կազմված բառերը, ինչպես՝ քաղաքացի, գյուղացի, դավառացի և այլն՝ մի խումբ: Ցեվ այսպես բառերի շատ ուրիշ բազմազան խմբեր, որոնք կազմվում են մեր մտքի մեջ նմանական զուգորդությամբ:

16. ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ԽՄԲԵՐ:—Ինչպես վոր բառերն իրար հետ զուգորդվելով կազմում են դանազան խմբեր, նույնպես և շարահյուսական կապակցության ձևերը, որ-

տահայտված լինեն դրանց նշանակած հարաբերությունները միաժամանակ և բառաձևերով, թե լոկ շարահյուսական ձևերով, շարադասությամբ և համաձայնությամբ: Որինակ՝ «բարձր պատ», «դեղնցիկ տուն», «սեվ թանաք» և նման կապակցությունները կազմում են մի խումբ իրենց միևնույն ձևական նշանակությամբ, այն է՝ «բարձր» ածականը նույն հարաբերությունն ունի «պատի» վերաբերմամբ, ինչ որ «դեղնցիկ» ածականը՝ «տուն» գոյականի վերաբերմամբ և «սեվ» ածականը՝ «թանաքի»: Յուրաքանչյուր այս ածականների հատկանիշը վորոշող բառեր են, բայց դրանք գուգորդվում են վոչ միայն ֆունկցիայի նույնությամբ, այլև կապակցության ձևով—շարադասությամբ, այն է՝ դրվում են իրենց գոյականից անմիջապես առաջ: Իսկ «ծառի ճյուղ», «դպրոցի դուռ» և նման կապակցությունները գուգորդվում են ի մի խումբ վոչ միայն նույն ձևական նշանակությամբ և նույն շարադասությամբ, այլև նույն թեքման ձևերով, վորոնք ունեն նաև հընչյունների մասնակի նույնություն: Սակայն հնչյունական նույնություն չունեցող թեքման ձևերն էլ համախմբվում են մեր պրակտիկայի մեջ վոչ միայն իրենց ցույց տված ձևական նշանակությամբ, այսինքն՝ հարաբերության նույնությամբ, այլև կապակցության ձևով, որինակ՝ տղայի գիրքը, հոր գիրքը, աղջկա գիրքը, վորդու գիրքը, քրոջ գիրքը կապակցությունների «տղայի», «հոր», «աղջկա», «վորդու», «քրոջ» բառերը մի խումբ են կազմում վոչ միայն իրենց ֆունկցիայով, վոր և պատկանելության հարաբերություն, այլև շարադասության նույնությամբ: Այսպես և «գրչով գրեցի», «դանակով կտրեցի» և նման խոսքերի մեջ բայերի և իրենց խնդիրների հարաբերությունը նույն է, այն է՝ «գրչով» և «դանակով» ցույց են տալիս այն գործիքը, վորով կատարվում է գործողությունը, բայց այս ձևական նշանակության հետ կա նաև արտաքին հնչյունական նույնությունը և նույն շարադասությունը: Այսպես և «Տիգրանը գնաց», «Աչոտը գրեց» և նման խոսքերի մեջ «Տիգրան» և «գնաց» բառերի հարաբերությունը նույն է, ինչ որ «Աչոտ» և «գրեց» բառերի. յերկուսի մեջ էլ «Տիգրանը», «Աչոտը» յենթակա յեն և նույն ձևով են. դրանք ի մի խումբ միանում են, ուրեմն, յենթակայի հարաբերությամբ և նույն բացառական բառաձևով. բացի այդ, կա նաև նույն շարադասությունը և յենթակայի ու բայի նույն համաձայնությունը: Ձևի այսպես նաև շարահյուսական կապակցության

ձևերի ուրիշ խմբեր, վորոնք բոլոր կողմանակներով առաջ են գալիս և մեզանից ուսումնասիրում են, ինչպես բառերի խմբերը:

Այսպիսով, ուրեմն, լեզուն գոյանում է ամբողջապես բոլոր մարդիկ և բոլոր պատկերացումների գուգորդությունների միացնից. այս պատճառով դժվար թե լինի լեզվի մեջ վորևե բառ կամ շարահյուսական կապակցության ձև, վոր չգուգորդվի ուրիշների հետ և չմտնի վորևե խմբի մեջ:

17. ԱՆԱԼՈԳԻԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ:— Լեզվական պատկերացումների գուգորդության խմբերը, վոր մենք լեզու ստանում ենք դրսից, վորոնք և արդյունք են այն ամենի, ինչ որ մեր պրակտիկության մեջ մտել և ուրիշների խոսվածքը լսելով, մեր իսկ խոսելով և լեզվական ձևերով մտածելով, կարելի պեր են կատարում խոսվածքի գործունեության մեջ: Դրանց օգնությամբ և, որ մենք կարողանում ենք խոսել ստորել և խոսել: Խոսելիս մեր գործածած բառերի ու կապակցությունների միայն մի մասն և մեր մտքի մեջ ծնվում իսկ հիշողությամբ կամ վերարտադրվում իրրև հին ստորած բան. մնացած մասը մեր մտքի մեջ նոր առնչվում և կամ արտադրվում է լեզվական գուգորդության խմբերի անալոգիայով: Այս արտադրության գործունեությունը, վորով մենք անալոգիական կազմություններ ենք անում, ընթանում է յերկու ուղղությամբ:

1) Մենք դրսից լսողանում և ստորում ենք շատ բան, բայց հաճախ այնքան լսում, որ չենք կարող հիշողությամբ միայն վերարտադրել, յեթե օգնության չգան այն հարաբերության խմբերը, վորանց հարել են գուգորդությամբ մեր դրսից լսածները: Որինակ՝ դիցուք մենք իր ամրոցի կյանքի ընթացքում պատահարար մի անգամ լսել և «գաշտամարգում» ու «աքանչացավ» բառաձևերը և «քացախի գնալ» կապակցությունը, վոր նշանակում է՝ գնալ քացախ բերելու: Ուրիշից լսելով այդ՝ նա անչուշտ մոռացել է, վորովհետև այդի չի ունեցել այդ բառերը և այդ կապակցությունը վոչ ուրիշներից նորից լսելու և վոչ էլ ինքը գործածելու: Բայց և այնպես հարկավոր դեպքում նա հնչյունությամբ հիշում է և գործածում «գաշտամարգում» և «աքանչացավ» բառաձևերը, վորովհետև դրանք մենակ չեն մնացել նրա պրակտիկության մեջ, այլ գուգորդվելով մտել են մեկը գոյականների

նման հարաբերություն ցույց ավող ձևական խմբի մեջ, ինչպես են՝ քաղաքում, դաշտում, լեռկրում և այլն, իսկ մյուսը՝ նման տիպի բայերի ձևական խմբի մեջ, ինչպես են՝ պարմացավ, հեռացավ, լրացավ և այլն: Նույնպես նա հեշտությամբ հիշում և դործածում է իր մի անգամ մխայն լսած կապակցությունը «քացախի դնալ», վերոհիշյալ դա ևս դուդորդությամբ մտել և նման հարաբերություն ցույց ավող կապակցությունների խմբի մեջ, ինչպես են՝ ջրի դնալ, հացի դնալ, վայրի դնալ, ցախի դնալ և այլն, որոնց բոլորի մեջ նույն ձևական նշանակությունը կա և նույն ձևը: Ուստի, լեթե հնարավոր է լինում մեկ անգամ մխայն լսած և մոռացած «դաշտավայրում», «աքանչացավ» բառաձևերը և «քացախի դնալ» կապակցությունը հիշել և խոսելիս դործածել հեշտությամբ, այդ մխայն այն պատճառով, որ այդ դեպքում դործում է միայն վերարտադրության, այլև արտադրության. այն է՝ մենք հենվելով նույն հարաբերությունների ձևական խմբերի վրա՝ նմանությամբ նաև ստեղծում ենք «դաշտավայրում», «աքանչացավ» ձևերը և «քացախի դնալ» կապակցությունը:

2. Բայց դիցուք, մի մարդ իր կյանքում լեռկրից չի լսել ու-բիչից «դաշտավայրում», «աքանչացավ» բառաձևերը և «քացախի դնալ» կապակցությունը. սակայն, նա հաճախ լսել և դործածել է նման ձևերը՝ դաշտում, դալրացում, լեռկրում և այլն, ինչպես և հեռացավ, դարմացավ, լրացավ և նմաններդը, այլև նման կապակցությունները՝ ցախի դնալ, հացի դնալ, ջրի դնալ և այլն: Խոսելու ժամանակ նա, լեռը հարկավոր է, հեշտությամբ ստեղծում է «դաշտավայրում», «աքանչացավ» բառաձևերը և «քացախի դնալ» կապակցությունը, հենվելով նույն հարաբերությունները ցույց ավող բառաձևերի և կապակցության ձևի վրա: Այս դեպքում նա միշ թե վերարտադրում է հիշելով, ինչ որ ուրիշներից առաջ լսել ու սովորել է, այլ միայն արտադրում է կամ, ինչպես ասում են, անալոգիական կազմություն է անում, այսինքն՝ իր լսածած ձևերի նմանությամբ նա ինքն ստեղծում է նույնանման ձևեր:

Անալոգիական կազմությունը խոսվածքի դործունեության համար ամենամեծ դործոններից մեկն է: Ցեթե դա մի կողմից՝ պղնում է մեզ մեր լսած ու մոռացածը վերհիշելու, մյուս կողմից՝

դրանով մենք ստիպում ենք խոսել՝ առանց դրսից շատ բան լսած և ընդունած լինելու: Ցեվ իսկապես, շատ ու շատ բայերի ու դոյականների ձևերը, ինչպես և շատ շարահյուսական կապակցության ձևերը, կարելի է ասել՝ մեր աշխատանած խոսքերի ամենամեծ մասն առաջ չենք լսել ուրիշներից, ուրեմն և դրսից ընդունելով չենք յուրացրել և չենք վերարտադրում, այլ միայն խոսելու վայրկյանին կազմում ենք հենվելով նման խմբերի վրա: Այսպես օրինակ՝ մի նոր ստեղծած բայ կանոնավոր կերպով խոնարհում ենք և խոսքի մեջ ճիշտ դործադրում, կարծես թե առաջուց այդ բայի բոլոր ձևերը շատ անգամ լսած ու դործածած լինեինք. կամ մի նոր ստեղծած դոյական, թեկուզ մի ոտարպի հատուկ անուն, որ առաջին անգամն ենք լսում, կանոնավորապես հոլովում և կերտում ենք խոսքի մեջ: Բավական է միայն, որ այդպիսի բառի մեկ ձևը դրսից ընդունում ենք և այդ մեկ ձևը մանում է մեր դիտակցության մեջ կեդած դոյականների կամ բայերի այս կամ այն ձևական խմբի մեջ,— մյուս ձևերը և նրանց կապակցությունները արդեն ինքնաբերաբար ծնվում են մեր մաքի մեջ: Բավական է միայն, որ մի նոր ստեղծած բառ, ինչպես «լուբթ» (բաց կապույտ), մեր դիտակցության մեջ մանում է իրրև առարկայից անբաժան հատկանիշի անուն, և մենք այդ նոր ստեղծած բառը դործադրում ենք նույն կապակցության ձևերով, ինչ որ մեր իմացածները, և ասում ենք՝ լուբթ լեռկինք, լեռկինքը լուբթ է և այլն.

Այս անալոգիական կազմության ոգնությամբ է, որ լեռնական 3–7 տարեկան հասակում արդեն կարողանում է իր իմացած դոյականները կանոնավոր կերպով հոլովել և՛ բայերը խոնարհել և՛ կանոնավոր պարզ խոսքեր կազմել՝ առանց դրսից լսած լինելու իր բանեցրած բառաձևերի և կապակցության ձևերի մեծ մասը:

Գ.

ԼԵԶՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

18. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ։—Նույնիսկ մեկնուն լեզվական չրջանին պատկանող անհատները միմյանց բոլորովին նման չեն խոսում, այլ յուրաքանչյուրն ունի իր ուրույն անհատական լեզուն։ Դա բնական հետևանք է խոսվածքի անխզրական պարծանելության։

1. Բնականաբար հասկանալի է, որ ամեն անհատ պլսից չի սահմանում և չի էլ կարող սահման լեզվական գուգորդությունների բոլոր իմաստներն իրենց բոլոր բազմազան արտահայտչամիջոցներով, այլ ամեն անհատ ընչացնում չատ բառեր, նույնպես կապակցության չատ ձևերը իր կյանքի ընթացքում նույնիսկ չի լսում ուրիշներից, ուրեմն չի սովորում և չգիտե։ Բացի այդ՝ մի մարդ կարող է այս ու այն բառերն ու կապակցության ձևերը լսած չլինել ու չիմանալ, մի ուրիշ մարդ՝ ուրիշները։ Հետևաբար և ամեն սահմանված անհատի լեզու, քանի որ կերպավորվում ու զարգանում է նայելով իր կրած ազդեցություններին, ավելի կամ պակաս չափով սահմանվում է ուրիշների լեզվից։

2. Ամեն մարդ միշտ ավելի բառեր ու լեզվական ձևեր է հասկանում, քան ինքը գործածում է խոսելիս։ Դրա պատճառն այն է, որ հաճախ, ինչպես մարդուց ուրիշ պատկերացումները, նույնպես և լեզվական գուգորդությունները այնքան թույլ են լինում, որ բոլորովին սահմանին պարագաներ են հարկավոր, որ նորից մեր գիտակցության մեջ գան և մենք խոսելիս գործածենք դրանք։ Կարող են և այնպիսիները լինել, որ կերրեք չգիտենք դրվին։ Մենք այդպիսի լեզվական ձևերը հասկանում ենք ուրիշների խոսելիս, բայց չենք գործածում մեր խոսելիս։ Վերջին ավելի մեծ թվով բառերի ու կապակցությունների մեջ է գիտեն գալիս գուգորդություններ և կամ ավելի հաճախ կրկնվում է, և կամ նշանակության ու հնչյունների ավելի մեծ նույնության կամ նմանության հնչյունների ավելի մեծ նույնության կամ նմանության ու հնչյունների ավելի մեծ նույնության կամ նմանության ու հնչյունների ավելի մեծ նույնության կամ նմանության ու

4· Ավելի զգալի են բառերի նշանակության տարբերությունը, որ առանձին անհատներ կապում են միևնույն բառի հետ։ Ամեն պատկերացում, թեկուզ մի հատ առարկայի, զգացք՝ այսինչ հատուկ սեզանի, ինչպես սեւանը, բարդ է՝ կազմված լինելով բազմաթիվ տարրերից։ Այդ պատճառով առանձին անհատների պատկերացումները նույնիսկ մի հատուկ առարկայի մասին՝ տարբեր են լինում, նայելով թե այդ առարկայի պատկերացման վո՛ր կողմն ավելի ուժեղ և ազդավորված անհատի մոտ է։ Հետևաբար և բառերի նշանակությունն առանձին անհատների համար նույնիսկ մի յուրական առարկայի վերաբերմամբ՝ կատարելապես նույնը չէ, քանի որ յերկու տարբեր անհատներ միևնույն առարկայի կատարելապես նույն պատկերացումը չեն կարող բառի արտաբին կազմի— հնչյունների հետ։

Միևնույնը լինում՝ և նաև այն ժամանակ, յերբ մենք բառով արտահայտում ենք մոչ թե անհատ առարկաների, առանձին գործողությունների ու հատկությունների պատկերացումները, այլև նրանց ընդհանուր պատկերացումները, ինչպես օրինակ՝ յերբ «ձի» բառը գործածում ենք մոչ թե այսինչ կամ այնինչ ձիու համար, այլ ընդհանրապես «ձիու»։ Արդարև, ձիշտ մտածողության համար առարկայի ընդհանուր գաղափարը պետք է իր մեջ ամփոփի առարկայի ընդհանուր յերկրային հատկանիշների ամբողջությունը, որ պետք է նույնը լինի բոլոր մարդկանց համար. բայց այսպիսի գիտական ճշտություն չկա սովորական լեզվի մեջ։ Այստեղ միևնույն տեսակին պատկանող բոլոր առարկաների ընդհանուր պատկերացումը կազմվում է մոչ թե կատարյալ ճշտությամբ նրանց ընդհանուր յերկրային հատկանիշների ընդհանրացումով, այլ նույն տեսակի մի քանի առարկաների, յերբեմն նույնիսկ մի հատ առարկայի մի քանի այնպիսի հատկանիշների առնելով, որոնք մոտիվ պատճառով ամենից աչքի են զարգացված մեր մտքի մեջ կա՛մ այն պատճառով, որ ամենից ուժեղ են ազդած մեր վրա, կա՛մ ամենից հաճախ են կրկնվել մեր մեջ մեր պարապմունքի պատճառով, կա՛մ մենք ամենից ուշ ենք մոռանում պատճառով։ Ուստի և յերբ մենք խոսում ենք մի տեսակի առարկայի մասին ընդհանրապես, թեպետ նույն բառն ենք գործածում, ինչ որ ուրիշները, բայց գրա հետ կատարելապես նույն ընդհանուր պատկերացումը չենք կապում, ինչ որ ուրիշները։ Առնենք, օրինակ, «ուղտ» բառը։ Ինչպես ուրիշ բառերի, նույնպես և այս բառի նշանակությունը կազմված է բազմաթիվ հատկություններից, որոնցից մեկը կամ մյուսը կարող է գոյել լինել մի անհատի մեջ, իսկ մի ուրիշ անհատի մեջ թուլ լինել կամ բնավ չլինել։ Նույն ուղտն ա՛յն մարդկանց համար, որոնք ուղտ հետ առանձին գործ չեն ունեցել, կամ նույնիսկ չեն տեսել այդ կենդանին, կամ մի անգամ միայն մի հատ ուղտ են տեսել,— նույն չէ, ինչ որ այդ կենդանին ուսումնասիրող մի բնագետի համար, կամ մի ուղտապանի համար։ Դրանցից յուրաքանչյուրն առանձին ձևով և պատկերացնում այդ կենդանին և ավելի կամ պակաս հարուստ բովանդակություն և կապում այդ նույն «ուղտ» բառի հետ։ Այսպես և ուրիշ բառերի մեջ առանձին անհատներն առանձին էլ նշանակություն են դնում, մանավանդ զգացմունք և բարոյական հատկություններ ցույց տվող բառերի, ինչպես են՝ բարոյական ու անբարոյական, դեղեցիկ ու տգեղ, լավ ու վատ, առաքինություն ու մոլություն և այլն։ Ինչ որ մեկի համար լավ, դեղեցիկ, գործնական է, նույնը մեկ ուրիշի համար յերբեմն նույնիսկ վատ, տգեղ, անպետք է. ինչ որ մեկի համար մոլություն է, յերբեմն մեկ ուրիշի համար առաքինություն է։

Ինչպես առանձին բառերի նշանակությունները տարբեր են զանազան անհատների համար, նույնպես տարբեր են նաև բառերի ձևական նշանակությունները, հաճախ և բառերի կապակցության ձևերի նշանակությունները։

19· ԱՆՀԱՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.—Ամեն անհատի լեզու միշտ յենթակա է փոփոխության, որովհետև մարդ իր ամբողջ կյանքի ընթացքում չարունակ նոր բառեր ու լեզվական կապակցության նոր ձևեր է լսում և սովորում ուրիշներից։ Արդարև մանկության ժամանակ այս ուսումն ավելի արագ և մեծ չափով է տեղի ունենում, քան չափահասության ժամանակ, բայց մինչև մահն էլ մարդ յերբեք չի դադարում լեզու սովորելուց, այլ միշտ ընդունում է կա՛մ նոր բառեր, կա՛մ բառերի նոր նշանակություններ և նոր զարձվածքներ, որոնք առաջ գործածական չեն յեղել լեզվի մեջ, կամ թե սովորում է լեզվի մեջ յեղած հին բառեր ու կապակցության ձևեր, որոնք առաջ ուշի չի ունեցել սովորելու։ Ինչքան էլ հարուստ լինի անհատի լեզուն, յերբեք չի կարելի ասել, թե նա ամեն բան գիտե լեզվից. և յեթե չատ բան գիտե, իր գիտցածի մի մասն անպատման թուլ է և կրկնվելով

պրանում ու ավելի դործոն և դառնում, քան առաջ: Յեվ ընդհակառակն, շատ բան էլ, որ կրկնվելով չի նորոգվում մարքի մեջ, հետզհետե թուլանում է և դժվարությամբ և վերարտադրվում, կամ բոլորովին մոռացվում է: Յեվ վերջապես մի ինչ-ոչ անհատի համար բառական պատկերացումները նույն չեն մնում, որովհետև մարդուս ծանոթությունները, նույնիսկ մի ինչ-ոչ առարկայի մասին, կա՛մ ընդարձակվում են նոր բան սովորելով, կամ նեղանում են իմացածը մոռանալով: Ուստի, թեպետ բառը նույնն է մնում, բայց նույն բառի հետ տարբեր պատկերացումներ են կապվում ազգագրում, քան անցյալում: Յեվ այսպես շարունակ փոխվում է ամեն անհատի լեզու, և այս փոխվությունն առանձին անհատների համար տարբեր ուղղություններով է լինում, որով և նորանոր տարբերություններ են յերևան գալիս անհատական լեզուների մեջ:

20. ԱՆԱԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Անհատական լեզուները փոխվում են միայն ուրիշների ազդեցությամբ և նոր բան սովորելով կամ հին իմացածը մոռանալով, այլև ինքնուրերաբար, խոսածի սովորական գործունեության ընթացքում, լեզվական ձևերով խոսելիս ու մտածելիս: Այդ ժամանակ մարդս, ինչպես տեսանք, վերարտադրում է իր սովորած լեզվական իրակությունները, և ապա անալոգիական կազմությամբ արտադրում է այնպիսի ձևեր, որ ինքը չի սովորել, բայց լեզվի մեջ կան: Սակայն խոսելիս յերբեմն էլ նա ճշտությամբ չի վերարտադրում իր սովորածը և անալոգիայով ստեղծում է նաև այնպիսի բառեր, բառերի այնպիսի նոր նշանակություններ ու բառաձևեր կամ կապակցության ձևեր, որոնք ուշ միայն պրակից չեն մտել իր պրակտիկության մեջ, այլև յերբեք գոյություն չեն ունեցել լեզվի մեջ:

Այս անալոգիական ստեղծագործությունն ընթանում է յերկու ուղղությամբ:

1. Առնում են լեզվի մեջ յեղած բառերը, ինչպես «պատառատ» կամ նույնիսկ լեզվի մեջ նոր մտած մի ռուսերեղի բառ, ինչպես՝ «վաքս», «մոզութ»; և դրանցից կազմում են՝ «պատառատել», «վաքսել», «մոզութել» և կանոնավորապես խոնարհում բոլոր ձևերով՝ լեզվի մեջ գոյություն ունեցող «թղթել», «յեկել», «ձիթել» և նման բառերի անալոգիայով: Մեկնից, անշուշտ, չառերն արդեն լսած են «պատառատել», «վաքսել» և «մոզութել» բառերը,

և մենք այդ բառերը գործածելիս՝ վերարտադրում ենք առում: Բայց այդ բառերն առաջին անգամ գործածողը, դուցե և գործածողները,—որովհետև հաճախ նույն բանը միաժամանակ ծլնում է շատ մարդկանց մեջ իրարուց անկախ,—անալոգիական նոր կազմություններ է արել. նա ստեղծել է այնպիսի նոր բառեր ու ձևեր, որոնք լեզվի մեջ մինչ այդ գոյություն չեն ունեցել:

2. Հաճախ առաջ են գալիս այնպիսի նոր անալոգիական կազմություններ, որոնց համապատասխան նշանակություններ ունեցող ձևերը կան լեզվի մեջ: Այսպես, օրինակ՝ յերեխաները և լեզուն նոր սովորողները, որոնց դիտակցության մեջ դեռ թույլ է «ուտեմ–կերա» բառերի զուգորդությունը (որ միայն նշանակության վրա յի հիմնված), նոր կազմում են «ուտեցի» ձևը: Գործածողն ի հարկե չի նկատում, որ այս ձևը սովորական կիրառության համապատասխան չէ, քանի որ նա «ուտեմ–ուտեցի» ձևը կազմում է «կտրեմ–կտրեցի» մեծ խմբի անալոգիայով: Այս սխալն, անշուշտ, յերկար չի տևում, որովհետև «ուտեմ–կերա» ձևը շատ գործածական լինելով՝ ուրիշներից շարունակ լսելով՝ ցնորացնում են յերեխաները: Ամեն մարդ էլ, սակայն, նույնիսկ հասուն տարիքում, յերբ բավական լավ տիրապետում է լեզվին, շարունակ այսպիսի սխալներ է անում, կամ ճշտությամբ չի արտաբերում հնչյունները սովորական արտասանության համեմատ, կա՛մ մի նոր ձևով հոլովում ու խոնարհում է, կա՛մ մի նոր ձևով շարահյուսական կապակցություն է անում: Շատ անգամ մենք ինքներս խոսելիս ուղղում ենք այդպիսի նոր կազմությունները, նկատելով որ դրանք համապատասխան չեն արդեն գոյություն ունեցող և մեր սովորած հին ձևերին, որոնք՝ սխալն անկասկած հետո ծնվում են մեր մարքի մեջ: Պատահում է, որ մենք չենք նկատում այդպիսի սխալը, այլ ուրիշներն են դիտում այդ, և մենք նոր դլխի յենք ընկնում, որ սովորական ձևով չենք խոսել. պատահում է, որ ուրիշներն էլ չենք նկատում այդ, և այդպիսի նոր ձևերն արտասանվելուց հետո՝ անցնում դնում են: Բայց պատահում է նաև, որ այսպիսի նոր կազմության ձևերը, սխալ կամ թերի արտաբերություններ, աննկատելի մնալով թե խոսողի և թե լսողների համար, հարատևում են երբեմն մի անհատի լեզվական սխալներ, որոնք կամ անհատի հետ մեռնում են, կամ յերբեմն նաև անհատից անցնում են իր շրջապատողներին, նրանց մեջ էլ մնում են և նույնիսկ նրանցից անցնում հաջորդ սերնդին:

Այսպիսի նոր կազմություններով սկիզբն է դրվում լեզվի վոխհարաբերության:

21. ԼԵԶՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՄԲ:— Նոր կազմություն մի անհատից անցնելով ուրիշներին՝ ընդհանրանում է, երբ անպետքական է մնում թե այդ կազմությունը գործածողի և թե լսողների համար: Ձևի մեջ էլ անպետքական է մնում այդ և ասանց սրվելքի ընդունվում լսողներից, երբ խոսողը և լսողները չեն սովորել, չդիտեն նոր կազմության համապատասխան հին ձևը, և երբ առեղծվում է մի այնպիսի բառ, բառաձեվ կամ կապակցության ձև, վորի համապատասխան արտահայտություն չկա լեզվի մեջ: Այդպիսի դեպքերում նոր կազմությունները լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող ձևական մեծ խմբերի վրա հիմնված, սխալ չեն համարվում և մնալով խոսողի ու լսողների մտքի մեջ՝ կարող են նույնիսկ, յեթե կարիք կա այդ արտահայտության համար, կրկնվել իրրև մի անգամ արդեն գործածածի կամ լսածի վերարտադրություն, և մինչև անգամ ընդհանրանալ:

Նոր կազմության ձևերը, անհատից սկսվելով, կարող են ընդհանրանալ նաև այն ժամանակ, երբ լեզվի մեջ կան համապատասխան նշանակությամբ հին ձևերը, վորոնք, սակայն, դուրս-դուրության մեծ խմբերի մեջ չմտնելով և կամ հաճախ չկրկնվելով, սերտ չեն կապված ուրիշ ձևերի հետ: Որինակ՝ մինչդեռ միայն նշանակությամբ դուրսդրվող «ուտեմ–կերա» ձևի փոխանակ չի տարածվել կանոնավոր «ուտեցի» ձևը, նույնպես միայն նշանակությամբ դուրսդրված հին «ճանապեմ–ծանեյա», «ընդունեմ–ընկալայ» ձևերի փոխանակ լեզվի մեջ արդեն սովորական են «ճանաչեցի», «ընդունեցի» ձևերը, վորոնք «ճանաչեմ» և «ընդունեմ» բայերի հետ միայն նշանակությամբ, այլև հնչյունների շարքով են դուրսդրվում և մտնում են բայական ձևերի դուրսդրության մեծ խմբի մեջ:

Պատահում է, վոր նոր կազմություն ընդհանրանում է՝ պահելով հին ձևի նշանակության մի կողմը միայն. որինակ՝ հին լեզվի «առնեմ–կալա» բառը նշանակում է՝ առնել, բռնել, տիրել և այլն: Այդ բայի համար անալոգիական նոր կազմությամբ առաջ է եկել «առնեցա» ձևը, վոր և գործածվում է «առնել» նշանակությամբ. իսկ հին կետաբայլը՝ «կալայ» մնում է բառերի մեջ «բռնելը» նշանակությամբ:

Նոր ձևերը, յերբ նրանց համապատասխան հին ձևերը չկան լեզվի մեջ, հեշտությամբ ընդունվում և տարածվում են. բայց յերբ նոր ձևի համապատասխան հին ձև կա, նոր ձևերը, ինչպես և նոր արտահայտությունը (վորի համապատասխան հին արտահայտություն միշտ կա), մի անգամից չի ընդունվում և տարածվում: Սկզբում հինը և նորը սովորաբար խառն գործածվում են նույնիսկ միևնույն անհատի բերանին, կամ վոմանք պահում են հին ձևը, ուրիշները նորն են ընդունում. որինակ՝ այժմ հաճախ կարելի է լսել մեր գրական լեզվի մեջ նույնիսկ միևնույն անհատից թե «բերան, բերել, պատի» և թե «պերան, պերել, պատի». թե «բերթով, ասվով», և թե «բերից, ասից» և այլն: Բայց յերբ այդպես տարբեր ձևերով խոսող մարդիկ անընդհատ հարաբերության մեջ են լինում, վերջիվերջո մի հարթում և տեղի ունենում, և հին ու նոր ձևերից մեկն ու մեկը, յերկար մրցությունից հետո, իշխում է, իսկ մյուսը մեռնում է:

Զգեաք և կարծել, թե այսպիսի կրկին ձևերից նորը միշտ կհաղթի. այլ ընդհակառակն, սովորաբար հինն է իշխում, իսկ նորը մի ժամանակ մի վորքր չքնանում տարածվելուց հետո՝ մեռնում է, տեղի տալով հնին: Բայց յեթե մենք ավելի նոր կազմությունների իշխումն ենք տեսնում, այդ նրանից է, վոր նոր կազմություններով փոխվում է լեզվի կերպարանությունը և փոփոխությունը դժվար է լինում մեզ համար. մինչդեռ յերբ նոր ձևերը մի ժամանակ մի վորքր չքնանում մնալուց հետո մեռնում են, այդ դժվար չի լինում ընդհանրապես: Այսպես որինակ՝ մեր գրական լեզվի և արևելյան բարբառների մեջ արդեն մոռացության է տրված հին «պարմացույց» ձևը, և իշխում է նոր «պարմացրի» ձևը: Բայց մեր խոսակցական լեզվի մեջ կա մի համեմատաբար ավելի ևս նոր կազմություն՝ «պարմացրեցի», վոր հաճախ անխախտ գործ են ածում «պարմացրի» ձևի հետ միասին. չգիտեք և կարծել, թե անպատճառ այս նորագույն ձևը կ'իշխի. համաձայն գրական լեզվի մեջ կը չարունակի մնալ հին «պարմացրի» ձևը, վոր ավելի կարճ է: Այսպես և կրավորական բայերի կազմությունը «վ» հնչյունով, վոր գրաբարում չկա և նոր առաջ է եկել հին «հերձուած», «հատուած», «պանդուած» և նման բառերի անալոգիայով, հետզհետե, ընդհանրանալով, արդեն անցել և պատճա-

ական բայերին, և սրանցից էլ առաջ են գալիս կրավորական բայեր, այն էլ կրկին ձևով՝ մացնվել, հեռացնվել. մացրվեց, հեռացրվեց. այլև մացվել, հեռացվել. մացվեց, հեռացվեց. մի քանի տարի առաջ գործածվում էին ավելի շրջանց առաջին ձևը, իսկ այժմ՝ ավելի կրկրորդ ձևերը, որոնք և համանուանն պիտի լիներ:

Նոր կազմության ձևը մի անհատից սկսվում՝ սկզբում ընդունվում է, հարկավ, մի շատ նեղ շրջանում. բայց հետզհետե շատերը լսելով այդ՝ յուրացնում են, նամանավանդ կերբ սրանք էլ գտնվում են նույն լեզվական վիճակի մեջ: Նոր սերունդ, որի համար հին ու նոր չկա,—քանի որ նա ամեն ինչ նոր է սովորում,—միակերպ ընդունում է թե հինը և թե նորը և կերկուսն էլ անխտիր գործածում: Երբ նոր սերնդից բազմաթիվ անհատների մեջ լեզվի զարգացումն այն ուղղությամբ է ընթանում, որ ավելի նոր ձևն են գործածում, այն ժամանակ հին ձևը հետզհետե մնում է միայն հին սերնդի մեջ, որի հետ և վերջապես մեռնում է՝ բոլորովին մոռացության տալվում: Այսպիսով նոր կազմություններ, որ սկսվում մի անհատից՝ սկզբում անսովոր և նույնիսկ սխալ և համարվում, գտնում է կրթության սովորական և «ուղիղ» ձև, որով և լեզուն փոխվում է: Բազմաթիվ այսպիսի փոփոխությունների հետևանքը լինում է որևէ լեզվի ընդհանուր փոփոխությունը, որը, ահագին, անկի չ ունենում գրերի ընթացքում շատ դանդաղ և անզգալի:

Մեր նոր լեզվի մեջ կապակցության ձևերի ու բառաձևերի տարբերությունները հնից՝ մեծ մասամբ այսպիսի անալոգիական նոր կազմություններով են առաջ գալիս:

Անհատներից են ծագում և ընդհանրանում նաև հնչյունների ու բառերի նշանակության փոփոխությունները: Վերևում արդեն տեսանք, թե ինչպես անհատական արտասանություններ, թեպետ հաճախ անզգալի չափով, տարբերվում են միմյանցից, և թե ինչպես զանազան անհատների համար տարբեր նշանակություններ ունեն միևնույն բառերը և բառերի նույն ձևական մասերը, որոնք նայելով անհատին, պատկերացումների ավելի կամ պակաս հարուստ բովանդակության հետ են կապվում: Բայց բառերի նշանակություններ փոխվում և նաև բառերի պատահական նշանակությամբ գործածվելուց: Այդ երանից և առաջանում, որ ամեն

մարդ ամեն չատ պատկերացումներ ունի, քան բառեր գիտե, կամ մարդ չի կարողանում խոսելիս հիշել իր իմացած բառերը, կամ թե չատ պատկերացումների համար նույնիսկ առանձին բառեր չկան լեզվի մեջ: Այդպիսի դեպքերում խոսողն իր պատկերացումները հաղորդում է ուրիշներին իր իմացած կամ նույն բոլորին իր հիշած բուն կարելություն հարմար բառով, որը արտահայտում է իր զգացմունքի բովանդակության մի մասը, աչքի ընկնող մի հատկանիշը, երևան կողմը, կամ թե իր արտահայտելի գաղափարի հետ որևէ մոտիկ առնչություն ունի: Այսպիսով բառը գործածվում է որոշ թե իր սովորական նշանակությամբ, այլ մի նորիմաստ պատահական նշանակությամբ:

Իհարկե ամենքս էլ հաճախ բառերն անգիտակցաբար գործածում ենք պատահական նշանակություններով: Այսպիսի կիրառությունները ամենամեծ մասով վայրկենաբար գործածվելով՝ անցնում մոռացվում են: Բայց լինում է նաև, որ միևնույն բառը միևնույն պատահական նշանակությամբ գործածում ենք և կերկրորդ ու կերրորդ անգամ. այսպիսի դեպքերում պատահական նշանակությունը կրկնվելով զուգորդվում է բառի հնչյունական կողմի հետ, և այնուհետև նկատվում է նաև նախորդ գործածության հիշողությունը, և մենք չարունակում ենք բառը պատահական նշանակությամբ գործածել որոշ թե արդյունքով, այլ հինը վերարտադրելով: Ճիշ մարդկանց անհատ ազդում է իր շրջապատողների լեզվական զուգորդությունների վրա, նրանք էլ, կերբ հանդիպում են մեկ ուրիշի պատահական նշանակությամբ գործածություններ, ընդունում են այդ, մանավանդ եթե իրենք էլ նույն վիճակի մեջ են գտնվում, այսինքն կարիք են զգում իրենց պատկերացումն արտահայտելու և ուրիշ հարմար բառ չեն գտնում, քան իրենց լսածը: Բառերի այսպիսի նորիմաստ պատահական գործածությունները սկզբում սովորաբար խորթ են թվում և շատ անգամ գրանք էլ կարճատև ապրելով մի վոքր շրջանում՝ մոռացվում են. բայց կերբեմն էլ հետզհետե տարածվելով՝ ընդհանրանում են և նույնիսկ սովորական գտնվում:

Վորքան ավելի մեծ և անհատի լեզվական ազդեցության շրջանը, այնքան ավելի արագ են ընդհանրանում նրա գործածած պատահական նշանակությունները: Այս նկատմամբ մեծ և առանձնապես բանաստեղծների դերը, քանի վոր նրանց կերկերն ավելի ընդարձակ շրջաններում են կարդացվում և ավելի շատ են ազդում. ուստի և նրանց գործածած պատահական նշանակություն-

նրանք ավելի են տարածվում ու սովորական դառնում: Մի քան կողմից՝ ժողքան ավելի ազգքան և մեկը բառերի պաշարով, այնքան ավելի տրամաղիր և նա բառերը պատահական նշանակություններով գործածելու և ուրիշների գործածած պատահական նշանակությունները յուրացնելու: Այս պատճառով բառերի նոր նշանակությունները սկսում են հաճախ լեզվախոսներից և անգրագետ ու անուս մարդկանցից, որոնք ավելի ազգքան են բառերով, ինչպես օրինակ՝ մի գյուղական խոսքերի մեջ «ճանճրալի» բառի հետևյալ կիրառությունը՝ «Մեկ համար չատ ճանճրալի» կի պարենտրը վճարել, որովհետև մենք բերք չենք ունեցել»—ուզում է ասել «ծանր է»: Մանուկները, որոնք ոչ մի քան չատ բառեր չգիտեն, այլ և բառերի ընդհանուր նշանակությունները չգիտեն, չատ անգամ կիրկու բոլորովին տարբեր պատկերացում, վորևէ մանկական նմանության պատճառով, նաև բառով են արտահայտում, և այդ խորթ չի թվում նրանց. օրինակ՝ կիրը չատ րոպե թեկը համար պատահական նշանակությամբ ասում են՝ «այս թեկը ցեղեկ է», կամ կիրը «ծիա» բառն ընդհանրացնելով արդեն գործածում են «թռչուն» բառի նշանակությամբ, և նման: Ցեղերնան ոչ մի քան ինքն առեղծում է բառերի պատահական նշանակությունները, այլև, որ գլխավորն է, քանի որ նա դեռ չգիտե տարբերություն դնել բառերի պատահական ու սովորական ընդհանուր նշանակությունների մեջ, հեշտությամբ ընդունում և յուրացնում է մեծերից լսած պատահական նշանակությունները, որով և ինչ որ հին սերնդի մեջ մի պատահական ու անսովոր գործածություն է լինում, նորը սերնդի մեջ անսովոր չի համարվում և հեշտությամբ ընդհանրանում է:

Բայց նաև լինում է նաև չտիտասարդության ժամանակ. որովհետև մարդ չարունակ ոչ միայն բառեր, այլ և բառերի նորանոր նշանակություններ և սովորում, այն էլ հաճախ պատահարար, անճիշտ կերպով, կիրկում բառի հետ կապով բոլորովին տարբեր մի նշանակություն: Այսպես օրինակ՝ «հուն» բառը, որ նշանակում է՝ գետի անցք, այն ծանծաղ տեղը, որտեղից կարելի է որոշ անցնել գետը, մեր աշխարհաբարության պատկերների մեջ գործածվում է գետի «տաշտ», «փոսի» նշանակությամբ, իրրեև այն տեղը, որտեղ ջուրը հոսում և գետը: Վորևէ մի անհատ հին «հուն» բառն այսպիսի պատահական նշանակությամբ գործածել է, ուրիշներն ընդունել են այդ, և այժմ «հուն» բառի այս նոր նշանակությունն աշխարհաբարության պատերի միջոցով արդեն ընդհանրացած ու չատ գործածական է նոր սերնդի մեջ, նույն իսկ չատ փոխաբերական նշանակություններով:

22. ԼԵԶՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՐԻՇ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՄԲ:—Լեզվի փոփոխության մեծ գործոններից մեկն է նաև ուրիշ լեզուների ազդեցությունը, որին ենթակա է ամեն լեզու, քանի որ ազգերը միմյանցից կտրված չեն ապրում: Այս փոփոխությունը միևնույն լեզվանակով և ատաջ գալիս, ինչ որ ընդհանրապես ամեն փոփոխության լեզվի մեջ: Դրա սկզբնական աղբյուրն այնպիսի անհատներն են, որոնք խոսում են թե իրենց ազգային լեզվով և թե մի ուրիշ լեզվով, կամ թե հասկանում են մի ուրիշ լեզու և լսում են այս լեզվով խոսողների:

Ուրիշ լեզուների ազդեցությունը կրկնակի լինում է գիտակցաբար: Խոսողը բարձր գնահատելով ատաջ լեզուն, կամ կրկնվածի մի հատկանիշ համարելով ուրիշ լեզվով խոսելը՝ իր համար պարծանք և կարծում այլ լեզվով խոսելը կամ իր ազգային լեզվի մեջ ատաջ բառեր, դարձվածներ և նույնիսկ ամբողջ ատացվածներ խառնելը: Ուրիշ լեզվի ազդեցությունը, ատիճան, սովորաբար լինում է անգիտակցաբար: Ազգային լեզվով խոսողը ատաջ բառեր ու կապակցության ձևերը գործածում է հաճախ բոլորի կարելիքին բավարարության ատաջ համար և այդ անում է նա այն պատճառով, որ կամ չգիտե ազգային լեզվի բառերն ու կապակցության ձևերը, կամ այնքան հեշտ և սովոր բառերի ու կապակցության ձևերի պատկերացումը նրա մեջ, որ խոսելու ժամանակին միտը չեն գալիս, կամ նույնիսկ դժվարություններ կան, որոնց համապատասխան բառեր չկան իր ազգային լեզվի մեջ, ինչպես են՝ գրքից մտած նոր գաղափարները, նոր մշակության ձևերը, նոր արվեստներ, ապրանքներ և այլն, կամ կան համապատասխան բառեր ու կապակցության ձևեր, բայց խոսողին թվում է, թե այն չեն արտահայտում, ինչ որ ատաջ լեզվինը:

Սովորաբար բառեր և կապակցության ձևեր են առնվում ուրիշ լեզուներից և ոչ ատանձին ձևական մասեր: Բայց կիրկ

մի վրաև լեզվից մտնում են նաև ամանոթով կազմված բարդ-թիվ բառեր, որոնց բնիկն ևս մենակ գործածվում են, և այդ բառերն այլևս չեն զանվում բնիկ բառերից, այլ ժամանակ գրանց ամանոթական մասերն արդեն գործոն են դառնում և ուրիշ բառերի հետ զուգորդվելով՝ նոր բառեր են կազմում: Այսպես են, օրինակ, պարսկերենից հայերենի մեջ մտած «աման», «ական» և այլ ամանոթները, որոնցից մի քանիսը, ինչպես «ական»; շատ սովորական են դարձած հայերենում, և շարունակ նորանոր բառեր ենք կազմում դրանցով:

Որոշ լեզվի պատկանելության մի հատկանիշ էլ այն է, որ նրա-սորն իր բնիկ բառը գործածում է մի նոր նշանակությամբ: գրբառով բնորոշվում, ապա և փոխվում է բնիկ բառի նշանակությունը: Այս մեծագույն հաճախ դիտարկվում է. և դիտության, արվեստների և այլ ասպարեզների նկատմամբ. փոխառնակ ոտար բառեր բնորոշելու՝ դրանց համապատասխան նշանակությունները սրվում են բնիկ բառերին, և կամ այլ լեզուների բառերի օրինակով նոր բառեր են կազմվում: Ամեն լեզու էլ այս կերպարանքով հարստանում ու ճկուն և պատրաստ արտահայտելու համար, բայց մեծամասնակ և փոխվում է և կերպարն ազատվում, կերը առանց կարիքի մի նոր նշանակությամբ և գործ ածվում բնիկ բառը: Օրինակ՝ ռուսերենը горный բառը նշանակում է թե՛ լեռնային և թե՛ հանքային. դրա պատկերությամբ այժմ մեր լրագրության մեջ լեռնային բառը գործածում են հանքային բառի տեղ և «հանքագործ» գրելու փոխանակ՝ գրում են «լեռնագործ»:

Սկզբում բառերի այսպիսի նոր նշանակություններն ու նոր կազմված բառերը խորթ են թվում. բայց հետևելի են մեզ ամենօրյա առարարանությունները, ինչպես՝ «լեռնային» փոխանակ «հանքային» բառի, թե չի՝ քանի մը նոր գործարանների առհասարակ կարիքը կա, անհրաժեշտ են այսպիսի նոր կազմություները, որոնք նոր գործարանների հետ հետզհետե ընդհանրանում են: Մեր լեզուն, ինչպես և ամեն լեզու, այս ճանապարհով հարստացել և հին պարելում, կերը հանճարների ձեռքով կազմված են շատ բառեր, որոնց մեծ մասն այժմ սովորական բառեր են, ինչպես՝ արտադրություն, տարբերվել, արտասանել, արտագրել, առողջանել, արտաբանություն և այլն:

Լեզվի զարգացումն այս ճանապարհով կերթիք չի գործել: Ամանձնապես շատ նոր բառեր կազմված են, կամ հին բառերին նոր նշանակություններ տրված են 19-րդ դարում, ինչպես՝ կերկաթուղի, չուգունագ, առևտրական և այլն, կամ ինչպես՝ լուցկի, որ այժմ գործածում ենք նոր նշանակությամբ: Վերջին տարիներս մտավանդ, քաղաքական ինքնուրույն կյանքի պատճառով, որ միայն ավելի մեծ թվով ոտար բառեր են մտնում մեր լեզվի մեջ, այլև ավելի ևս մեծ թվով նոր բառեր են կազմվում, կամ հին բառերը նոր նշանակություններով են գործածվում, ինչպես՝ հարկաթղթի, գործուղել, գործարք, առքիր և այլն:

Սկսվելով առանձին անհատներից՝ այլ լեզուների ազդեցությունն անցնում է նաև ամբոխներին, որոնք ուրիշ լեզու չգիտեն, և վերջը նույնիսկ ընդհանրանալով պատճառ և դառնում լեզվի փոփոխության: Այսպիսի դեպքում ոտար բառերն ու կազմակերպության ձևերն արդեն ազգայնանում են, և ոտար բառեր նույնիսկ չնիշարկվում են նույն հնչափոխություններ, ինչ որ բնիկ բառերը: Սակայն կերբ չափազանց մեծ և լինում մի լեզվի ազդեցությունը մի ուրիշ լեզվի վրա, վերջինս նույնիսկ կորսնցնում է մատնոտում: Այդ լինում է, կերբ կերկու լեզվի ժողովուրդները խառն ապրում են առճախակից վայրերում և կերկու լեզուն էլ անխտիր բանեցնում են, և ապա մեկն իշխում է մյուսին, կամ կերբ մի ազգ նվաճում է մյուսին և ենթարկում է նրան իր քաղաքական ազդեցությանը: Այսպիսի դեպքերում, կերբ լինում է նաև անտեսական ու կուլտուրական ազդեցություն, մանավանդ կերբ տերոց ազգիչ պաշտոնյաներ են անպատվաստում նվաճած կերկրում և պետության ու վարչական հիմնարկությունների մեջ մտցնում և իշխողի լեզուն, այդ ժամանակ նվաճված ազգի լեզուն կարող է նույնիսկ վռնչանալ: Սկզբում անհատներ խոսում են երկնց լեզուն և այլ լեզվով խոսում, ապա՝ ամբողջ համբերը. հետզհետե մեծանում է ոտար լեզվով խոսողների թիվը, մինչև որ այդ լեզուն գերակշռելով իշխում է և անցնում անգործան բնիկ լեզվի տեղ:

Հայերենը թե՛ հին և թե՛ նոր ժամանակներում մեծ ազդեցություններ է կրել ուրիշ լեզուներից, և այս կեղել է հազարամեր լեզվի զարգացման: Այսպես հայերենը հնուցուն չէ չատ ազգվել է պարսկերենից ու առաբերենից, ապա և հունարենից

ու արաբերենից, իսկ Սելջուկյան թուրքերի տիրապետության շրջանից սկսած՝ թուրքերենից, վերջին դարում նաև ռուսերենից և այլն: Հին և նոր պարսկերենից, հունարենից, ասորերենից, արաբերենից հայերենի մեջ մտած բառերի, ինչպես և բնիկ հայերեն բառերի ուսումնասիրությունն է մի հավաքած ունի 1897 թվին Հ. Հյուբշմանը դեմանեերեն լեզվով (Հայերենի քերականություն, I մաս, Հայերենի Սաուզարանություն, Լայպցիգ, 1897)· բայց այն ժամանակից է վեր այդ ուսումնասիրությունն ավելի ընդարձակված և ուրիշների կողմից: Թուրքերենի համար կա Հր. Աճառյանի «Թուրքերենն վերաբերյալ բառերը պարսկ հայ ժողովրդական լեզվին մեջ, համեմատությամբ վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներուն», Մոսկվա—Վաղարշապատ, 1902 թ·:

23· ԲԱՐԲԱՌՆԵՐ.—Ինչպես ասացինք, խոսվածքի սովորական գործունեության հետևանքով կան միայն անհատական լեզուները, որ կարելի է համարել առանձին—առանձին բարբառներ տարբական ձևով: Բայց անհատական լեզուները բարբառ չեն կոչվում, այլ բարբառ կոչվում է նույն լեզվին պատկանող մարդկանց մի մասի տեղական խոսվածքները, որ ուրիշ տեղական խոսվածքներից տարբերվում է որոշ չափով:

Բարբառները ծագում են, երբ լեզվի մեջ առաջ եկած փոխությունները տեղամասերում են որոշ տեղում և չեն անցնում ուրիշ կողմերը, ուր կա՛մ հին լեզվական ձևերն են պահվում, կա՛մ առաջ են գալիս տարբեր փոխություններ: Որպեսզի նակ՝ մի քանի կողմերում առաջ և եկել և ընդհանրացել նոր «զարմացրի» ձևը, մինչդեռ ուրիշ կողմերում պահվել և հին «զարմացուցի» ձևը· այսպես և հին «գնացեալ է» ձևը դառնում կողմերում տարբեր ուղղություններով փոփոխության ենթարկվելով՝ մի կողմում գարձել է՝ գնացել է, մի ուրիշ կողմում՝ գնա՛ցել ա, գնա՛ցել է, գացե՛ր ա, կնացե՛ր է, գացե՛ր է, գե՛ցալ ա և այլն:

Շատ անգամ նույնիսկ հարևան տեղերի ու գյուղերի խոսվածքները՝ տարբերվում են իրարուց թե՛ բառերի հնչյուններով ու նշանակությամբ և թե՛ ձևերով: Դրանից թեթև գիտողի համար այդպիսի խոսվածքները նույն բարբառն են կազմում, բայց իրենք տեղացիները շատ լավ են զանազանում իրենց լեզուները, և մանավանդ ուսումնասիրությանը պարզում է դրանց տարբերությունները: Մեզ քաղաքներում նույնիսկ մի քանի բարբառներ են լինում զանազան թաղամասերում:

Վորքան նայն ազգին պատկանող մարդկանց հարաբերությունն ավելի հաճախ ու սերտ է տեղի ունենում, այնքան նրանց լեզուն միատեսակ կերպարանք է առնում, ինչպես օրինակ՝ մի գյուղի բնակիչներն ավելի յեն չափվում միմյանց հետ ու մոտիկ հարևան գյուղերի բնակիչների հետ և իրարուց յուրացնում են նայն լեզվական պատկերացումները: Իսկ ընդհակառակն, վորքան հազորդակցությունը պակաս է լինում զանազան արգելքների պատճառով, ինչպես են՝ գժվարանցանելի լեռները, գետեր, քարափային առմաններ և այլն, այնքան ավելի մեծանում են բարբառային տարբերությունները, վորովհետև ժողովրդի մի մասը կտրված է լինում մյուսից և մի կողմում առաջացած լեզվական տարբերությունները գժվարությամբ են անցնում կամ չեն անցնում ուրիշ կողմեր:

Լեզվական փոփոխություններից ուրիշ կողմեր հեշտությամբ անցնում են նոր բառերը, հին բառերի նոր նշանակությունները և բառերի ձևերը· վորովհետև այդպիսի փոփոխություններն ընդունելու համար անմիջական սերտ հազորդակցություն չի հարկավոր, այլ յուրացումը կարող է լինել և միջնորդաբար, մեկից մյուսին անցնելով: Որինակ՝ Ցերեվանում ծագած նոր բառը «գործուղել», կամ հին «հայց» բառի նոր նշանակությունը իրրև պատական պահանջ, կարող է մեկից մյուսին անցնելով տարածվել ամեն մի կողմ և հասնել մինչև Արցախ, և ընդհակառակն: Այսպես չէ, սակայն, հնչյունների փոփոխության անցումը մի տեղից մյուս տեղը· դրա համար հարկավոր է անմիջական անձնական հարաբերություն և ազգեցություն: Վորպեսզի Արցախում առաջ եկած հնչյունական փոփոխությունն անցնի ուրիշ կողմեր, պետք է անմիջապես Արցախեցուն լսել և նրանից ազդվել: Տարբեր հնչյունը կարելի չէ ընդունել և յուրացնել ուրիշների միջնորդությամբ, ինչպես օրինակ, Արցախեցու տարբեր արտասանությունը բնիկ Ցերեվանցու միջնորդությամբ Շիրակ անցնի: Այս պատճառով և բարբառների իրարուց տարբերող գլխավոր հատկանիշն է հնչյունների տար-

բնութիւնը, և վերեւում գրած «գնացել է», «գնա՛ցել ա» և այլ ձեւերն իրենց բառաձեւ՝ խոսափաս նույն են, միայն տարբեր հնչյուններով: Տարբեր բարբառներով խոսողներն այսպես էլ պահպանում են իրենց բարբառների տարբերութիւնը: Յեվ խոսպես՝ ինչքան էլ խորթ և մեզ համար Յերեվանում, Գիւմրի, Ախալցխաի բարբառի արտասանութիւնը, մեր վերևի պժվարութիւնն և պատճառում այդ բարբառով խոսողներին հասկանալու, բայց նրանք այդ բարբառով հարթնված մի քան արտասանում և Յերեվանի բարբառի հնչյուններով, մենք առանձին պժվարութիւն չենք կրում այդ բարբառը հասկանալու:

Այսահետև, սակայն, չպետք է նկատենք, թե բարբառները միմյանցից չեն տարբերվում ուրիշ լեզվական իրականութիւններով, ինչպես են՝ բառերը, նրանց նշանակութիւնները, բառաձեվերը և այլն: Սրանց տարբերութիւնն էլ կարող է այնքան մեծ լինել, որ նույնիսկ կարմի բարբառներին վարժման մի եղական կարմը: Այսպես օրինակ՝ հայերենի արդի բարբառները՝ բայերն առհմանական ներկա ժամանակի կարմութիւնն նկատմամբ՝ բաժանվում են «ում», «կը», «եմ՛» կամ «ե՛ս եմ» ձևերի, ինչպես՝ բերում եմ, կը բերեմ, բերե՛մ, բերե՛ս եմ: Այս տարբերութիւնն առաջ է գրել բնական և քաղաքական առհմանների ազդեցութիւնից. «ում» ձևը առհմանափակվել է Արեվելքում, «կը» ձևը իրենի առհմանական ներկա մնացել է Արեվմուտքում, իսկ «եմ՛», «ես ե՛մ» ձևերը տարածվել են Հարավում: Մեր բարբառների այս մեծ ճյուղերն էս իրենց կարմից բաժանվում են յեվրոպական բարբառների, որոնք ունեն իրենց տարբաժանումները, մինչեվ մի վերևի դյուղի տեղական խոսվածք, որ ունի իր առանձնահատկութիւնները:

Յեթե հայ ժողովուրդը պարել չպահպանել իր բնակութեան վայրում հաստատ մնացած լինել, նրա բնակած յերկրի մի ծայրից մյուս ծայրն անցնելով կարող կը լինեինք պիտի բարբառների առաջնական փոփոխութիւնները կրանանեինք, որ Արցախի բարբառն ավելի մոտ է Այնթափի բարբառը, որան Նախիջևանի բարբառը, վերջինս ավելի մոտ է Ախալցխայի բարբառը և այլն, այնպես հարևան տեղերի լեզուները միշտ ավելի մոտ կլինեին միմյանց: Բայց այս կարող ենք ասել Արեվելյան Հայաստանի Հանրապետութեան հյուսիսային և արեվելյան յերկրային բնակիչների համար միայն, վորոնք հաստատ են մնացել իրենց բնակավայրում: Դրանց մեջ էլ, սակայն, արեվելյան բարբառի հետ խառն գտնում ենք հարավային և արեվմտյան բարբառները. նույն պես նաև Այրարատում և ուրիշ կողմերում: Բարբառների այս խառն տեղափոխութիւնը հետևանք է ժողովրդի տեղափոխութեան. հարյուր տարի առաջ և վերջերս Հարավից և Արեվմուտքից յեկած շատ պատմականներ բնիկների հետ խառն նստած են Արեվելյան Հայաստանի զանազան կողմերում, վորով և մեր բարբառների տեղափոխութիւնը չի մնացած տարածման բնական դրութեամբ:

24. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵՎ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒ:—Յերբ մի ազգի կուլտուրական կյանքի պարզացումն այն աստիճանին է հասնում, վոր իրարուց բավական տարբերվող բարբառներով խոսողների համար առաջ են գալիս այնպիսի ընդհանուր պահանջներ, վորոնցով նրանք ավելի սերտ հարաբերութեան մեջ են մտնում միմյանց հետ,—այդ ժամանակ նրանք կարիք են զգում մի ընդհանուր խոսակցական լեզվի: Այսպիսի ընդհանուր լեզու գտնում է բարբառներից մեկը, վոր վրեն պատճառով գերակշռութեան է ստանում մյուսների վրա, ինչպես օրինակ՝ ընդհանուր քաղաքական կամ կրոնական կենտրոնի բարբառը, վոր հետագայում գործածվելով գրականութեան համար՝ գտնում է նաև ընդհանուր գրական լեզու, կամ թե պատահում է, վոր բարբառներից մեկն ավելի վաղ գործածվելով գրականութեան համար՝ ընդունելի է լինում նաև ուրիշ բարբառներով խոսողների համար իրրև գրական լեզու, միաժամանակ և իրրև ընդհանուր խոսակցական լեզու: Այսպես 5-րդ գարում մեր քաղաքական, միաժամանակ և կրոնական կենտրոնի՝ Այրարատի բարբառը, վոր հին վիպասաններն էլ գործածել են, Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի և նրանց աշակերտների ձեռքով գտնում է գրական լեզու, վոր հետագայում բանեցնում են ամենքը, և վոր մնում է իրրև ընդհանուր գրական լեզու մինչեվ 19-րդ գարի կեսերը:

Սկզբում գրական լեզուն շատ չի տարբերվում իր մայր բարբառից, վոր որինակելի է համարվում ուրիշ բարբառներով խոսողների համար, յերբ վերջիններս ուզում են ընդհանուր լեզուն բանեցնել: Բայց ժամանակի ընթացքում, յերբ դպրոցների ու գրականութեան միջոցով առաջ է գալիս ամբողջ ժողովրդի մեջ գա-

նագան կոմկերում կրթված ու դարպացած մարդկանց մի առանձին դաս, գրական լեզուն գառնում է նրանց ընդհանուր խոսակցական լեզուն և իր ուրույն ճանապարհով է գարգանում, բամբարբառելիքյուն տալով այդ դասի մարդկանց պահանջներին. իսկ նրա մայր բարբառը՝ մնալով տեղի հասարակ ժողովրդի մեջ և ծառայելով միայն տեղական բնակիչների կարիքներին իրենց տեղական հարաբերություններում՝ իր առանձին ընթացքն է ունենում: Այդ երևույթի մեջ երևան են գալիս տարբեր փոփոխություններ, բայց և այնպես երկար ժամանակ դեռ գրանք մնում են մոտիկ չափով իրար ավելի մոտիկ, քան ուրիշ բարբառների:

Գրական լեզուն նույնպես ենթակա է փոփոխությունների, բայց վոչ այնքան, վորքան բարբառները: Դա պահում ազդում է հանրության ունի փոխելու: Հնչյունական այբբենարանի միջոցով գրական արտասանությունը համեմատաբար ավելի կայուն է գառնում, քան բարբառները, քանի վոր հնչյունական գրությունը, բացի այն, վոր ազդում է արտասանության վրա, այլև գրական լեզուն մասամբ ազատ և պահում անհատների ու բարբառների հնչյունական ազդեցություններից: Ասա՝ գրական լեզվի ձևերն ու բառամթերքը գրականության միջոցով անվնասում և մնայուն կերպարանք են ստանում. վորոշ մտածողությունների լեզուն գառնում է ամենքի համար ընդունելի, ընտիր և սրինակելի, գպրոցներում սովորում են այդ գրված քները. ուստի հին չարահյուսական ձևերը, հին բառաձևերը, մասամբ և բառերի հին նշանակությունները, վոր հաճախ արդեն մեռած են լինում գրական լեզվի մայր բարբառի մեջ, համարվում են մի նորմա, վոր ձգտում են պահել խոսելիս և ավելի ևս գրելիս: Յերևան են գալիս նաև բառարաններ և գրական լեզվի քերականություններ, վորոնցով ավելի ևս ճշտվում ու կանոնավորվում և գրական լեզուն և ձգտում մի կերպ գառնալու: Յեվ այսպես, քանի վոր գրական լեզվով խոսողն ու գրողը հետևում են ավանդության, ուստի և այդ լեզվի փոփոխությունը համեմատաբար ավելի դանդաղ է կատարվում:

Բարբառները ազդում են վոչ միայն միմյանց վրա, այլ և գրական լեզվի վրա և ազդվում են նրանցից, նույնիսկ ավելի մեծ չափով: Ամեն բարբառի մարդիկ բանեցնելով գրական լեզուն իրենց ընդհանուր լեզու՝ նրա մեջ մտցնում են միշտ իրենց բարբառից բառեր և դարձվածներ, բառերի նոր նշանակություններ, հնչական ձևեր և այլն, վորոնք գրական լեզվի միջոցով հեշտությամբ ընդհանրանում են:

Գրական լեզուն ազդվում է նաև հին գրական լեզվից, նեթե կա այդպիսին, ինչպես և ոտար լեզուներից՝ սրանց գրականության միջոցով: Այսպես՝ մեր նոր գրական լեզուն ևս գրեթե ազդեցություն է կրել մեր հին գրական լեզվից, մեր գանազան բարբառներից և ոտար լեզուներից, և չնայելով վոր դա մի դարի կյանք հազիվ ունի, բայց արդեն բավական տարբերվում է իր մայր՝ Ագրարատյան բարբառից:

Բացի այդ՝ քանի վոր գրական լեզուն կենդանի խոսակցական լեզու չի, անխուսափելի կերպով պիտի ենթակա լինի նաև այն անդիտակցական փոփոխություններին, վոր բնականաբար ստաջ են գալիս խոսելու գործունեության: Ամեն անհատ խոսելով և գրելով այդ լեզվով, ինչքան էլ գպրոցում և հին մատենագրություններից սովորած լինի «ուղիղ» խոսելու և գրելու կանոնները, ունի գործել վորոշ չափի ազատություն իր ձևով վերստեղծելու լեզուն և իր գործից ազդելու ուրիշ խոսողների ու գրողների վրա: Այս ազատությունն ու ազդեցությունն, անշուշտ, ավելի մեծ է խոսելիս, քան գրելիս, բայց ընդհանուր խոսակցական լեզվից անցնում է հետզհետե նաև գրավորին: Նույնը պետք է ասել և բարբառների թողած ազդեցության մասին:

Գրական լեզվի փոփոխության մեծ գործոններից մեկն և նաև ժողովրդի ընդհանուր մշակույթի գարգացումը: Ժամանակի ընթացքում ստաջ են գալիս միշտ նորանոր գաղափարներ, վոր կարելի չի գանել հին հեղինակների մեջ. գրանց համար ծնվում են նոր բառեր, բառերի նոր նշանակություններ և արտահայտության ձևեր: Վորով և գրական լեզուն չարունակ հարմարվելով նոր մշակույթին՝ հարստանում և ընդունակ և գառնում ամեն ինչ արտահայտելու, թե հին մշակույթի և թե նորի երևույթները: Ժամանակի հետ այսպես կերպարանափոխվող գրական լեզուն և միայն կենդանակ և ընդունակ բավարարելու այն նպատակին, վորին ծառայում է, այսինքն՝ գառնալ մի ընդհանուր հարմարավոր գործնական միջոց նույն լեզվով խոսող և գրող մարդկանց մտավոր հաղորդակցության համար:

Գրական լեզուն ավելի չի ազդում բարբառների վրա, քան վորևէ բարբառ: Մինչդեռ ժողովրդական բարբառները հարմարու-

թյան ունեն ավելի իրենց հարևան բարբառների վրա ազդելու, այն էլ ուղղակի հարաբերությամբ,—գրական լեզուն գրի ու գրքության միջոցով հնարավորություն ունի իր ազդեցությունը միակերպ թողնելու ամեն տեղ, բոլոր բարբառների վրա և նույնիսկ ապրող սերնդից հետո գեղ հաջորդների վրա: Նրա տարածման դեմավոր միջոցն է գրքույկը, որը կոչված լինելով մարդկանց հատորից անելու ընդհանուր մշակույթին՝ ամեն տեղ սովորեցնում է գրական լեզվով միատեսակ մտածել, խոսել ու գրել: Իսկ ով որ գրքույկում չի սովորել, նա էլ իր դասատից դուրս՝ աշխատում է խոսելիս հարմարվել ընդհանուր լեզվին: Բացի այդ՝ որքան կրթություններ տարածվում է գրքության միջոցով, այնքան ավելի մեծանում է այնպիսի մարդկանց թիվը, որոնք մանկությունից արդեն խոսում են միայն գրական լեզվով, և գրը հետզհետե, կրթությունն ընդհանրանում է ամբողջ ազգի մեջ և նրա բոլոր մասերը հատորակից են լինում ընդհանուր մշակույթին, այն ժամանակ բարբառները մոռանում են գրական լեզվին և մեկմեկու, մինչև վերջիվերջը գրական լեզուն իշխում է ամեն տեղ, և բարբառները մնանում են: Դրան են ձգտում գրքույկն ու գրականությունն իրենց ընդհանուր կրթությունով: Ցեղի հատորակցության պահպանությունը, ինչպես տեսանք, պահանջ է պահում բարբառների տակ գալուն և իրարուց ավելի ու ավելի տարբերվելուն, նույն հատորակցության տարածությունն ու մասնավոր ցեղ հատորակցությունը գրքույկի ու գրական լեզվի միջոցով՝ տակ և բերում բարբառների միացում: Այսպես՝ հին հունական ազգի մի մասից բաժանված մասերը, որոնք ունեին իրենց տանձին բարբառները, ժամանակի ընթացքում միանում են ի մի ազգության ընդհանուր մշակույթով. նրանց միացման հետ միանում են և նրանց բարբառները. Աատիկյան բարբառը, որ հույների ամենից կուլտուրական մասի՝ Աթենացոց լեզուն եր, իշխում է ամեն տեղ, և 3–րդ դարում Ք. ա. տակ և գալիս մի ընդհանուր հունական բարբառ, որ կոչվում է «կոյնե»:

Սակայն ամեն գրական լեզու չի կատարում այս գերը, որ կապված է ընդհանուր կրթության հետ: Ցեղի մի ազգի մեջ ընդհանուր կրթությունը չի ծավալվում ամեն տեղ և ուստի մնում է միայն իրեն տանձնաչնորհ մի փոքր դասի, այն ժամանակ հատկապես փոքր է լինում գրական լեզվի ազդեցությունը բար-

բառների վրա, որոնք ավելի մեծ ազատությամբ կենթակա լինելով փոփոխության՝ նույնիսկ ավելի հեռանում են նրանից: Այսպիսի դեպքում մինչև անգամ այն բարբառը, որի վրա հիմնված է գրական լեզուն, ժամանակի ընթացքում այնպիսի ձևափոխության և կենդանության, որ նրանով խոսող մարդիկ էս առանձին ուսման կարիք են զգում՝ գրական լեզուն ազատ բանեցնելու համար: Այսպիսով գրական լեզուն մնում է սակավաթիվ ուսած մարդկանց մեջ և հետզհետե, որքան չժվարանում է այդ ձևը բերելը, այնքան պակասում է այդ լեզվով խոսողների թիվը: Ցեղ ամբողջական հեղինակները գրում են այդ լեզվով մոչ թե այն պատճառով, որ իրենք կամ ուրիշներն այսպես են խոսում իրենց առօրեական խոսակցության ժամանակ, այլ մորովհետև իրենցից առաջ այսպես են գրել նշանավոր հեղինակները: Գրական լեզուն այս դեպքում գրեթե կտրվում է կենդանի լեզվից և պատում է մի արհեստական լեզու, որ գրության մեջ պահվում է գլխավորապես հների նմանողության համար:

Այս վիճակին կենթարկվել է մեր հին գրական լեզուն— գրաբարը (հին հայերեն): Փակված լինելով միայն վանական գպրոցներում՝ այս լեզուն չատ չի ազդում աշխարհականների կենդանի բարբառների վրա, որոնք գարգացման բոլորովին տարբեր ուղի են բռնում և գարերի ընթացքում այնպես են կերպարանափոխվում, որ հին լեզվական ձևերն ու նորերը բոլորովին հեռանում են իրարուց: Գալիս է ժամանակ, որ մեր հին գրական լեզուն այլևս հեչա հասկանալի չի լինում ամենքին և բնականաբար կարիք է զգացվում մի նոր ընդհանուր լեզվի: 12–13–րդ գարերում տակ, կյանքի գործնական կարիքներին բավարարության տալու համար, տակ և գալիս մեր միջին գրական լեզուն (մերին հայերեն), ժամանակի խոսակցական լեզվին մոտիկ: Հին գրական լեզուն, սակայն, չի մեռնում, այլ գեռ չարունակում է մինչև գրական լեզվի հետ գուգընթաց ապրել, իբրև «գրաբար», այսինքն գրքի, գրության լեզու, գլխավորապես կրոնական և պատմական գրվածքների համար: Մինչև 15 և 16–րդ գարերում, երբ քաղաքական մեծ ցնցումների պատճառով մեռնում է վանական կյանքն ու փակվում են գրքատունները, մեռնում է և գրաբարի ամենգության, և մեր այդ գրական լեզուն գադարում է իրրև կենդանի լեզու ապրելուց: 17–19–րդ

դարեւոյժ, սակայն, վերածնութեան փորձն սուաջ է բերում նոր-նոզութեան հին գրաբարի եւ նոր գրաբար գրականութեան արմատական գրական լեզուով. ձգտում է սուաջ գալիս հին գրական լեզուն արմատական կերպով կենդանացնելու նոյնիսկ խոսակցութեան մէջ, բայց աջողութեան չի լինում, որովհետեւ ժողովրդական բարբառները շատ էին տարբերվում հին գրաբարից: Այս փորձերն ու նոր գրաբար գրականութիւնն իրենց կողմից պատճառ են դառնում մէջքին գրական լեզվի անկման, թեպետ և պատճառ չէր ժողովրդական, ամենի արեւմտեան բարբառներից: Այս պատճառով 19-րդ դարում սուաջ է գալիս ընդհանուր լեզվի պահանջից նոր գրական լեզու, այն էլ, քաղաքական հանգամանքների չնորհիվ, յերկու կողմից: Արեւմուտքում Կ. Պոլսի բարբառի հիման վրա ծագում է արեւմտեան գրական լեզուն կամ արեւմտեան աշխարհաբարը, իսկ արեւելքում՝ Այրարատեան բարբառի հիման վրա՝ արեւելեան գրական լեզուն կամ արեւելեան աշխարհաբարը. մեկը տարածված է արեւմտեան հայութեան մէջ, մյուսը՝ արեւելեան: Դրանցից արեւելեան գրական լեզուն,—քանի որ արեւմտեան հայութիւնը մեծ մասամբ վաչկատուն լինելով կամ պատերազմի ընթացքում, իսկ արեւելեան հայութիւնն, ընդհակառակն, սկսել է աստիճանի պետական կյանքով ապրել,—կոչված է աստիճանի դեր կատարելու:

Մեր արեւելեան գրական լեզուն գպրոցների և գրականութեան միջոցով այժմ բաւական տարածված է վոչ միայն արեւելեան բարբառներով խոսողների մէջ, այլ և Թուրքիայի Հայաստանի Հանրապետութեան տիրապետութեան տակ գտնվող հայերի մէջ, ինչպես և Վրաստանում, Ադրբեջանում, Ռուսաստանում ու Պարսկաստանում: Վոր այս գրական լեզուն համեմատաբար կարճ ժամանակում կարողացել է բաւական ընդհանրանալ, դրա գլխավոր պատճառն այն է, վոր հնչյունների կողմից, գրաբարի նկատմամբ, մեր բարբառների մէջ ամենից քիչ և փոփոխութեան յենթարկվել գրական լեզվի մայր՝ Այրարատեան բարբառը: Այստեղ բառերը մեծ մասամբ պահում են հին գրական լեզվի կերպարանքը, ինչպես օրինակ՝ հին «հարանիք» մնում է նոյն ձեվով, մինչդեռ ուրիշ բարբառների մէջ այդ բառը գարձել է՝ հրաւանէք, հարանի՛ք, հարսի՛նք, խարանի՛ս և այլն: Բայց վոր գլխավորն է՝ Այրարատեան բարբառի մէջ հնչյունները թվով ամենից

վոքր են. ձայնաւորներն, օրինակ, միայն վեց են՝ ա, ո, ու, է, ի, ը, վորոնք բոլորն էլ կան բոլոր բարբառների ու հին գրական լեզվի մէջ, մինչդեռ ուրիշ բարբառների մէջ կան այնպիսի ձայնաւոր և բազաձայն հնչյուններ էս, վոր չունեն Այրարատեան բարբառը և հին գրական լեզուն: Ուստի և ուրիշ ամեն մի բարբառի մարդիկ ավելի հեշտութեամբ յուրացնում են Այրարատեան կամ գրական արտասանութիւնը, վոր միաժամանակ և գրաբարի արտասանութիւնն է յեղել 19-րդ դարում, քան ուրիշ բարբառների հնչյունները, վորոնք հաճախ գրաբարից և միմյանցից բավական հեռու են իրենց արտաբերութեամբ:

25. ՅԵՂԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐ.—Յերբ բարբառների տարբերութիւնները միմյանցից այնքան մեծանում են, վոր մի բարբառով խոսող մարդն այլևս չի հասկանում մյուս բարբառով խոսողին, հաւանաբար և այսպիսի յերկու բարբառն այլևս չպղելով իրար վրա՝ մի ընդհանուր կյանքով չեն ապրում,—այն ժամանակ սուաջ են գալիս նոր լեզուներ միևնույն մայր լեզվից: Այս տեղի կ՚ունենում այն ժամանակ, յերբ մի ժողովրդի զանազան բարբառներով խոսող մասերը զոլթելով ուրիշ յերկրներ, կամ ընդարձակ հոսմասերի վրա տարածվելով՝ յերկար դարերով կտրվում են միմյանցից վորևե բնական կամ քաղաքական արգելքներով և այլևս միմյանց հետ հարաբերութեան մէջ չեն լինում: Այս դեպքում նրանք սկսում են ապրել ինքնուրույն կյանքով, և լեզվի մէջ մի անգամ սուաջ եկած փոփոխութիւնները չեն անցնում ուրիշ կողմեր և բարբառների խոսնողը սուաջ չի գալիս: Մի բարբառ մէջ պահվում է հին լեզվական իրակութիւնը, մյուսի մէջ հինը կորչում է՝ տեղը տալով նորի սուաջ, կամ յերկուսի մէջ էլ նոր իրականներ են սուաջ գալիս, բայց բոլորովին տարբեր ուղիներով: Մի խոսքով՝ յերկու բարբառները բոլորովին տարբեր փոփոխութիւններ են կրում: Վորքան ավելի կուլտուրական և մի ժողովուրդ, այնքան ավելի ուժեղ և հարաբերութիւնն ու կապը նրա մասերի մէջ. ուստի և նոյն իսկ զարթ դեպի հեռավոր յերկիրները՝ չի կարող ազդել, վոր նրանց բարբառները բոլորովին ուրույն գարգացում ունենան և բնավ չպղեն միմյանց վրա: Ցեվ քանի դեռ յերկու այսպիսի, իրարուց նոյնիսկ հեռու բնակած բարբառներ ապրում են միմյանց վրա և չարունակում են ավելի կամ

պակաս չափով ընդհանուր փոփոխութիւններ կրել բառաձեվերի ու կապակցութեան ձեվերի նկատմամբ, նրանք գեռ մինչև այն ժամանակ էլ բարբառներ են միայն: Բայց հենց որ նրանք գրավոր են այսպիսի ընդհանուր կյանքով ապրելուց և մեկի կրած փոփոխութիւնն այլևս չի անցնում մյուսին, այն ժամանակ արդեն նրանք կազմում են յերկու առանձին, բայց ցեղակից լեզու: Բոլոր ցեղակից լեզուներն, ուրեմն, մինչև այն ընդհանուր մայր լեզվի յերբեմնի բարբառների չարունակութիւններ են միայն: Նրանց մեջ կան նման լեզվական իրակութիւններ, որոնք նման են, որովհետև մի ընդհանուր ծագում ունեն. բայց կան և ավելի շատ առանձին իրակներ, որոնք միմյանցից անկախ՝ նո՛ր են առաջ յեկել յուրաքանչյուր լեզվի մեջ: Հասկանալի յե, որ ցեղակից լեզուներն էս, իրրև բարբառվին անկախ լեզու կազմակերպվելուց հետո, կարող են միմյանց վրա ազդել. բայց դա կլինի արդեն գոչ թե մեկնուն լեզվի բարբառների փոխադարձ ազդեցութիւն, այլ մի առանձին լեզվի ազդեցութիւն մի ուրիշի վրա:

Ցեղակից լեզուների մայր լեզուն, որից ծագել են նրանք, կոչվում է նախալեզու, իսկ որանից առաջացած լեզուների խումբն՝ ընտանիք: *Լեզվաբանութիւնը* միմյանց հետ բաղդատելով մարդկային լեզուները՝ որոշել և որդեն չատ լեզուների ցեղակցութիւնը և լեզուները բաժանել և մի քանի ընտանիքների: Դրանց մեջ ամենից չատ ուսումնասիրված և հնդեվրոպական լեզուների ընտանիքը, որին պատկանում են յեվրոպական լեզուների մեծ մասը, և գիտական լեզվաբանութիւնը հիմնվել և այս ընտանիքի լեզուների համեմատութեամբ: Լեզուների ընտանիքը բաժանվում է ճյուղերի, այսինքն այնպիսի խմբերի, որոնց մեջ մտնող լեզուներն ավելի մոտիկ ցեղակցութիւն ունեն միմյանց հետ. յուրաքանչյուր ճյուղ, սակայն, կարող է կազմված լինել և մե՛կ լեզվից: Հնդեվրոպական լեզուների ընտանիքին պատկանում են Ասիայում՝ 1) Արեական կամ Հնդիրանական լեզվաճյուղը, որ իր կողմից բաժանվում է յերկու մեծ լեզվախմբերի. ա) Հնդկական,—Հինդոստանի հին և նոր լեզուները, որոնցից մեռած լեզուներ են՝ Վեդայի լեզուն և Սանսկրիտա, բ) Իրանական, որին պատկանում են՝ հին պարսկերեն (Դարեհի, Կամբիսի և այլ սեպագրութիւնների լեզուն), մարերեն, զենդերեն (Զրադաշտի կրոնի սուրբ գրքի՝ Զենդ-Ավեստայի լեզուն), պահլավերեն (Աբշակունյան և Սասանյան ժամանակի լեզուն), նոր պարսկերեն, քրդերեն, ավղաներեն, ոսերեն, 2) Թոխարական ճյուղ, որին պատկանում են Թոխարեն և քուչերեն (մեռած), 3) Հայերեն, որ ինքը մենակ մի առանձին ճյուղ և կազմում. Հայերենի ճյուղերն են պատկանելիս յեղել, ինչպես կարծում են մի քանի հնչին մնացորդներից, նաև փռիգերեն և թրակերեն լեզուները: Յեվրոպայում՝ 4) Ալբաներեն, 5) Հունարեն, 6) Իտալական լեզուներ, որոնց պատկանում են՝ ոսկերեն, ումբրերեն, յասիներեն (հին Հռոմայեցիների լեզուն). Հռոմեական ժողովրդական բարբառներից ծագում են ռոմանական լեզուները, որ են՝ իտալերեն, Ֆրանսերեն, պրովանսերեն, իսպաներեն, պորտուգալերեն, ռումիներեն, 7) Կելտերեն, 8) Գերմանական ճյուղ, որի մեջ մտնում են բազմաթիվ լեզուներ, որոնցից են՝ գերմաներեն, անգլերեն, չվեդերեն և այլն. 9) Բալթիկ-Սլավական ճյուղ, որ իր կողմից բաժանվում է յերկու խմբի՝ ա) Բալթիկյան՝ լիթվաներեն և լատերեն, և բ) Սլավոնական, որի մեջ մտնում են բազմաթիվ լեզուներ՝ ռուսերեն, ուկրաինեն, բելոռուսերեն, լեհերեն, բուլղարերեն, չեխերեն, սերբերեն

Գ.

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

26. *ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ՅԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՆԱԿԸ*:—*Լեզվաբանութիւնը* (լինգվիստիկա) լեզվի պիտութիւնն է, որի ուսումնասիրութեան առարկան և մարդկային լեզուն կամ խոսվածքը: Վերևում բացատրված լեզվական իրակութիւնների համեմատ՝ լեզվաբանութեան մեջ մտնում են հետևյալ բաժինները. 1. Հնչաբանութիւն (ֆոնետիկա), բառերի արտաքին, ֆիզիկական կողմի, հնչյունների ուսումը, որին իրեվ աժանդակ պիտութիւն ծառայում են անատոմիան և բնախոսութիւնը, 2. Իմաստաբանութիւն (սեմասիոլոգիա կամ սեմանտիկա), բառերի ներքին, հոգեկան կողմի, բառերի նշանակութեան կամ իմաստի ուսումը, որին իրրեվ աժանդակ պիտութիւն ծառայում է հոգեբանութիւնը, 3. Ստուգաբանութիւն (էտիմոլոգիա), բառերի կազմութեան ուսումն ըստ ծագման, 4. Ձեվաբանութիւն (մորֆոլոգիա), առանձին բառաձեվերի ուսումը, առանց նկատի ունենալու նրանց պաչտոնը խոսքի մեջ, 5. Շարա-

հյուսուբյուն (սինտաքսիս), բառերի, իրերի խոսքի մասերի, կապակցության ձևերի ուսումը,—լինի կապակցությունը բառաձևերով, թե ձևական բառերով և ուրիշ լեզվանակներով,— ինչպես և խոսքերի միմյանց հետ կապակցության ուսումը: Բացի այս բաժիններից կա նաև 6. Բառաբանություն (լեկսիկոլոգիա), լեզվի բառարանական կազմի, բառամիերքի, բառերի ուսումը, առանց նկատի ունենալու նրանց ձևերը:

Լեզվաբանության հիշյալ բաժիններից ձևաբանությունն ու շարահյուսությունը միասին սովորաբար կոչվում են քերականություն: Այս տերմինը, սակայն, գործածում են նաև ավելի լայն իմաստով՝ մեջն առնելով նաև առաջին յերեք բաժինները, վորովհետև անհնարին է լեզվի հնչյուններն ուսումնասիրել բառաձևերից, բառերի նշանակությունից և բառակազմությունից անկախ, ինչպես և ձևաբանությունն ու շարահյուսությունը կարելի չե ուսումնասիրել մյուսներից անկախ: Ըստ էության, ուրեմն, քերականությունն իր մեջ ամփոփում և լեզվի ուսումնասիրության գրեթե բոլոր բաժինները:

Ինչպես տեսանք, լեզվաբանության կարելիր սկզբունքներից մեկն այն է, վոր ամեն լեզու միշտ և անընդհատ փոխվում է: Այս փոփոխության մեջ և լեզվի կյանքը կամ պատմությունը: Այս պահանջով է լեզուն, ինչպես մարդկային մշակույթի ամեն արտահայտություն, պատմական ուսումնասիրության առարկա է: Լեզվի բոլոր յերևույթները, լեզվական բոլոր իրականությունները, ուրեմն, ուսումնասիրվում են վոչ միայն նրանց ժամանակակից վիճակն առնելով, այլև նրանց պատմական զարգացումը: Ըստ այսմ լեզվաբանությունը, իր վերևում դրված բաժիններով, պատմական գիտություն է: Մի առանձին լեզվի պատմական ուսումնասիրությունը նյութն է նաև նույն լեզվի պատմական քերականության, վոր հետևում է լեզվի զարգացմանը, սկսած ամենահին ժամանակներից, և կազմում է նրա ամբողջ զարգացման տեսությունը:

Այսպիսի պատմական ուսումնասիրությունը հնարավոր է, սակայն, այն ժամանակ միայն, յերբ հայտնի են լեզվի վիճակները նրա զարգացման դանագան շրջաններում: Ուստի մի լեզվի պատմական քերականությունից առաջ՝ անհրաժեշտ է ունենալ նույն լեզվի մի շարք նկարագրական քերականություններ, վորոնցով ցույց է տրվում, թե ինչպիսի բառական ու կապակցության ձևեր են գործածական յեղել մի լեզվի մեջ իրար հաջորդող դանագան շրջաններում: Մեր ժամանակակից շրջանի, մեր խոսած լեզվի վիճակը, կարող ենք նկարագրել նկատի ունենալով վոչ միայն ժամանակակից հեղինակների գրվածքները, այլև մեր կենդանի խոսած լեզուն իր բոլոր բարբառներով, վորոնց նկատմամբ ուսումնասիրությունն ու դասավորությունը կազմում է մի առանձին բաժին—բարբառագիտություն (դիալեկտոլոգիա), իսկ նախորդ պարագրջանների լեզվի նկարագրությունը կարող ենք հանել միայն հնության մնացած գրավոր հիշատակարաններից: Յերբ մեկնույն լեզվի տարբեր ժամանակների համար կազմվում են նկարագրական քերականություններ, դրանց մեջ տարբեր կերպով են յերևան գալիս լեզվական իրականությունները. մի շարք այսպիսի քերականությունների համեմատությունից արդեն տեսնում ենք, թե ինչպես յուրաքանչյուր պարագրջանի լեզու իր նախորդ պարագրջանի լեզվի մի ձևափոխությունն է վորոշ կանոնավորությամբ և պրինցիպով: Բայց կատարված փոփոխության իսկական էության մասին այս համեմատական յեղանակով միայն դեռ կարելի չե պարզ գաղափար կազմել և ձեռք բերել լեզվի կյանքի դիտական ըմբռնումը: Ուստի ինչպես պատմության և պատմական գիտության յուրաքանչյուր ճյուղի համար, նույնպես և լեզվի պատմության համար կա լեզվի ընդհանուր տեսություն կամ ընդհանուր լեզվաբանություն, վոր առանձին լեզուների պատմությունից ձեռք բերված իրողությունների հիման վրա ուսումնասիրում և ընդհանրապես մարդկային լեզվի զարգացման ընդհանուր պայմանները և որենքները, լեզվի պատմության սկզբունքներն ու հիմնական խնդիրները և հետազոտում է ամեն փոփոխությունների մեջ նույն մնացող գործոնների բնությունն ու նշանակությունը:

Մարդկային լեզուների ուսումնասիրությունից, ինչպես տեսանք, յերևան է գալիս, վոր լեզուները կազմում են առանձին-առանձին խմբեր կամ ընտանիքներ: Մի լեզվական ընտանիքի մեջ մտնող առանձին լեզվական ճյուղերի մասնավոր ուսումնասիրությամբ կազմվում է համապատկերը լեզուների համեմատական ուսումնասիրությունը—համեմատական քերականությունը, վոր զբաղվում է նույն ընտանիքի մեջ մտնող լեզուների հարաբերությունները վորոշելով: Պատմական քերականություն և համեմատական քերականություն իսկապես նույն գիտություններն են, նույն խնդրով

և նույն համեմատական մեթոդով, յերկուսն էլ կազմում են լեզվի պատմությունը, մեկն առաջինը հետևում է լեզվի զարգացմանն ավանդությամբ սրված մինչև ներկան, իսկ յերկրորդն՝ ավանդությամբ սրված ցեղակից լեզուներից բաբելոնում և գիտի մայր լեզվի կորած նախնական վիճակը, ուրիշ խոսքով՝ համեմատական-պատմական ուսումնասիրությամբ աշխատում են վերստեղծել իրրև յելակետ՝ լեզվի նախնական դրությունը, վոչնչով քերականական և բառարանական կազմն այն պարագրյուսնում, յերբ դեռ մեկ ընդհանուր լեզու յի յեղել, այլև թե ինչպես ձեվախեխությունն և կրել այդ մեկ լեզուն իր ամեն առանձին ճյուղերի մեջ: Այսպես՝ կա հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն, վորով վերստեղծվում է հնդեվրոպական նախալեզուն: Ապա՝ նույն կերպ վերստեղծվում են նաև մեկ ճյուղի պատկանող լեզուների նախնական դրությունը, վորից չեն մնացել հիշատակարաններ, ինչպես օրինակ՝ համեմատական ուսումնասիրությամբ վերականգնում են գերմանական լեզուների մայր լեզուն, ինչպես և սլավոնական ու սլավական լեզուների: Յեվ վերջապես, յերբ մի լեզվից չեն մնացել գրավոր հիշատակարաններ, կամ յերեք մնացել են՝ միայն մեկ բարբառից, կարելի յե միևնույն համեմատական յեղանակով ուսումնասիրել մեր ժամանակի բարբառները և վերականգնել այդ լեզվի նախնական վիճակը:

27. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Լեզվաբանությունը, բացի իր մաքուր տեսական նշանակությունից, իրրև լեզվի գիտություն, ունի նաև կիրառական նշանակություն: Մի լեզվի պատմությունը սերտ կապված և նույն նպատակություն: Մի լեզվի պատմությունը սերտ կապված և նույն նպատակությունն է

իբրեւ պլբոցական ուսման առարկա, կամ իբրեւ անկախ առարկա:

Քերականութիւնն իբրեւ գիտութիւն մեկ նպատակ միայն ունի, այն է՝ ուսումնասիրել լեզուի կազմութիւնը, այն միջոցները, վորոնցով լեզուն արտահայտում է մտքի առարկաների հարաբերութիւնները: Ուսման պլբոցական քերականութիւնը պետք է հետեվի այս նպատակին. նրա միջից պետք է դուրս ձգել այն ամենը, ինչ վոր ավելորդ է այս նպատակին հասնելու համար, և այն ժամանակ քերականութեան ուսումը վոչ միայն հնչա կլինի, այլև կըզատնա հետաքրքիր ու կարեվոր առարկաներից մեկը: Յեթե պատանու ընկհանուր զարգացման համար անհրաժեշտ են ճիշտ գիտելիքներ դանագան գիտութիւններից, ինչպես՝ բուսաբանութիւնից ու կենդանաբանութիւնից, անատոմիայից ու քիմիաութիւնից և այլն, այս գիտութիւնների այժմյան վիճակի համեմատ,—նա պետք է ճիշտ գիտելիքներ ունենա նաև մարդու հոգեվոր գործունեութեան—իր ամենօրյա խոսած լեզվի և նրա կազմութեան մասին լեզվաբանական գիտութեան արդի վիճակի համեմատ:

28· ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ:—Լեզվով հետաքրքրվել են ամենահին ժամանակներից սկսած, բայց լեզվաբանութիւնն իսկական գիտութիւն դարձել է միայն 19-րդ դարում: Առաջին անգամ գերմանացի Ֆրանց Բոպ (1791—1867) համեմատական ուսումնասիրութեամբ ապացուցել և հնդեվրոպական լեզուների ցեղակցութիւնը, վորով և հանդիսացել է նա իբրեւ հիմնադիրը լեզվաբանական գիտութեան: Մի քանի ժամանակ և գերմանացի Վիլհելմ Հումբոլդ (1767—1835), Յակոբ Գրիմ (1785—1863) աշխատել են լեզվաբանութեան համար, և այնուհետեվ շատ ուրիշները թե Գերմանիայում և թե ուրիշ յերկիրներում ուսումնասիրել են լեզվաբանութիւնը:

Հայոց լեզուն, իբրեւ հնդեվրոպական լեզուներից մեկը, հենց սկզբից դարձել է համեմատական ուսումնասիրութեան նյութ: Մինչեվ 1880-ական թվականները մեր լեզուն պրվում էր իբրեւ իրանական լեզուներից մեկը· բայց Հ· Հյուբշմանն նախ 1875 թվին իր մի հոդվածով, ապա 1883 թ· Լայպցիգում հրատարակած իր «Հայկական ուսումնասիրութիւնների» մեջ ապացուցեց, վոր հայերենը մի առանձին ճյուղ է հնդեվրոպական լեզուների ընտանիքի մեջ:

71-127

Յերկրորդ մաս

ԲԱՌԵՐԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ

(ՀՆՉԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

Ա.

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

29· ԽՈՍՔԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ:—Խոսքի հնչյունները արտադրվում են արտաշնչելու ժամանակ թոքերից դուրս մղվող ոդի հոսանքով, վոր անցնում է կոկորդի միջով, այդտեղից մտնում է կերակուր և հետո բերանի ու քթախոռչի միջով դուրս է դալիս: Կոկորդը, բերանը և քթափողը իրենց մեջ գտնված չարժուն և անշարժ մասերով միասին՝ կազմում են խոսքի հնչյունների գործարանները:

Կոկորդի մեջ խոսքի չարժուն գործարաններից գլխավոր տեղը բռնում են ձայնալարերը, վորոնք կոկորդի լայնքով՝ հորիզոնական ձևով ձգված յերկու առաձիգ մկաններ են, և նրանց մեջ գտնված հնդքը, վոր կոչվում է ձայնաձեղք: Յերբ ձայնաձեղքը ավելի կամ պակաս չափով նեղանում է և ձայնալարերը ձգվում լարվում են, այդ ժամանակ շնչափողից դուրս մղվող ոդի ձնշումից ձայնալարերը դողում կամ տատանվում են, մերթ բացվելով և մերթ իրար կպչելով, և նրանց տատանումից, ինչպես և ամեն մի հնչող մարմնի տատանումից, առաջանում է յերաժշտական հնչյուն, վոր կոչվում է ձայն:

Ձայնալարերը մասնակից են, սակայն, վոչ բոլոր հնչյունների արտաբերութեան: Շատ հնչյունների արտաբերութեան ժամանակ ձայնաձեղքը լայն բացված է մնում, ոդի հոսանքն ազատ անցնում է նրա բացվածքի միջով, ձայնալարերը մնում են առանց լարվելու ու տատանվելու և ձայն չեն տալիս: Հնչյուններն այդ ժամանակ արտաբերվում են առանց ձայնալարերի մասնակցության գլխավորապես բերանի խոռոչի մեջ, այն է՝ ոդի հո-

սանքը բերանում մի արգելքի հանդիպելով՝ աստանովում է և աստջ է բերում աներաժշտական հնչյուն կամ աղմուկ, ինչպես՝ Ֆ, Ս, Շ, Խ:

Խոսվածքի լսելիությունն ու յերաժշտականությունը հիմնված է կոկորդալարերի ձայնի վրա, որը յերաժշտական հնչյուն է և, ինչպես ամեն յերաժշտական հնչյուն, աստջանում է ձայնալարերի պարբերական (պերիոդիկ) ու ոլիմիկ աստանումներից, այսինքն այնպիսի աստանումներից, որոնք միակերպ կրկնվում են որոշ ժամանակամիջոցում. մինչդեռ աղմուկները, իրրև աներաժշտական հնչյուններ, հետևմանք են վոչ-պարբերական աստանումների: Ուստի և այնպիսի հնչյունները, որոնց արտարերությունը կրնում է աստնց կոկորդալարերի ձայնի, բարձր ու պարզ լսելի չեն ու աներաժշտական են, ինչպես լսնում է շշունջի, այսինքն անձայն և «փսփսալով», չշնջալով խոսելու ժամանակ: Ձայնալարերն էլ, սակայն, կարող են աստանվել իրենց ամբողջ յերկայնությամբ և ուժով, և այդ ժամանակ ձայնը լինում է լիքը և ուժեղ, ինչպես և սովորական բարձրաձայն և լիաձայն խոսվածքի ժամանակ. բայց կարող են աստանվել նաև վոչ իրենց ամբողջ յերկայնությամբ, այլ միայն մի վորոշ մասով և թուլ. այդ ժամանակ ձայնը լիքը չի լինում, ինչպես է՝ մրմունջի, «մրմռալով» կամ մրմռաձայն, մրմնջաձայն խոսվածքի ժամանակ:

Բերանը մասնակից է բոլոր հնչյունների արտարերությանը կամ իր խոռոչով իրրև ռեզոնատոր, կամ իր մեջ գտնված մասերով, որ են՝ լեզուն, աստամնները ու քիմքը: Վերջինս բաժանվում է յերկու մասի՝ կոշտ քիմք, որ սովորաբար աստ ենք քիմք կամ աստջաքիմք (պալատում), և փափուկ կամ շարժուն քիմք, որը կոչում ենք կատիկ (վելում) կամ վերջաքիմք: Մասով կարելի է շոշափել այս յերկու քիմքն էլ և իմանալ, թե որտեղ է վերջանում կոշտ քիմքը և սկսվում կատիկը: Կոշտ քիմքն, ինչպես և աստամները, ամբողջապես անշարժ են մնում հնչյունների արտարերության ժամանակ: Շրթունքները, սակայն, մերթ հանգիստ դրության մեջ են մնում, մերթ աստջ ձգվելով՝ յերկայնացնում են բերանի խոռոչը, ինչպես լինում է Ո, Ու արտասանելիս: Բերանի խոռոչի ստարածությունը փոխվում է նաև, երբ բերանը նեղ կամ լայն է բացվում, որ կախված է նեղքին ծնոտի

դրությունից: Այս նկատմամբ, սակայն, ամենից կարևոր դերը կատարում է լեզուն, որը իր շարժունությամբ չափազանց բազմազան ձևերը և դրություններ է ընդունում: Նայելով թե լեզուն ինչ դրության մեջ է և իր վո՛ր մասով և վո՛րքան է բարձրանում դեպի քիմքի այս կամ այն կողմը, ըստ այնմ էլ բերանի խոռոչը մերթ լայնանում է, մերթ նեղանում և նույնիսկ յերկու մասի բաժանվում: Բերանի խոռոչը ծռտացում է իրրև ռեզոնատոր, որի միջոցով փոխվում է հնչյունի յերանգը կամ վորակը, որը և՝ հիմնական հնչյունն է իր հետ միացած կողմնակի հնչյուններից բազադրությունը: Հիմնական հնչյունի հետ միացած բազմազիչ հնչյուններից մի քանիսն այդ ռեզոնատորով ուժեղանում են և ուրիշները թևդվում են: Բայց վորովհետև բերանի խոռոչը պտնատան ձևերը և ընդունում, վորով և պտնատան տեսակի ռեզոնատորներ է պատնում, հետևաբար և ձայնալարերի աստանումից աստջացած ձայնը բերանի մեջ՝ նայելով ռեզոնանսին՝ մշակվելով պատնում է տարբեր վորակի կամ տարբեր յերանգի հնչյուններ, ինչպես՝ Ա, Ո, ՈՒ, Ե, Ի, Ը: Բացի այդ՝ բերանի խոռոչի մեջ արտաշնչության ժամանակ ոդի աստանումից, ինչպես տեսանք, աստջանում են աղմուկներ, որոնք նույնպես, մենակ կամ ձայնի հետ միացած, կազմում են խոսքի հնչյուններ, ինչպես՝ Ս, Ֆ, Շ, Խ, Զ, Վ, Ժ, Ղ: Այս հնչյուններն էս պտնատան են կամ տարբեր վորակ (յերանգ) ունեն, քանի որ աստջանում են բերանի խոռոչի տարբեր ձևվերում ու տեղերում և տարբեր յեղանակներով:

Թոքախողը միշտ անխափան է մնում և դրսից բաց է, բայց ներսից կարող է փակվել և բաժանվել բերանից: Փափուկ քիմքը կամ քիմքի աստապատը, որ վերջանում է լեղվակով, բարձրանալով սեղմվում է յերախի պատին և փակում քթափողի անցքը: Այդ ժամանակ ոդն անցնում է միայն բերանով: Իսկ յերբ քթափողի անցքը բաց է և ոդն ազատ կարող է անցնել նրա միջով, այդ ժամանակ քթափողն էլ հանդիսանում է իրրև մի ռեզոնատոր և խոսքի հնչյուններին տալիս է իր ռնգային յերանգը, ինչպես՝ Ն, Մ:

Այսպես ուրեմն, նայելով թե արտաշնչած ոդի դուրս մղվելու ժամանակ ինչ դրության մեջ են լինում խոսքի այս չարժուն

դործարանները կոկորդի և բերանի մեջ, բաւական էլ արտաբերւում են տարբեր հնչյուններ:

30. ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՁԱՅՆԻ ՑԵՎ ԱՂՄՈՒԿԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ:— Ինչպես տեսանք, կոկորդալարների ձայնը մասնակից է հնչյունների մի մասի արտաբերութեանը միայն, որոնք և կոչւում են ձայնեղ (թրթռուն) հնչյուններ. իսկ այն հնչյունները, որ միմիայն աղմուկից են կազմված և որոնց արտաբերութեան ժամանակ ձայնալարերը մնում են առանց տատանվելու (թրթռալու) և ձայն չեն հանում, կոչւում են անձայն (խուլ) հնչյուններ:

Ձայնալարերի հնչումն առանձին կերպով ձայն է տալիս գլխի մէջ. լեզուի մասնիկներով ականջներս փակենք և բարձրաձայն արտասանենք ձայնեղ հնչյունները, ինչպես Զ, Ժ, Վ, Բ, Գ, Դ, Ր, Մ, նաև ձայնավորները, ձայնը մեզ համար գլխի կլինի գլխի մէջ. մինչդեռ այդ չի լինիլ համապատասխան անձայն հնչյունների արտաբերութեան ժամանակ, ինչպես են՝ Ս, Շ, Ֆ, Գ, Կ, Տ: Ձայնալարերի թրթռոցն զգացվում է և խոչակի վրա գրած կոպիտից, երբ ձայնեղ հնչյունների արտասանութեան ժամանակ մատներս թեթեւ կերպով դնում ենք խոչակի վերին մասի վրա:

Բոլոր հնչյունների մէջ էլ կա աղմուկ, բայց տարբեր չափով: Նախ՝ անձայն աղմկավոր հնչյուններն, ինչպես տեսանք, միմիայն աղմուկից են կազմված: Ապա՝ ձայնեղ հնչյուններն էլ իրենց ձայնաբանական (ակուստիկ) արժէքով, իրենց զործած լսողական տպավորութեամբ միակերպ չեն, ինչպես միակերպ չեն նաև ձայնի և աղմուկի փոխադարձ հարաբերութեամբ: Որքան ավելի լայն և բացված ոդի անցքը բերանի մէջ, այնքան ավելի գլխի կ՚ ձայնը. և ընդհակառակն, որքան ավելի նեղ և այդ անցքը, այնքան ավելի ուժեղ և աղմուկը: Այս նկատմամբ՝ ձայնեղ հնչյունները բաժանվում են յերեք տեսակի՝ ձայնավորներ, ձայնորդ բաղաձայններ և ձայնեղ աղմկավոր բաղաձայններ:

Ձայնավորներից՝ Ա, Ո, ՈՒ, Ե, Ի, Է՝ արտաբերութեան ժամանակ բերանի բացված-քն ընդհանրապես ավելի լայն է, խոսքի գործարանները չեն կպչում միմեանց և վոչ էլ այնքան մոտենում միմեանց, որ արտաչնչվող ոդը մի որևէ տեղից հանդիպի և ոդի մեծ չափով, ուրեմն և մեծ աղմուկ առաջ գա բերանի մէջ: Լեզուի ձայն խոսելիս,—և մենք սովորաբար լուռ ձայն ենք խոսում,—ձայնալարերը լի հնչում են և նրանց ձայնը լավ լսելի կ՚ լինում, իսկ թեթեվ աղմուկը, որ բերանում առաջանում է ձայնավորների արտաբերութեան ժամանակ, բոլորովին խեղդվում է ձայնից և անզգալի կ՚ մնում, այնպես որ մեզ թվում է, թե դրանք ձայնալարերի մաքուր հնչյուններ են և բերանը միայն ռեզոնատորի դեր է կատարում: Բայց թե ձայնավորների հետ էլ խառն կա բերանի աղմուկ, այդ լավ յերեվում է չլսվելի, «փսփսալով» խոսելու ժամանակ, յերբ ձայնալարերը բոլորովին չեն հնչում, ուստի և ինչպես բոլոր հնչյունները, նաև նրանց ձայնավորները բոլորովին անձայն են մնում և կազմված են լինում միայն աղմուկից, որ առաջանում է ոդի շնորհից: Այդ ժամանակ բերանի խոռոչն ու քթանցքն առանում են այնպիսի դրութեան, որ հարկավոր է այս կամ այն հնչյունի արտաբերութեան համար, և ոդի շնորհից առաջացած աղմուկն այդ տարբեր դրութեամբ պատճառով պատնում է այս կամ այն չլսվելի հնչյունը, որ և մենք լսում ենք: Լռաձայն խոսելիս՝ ձայնավորների արտաբերութեան ժամանակ այդ աղմուկը բոլորովին անլսելի կ՚ մնում և ձայնավորները թողնում են հոսակաձայն հնչյունների տպավորութեան:

Նմանապես հոսակաձայն հնչյունների տպավորութեան են թողնում և ձայնորդ բաղաձայնները՝ Լ, Ր, Ռ, Ն, Մ, որոնցից Լ, Ր, Ռ կոչւում են նաև (թաց, կակուղ) երբեմն ձայնավորներին մոտիկ հնչյուններ. բայց կան քերականներ, որոնք նաև կոչում են նաև ռնգային Ն, Մ հնչյունները: Դրանց մէջ աղմուկ ավելի կա, քան ձայնավորների մէջ, բայց և այնպես դրանց արտաբերութեան ժամանակ էլ լսվում է ձայնը, և աղմուկը խեղդվում է ձայնից, թեպետ վոչ այնպես, ինչպես ձայնավորների. որովհետև մենք վերջիններս մէջ աղմուկը բոլորովին անլսելի կ՚ մնում, նաև բաղաձայնների հետ միացած աղմուկը սակաւ չափով կ՚ լսելի կ՚ լինում, սովորական խոսելիս ավելի, քան յերգելիս: Այս բաղաձայնների համեմատաբար ավելի հստակաձայն և ձայնավորներին մոտիկ լինելը աղմուկի լսելիութեան տեսակետից՝ շատ լավ յերեվում է, յերբ միմյանց հետ համեմատում ենք այդ Մ, Ն, Լ, Ր, Ռ հնչյունները և ձայնեղ աղմկավոր հնչյունները՝ Զ, Ժ, Ղ, Վ, Բ, Գ, Դ, Ջ, Ձ: Այս վերջիններիս

մէջ ևս ազմուկի հետ միացած է ձայնը, բայց արդէն փոչ թէ ձայնն է իշխում ազմուկի վրա, այլ ազմուկն է իշխում ձայնի վրա. դրա համար և դրանք դժում են իրենց ազդակավոր հնչյուններ:

Այսպես ուրեմն խոսքի հնչյուններն բոլոր իրենց մէջ միացած ձայնի և ազմուկի հարաբերութեան լինում են.

1. Ձայնավորներ, որոնց մէջ գերիշխում է ձայնը և թեթև ազմուկը բոլորովին անզգալի է մնում:

2. Ձայնորդ կամ նայ (բաղ) բաղաձայններ, որոնց մէջ իշխում է դարձեալ ձայնը, բայց ազմուկն ավելի է, քան ձայնավորների մէջ և նույն իսկ կարող է լսելի լինել. բայց դրանք ազմուկի հարաբերութեան տեսակետից ավելի մոտ են ձայնավորներին, քան մյուս բաղաձայններին. ուստի և հաճախ դժում են իրենց հատակաձայն հնչյուններ, ինչպես և ձայնավորները:

3. Ձայնեղ աղմկավոր բաղաձայններ, որոնց մէջ իշխում է ազմուկը:

4. Անձայն աղմկավոր բաղաձայններ, որոնք կազմված են միայն ազմուկից, ինչպես՝ Ս, Շ, Խ, Ֆ, Պ, Կ, Տ, Փ, Բ, Թ, Ծ՝ Ց, Ճ, Ջ:

31. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՏԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ:—Մեր նոր գրական լեզվի մէջ ձայնավորները թվով վեց են՝ Ա, Ե, Ը, Ի, Ո, ՈՒ: Բարբառների մէջ կան նաև ուրիշ ձայնավորներ, որոնք այսօր նկատի չեն առնվում իրենց բառառային հնչյուններ, որոնց համար նույնիսկ տառեր չունենք, ինչպես են մի քանի բարբառների մէջ ֆրանսերենի ա, գերմաներենի ü հնչյունը, ֆրանսերենի eu, գերմաներենի ö հնչյունը և ուրիշները: Դրանք գրական լեզվի մէջ ընդունված չեն, և եթե մի քանի անհատներ գրական լեզվով խոսելիս այս կամ այն բառի արտասանության մէջ մացնում են այդ և ուրիշ ձայնավոր հնչյուններ, այդ միայն բարբառային սովորություններ են:

Հայերենի բոլոր վեց ձայնավորներն էլ բերանի մաքուր հընչյուններ են, որոնց արտաբերության ժամանակ քթափողը փակված է մնում փափուկ քիմքի առագաստով, և իրենից անպոռնոտար հանդիսանում է միայն բերանի խոռոչը: Մեր գրական լեզվի մէջ չկան ռնգային կամ ռնգայնացած ձայնավորներ, ինչպես ուրիշ լեզուների մէջ, որինակ՝ ֆրանսերենում, որոնց ձայնավորների արտասանության ժամանակ քթափողը կարող է ներքից նաև բաց

մնալ, վորով իրենից անպոռնոտար հանդիսանում է նաև քթափողը և Ա, Ե, Ո և այլ ձայնավորները առանձնում են ռնգային բնավորության:

Հայերենի բոլոր ձայնավորները, բացի Ը ձայնավորից, արտասանվում են լիաձայն և արտաբերվում են ձայնալարերի գործիք առաձգականությամբ. Ը ձայնավորի արտաբերության ժամանակ միայն ձայնալարերը թուլ են թրթռում, ուստի և Ը ձայնավորը, նույնիսկ լիաձայն խոսելիս, ամենօրյա թուլ և մնում: Այդ պատճառով և մեր այս ձայնավորը խոսքի մէջ շեշտ չի կրում և ընկնում է բառերի անշեշտ վանկերի մէջ, ինչպես՝ գըտնե՛լ, մըտա՛լ, պա՛տը, թևակոտ և հարկավոր դեպքերում միշտ կարող ենք նաև ուժեղ և լիքն արտասանել: Ձայնափոխությամբ էլ այս Ը ձայնավորը ծագում է լիաձայն Ի, ՈՒ, յերբեմն և ուրիշ ձայնավորներից, յերբ վերջիններս անշեշտ մնալով՝ թուլ են արտաբերվում, ինչպես՝ սի՛րտ, սըրտի՛, պի՛ր, պըրե՛լ: Այսպես և ուրիշ բառերի մէջ այս Ը ձայնավորը պատմականորեն ծագում է անշեշտ վանկերի Ի, ՈՒ, Ա, Ե, Ո ձայնավորներից՝ իրենց հետևանք սրանց թուլ արտաբերության, ինչպես՝ փախուցանել, նորա գարձել են՝ փախցրնել, նրրա:

Ձայնավորների յերանգը կախված է, ինչպես տեսանք, բերանի խոռոչի բացվածքից, այսինքն նրա տարածությունից ու դրությունից, իսկ վերջիններս՝ ներքևի ծնոտի, շրթունքների ու լեզվի դրությունից: Ա ձայնավորի արտաբերության ժամանակ բերանը բացված է լինում ավելի, քան Ե, Ո, Ը ձայնավորների, և ավելի ևս, քան ՈՒ ձայնավորի արտաբերության ժամանակ: Ի ձայնավորի արտաբերության ժամանակ բերանի բացվածքը ամենից փոքր է: Ներքևի ծնոտի իջնելն ու բարձրանալը, ուրեմն և բերանի բացվածքի նեղանալն ու լայնանալն, գալի կըլինի, յերբ բութ մատով թեթև սեղմենք կզակի տակը և իրար յետևից՝ մի փոքր յերկարելով մի քանի անգամ արտասանենք յերկու ձայնավոր, ինչպես՝ Ի–Ա, Ա–Ի: Միայն պետք է նկատի ունենալ, որ կան նաև անհատական տարբերություններ ևս:

Շրթունքների դրությունը կարևորություն ունի Ո և ՈՒ ձայնավորների համար. Ո ձայնավորի արտաբերության ժամանակ շրթունքները առաջ ձգված կազմում են մի բոլորակ ձև, իսկ ՈՒ–ի արտաբերության ժամանակ ավելի ևս առաջ են ձգվում և ամ-

վոփսում՝ ոդի համար ավելի նեղ բոլորակ անցք թողնելով: Մեր ձայնավորներից այս լեզուամը միայն ունեն չբծնաձայնացում, այսինքն արտաբերվում են առաջ ձգված և կլորված շրթունքներով: Ուրիշ լեզուների մեջ կան նաև ուրիշ չբծնաձայնացած ձայնավորներ:

Լեզվի դիրքը կարևորություն ունի բոլոր ձայնավորների արտաբերության համար. նրա առաջի, միջին և հետևի մասերը, նայելով ձայնավորներին, բարձրանում են դեպի կոշտ քիմքը կամ առաջաքիմքը (քիմքի առաջի կողմը), դեպի լերկու քիմքի միջանցքը—քամանջը և դեպի փափուկ քիմքը կամ վերջաքիմքը (քիմքի հետևի կողմը): Ամա՝ այս բարձրացումը միանկերպ չէ. Ի և ՈՒ ձայնավորների համար լեզուն ավելի շատ և վեր բարձրանում. Ե, Ը, Ո ձայնավորների համար միջակ չափով, իսկ Ա ձայնավորի համար՝ ավելի ևս քիչ: Նույնը կարելի է ավելի մոտիկ կերպով պատկերացնել հետևյալ ցուցակով:

Առաջաքիմք	Քամանջ	Վերջաքիմք	
Ի		ՈՒ	Վերին բարձրություն
Ե	Ը	Ո	Միջին բարձրություն
		Ա	Սաոբին բարձրություն

Ի ձայնավորի արտաբերության ժամանակ լեզուն դեպի առաջ է ձգվում, ծայրը լավ հենված է լինում ներքին կտրիչ ատամների վերին մասին. առաջի մասը վերին բարձրությամբ քաշվելով դեպի վեր, քիմքի առաջի կողմը կազմում է մի կամար. կոկորդն էլ ավելի բարձր է: Ե ձայնավորի արտաբերության ժամանակ լեզուն նույնպես դեպի առաջ է ձգվում և առաջի մասով ուղղվում է դեպի քիմքի առաջի կողմը, միայն միջին բարձրությամբ. բայց այդ՝ լեզվի ծայրը թույլ կերպով ղրված է լինում ներքին կտրիչ ատամների հետևը, բերանը մի քիչ ավելի լայն է բացվում, և կոկորդն ավելի ցածանում է: Մի քանի անգամ իրար հետևից յերկարաձիգ արտասանելով Ի–Ե, Ե–Ի, կընկատեք բերանի բացվածքի, լեզվի և կոկորդի ղրության

տարբերությունը Ի և Ե ձայնավորների արտաբերության ժամանակ. միայն կոկորդի իջնելը նկատելու համար՝ պետք է մատը դնել խոշակի վերին կողմի վրա:

Կան լեզուներ, որոնք (ինչպես և մեր մի քանի բարբառները) ունին «բաց» և «փակ» Ե ձայնավորներ: Սրանցից յերկրորդի, այսինքն փակ Ե ձայնավորի արտաբերության ժամանակ բերանի բացվածքն ավելի նեղ է լինում, ավելի մոտիկ Ի ձայնավորի արտաբերության բացվածքին. բացի այդ՝ մոր դլխավորն է՝ լեզուն ավելի ձգված լարված է լինում: Իսկ բաց Ե ձայնավորի արտաբերության ժամանակ լեզուն ավելի քիչ լարված և լինում. ավելի ազատ դրության մեջ է լինում, և բերանի բացվածքն՝ ավելի լայն: Մեր Ե ձայնավորը բաց է:

Ա. ձայնավորի արտաբերության ժամանակ լեզուն հանդիստ դրությունից վեր է քաշվում, ծայրը քիչ իջնում է դեպի ներքին կտրիչ ատամները, բայց ատանց կպչելու, իսկ հետևի մասը քիչ բարձրանում է դեպի քիմքի հետևի մասը: Բերանը չափավոր բացված, իսկ կոկորդն իջնում է դեպի ցած: Ո ձայնավորի արտաբերության ժամանակ լեզուն ավելի յետ է քաշվում և ծայրն ավելի հեռանում ներքին կտրիչներից. հետևի մասը միջին բարձրությամբ ուղղվում է դեպի քիմքի հետևի մասը, բերանի բացվածքը քիչ նեղանում է, իսկ կոկորդը քիչ ավելի է բարձրանում, քան Ա. ձայնավորի արտաբերության ժամանակ: Նույնը լինում է և ՈՒ ձայնավորի արտաբերության ժամանակ, միայն ավելի մեծ չափով, քան Ո ձայնավորի արտաբերության ժամանակ, այն է՝ լեզուն իր ամբողջությամբ յետ է քաշվում և իր հետևի մասով վերին բարձրությամբ մոտենում է քիմքի հետևի մասին, բերանի բացվածքն ավելի ևս նեղանում է, և կոկորդն ավելի բարձրանում, քան Ո–ի արտաբերության ժամանակ: Բացի այդ, ինչպես ասացանք, Ո և ՈՒ ձայնավորները չբծնաձայնացած են:

Լեզվի վերին, միջին և սաոբին բարձրացումները հետևի մասում, ինչպես և բերանի բացվածքը և կոկորդի դրությունը ՈՒ, Ո, Ա. ձայնավորների արտաբերության ժամանակ, նույնպես կարելի է նկատել, յեթե մի քանի անգամ իրար հետևից արտասանենք ՈՒ–Ո–Ա: Մի փոքր ավելի դժվար է նկատել լեզվի առաջի կողմում և հետևի կողմում ունեցած բարձրացումների տարբերությունը միմյանցից, բայց մի քանի անգամ հետևե-

յեռանվ արտասանելով ՈՒ–Ո–Ա և Ի–ե, սրան էլ կարելի է վարժվել:

Ը ձայնավորի արտաբերության ժամանակ բերանի բացվածքը մի փոքր պակաս է, իսկ կոկորդի դրությունը մի քիչ ավելի բարձր է, քան ե ձայնավորի արտաբերության ժամանակ. լեզվի առաջի մասը մի փոքր իջնում է, իսկ միջին մասը միջին բարձրության դեպի վերև ուղղվում է դեպի յերկու քիմքի միջակը: Դա միջին կարգի միջին բարձրության ձայնավոր է. մինչդեռ առաջի կարգի ձայնավորներ են՝ ե միջին բարձրության, ի վերին բարձրության, իսկ յեռանվ կարգի ձայնավորներ են՝ Ա. ստորին բարձրության, Ո միջին բարձրության և ՈՒ վերին բարձրության:

Պետք է նկատի ունենալ, որ այս առաջի, միջին և յեռանվ կարգերը, ինչպես և վերին, միջին, ստորին բարձրության աստիճանները, միայն ընդհանուր ձևով են որոշում ձայնավորների արտաբերության տեղը: Առանձին անհատների մեջ, թե անհատական տարբերությամբ և թե բարբառային պղեցության, մեկնուն ձայնավորի արտաբերությունը միշտ կարող է լինել մի քիչ ավելի առաջի կամ մի քիչ ավելի յեռանվ կողմում, և լինում էլ կարող է մի քիչ ավելի կամ պակաս աստիճանով բարձրանալ դեպի քիմքը: Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ և հնչեղությունը: Ձայնավորները, ինչպես և բաղաձայնները, հաս–հաս չենք արտաբերում, այլ իրար հետ կապված, ուստի մեկնուն ձայնավորը տարբեր տարբեր կերպով է արտաբերվում, նայելով թե առաջից կամ յեռանվից ինչ հնչյուն է գալիս, ինչպես՝ մա, նա, լա, յա, ամ, ան, ալ, այ և այլն: Ա ձայնավորի հնչյունն ու արտաբերությունն այս դեպքերում տարբերվում է. որովհետև, որպեսզի յերկու հնչյուն իրար հետ կապվեն, պետք է յերկրորդ հնչյունի սկիզբը համապատասխան լինի առաջին հնչյունի վերջին, բացի այդ՝ պետք է յերկրորդ հնչյունի արտաբերությունը կարողանա պատրաստվել առաջինի արտաբերության հետ միաժամանակ. ուրիշ խոսքով իրար հետ կապված յերկու հնչյունի արտաբերության չարժումները պետք է հարմարվեն միմյանց, որպեսզի կարելի լինի մի անդամից արտաբերել: Իսկ այդպիսի հարմարեցման ժամանակ լեզվի, կոկորդի և այլ չարժուն մասերի դրությունը միշտ փոփոխության է ենթարկվում, որից և ամեն անգամ տարբերվում է հնչյունների յերանգը: Բայց մենք սովորական կյանքում ուշադրություն չենք դարձնում այդպիսի նուրբ

տարբերությունների վրա և առնում ենք, ղեկուց Ա ձայնավորը, մի ընդհանուր վորակով ամեն դեպքում երբեմն միևնույն հնչյունը:

32. ՀԱՂԱՋԱՅՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԱՐՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՆԱԿԻ ՅԵՎ ՏԵՂԻ:—Բաղաձայնները առաջանում են, յերբ ոդի արտամղման ժամանակ բերանի մեջ կապվում է մի վսիվածք կամ նեղվածք: Փակվածքն ոդի ճնշումից վայրկենապես պայթելով բացվում է աղմուկով, իսկ նեղվածքի պատճառով ոդը չեզոքում և բերանի նեղվածք կազմող մասերին և աղմուկ է հանում: Յերկու դեպքում էլ առաջացած աղմուկները բաղաձայնում են: Բաղաձայնները, ուրեմն, բաղադրյալ հնչյուններ են: Բաղաձայնները, ուրեմն, բաղադրյալ են 1) փակվածքի բաղաձայններ, վորոնք կոչվում են նաև պայթական կամ վայրկենական, վորովհետև պայթյունի աղմուկը վայրկենական տևողություն ունի, ինչպես՝ Պ, Բ, Տ, Դ, Կ, Գ. և 2) նեղվածքի բաղաձայններ, վորոնք կոչվում են նաև շփական կամ տևական, վորովհետև չեզոքից առաջացած աղմուկը, վոր և բաղաձայնը, կարելի է ուզածի չափ յերկար տևողությամբ արտասանել, ինչպես՝ Ս, Զ, Շ, Ժ, Խ, Ղ, Ֆ, Վ:

Բաղաձայնները՝ նայելով թե աղմուկի հետ միասին հնչում են ձայնալարերը, թե չե՝ լինում են ձայնեղ և անձայն: Անձայն բաղաձայնները, ինչպես՝ պ, կ, տ, ս, չ, խ, ֆ, ավելի մեծ ուժով ու ճնշումով են արտաբերվում, իսկ ձայնեղները, ինչպես՝ բ, ղ, դ, գ, ժ, զ, վ, ավելի թույլ ուժով, վորովհետև այս յերկրորդ դեպքում արտաշնչության ուժի մի մասը գնում է ձայնալարերը տատանելուն: Այս պատճառով անձայն բաղաձայնները կոչվում են նաև ուժեղ կամ կոշտ, իսկ ձայնեղները՝ թույլ կամ փափուկ: Պայթական ձայնեղ բաղաձայնների արտաբերության ժամանակ՝ ձայնալարերի տատանումը կարող է սկսվել, նայելով բարբառներին, բաղաձայններին հատուկ աղմուկից թե առաջ և թե պայթյունի հետ միաժամանակ: Հայոց լեզվի արևելյան բարբառներին հատուկ է առհասարակ առաջին սեռակի արտասանությունը, այսինքն՝ ձայնալարերը հնչում են պայթյունից ավելի կամ պակաս տևողությամբ առաջ:

Բաղաձայնների մի ավելի կարևոր դասակարգություն լինում է նայելով այն տեղերին, ուր առաջանում է բաղաձայնի բնորոշ աղմուկը: Բաղաձայնների մեծ մասի արտաբերության ժամա-

նակ բմաւորդն անցքը փակված է լինում քմքի առաջատարի, և ողը մեկն բերանով է անցնում և առանջ բերում մաքուր բերանային բաղաձայններ. Մ, Ն բաղաձայնների արտաբերության ժամանակ մեկն՝ քմափողի անցքը բաց է մնում, և ողը միաժամանակ նաև քմափողով է դուրս գալիս, առանձին լիրանդ ազդով այդ բաղաձայններին, որոնք և կոչվում են ռնգային բաղաձայններ:

Բերանի մեջ փակվածքը և նեղվածքը կազմվում են շրթունքների երբ կպչելով կամ մոտենալով, լեզվի մոտենալով կամ կպչելով վերին կարիչ առամներին և կոշտ կամ փափուկ քմքին: Նայելով բերանի այս դանազան դրությունների՝ բաղաձայնների բնորոշ ազդումն առաջանում է դանազան տեղերում, և բաղաձայնները ըստ այնմ էլ բաժանվում են դանազան տեսակների և կոչվում են՝ շրթնային, առամնային, քմային և այլն: Միայն պետք է նկատի ունենալ, որ դանազան հեղինակներ այս կամ այն բաղաձայնը տարբեր ձևով են կոչում, նայելով թե այդ բաղաձայնը տարբեր արտաբերության մասնակցող գործարանների վրա ավելի մեծ նշանակություն են տալիս:

33. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՐՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ:— 1. Շրթնային բաղաձայններից՝ պայթականները՝ Պ, Բ առաջանում են երկու շրթունքի երբ կպչելով. դրանք յերկշրթնայինն բաղաձայններ են: Նաձայն Պ բաղաձայնի արտաբերության համար շրթունքները ավելի պինդ են երբ սեղմված լինում և ավելի մեծ ուժով պայթելով բացվում են արտաբերության վայրկյանին, քան ձայնեղ Բ բաղաձայնի: Շփական Ֆ, Վ բաղաձայնների արտաբերության համար վերին կարիչ առամները հենվում են ներքին շրթունքին, բայց այնպես վոր ողի համար անցք է մնում. ողի հոսանքը շփվում և շրթունքներին և առաջացնում անձայն Ֆ բաղաձայնը և ձայնեղ՝ Վ: Դրանք առաջնաշրթնային բաղաձայններ են: Ուրիշ լեզուների մեջ կա նաև երկշրթնային Վ, վոր առաջանում է երկու շրթունքի երբ մոտենալով:

2. Ատամնային բաղաձայններից՝ պայթական Տ, Դ բաղաձայնների արտաբերության ժամանակ շրթունքները թեթև դատված են լինում միմյանցից. լեզուն, վորի ծայրը հենված է լինում վերին կարիչների տակի յեղրին, փակում է ողի անցքն առաջնի մեջով. արտաբերության ժամանակ պայթելով բացվում է

այս փակվածքը, և առաջանում անձայն Տ և ձայնեղ Դ: Շփական Ս, Զ բաղաձայնների արտաբերության ժամանակ լեզվի ծայրը քիչ խոնարհած է լինում և ներքին կարիչներին կպած, վորով ողի համար նեղ անցք է մնում առաջնների միջով, վորոնց հետ ողի շփումից առաջանում է անձայն Ս և ձայնեղ Զ:

3. Ռնգային բաղաձայններից՝ շրթունքների փակվածքի ձայնեղ հնչյուն է, բայց վոչ պայթական: Այս հնչյունի արտաբերության համար շրթունքները ճիշտ նույն ձևով փակվում են, ինչպես Բ բաղաձայնի համար, բայց չեն բացվում. ողի համար այստեղ անցք է մնում քմափողի միջով, և հնչյունը կարելի է երկարել: Իսկ ռնգային Ն բաղաձայն առաջնային փակվածքի ձայնեղ հնչյուն է, պարզյալ վոչ պայթական. առաջանում է ինչպես Դ բաղաձայնը, միայն փակվածքը չի բացվում, ողն անցնում է քմափողով, և կարելի է հնչյունն երկարել: Սակայն այս Ն հնչյունը գ, կ, ֆ կատակային բաղաձայններից առաջ դառնում է ֆմային. փակվածքը կազմվում է լեզվի յետևի երբոսով և փոշտ ու փափուկ քմքերի մեջտեղի մասով, ինչպես «անպամ», «ընկեր» բառերի մեջ:

4. Լեզվային բաղաձայններ են՝ Լ, Ր, Ռ նայ հնչյունները: Դրանցից Ռ բաղաձայնի արտաբերության ժամանակ բերանը չափավոր բացված է լինում. վերին կարիչ առամների լինդին մոտեցած լեզվի ծայրը, ձայնալարերի հնչելիս, թեթեվ ձգված բարձրանում է դեպի առաջքիմքը և ողի շփումից դողդողում է: Ր բաղաձայնը նույն Ռ հնչյունն է, միայն լեզվածայրի դողդողը շատ թույլ է: Այս յերկուսի արտաբերության ժամանակ ապմուկի արձիճ անպակի մեջ է մնում. բայց և այնպես դրանց հետ միասին ապմուկի առաձգանքը տարբեր է՝ նայելով բարբառներին: Յերբ լեզվի առաջի մասը սեղմվում և առամներին և բացվածքը նեղանում է, իսկ արտաբերության ուժը առատիկ է, այդ ժամանակ լեզվի առաջ ընկած մասը դողում է մի նեղ անցքի մեջ, և Ր բաղաձայնի հետ լսելի կ լինում Ս, Շ, Ժ հնչյունների մի ապմուկ: Մի քանի բարբառների մեջ իշխում է այս ապմուկը, և նույն իսկ Ր բաղաձայնին փոխարինում են Ժ, Շ. ինչպես՝ երեք, մարդիկ, Մարիա, Վարդան արտասանում են՝ ժեք, մաշիկ, Մաշտոց, Վաշտան: Գրական լեզվի մեջ, սակայն, ղրանք (Ր, Ռ) հատակաձայն նայ հնչյուններ են:

1. բաղաձայնի արտաբերության ժամանակ նույնպես բերանը

չափավոր բացված և լինում. ձայնավորների հնչելիս լեզվի ծայրը սեղմվում և վերին կարիչներին, լեզվի յերկու կողմերում և բերանի անկյուններում կպմվում են նեղ անցքեր, վորոնցով անցնում և ոդը. l հնչյունն էլ, ուրեմն, առաջանում և առանց վակվածքի և պայթական չե: Մեր l բաղաձայնը յերկկողմանի յե, վորովհետև ոդի անցքը կպմվում և լեզվի յերկու կողմում. բայց կա նաև միկողմանի l, վորի արտաբերության համար անցք կպմվում և միայն բերանի մի կողմում: Այդ անցքերը կարող են լայն կամ նեղ լինել, և l հնչյունը կարող և լինել ըստ այնմ բաց կամ վակ: Հայերենում, սրինակ, «լա» վանկի մեջ l հնչյունը բաց և, ֆրանսերեն la վանկի մեջ՝ l հնչյունը վակ և. մեր բառերի մեջ էլ կա «լա» վակ l-ով արտասանություն. ռուսերենում ЛЯ ավելի ևս վակ և, բայց այդ՝ l հնչյունը նաև վավկացրած և:

5. Քմային բաղաձայններ են՝ շ, ժ, վորոնք յերկուսն էլ նեղվածքի չվիական հնչյուններ են: Դրանց արտաբերության ժամանակ շրթունքները առանձներից պառվում և առաջ են ընկնում. առանձները իրար մոտեցած են լինում առանց կպչելու միմյանց. լեզվի ծայրը դեպի կոշտ քիմքն և բարձրանում առանց կպչելու նրան. այս յերկուսի մեջ կպմվում և մի նեղվածք, վորի մեջ առաջանում են անձայն շ, ձայնեղ ժ հնչյունները:

6. Կատկային կամ վերջաքմային բաղաձայններից պայթական կ, գ հնչյունների արտաբերության ժամանակ լեզվի ծայրը խոնաշհած՝ թեթևել սեղմվում և ներքին կարիչների արմատներին ընդի մոտ. լեզվի յետևի յերևը կպչում և վավուկ քիմքին (վերջաքիմք, կատիկ), վորից պայթելով բաժանվում և հնչի արտամղումով, և առաջանում են անձայն կ, ձայնեղ գ: Նիսկական խ, ղ բաղաձայնների արտաբերությունը նման և կ, գ բաղաձայնների արտաբերությանը, բայց լեզվի յետևի յերևը չի կպչում վավուկ քիմքին, այլ միայն մոտենում և նրան և նեղվածք կազմում, ուր և ոդի չվումից առաջանում են անձայն խ, ձայնեղ ղ. բաղաձայնները: Այս չորս հնչյունները՝ կ, գ, խ, ղ սովորաբար կոչում են կոկորդային. այսպես կոչվել են վոչ թե կոկորդում, այլ բերանի յետևի մասում, կոկորդին մոտիկ արտասանվելու համար: Դրանք կատկային կամ վերջաքմային հնչյուններ են:

Կատկային կ, գ, ք բաղաձայնները պրպական լեզվի մեջ ի, ե ձայնավորներից առաջ արտաբերվում են իրրև քմային կամ ա-

ռաջաքմային բաղաձայններ, ինչպես՝ կիր, գիր, քիր բառերի մեջ: Դրանց արտաբերության ժամանակ լեզվի առաջի մասը բարձրանում և դեպի կոշտ քիմքը կամ առաջաքիմքը, կպչում և նրան և ապա բացվում պայթելով: Արտաբերության այս վերափոխությունը, վոր կոչվում և palatalizacia (պալատալիզացիա, լատ. palatum «քիմք», «կոշտ քիմք» բառից), առաջ և դալիս ի, ե ձայնավորների արտաբերության սեղմ ազդեցությամբ. կ, գ, ք արտաբերելիս միաժամանակ պառարտավում ենք և ի, ե արտասանելու, ուստի և լեզվի առաջի մասն և բարձրանում դեպի քիմքը: կի, գի, քի կապակցություններում քմայնացած կ, գ, ք բաղաձայններից հետո ի ձայնավորն էլ արտասանվում և, իսկ կե, գե, քե կապակցությունների մեջ քմային կ, գ, ք արտասանելիս, կարծես, ձգտում ենք միաժամանակ ի արտասանելու, բայց չենք արտասանում, այլ ե ձայնավորն ենք արտաբերում: կ, գ, ք բաղաձայնների այս բարդացումը կամ քմայնացումը, ինչպես ասվեց, ըրական լեզվի մեջ յերևվում և միայն կի, գի, քի, կե, գե, քե կապակցությունների մեջ. իսկ կա, գա, քա, կո, գո, քո, կու, գու, քու, կը, գը, քը կապակցությունների մեջ, ինչպես և ուրիշ դեպքերում, կ, գ, ք բաղաձայնները կատկային կամ վերջաքմային են: Բարբառների մեջ, սակայն, այս վերջին կապակցությունների համար ևս կա կ, գ, ք հնչյունների քմայնացած արտաբերություն, և մինչև անգամ ուրիշ բաղաձայնների համար էլ, ինչպես՝ լ, մ, ն, յերևում և յերբեմն քմայնացումը կամ վավկացումը ե ձայնավորից առաջ, յերբեմն և հետո:

7. Հազագային չվիական հնչյուն և հ, վորի արտաբերության ժամանակ բերանի խոռոչն ընդունում և նախորդ կամ հաջորդ ձայնավորների արտաբերության համար հարկավոր դրությունը. ոդի հոսանքն անցնելով բերանի խոռոչով՝ առաջ և բերում շնչի (հազագի) թեթևել ազմուկ, վոր բնախոսորեն հաջորդ կամ նախորդ ձայնավորի անձայն, այսինքն չշնչական ձայնավոր հնչյունն և, բայց ձայնարանորեն թողնում և հազագային հ հնչյունի ստացվորությունը: Դա անձայն հազագ և: Բարբառների մեջ կա նաև սրա համապատասխան ձայնեղ հազագ, վորի արտաբերությանը մասնակից և ձայնը, բայց ազմուկն իշխում և ձայնի վրա և լսելի յե լինում:

34. ԲԱՐԴ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ։—Բարդ բաղաձայնները կազմվում են լեզուի կամ լեզվի հնչյունի ամպիսի բաղադրությունից, որի մեջ լեզուի հնչյունը մեկ արտաբերությամբ են առաջանում և ձայնաբանության իրրև մեկ հնչյուն են ըմբռնվում։ Դրանք լեզուաձայնաբանական են՝ հազագավոր և կրկնակ բաղաձայնները։

1. Հազագավոր անձայն բաղաձայնները՝ փ, թ, ք կազմվում են պայթական պ, տ, կ բաղաձայնների և յեսևիից լեզվով հազագավից—հ հնչյունից իրրև պհ, տհ, կհ, որոնք լեզվաձայնները միանում են ի մի նոր հնչյուն։ Այս նկատմամբ պ, տ, կ բաղաձայնները, որ անհազագավ են, կոչվում են լերկ կամ նուրբ. բ, դ, գ ձայնեղները, որ նույնպես անհազագավ են, կոչվում են միջակ, իսկ փ, թ, ք հազագավորները՝ թավ։ Լերկ բաղաձայնների արտաբերության պայթումից անմիջապես հետո գալիս և ձայնաբերվի առաջանումը կամ հաջորդ ձայնավորի արտաբերությունը, ինչպես՝ պայտ բառի մեջ պա=պ+ա. մինչդեռ թավ հնչյունների արտաբերության ժամանակ պայթումին անմիջապես չի հետևում ձայնավորը, այլ այդ լեզվաձայնի մեջ պայթումից հետո մանում է հ հազագը, ինչպես՝ փայտ բառի մեջ փա=պհա։, փայտ իրրև պհայտ, միայն պհ մեկ արտաբերությամբ արտասանած։ Մեր փ, թ, ք հազագավորները անձայն են. բայց բառերի մեջ կան նաև ձայնեղ հազագավոր բաղաձայններ, որոնց մեջ բհ, դհ, գհ կապակցությունները միանում և մի հնչյուն են կազմում։

2. Կրկնակ կամ կես-պայթական (կես-շփական) բաղաձայնները են՝ ծ, ջ, ձ, ճ, ջ, ձ, որոնք բաղադրվում են մի պայթական տ կամ դ կամ թ բաղաձայնից և շփական ս, զ, շ, ժ բաղաձայնների մեկից։ Այս կրկնահնչյուն բաղաձայնները էլ առաջանում են մեկ արտաբերությամբ և այնպես, որ բաղադրված հնչյունի մեջ բաղադրության լեզուի բաղաձայնները միասին իրրև մեկ հնչյուն են ըմբռնվում։ Որինակ՝ ձ բաղաձայնի մեջ կան տս կամ թս բաղաձայնների տարրերը, այդ պատճառով և, որինակ՝ հին արտասուք բառը դարձել և նաև արտսուք, և ապա՝ տ հնչյունի հազագավորումով՝ արցունք. կրտսեր բառը կա և կրցեր ձևով. պատասխան դարձել և նաև պատսխան, ապա նույնպես տ հնչյունի հազագավորումով՝ բառերի մեջ՝ պացխուն. բայց ձ բաղաձայնը ձայնաբանության տարրերվում է տս կամ թս կապակցություններից և կրտսեր բառի մեջ տս նույն չի պացվում, ինչ որ կրցեր

բառի մեջ ձ։ Ինչպես վոր պայթական տ, դ, թ բաղաձայնները լեզուի առաջի են, նույնպես և համապատասխան ձևով լեզուի առաջի են ատամնային կրկնակները՝ անձայն լերկ ծ (տս), ձայնեղ միջակ ջ (դզ), անձայն թավ ճ (թս), նույնպես ատամնա-ֆնային կրկնակները՝ անձայն լերկ ճ (տշ), ձայնեղ միջակ ջ (դժ), անձայն թավ չ (թշ)։ Առաջիններները կազմվում են ատամնային տ, դ և ս, զ հնչյունների բաղադրությունից իրրև տս, դզ. թավի հետ միանում է և հազագը իրրև թս. իսկ յեզրկոպրները կազմվում են ատամնային տ, դ և քմային շ, ժ հնչյուններից, իրրև տշ, դժ. թավի հետ միանում է և հազագն իրրև թշ։

35. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԸ

	Ձայնավոր	Ա ր մ կ ա վ ո ր								
		Պ ա ր զ				Բ ա ր դ				
		Շփական		Պայթական		Պայթ.-հազագավոր	Կրկնակ (կես-պայթ)			
				Միջակ	Լերկ	Թավ	Միջակ		Լերկ	Թավ
Արտաբերության տեղը	Ձայնեղ	Ձայնեղ	Անձայն	Ձայնեղ	Անձայն	Անձայն	Ձայնեղ	Անձայն	Անձայն	Անձայն
Շրթնային	Մ	վ	Ֆ	բ	պ	փ				
Ատամնային	Ն	զ	ս	դ	տ	թ	զ	ծ	ց	
Լեզվային		ր, ր լ								
Քմային		ժ	շ							
Ատամ-քմային							ջ	ճ	ջ	
Կատակային		ղ	խ	գ	կ	ք				
Հազագային			հ							

36. ՎԱՆԿԱՅԻՆ ԶԵՎ ԱՆՎԱՆԿԱՅԻՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՅԵՐԿՅՈՒԲԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ։ Ինչպես բոլոր հնչյունները, նույնպես և խոսքի հնչյունները տարբերվում են իրենց ավելի կամ պակաս ուժով, որ կախված է տատանումների յերկայնությունից։ Խոսքի մեջ հնչյունները սովորաբար ջոկ ջոկ չեն արտասանվում, այլ իրար հետ միացած կամ կապակցված։ Հնչյունների ամենապարզ կապակցությունն է մի վանկը, որի մեջ մի ուժեղ հնչյունին առաջից կամ յետևից միանում են թույլ հնչյունները և մեկտեղ արտասանվում են իրրև մի մասնություն։ Մեր յուրաքանչյուր վանկի մեջ տարբերում է ամենամեծ ուժով արտաբերվող մի հնչյունը, որ վանկի կենտրոնն է և որի ուժեղ արտաբերության շնորհիվ կազմվում է վանկը, այսինքն առաջ և դալիս թույլ հնչյունների միացումը ուժեղանում. որինակ՝ աև, ալ, ապ, ատ, ակ կապակցությունների մեջ հայտնապես առաջինը, Ա. հնչյունն է ականջի դարնում իր ուժով, իսկ նա, լա, պա, տա, կա վանկերի մեջ՝ յերկրորդը, Ա. հնչյունը. յերկու դեպքում էլ վանկ կազմելու ուժն ունի Ա. հնչյունը։ Ըստ այդմ խոսքի հնչյունները նայելով իրենց կատարած դերին (ֆունկցիային) վանկի մեջ՝ լինում են՝ 1) վանկային կամ վանկ կազմող հնչյուններ. որոնք վանկի մեջ արտաբերվում են ամենամեծ ուժով և որոնց միանում են նախորդ կամ հաջորդ թույլ հնչյունները, և 2) անվանկային կամ վանկ չկազմող հնչյուններ, որոնք թույլ արտաբերվելով միանում են նախորդ կամ հաջորդ ուժեղ հնչյունին։

Հայոց լեզվի մեջ վանկային են միայն ձայնավորները, որոնք մենակ էլ կազմում են առանձին վանկ, ինչպես՝ ա, ո, է, ի, ու. իսկ բոլոր բաղաձայնները միշտ անվանկային են։ Հայերենում, լուսաձայն խոսելիս, չկան վանկեր, որ կազմված լինեն միայն մեկ կամ մի քանի բաղաձայնից առանց ձայնավորի. նույն իսկ այսպիսի ձայնարկությունները՝ կռռ, կլլ, հմ, f22, փստ՝ լուսաձայն խոսելիս ունեն իրենց մեջ Ը ձայնավորը՝ կըռռ, կըլլ, հըմ, f՛22, փըստ։ Կան լեզուներ, սակայն, ինչպես հին հնդկերենը, հին սլավերենը, չեխերենը, գերմաներենը, որոնց մեջ բաղաձայնները, ավելի ձայնորդները, կատարում են նաև վանկային հնչյունի դեր, այսինքն կարող են լինել վանկի մեջ ամենից ուժեղ հնչյունը։ Հնդեվրոպական նախալեզվի մեջ էլ եղել են վանկային ռ, լ, ն, մ, հնչյուններ։

Հայերենում ամեն մի ձայնավոր սովորաբար մեկ վանկ է կազմում, բայց մոտ միշտ. որոշ հետևով ինչպես մոր բազաձայններն էլ կարող են վանկային հնչյունի դեր կատարել վանկի մեջ, նույնպես և ձայնավորները կարող են անվանկային հնչյունի դեր կատարել վանկի մեջ։ Այսպիսի դեպքերում յերկու կից ձայնավորներից մեկն արտասանվում է ուժեղ և կազմում է վանկը, իսկ մյուսը թույլ արտաբերվելով՝ առանձին վանկ չի կազմում, այլ ինչպես մի բազաձայն միանում է նախորդ կամ հաջորդ վանկային ուժեղ ձայնավորին և միասին կազմում են մեկ վանկ։ Առանձին վանկ չկազմող այսպիսի ձայնավորները կոչվում են բազաձայնական ձայնավոր կամ կիսաձայն. ավելի ճիշտ կլիներ կոչել թույլ ձայնավոր։ Յերկու ձայնավորների այսպիսի կապակցությունն է մի վանկ, որի մեջ ձայնավորներից մեկը վանկային է, իսկ մյուսն անվանկային է և թույլ արտասանվելով միանում է վանկային ձայնավորին, կոչվում է յերկբարբառ այս բառի ընդհանուր մտքով, ինչպես՝ այ, ոյ, ույ։

Կիսաձայն կամ բազաձայնական (բազաձայնի ֆունկցիա կատարող) ձայնավորները նշանակում են սովորաբար՝ ձայնավորի տակին մի կիսաբոլորակով, ինչպես՝ i, u։

37. ՀԱՅԵՐԵՆԻ ՅԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԸ. ԿԻՍԱԶԱՅՆ Յ (յ) և ԲԱԶԱԶԱՅՆ j (յոտ) ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ։—Հայոց լեզվի մեջ, աշխարհաբարում, անվանկային կամ բազաձայնական ձայնավորի դեր կատարում է միայն Ի ձայնավորը, որ այս դեպքում նշանակվում է Յ տառով։ Նույնը լինել է նաև հին հայերենում, որի մեջ նույնիսկ Ի նախդիրը ձայնավորից առաջ դարձել է անվանական Ի, որինակ՝ Ի տուն, բայց Յաչխարհ։ Մեր նոր լեզվի մեջ այս բազաձայնական Ի ձայնավորը կամ Յ–ն միանում է թե նախորդ վանկային ձայնավորի հետ, որով կազմվում են ընկնող յերկբարբառներ՝ ԱՅ, ՈՅ, ՈՒՅ, ԵՅ, և թե հաջորդ վանկային ձայնավորի հետ, որով կազմվում են բարձրացող յերկբարբառներ՝ ՅԱ, ՅՈ, ՅՈՒ, ՅԵ, ՅԻ։

Մեր վանկային Ի ձայնավորը և անվանկային կամ բազաձայնական (կիսաձայն) Յ ձայնավորը իհարկե միևնույն հնչյունն են. յերկուսի արտաբերության տեղը միևնույնն է և յերկուսն էլ միևնույն վրան են ունեն և իրարուց տարբերվում են միայն իրենց

ուժով. Յ հնչյունը թուլ Ի ձայնավոր է: Չպիտի չփոթել մեր այս Յ հնչյունը, որ վորակով ձայնավոր է, լեզուների մեջ շատ տարածված jnun կոչված (j տառը) հնչյունի հետ, որ միջատային կամ առաջատային չփական ձայնեղ բաղաձայն է, ինչպես գերմաներեն ja, jener բառերի մեջ, կամ ռուսերեն Я, СВОЯ, СВОЮ, ЕДЮ, ШЬЮ բառերի մեջ (Я, ё, ю հնչեցված=ja, jo, ju): «Ի» ձայնավորի և այս j (յոտ) հնչյունի արտաբերության անվան ևս միևնույնն է և այս երկուսը միմյանցից տարբերվում են միայն արտաբերության տեղի նեղվածքի մեծությամբ, այն է՝ յոտի (j) արտաբերության ժամանակ լեզվի և առաջատիճքի միջոցը (միջի տարածությունը) ավելի նեղ է, ուստի ոդի շիուռն ավելի մեծ է և ազմուկն է իչխում ձայնի վրա. մինչդեռ Ի ձայնավորի արտաբերության ժամանակ այդ նեղվածքը մի քիչ լայնանում է, ուստի ոդի շիուռը պակասում է, ազմուկը թուլանում է, և ձայնն է իչխում ազմուկի վրա: Բաղաձայնական Ի ձայնավորը, որ է՝ Յ տառի հնչյունը, ունի Ի ձայնավորի այս հատկությունը. նրա արտաբերության ժամանակ էլ ազմուկն անպայման է, թեպետ և նրա արտաբերության տեղը մի փոքր ավելի նեղ է, քան վանկային Ի ձայնավորի, և մեր Յ հնչյունն իսկապես վանկ Ի ձայնավոր է: Բայց հենց որ մեր այս Յ հնչյունի արտաբերության տեղը, լեզվի և առաջատիճքի միջոցը (արանքը) մի փոքր ավելի էլ նեղանում է, մեր Յ հնչյունն էլ հեշտությամբ դառնում է j (յոտ), և մեր մի քանի, ավելի արևմտյան բարբառների մեջ, յերբեմն նաև պրահան լեզվի մեջ, այդպես էլ երբեմն բաղաձայն արտասանում են մեր կիսաձայն Յ հնչյունը: Այդ պատճառով և մենք տառ լեզուների բաղաձայն j հնչյունը առանց դժվարության տառադարձում ենք մեր կիսաձայն Յ գրով, ինչպես ռուսերենի СВОЯ, СВОЮ=սվայա՛, սվայո՛ւ, և մեր Յ հնչյունն էլ տառադարձում ենք կամ j ձայնավորով, կամ, ինչպես գերմաներենում, j բաղաձայնով, ինչպես որինակ՝ մեր ազգանունների վերջավորությունները գրում են թե ian և թե jan—Terterian, Terterjan:

Պետք է նկատել, որ կան քերականները, որոնք վանկ չկազմող ձայնավորները, ինչպես և մեր Յ հնչյունը յերկբարբառների մեջ, դնում են երբեմն բաղաձայն: Այս դեպքում հնչյունների բաժանման համար երբեմն ձայնավոր ու բաղաձայն՝ նկատի չեն առնվում վոչ թե նրանց արտաբերության ու յերանգը (վորակը), այլ նրանց

պաշտոնը (ֆունկցիան) վանկի մեջ: Ըստ այսմ, ուրեմն, ձայնավոր կոչվում են այն հնչյունները, որոնք վանկային են, այսինքն վանկ են կազմում, ինչպես են մեր վեց ձայնավորները. իսկ բաղաձայն կոչվում են այն հնչյունները, որոնք անվանկային են, այսինքն չեն կարող վանկ կազմել, այլ վանկի մեջ միանում են նախորդ կամ հաջորդ ձայնավորի հետ: Այս բաժանումով մեր Յ հնչյունը, թեպետ վորակով ձայնավոր է, բայց միանում է բաղաձայնների մեջ: Մեր քերականներն էլ ընդհանրապես մեր այդ տառը, դրա ֆունկցիան նկատի ունենալով, դնում են բաղաձայնների մեջ:

Այստ, պետք է նկատի ունենալ և այն, որ կան բառատեր, որոնք Աա, Ոո, ՈՒու, Եե կապակցությունները համարում են յերկբարբառ, այսինքն յերկու ձայնավորի միացում երբեմն վանկ, որ արտաբերվում է արտաշնչության միևնույն արտամղումով, իսկ շուռ աված ՅԱ, ՅՈ, ՅՈՒ, Յե, ՅԻ կապակցությունները համարում են բաղաձայնի և ձայնավորի միացում, կամ կոչում են դրանք կեղծ (անիսկական) յերկբարբառներ:

Այս տարբեր ըմբռնումներն առաջանում են արտասանության նուրբ տարբերություններից. վորովհետև, ինչպես ասացինք, հնչուռությամբ փոխանցում է լինում անվանկային Ի ձայնավորից, մեր Յ տառի հնչյունից դեպի չփական j բաղաձայնը, որոնք յերկուսն էլ վանկի մեջ նույն բաղաձայնական ֆունկցիան ունեն. ուստի և կարող են չփոթվել միմյանց հետ և հաճախ չփոթվում էլ են, և շատ մարդ դժվարանում է տարբերել անվանկային Յ (Ի) ձայնավորը չփական j-ից: Այդ և պատճառը, որ լեզուների այբբենարանների մեջ չկան յերբեմն այդ յերկուսի համար առանձին տառեր, և մենք էլ միևնույն Յ տառով արտահայտում ենք թե՛ բաղաձայնական Յ (Ի) ձայնավորը և թե՛ չփական j բաղաձայնը:

38. ԲԱՌԵՐԻ ԱՐՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՅԵՎ ՀԵԳՈՒՄ ՈՒ ՎԱՆԿԵՐ:

Մեկ բառի մեջ կարող են լինել և՛ մեկ և՛ մի քանի վանկային հնչյուններ. ուստի և բառը կարող է կազմված լինել կամ մեկ վանկից, կամ յերկու և ավելի վանկերից: Միավանկ բառերն արտաբերվում են ընդ մի արտամղումով, մի անգամից երբեմն մի մասից. իսկ բազմավանկ բառերն արտաբերվում են ընդ յերկու և ավելի արտամղումներով և արտաբերության ժամանակ բաժանվում են մասերի, որոնք և բառի վանկերն են:

Բազմավանկ բառերի այս բաժանումը վանկերի կամ հեղումն առաջ է գալիս արտաշնչության կամ ընդհատումով, կամ թուլացումով: Ընդհատումը կարելի է յերկար և կարճ անել. իսկ թուլացումը վերածել ընդհատումի: Ընդհատումն առաջ է գալիս այն ժամանակ, յերբ ոդի արտամղումի միջոցին բերանի մէջ կազմվում է մի վակվածք պայթական և ռնգային բաղաձայնների արտասերելու համար. իսկ թուլացումն այն ժամանակ, յերբ կազմվում է մի նեղվածք չփական և նայ բաղաձայնների համար: Այսպես օրինակ՝ կապել բառի մէջ արտասերության ժամանակ Ա. ձայնավորից հետո շրմունքները կպչում են իրար, արտաշնչվող ոդի անցքը վակվում է, հետևաբար և արտաշնչությունն ընդհատվում է, մինչև վոր առաջ գալիս պ հնչյունի արտասերության համար հարկավոր պայմանները, վոր անցնում է հաջորդ վանկին, ուստի և այդ բառը բաժանվում է կա-պել վանկերի: Իսկ դավել բառի արտասերության ժամանակ Ա. ձայնավորից հետո առաջ է գալիս չփական վ բաղաձայնի համար հարկավոր նեղվածքը նեղքին շրմունքի և վերին կտրիչ ատամների միջև: Այդ ժամանակ ոդի արտամղումը չի դադարում, այլ թուլանում է, քանի վոր անցում է լինում Ա. հնչյունի արտասերության համար հարկավոր խոսքի դրծարանների դրության վրա վ-ի համար հարկավոր դրությունը: Բայց հենց վոր նեղվածքը կազմվում է, անմիջապես դադարում է ոդի արտամղումը, վորով առաջ է գալիս չփում է վ հնչյունը, վոր անցնում է հաջորդ վանկին. ուստի և այս բառը բաժանվում է դա-վել վանկերի: Մենք կարող ենք այս յերկու վանկի մէջ եղած թուլացումը վերածել ընդհատման, այսինքն Ա. ձայնավորն արտասերելուց հետո մի վոքր դադար անել և ապա նոր կազմել շրմունքների մէջ վ-ի համար հարկավոր նեղվածքն ու արտասանել վ հնչյունը. բայց սովորական խոսվածքի ժամանակ այսպես չենք հեղում:

Վերևի բացատրությունից յերևում է, վոր հեղումի ժամանակ յերկու ձայնավորի մէջ յեղած մի բաղաձայնը, լինի ձայնորդ, պայթական թե չփական, անցնում է յերկրորդ ձայնավորին, ինչպես՝ ժա-մա-նակ, գա-ա-ռու: Այս մեխանուն արտահան կնճռակվում է և ց հնչյունը, վորի արտասերության համար հա,-արատասանվելիս լինի իրերով անմանկական ի, թե բաղաձայն j-- նեղվածք և առաջ գալիս, և ոդի արտամղումը թուլանում է. ուս-

ոի և հետևյալ բառերն արտասանվում և վանկերի բաժանվում են այսպես՝ նա-յել, ծա-ա-յա-կան, գո-յակ, չո-յել, կա-յուն:

Յերբ յերկու ձայնավորի մէջ իրար հանդիպում են նույն կաթի յերկու ուժական հնչյուններ, վոր են նույն կարգի ձայնորդ և չփական հնչյունները, ինչպես՝ թռչալ, տարրական, տապանիներ բառերի մէջ ՇՇ, ՐՐ, ՆՆ, այդպիսի կրկնություններն առանց ընդհատումի ավելի յերկար են արտասանվում, միայն այդ հնչյունների արտասերության մէջ անցում ոդի արտամղումի ուժը թուլանում է, և այս թուլացումը կազմում է յերկու վանկի սահմանը՝ թռչ-չալ, տար-րական, տապան-ներ: Մենք կարող ենք այդ վանկերը նաև ընդհատումով արտասերել, բայց սովորական խոսվածքի ժամանակ միայն յերկարում ենք այդ կրկնված հնչյունները: Բավական և, վոր մի վոքր կարճ արտասանվի, այդ ժամանակ կրկնություններ վերանում է, և լսվում է՝ թչալ, տարական, տապաններ: Վերջին յերկուսը և նմանները, հարկավ, թերի արտասերություններ են, բայց արդեն հաճախ լսվում է և հնչյունով վերջացած բարմավանկ բառերի հոդնակին այդպիսի կարճ արտասերությամբ: Իսկ յերբ իրար հանդիպում են յերկու նույն կարգի պայթական հնչյուններ, ինչպես աբբա, Փիլիպպոս, խրատտու բառերի մէջ, այդ ժամանակ առաջին հնչյունի համար կազմվում է հարկավոր վակվածքը, բայց պայթում չի առաջ գալիս, քանի վոր յերկրորդի համար ևս նույն վակվածքն է հարկավոր. այլ առաջին հնչյունի վակվածքի պատճառով ընդհատվում է արտաշնչությունը, և ապա նոր յերկրորդ հնչյունի պայթումն և լինում. վորով և այդպիսի բառերը բաժանվում են Փիլիպ-պոս, աբ-բա: Հայերենում, սակայն, նույն կարգի պայթական բաղաձայների այսպիսի կրկնություններ շատ քիչ կան. բառերի վերջում նույն իսկ անհնարին է այդպիսի կապակցություններ. Եմիդտ մենք կարող ենք արտասանել միայն Եմիդր, ինչպես դրաբարի կարգք, հաղաքք և նմաններն արտասանում ենք այժմ՝ կարգք, հաղաքք: Իսկ ուժական հնչյունները բառերի վերջում թեպետ կարող ենք յերկարել, ինչպես՝ Մաննն, պրոդրամմ, կոլոսս, բայց այդ արտասանությունը հատուկ չէ հայերենին. մենք այդպիսի բառերը կարտասանենք՝ Մանն, պրոդրամմ, կոլոսս, ուստի և այդպիսի ոտարազգի բառերի վերջում մենք միայն մեկ բաղաձայն ենք գրում՝ Եմիդ, պրոդրամ, կոլոս: Նույնիսկ մէջքին վանկերի մէջ մենք սովորաբար արտասանում ենք և գրում մի բաղաձայնով՝

պրոֆեսոր, Թևոսյան, Ապրոն և այլն. բայց մասսա, Աննա:

Յերբ իրար հանդիպում են յերկու տարբեր կարգի տեմական բաղաձայններ, դարձյալ սովորական խոսվածքի ժամանակ դրանց արտասանության մեջ ընդհատում չի լինում, այլ միայն թուլացում, և բաժանում ենք՝ թըչ–վառ, տար–վել, աս–վել, բարև–կամ–նել: Բայց յերբ իրար հանդիպում են յերկու տարբեր կարգի պայթական հնչյուններ, ինչպես՝ պատվեր, ապտակ բառերի մեջ ՏԿ, ՊՏ, այն ժամանակ ոչ մի արտասանությամբ արտասանում ենք իրարից մի վանկ միևչև առաջին պայթականի վակվածքը՝ պատ, ապ. հետո՝ առանց պայթումի՝ արտաշնչության մեջ ընդհատում և լինում հաջորդ պայթականի համար հարկավոր վակվածքի պատճառով, և այս ընդհատումը կազմում է յերկու վանկի առմանը: Այդպիսի բառերը, ուրեմն, մենք արտասանում ենք հետևյալ իրարից՝ պատ–կեր, ապ–տակ: Նույն ձևով հետում ենք նաև, յերբ յերկու բաղաձայնից առաջինը տեմական է, իսկ յերկրորդը վակվածքի. ինչպես՝ գրնդակ, ամ–պի, ար–գար, առ–նել, կապ–մել, յեղ–բայր:

Այսպես ուրեմն, բառերի բաժանումը վանկերի՝ պատահաբար չի առաջ գալիս, այլ մի բնախոսական յերևույթ է և հիմնված է արտաշնչության ընդհատումի կամ թուլացումի վրա, իսկ վերջինս կախված է իրարից արտնվող հնչյունների տեսակից: Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ նաև հետևյալը:

Ամեն լեզու ունի վանկերի և բառերի մեջ ձայնավորների և բաղաձայնների հաջորդության ու բաշխման իրեն հատուկ կարգ կրություններ, որից առաջանում է մի լեզվի դաշնակավորություններ: Այդ, մեր լեզվի ընդհանուր հատկություններն է, որ բառերի բակերում ձայնավորից առաջ՝ միայն մեկ բաղաձայն կարող է գրվել: Ուստի յերկվանկ են՝ սիկիր, պղնաս, շտապ, հրաչք, բրուտ, քնար, ամած և այլն. դրանց հոդնակին լինում է բազմավանկերի ընդհանուր օրենքով ևեր մասնիկով՝ սիկիրներ, պղնասներ, շտապներ, հրաչքներ, բրուտներ և այլն, և վոչ թե մեկավանկերի պես՝ պղնասեր, հրաչքեր, բրուտեր: Գրություններ, հարկավ, չպետք չխոթել արտասանության հետ. այդ բառերի ակզբում և մեջը արտասանում ենք Ը ձայնավորը, բայց սովորաբար չենք գրում. արտասանում ենք՝ սիկիր, ըղդաս, շրտապ, հրրաչք, քրնար, տրված, բայց գրում ենք՝ սիկիր, պղտաս, բրուտ: Բացի այդ՝ պետք է նկատի

ունենալ նաև այն, որ բառակզբի ԸՍ, ԸԶ, ԸՇ վանկերի Ը ձայնավորը սովորաբար դուրս է ընկնում նախորդ ձայնավորի ազդեցության տակ. արտասանում ենք՝ «այն մարդն–բարեսում է», բայց «նա–ազատում է»:

Ինչպես որ բառերի սկզբում, նույնպես և բառերի մեջ վանկերի սկզբում, մեր լեզվի հատկությամբ, ձայնավորից առաջ գրված և միայն մեկ բաղաձայն ընկնել, և այդ մեկ բաղաձայնի արտասանության վակվածքից կամ նեղվածքից առաջացած ընդհատումը կամ թուլացումը արտաշնչության մեջ՝ կազմում է յերկու վանկի առմանը: Այս պատճառով և մենք բառերը հեղելիս՝ յերկու ձայնավորի մեջ յեղած յերկու բաղաձայններից մեկը միացնում ենք նախորդ ձայնավորին, մյուսը՝ հաջորդ. յերեք բաղաձայններից յերկուսը միացնում ենք նախորդ ձայնավորին, յերրորդը՝ հաջորդին. նույնիսկ չորս բաղաձայններից վերջինն ենք միայն միացնում հաջորդ ձայնավորին: Այս վերջին տեսակի բառերը ռուսերեն են, այն էլ հոդնակի ևեր մասնիկով, ինչպես՝ առանցք–ներ, քրանցք–ներ: Համեմատաբար ավելի, բայց դարձյալ սակավաթիվ են յերեք բաղաձայններով բառերը, ինչպես՝ վարձ–ման, թարգման, պարթ–նել, պաբա–քով, յերկ–բարդ, յերկ–նային, դարձ–նել, բնկ–նել, ամպ–րոպ, վաշա–կան և այլն: Իսկ յերկու բաղաձայնով բառեր շատ կան. ինչպես՝ պար–տիզ–պան, կար–միր, տարե–տատ: Հենց որ այսպիսի բառերի արտասան ժամանակ բաղաձայններից յերկուսը միացնենք հաջորդ ձայնավորին և արտաշնչության թուլացումը կամ ընդհատումն անենք յերկու բաղաձայնից առաջ, ինչպես՝ կա–պտել, պա–տվեր, բն–կնել, վար–ձական, տատանց–քներ և այլն, այն ժամանակ բառի վանկերի թիվը մեկով կավելանա, վորովհետև հնչյունների «պտել», «տվեր», «կնել», «ձկան», «քներ», կապակցություններն արտաշնչության թուլացումից կամ ընդհատումից հետո, մեր լեզվի վերևում հիշված օրենքով, մենք չենք կարող միավանկ արտասանել, այլ պտել, կնել, ձկան, քներ, վանկերի սկզբի յերկու բաղաձայնի մեջ կը մտնի Ը ձայնավորը, ինչպես՝ պտեղ, պտուղ, գնել, տվել, ձկան, քնել, քնար և նման բառերի մեջ, վորոնք յերկվանկ են: Ցավ խնայելու, հայելով անհատական և բարբառային արտասանություններին, այսպիսի բառերը յերբեմն արտասանում են և՛ մի վանկ ավելի

և՝ մի վանկ պակաս. օրինակ՝ Ա. Խաչակյանը դրբում է յերկվանկ՝ «մարդը վըրբից ու բարկ», իսկ Հ. Հովհաննիսյանը յեռավանկ՝ «մոր սրյան պաչառում փըրբըրեն վարդեր»: Նույնպես սովորաբար բաժանում ենք յերկու վանկի՝ սրբա-կել, բրտ-նել, արծ-վի, բայց Խաչակյանը արտասանում է նաև յեռավանկ՝ «պոշտ ցողը սըրբակում». (կան նաև «սրբակիլ» արտասանողներ). «քար ու քարափ բրտրներ են», «Արծրվի թևերն պարնեմ ու երթամ»: Նույնպես Հովհաննիսյանը, Խաչակյանը, Թումանյանը և ուրիշները և՛ յերկվանկ և՛ յեռավանկ են արտասանում այսպիսի բառերը՝ հրըճ-վանք, հրըճ-վանք, աստ-ված, աս-ըլ-ված, ջարդ—ված, ջար—դը—ված, հաղթ-ված, հաղ-թը-ված, ծածկ-վել, ծած—կը—վել, ասանք—վել, ան-ը-վել, եայլն: Օրինակ՝ «Ջարդված սըրտերի, դառն հառաչանաց...», «Հաղթված վոսկեգոտ, յերկաթի բազկից» «Թավշյա կանաչով ծածկված են դաշտեր», «Տանջված հոգուս մեջ կենդանի մընաց», «և ուժասպառ ճանապարհից ջարդըված»... «Ե՞ր ես դու էլ մեզ բոլորիս մաշող քընից հապրըլում» (Հովհ.). «Ծածկըվում էր նա աչքիս անդուման» (Թումանյան). «Տանջըվիր, հուսա» (Խաչակյան): Այսպիսի ավելի վանկերով արտաբերությունը տեղի է ունենում ավելի այն ժամանակ, յերբ յերկու ձայնավորի մեջ մանում են յերեք բաղաձայններ, վորոնցից յերրորդը ձայնորդ կամ չհնչական է, իսկ յերկրորդը պայթական: Բայց պատահում է, վոր մի վանկ ավելի շեն արտասանում և այն դեպքում, յերբ յերկու ձայնավորի մեջ մանում են յերկու բաղաձայններ, վորոնցից յերկրորդը տեվական է, օրինակ՝ պատժել, հեռացնել արտասանում են նաև պատրժել, հեռացրնել:

Ինչպես վերևում ասանք, յ հնչյունը, յերբ յերկու ձայնավորի մեջ է,—լինի բաղաձայնական (թուլ) Ի ձայնավոր, թե բաղաձայն j,—բառերի արտասանության ընդհանուր օրենքով իրրև մի նեղվածքի հնչյուն մխանում է և հաջորդ ձայնավորին: Ցերբ այս յ հնչյունից առաջ բնկնում են յերկու բաղաձայն, այն ժամանակ այս հնչյունը պահում է իր հատակաձայն ձայնավորի հատկությունը. ուստի և յերկու բաղաձայնից մեկը միշտ մխանում է և հաջորդ յ-ին, ինչպես մի ձայնավորի, օրինակ՝ ար-դյոք, ան-կյուն, աղ-բյուր, հըն-չյուն, թըն-ցյուն, վոր-ջյակ, տաս-նյակ, ծովախ—նյա, դար-ձյալ, յերկամ-յա: Այս հեղուկը հենց ցույց է տալիս, վոր մեր յ հնչյունն այս դեպքում անվանկային Ի ձայնավոր և և վոչ բաղաձայն j. Նույնպես միշտ հեղուկ և արտասանվում ենք, յերբ յ հնչյունից առաջ բնկնում է մի փակվածքի պայթական կամ ռնգային բաղաձայն, վոր մխանում է հաջորդ յ-ին, ինչպես մի ձայնավորի, օրինակ՝ ակնա-թյուն, մհծա-թյան, պա-տյան, արեվմը-տյան, սեվա-չյա, սև-նյակ, տասնա-մյա, չառա-չյուն, արտ-վիյուն: Դարձյալ՝ ընդհանրապես հաջորդ յ-ի հետ և մխանում նաև նախորդ մի չհնական կամ նայ Լ բաղաձայնը, օրինակ՝ վերսկ-չյալ, ատ-տյուն, ա-լյուր, արեվե-լյան: Բայց այս դեպքում կան նաև այսպես հեզուկներ՝ հետավ-յալ, ապ-յուս, ստատվ-յուն: Առանձնապես պետք է այս հեզուկը Ր, Ռ բաղաձայնների նկատմամբ՝ ամենոր-յա, կատար-յալ, մեռ-յալ, ար-յուն: Այս հեզուկը, վորով յ հնչյունն ինչպես մի բաղաձայն արտհվում և նախորդ բաղաձայնից, հատուկ է ավելի արեվմտյան բարբառներին. դա ցույց է տալիս, վոր j բաղաձայնը, վոխանակ բաղաձայնական Ի ձայնավորի, մեր լեզվի մեջ յերեվան է դալիս ըստ յերեվույթին բառերի մեջ ավելի նեղվածքի նայ (բ, ռ) հնչյուններից հետո, ապա մտածմբ նաև նեղվածքի չհնական հնչյուններից հետո: Կան, սակայն, նաև ռնգային մեկ հնչյունը հաջորդ յ-ից բաժանողներ, ինչպես՝ անն-յակ, համբարձում-յան: Դրանք բոլորը բարբառային արտաբերություններ են, վոր և յերբեմն մտնում են նաև գրական լեզվի մեջ: Բայց և այնպես վերջինիս մեջ, գոնե գրության ժամանակ, սովորական է նախորդ մեկ բաղաձայնը, նույն իսկ նախորդ ձայնորդ բաղաձայնները, չբաժանել հաջորդ յ-ից և արտհվ՝ ա-լյուր, կատա-րյալ, մե-ռյալ, սև-նյակ, տասնա-մյակ:

39. ԲԱՌԻ ՅԵՎ ԽՈՍՔԻ ՇԵՇՏԵՐ ՅԵՎ ԱՄԱՆԱԿ:— Բազմավանկ բառերի վանկերից մեկն արտաբերվում է արտաշնչության ավելի մեծ ուժով, քան մյուսները: Վանկերից մեկի այսպիսի արտբերման ուժով՝ կոչվում է բառի շեշտ: Ինչպես վոր մի վանկի մեջ վանկային ուժեղ հնչյունին միանում են մյուս անվանկային թույլ հնչյունները և կազմում են հնչյունների կապակցության մի միություն, նույնպես և բազմավանկ բառերի չեշտված վանկին միանում են մյուս վանկերը և կազմում մի նույնպիսի, բայց ավելի մեծ միություն, ինչպես՝ քա՛ղցը, քաղա՛ք, պտա՛ուղը:

Բացի բառի շեշտից կա նաև խոսքի շեշտ, վորով առանձնապես

ուժեղ և արտաբերվում խոսքի մեջ այն բառը, վրայի վրա առանձին ուշադրություն և դարձվում, կամ վորը հոգեբանական առարկայի և: Այս չեշտով էլ խոսքի բառերն են կազմում արտաբերության կատարկված հնչյունների մի ավելի մեծ միություն: Խոսքի չեշտն ընկնում է միշտ բառի չեշտված վանկի վրա, որինակ՝ «Մենք այսո՛ր ենք գնալու»: Վանկի մեջ վանկային հնչյունի ավելի ուժեղ արտաբերություն, բառի չեշտ և խոսքի չեշտ, այս լրիվն էլ արտաչնչության ուժի տարբեր աստիճաններ են միայն, վորոնք մեկը մյուսից տարբերվում են ավելի մեծ ուժով: Վանկի մեջ ձայնավորն ավելի ուժեղ և արտաբերվում, քան բացատրիները. բայց մտավոր բառի չեշտված վանկի ձայնավորն ավելի ուժեղ, քան մյուս վանկերինը, իսկ խոսքի չեշտ կրող վանկի ձայնավորն՝ ամենից ուժեղ:

Խոսքի հնչյուններին, ինչպես և բոլոր հնչյունների համար, նկատի են առնվում նաև լեզուները կամ վորակը և լեզվաշարժությունը, վորոնց մասին բացատրված է վերևում: Բայց կա նաև հնչյունների քանակը կամ ամանակը, վոր և այն ժամանակի տևողությունը, վոր պահանջվում և այս և այն հնչյունի արտաբերության համար: Կան լեզուներ, վորոնք ունին լրիվ և կարճ ձայնավորներ և նույնիսկ առանձին տառեր դրանց համար: Մեր լեզվի մեջ չկան բնությամբ լրիվ ձայնավորներ, այլընդ և լրիվ ե և կարճ ե, լրիվ ո և կարճ ո հայն, այլ մեր ձայնավորները, նայելով վանկերի կազմության, շեշտի և արտասանության լեզվանակին, լրջիմն ավելի լրիվ են արտասանվում, կամ մի քիչ կարճ: Մեր ը ձայնավորը միայն ընդհանրապես համեմատաբար ավելի կարճ է*):

Բառերը խոսքի մեջ արտասանվում են նաև ձայնի տարբեր բարձրությամբ, վոր կախված և հնչող մարմնի տատանումների արագությունից, այսինքն՝ թվից մի վայրկյանի մեջ: Ամեն լեզվի մեջ յուրաքանչյուր հնչյուն ունի իր նորմալ բարձրությունը, վոր անվին նայելով կարող և և փոփոխվել: Ձայնի ուժի (արտաշնչության չեշտի), տանակի (տևողության) և բարձրության վրա

*) Փաստոր.—Բառի և խոսքի չեշտերի, վանկերի տանակի և խոսվածքի տակերի մասին մանրամասն բացատրված և սրա հեղինակի «Հայերենի տարաչափություն» աշխատանքի մեջ (ձեռագիր):

յն հիմնված խոսքի լեզվանակավորումը, վոր տարբեր ձևով և լեզվական դալիս յուրաքանչյուր լեզվի մեջ, վոր և հայոց լեզվի համար դեռ ուսումնասիրված չե:

Բ.

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

40. ՀՆՉԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ:—Հնչյունների, վանկերի ու չեշտերի ամանդական արտաբերության, ինչպես և ամեն լեզվական երևակությունները, ժամանակի ընթացքում ընդհանրապես փոխվում են: Այս փոփոխության ուսումնասիրությունը վերաբերում և պլեսավորապես պատմական քերականության. ուստի այստեղ դրվում են հնչափոխության մի քանի եական կողմեր միայն, վոր հարկավոր և իմանալ մեր գրական լեզվի կազմության, արտասանության և ուղղագրության լավ ըմբռնելու համար:

Հնչափոխությունն առաջ և գալիս զանազան լեզվանակներով, վորոնցից կարևոր են՝

1. Բառի մեջ հնչյունների տեղի փոփոխությունը կամ հնչյունների յետևվառաջություն, 2. Հնչյունների արտաբերության տեղի տասիճանական փոփոխությունը, կամ հնչյունների չրշամը, վորով ժամանակի ընթացքում մի հնչյունի հետևեւան փոխանակում և մի ուրիչ հնչյուն:

41. ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՏԵՎԱՌԱՋՈՒԹՅՈՒՆԸ.— Այս փոփոխությունը կատարվում է, բուն լեզվությին, առանց հատատատուն որենքի, մի տեսակ պատահարար: Տակավաթիվ փոփոխությունների համար միայն վորոշ պայմաններ կան գրված: Բառի մեջ իրարու կից կամ միմյանցից հետու գտնված հնչյունները մի տեսակ հանկարծական վատությամբ մեկմեկու հետ փոխում են իրենց տեղը, կամ մի հնչյուն հաջորդ վանկից տեղափոխվում և նախորդ վանկի մեջ: Այս փոփոխությանը ամենից շատ յենթարկվում են ձայնորդ հնչյունները: Որինակ՝ դասարկ–դարդակ- ասանջ–անկաջ, կամուրջ–կարմունջ. հին խստոր, կապերտ, դարձել են՝ սխտոր, կարպետ. հին տարգալ, դարձել է՝ տրգալ, տգալ, դգալ և ապա գդալ, վոր այժմ արտասանում ենք ֆրալ. հին գնել դարձել է նկել. հին ձգել դարձել է գձել, գցել, վոր այժմ արտասանում ենք ֆցել:

Այս փոփոխությունը, որ շատ համաձայնած է բարբառների մեջ, առանձին արժեք չունի նոր գրական լեզվի համար։ Գրաբարեն այդպիսի յատկաոաչությունները, սակայն բացառություններ, երբեմն սխալ ձևերը մերժված են գրական լեզվից, որի մեջ պահպանված են հին ձևերը՝ գառաբուկ, կամուրջ, ականջ, կնճիռ, լվացք և այլն, և ինչ գարուկ, կարմունջ, անկաղ, կռինճ, վերացք։ Այսպես և բարբառների մեջ շատ ուրիշ յատկություններ կան, ինչպես՝ կճեպ–կպճ, անձրև–անձվիր, սոսրել–սրսվել, մեղր–մերգ, Մարիամ–Մարյամ–Մայրամ և այլն։

Պատճառական բայերի հրամայականը՝ մեծացո՛ւր, մոռեցո՛ւր, թոցո՛ւր և նմանները գարձել են՝ մեծացրո՛ւ, մոռեցրո՛ւ, թոցրո՛ւ, որ և ընդունված է արևելյան աշխարհաբարում։

42. ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋՈՒՄ։—Մեր նոր գրական լեզվի կազմության առաջին կարևոր տեղ է բռնում հնչյունների տեղափոխությունը։ Գրաբար լեզվի մեջ տարբեր են գալիս հնչյունների նուրբ տարբերություններ, տեղաձևական անցումներ մի հնչյունից դեպի մյուսը, որոնք համաձայն այս կամ այն բարբառի մեջ տարբեր են հին հնչյունի հետ։ Որինակ՝ բարբառներ կան, որոնց մեջ հնագույն հարիւր, հին հարիւր, գարձել է խարիր, բայց այս վերջինիս հետ խառն արտասանության են նաև խայիր, իսկ գրական լեզվի մեջ հարյուր։ Այսպես և մի քանի բարբառների մեջ մնում է «որ» բառի հին արտասանությունը, ուրիշների մեջ այդ բառն արտասանվում է «ուր», սկզբի անմանկային ՈՒ ձայնավորով, իսկ գրական լեզվի, ինչպես և շատ բարբառների մեջ, այդ սկզբի անմանկային ՈՒ-ն գարձել է արդեն Վ բաղաձայն, այդ բառն արտասանում ենք «վոր»։

Հնչյունների շրջումը, որ հետևանք է արտասանության տեղի փոփոխության, առաջ է գալիս կամ բոլոր դեպքերում առանց բացառության, կամ միայն որոշ պայմանների մեջ, ինչպես որինակ՝ միայն բառերի սկզբում, կամ վերջում, կամ հնչյուն ապրեցության առաջ և այլն։ Յեթե հնչյունների շրջումի համար պահանջված պայմանները կան, միշտ կանոնավոր և հաստատուն կերպով կատարվում է նույն շրջումը։ Այս պատճառով և ասում են, թե հնչյունների շրջումը լինում է «հնչյունական որենքներով», այսինքն՝ չկան չկան որևէ ուրիշ պատճառ, որ առիթ

նախակե հնչյունների շրջումն առաջ բերող պայմանի ազդեցությունը, ապա բոլոր նույն պայմանի մեջ գեղած դեպքերում նույն լեզվի նույն բարբառի մեջ նույն հնչյունը նույն ժամանակաշրջանում նույն շրջումը պիտի կրի։ Որինակ՝ հին Դ հնչյունը նոր հայերենի մեջ Թ է գարձել Բ–ից հետո բոլոր բառերի մեջ, ինչպես՝ մարդ, լերդ, գարդ, վարդի բառերի մեջ, որ արտասանում ենք՝ մարթ, լերթ, վարթի։ Հին լեզվի Ց հնչյունը բոլոր բազմավանկ բառերի վերջից գարձ է ընկել, ինչպես՝ ծառա (յ), գարմանա (յ) և այլն։ Հին ԵՒ յերկբարբառը գարձել է Ե պարզ ձայնավոր, ինչպես՝ լեարդ-լերդ, լեառն–լեռ, սեավ–սեվ, գնացեալ–գնացել, տեսեալ–տեսել և այլն։

Պատահում է յերբեմն, որ մի քանի բառեր ըստ յերեվույթին բացառություն կազմելով՝ հակառակ են հնչյունների շրջման օրենքին։ Այդպիսի բացառությունները, սակայն, ցույց են տալիս, որ շրջումը կատարվելու ժամանակ՝ յեղել են այնպիսի պայմաններ, որոնցով առհմանափակվել է շրջումի ազդեցությունը։ Որինակ՝ բառերի սկզբում գրական լեզվի մեջ, ինչպես և շատ բարբառների մեջ, միավանկ բառերի սկզբում Ե ձայնավորից առաջ ավելացել է անմանկային Ց հնչյունը, ինչպես՝ յեզ։ յեկ, վոխանակ հին եզն, եկ ձևերի. բայց միավանկ «եմ» բայը բազաձայնով վերջացած բառերից հետո—գնում եմ—անփոփոխ է մնում։ Դրա պատճառն այն է, որ այդ բայն իրրև վերջահար բառ արտասանության մեջ միանում է նախորդ բառի վերջին, որի հետ և մեկ չհատվ մեկ բառական միության և կազմում, ինչպես մեկ բառ՝ գնա՛եմ, գնա՛եմս, գնա՛եմ։ Կրնչանակի՝ «եմ» բայի սկզբի Ե հնչյունն անփոփոխ և մնում բառական միության մեջ իրրև բառամիջի Ե հնչյուն, քանի որ հիշյալ շրջումը գրական լեզվի և շատ բարբառների մեջ չի ազդել բառամիջի Ե հնչյունի վրա։ Բայց յերբ նույն «եմ» բայը գարձյալ իրրև վերջահար բառ միանում է ձայնավորով վերջացած մի բառի հետ—գնալուեմ—և առնում է վերջինիս հետ իրրև մեկ բառական միություն, այդ ժամանակ այդ յերկու բառի մեջ մնում է «Ե» հնչյունը. որովհետև հնչյունների մի ուրիշ շրջումով մեկ բառի յերկու վանկային ձայնավորների մեջ մնում է Ե հնչյունը, ուստի հին գնալուեմ, գնալու–ես, այժմ արտասանում ենք՝ գնալու յեմ, գնալու յես։

Բացառությունները կարող են չընդհանուր չինելի և այն պատճառով, որ կարող են չընդհանուր կատարվելուց վերջանալուց հետո լեզվի մեջ մնած լինել հին լեզվից, ոնաև լեզուներից, կամ նույն լեզվի մի այնպիսի բարբառից, որ չի ունեցել նույն հնչափոխությունը: Որինակ՝ ինչպես անանք, հին լեզվի ԵՍ. յերկբարբառը դարձել և պարզ Ե ձայնավոր որոշ բարբառների մեջ, որոնցից և անցել և նոր գրական լեզվին: Բայց գրական լեզվի մեջ ունենք ԵՍ>ՅՍ. յերկբարբառով բառեր, ինչպես՝ սեղյակ, մատյան, դղյակ, և վոչ սեղնակ, մատեն, դղեկ, այլ և կրկնակ ձևով՝ անցյալ–անցել, մեռյալ–մեռել, հետևյալ–հետևել և այլն. այդ բառերը յա<հա յերկբարբառով–անցյալ, մեռյալ–մեր նոր գրական լեզվի մեջ պարզապես փոխառություն են հին լեզվից և այն էլ այն չընդհանուր, յերբ կենդանի լեզվի մեջ վաղուց կատարված վերջացած և յեղել ԵՍ. յերկբարբառի ե չընդհանուր գործածություն:

Չպետք մոռանալ և այն, որ բոլոր բարբառները միանգամայն չենթադրեն նույն հնչափոխությանը, այլ հաճախ լինում առանձին փոփոխություններն են ունենում, այսպես և գրական լեզուն, ինչպես անանք, հաճախ իր առանձին կենդանությամբ և փոփոխում: Հին լեզվի ԵՍ. յերկբարբառն, որինակ, մինչդեռ բարբառների մի մասի մեջ պահվել և պարզ ե, հին գրական լեզվի մեջ պահվել է յա. «անեանակ», «անցեալ» բառերը, որինակ, 19–րդ դարի գրքերում չեն արտասանվել այնպես, ինչպես արտասանվել և գրվել են հետագա գրքերում, այլ արտասանվել են՝ «անյակ», «անցյալ» և այս արտասանությամբ էլ անցել են նոր գրական լեզվին: Պետք է՝ նոր գրական լեզվի մեջ պետք տարբերել յերեք տեսակ հնչափոխություններ հին լեզվի նկատմամբ. մեկ՝ այնպիսի փոփոխություններ, որ առաջ են յեկել միայն հին գրական լեզվի մեջ. և վերջինից իրարից փոխառություն մտել են նոր գրական լեզվի մեջ. մեկ էլ՝ այնպիսիները, որ առաջ են յեկել նոր գրական լեզվի մայր բարբառի մեջ, որից և անցել են նոր գրական լեզվին, և մեկն էլ՝ այնպիսի փոփոխություններ, որ առաջ են յեկել ուրիշ բարբառների մեջ, որոնցից և անցել են նոր գրական լեզվին: Կան նաև հնչյունների այնպիսի չընդհանուր, որոնք միայն ժամանակ հասուկ են թե հին գրական լեզվին, թե նոր գրական լեզվի մայր բարբառին, և թե ուրիշ բարբառների:

43. ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ ՎՈՐՈՇ ԲԱՌԵՐԻ ՄԵՋ:—Հնչյունների ատաիճանական չընդհանուր հետևանքը յեղել և այն, որ նոր լեզվի հնչյունական կազմը բավական կերպով փոխվել և հին լեզվի հետ համեմատած: Այսպես՝ դուրս են ընկել հնչյուններ և նույնիսկ ամբողջ վանկեր որոշ բառերի և ձևերի մեջ, որինակ՝ բարբառ–բառել, տարժանելի–տարբեր–տարբեր–տարբել, տարժանելի–տարբեր–տարբել–տարբեր–պատ–պատ (պդալ), թմբրել–թմբել. թամբ–թամբ. սկեռուբ–կեռուբ. պատ–պատ. դուռն–դուռ. մուկն–մուկ. վարպապետ–վարպետ աշխարհահռչակություն–աշխարհահռչակություն. աչակերտ–աշկերտ. հրամայեցիք–համեցիք:

Այսպես և պատճառական բայերը՝ զարմացուցանել—զարմացնել. աշխատեցուցանել–աշխատեցնել և այլն: Բայերի խոնարհման ձևերի մեջ՝ չեմ կարդալ, չես կարդալ, չի կարդալ, չենք կարդալ, չեք կարդալ, չեն կարդալ. չեմ դրել, չես դրել, չի դրել, չենք դրել, չեք դրել, չեն դրել ձևերի վերջի «լ» հնչյունը դուրս և ընկել. այժմ արտասանում և հաճախ գրում են՝ չեմ կարդա, չես կարդա, չի կարդա և այլն. չեմ դրի, չես դրի, չի դրի և այլն:

44. ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ ՎՈՐՈՇ ԲԱՌԵՐԻ ՄԵՋ:—Ավելացել են հնչյուններ որոշ բառերի մեջ, ինչպես՝ ապանել–հափշտակել. արբել–հարբել. ալեմոր–հալեմոր. ապա–հապա. անդ–հանդ. անդ–հանդ. որթ–հորթ. ոսկր–վոսկր. մեք–մենք. գարմացար–զարմացանք, ի սրտից–սրտանց և այլն:

Հնչյունների այս ավելացումը հաճախ հնչյունների չընդհանուր չի առաջ գալիս, այլ հետևանք և հոդերանական զուգորդության անալոգիայի, այն է՝ որոշ բառերի և բառաձևերի մեջ ավելանում և մի հնչյուն ուրիշ բառերի և բառաձևերի նմանության համար և նույն իսկ միևնույն բառի մեջ յեղած մի հնչյունի ազդեցության համար, որինակ՝ սեպտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր բառերի անալոգիայով հոկտոբեր գարձել և հոկտեմբեր. իսկ այս վերջինս, ինչպես և սեպտեմբեր բառի անալոգիայով դեկեմբեր գարձել և դեկտեմբեր (§ 46):

Բազմաձայնների ավելացումը, որ հաճախված և բարբառների մեջ, մեծ մասամբ չի ընդունված գրական լեզվի մեջ, որ թավոթաբար պահում և բառի հին ձևը, ինչպես են՝ մենձ (մեծ), քինթ (քիթ), համբարել (համարել), մանոր (մանր), ծանոյց

(ծանր), ճանանչ (ճանաչ), ամանչել (ամաչել), կանանչ (կանաչ):

Բայական ձեվերի համար պետք է նկատի ունենալ հետեվյալները.

1.) *Սահմ. անցյալ անկատարի և անցյալ կատարյալի հոդնակի* 1–ին դեմքերի Ա. ձայնավորը մյուս դեմքերի նմանությամբ դարձել է «ի» և վերջի «Ք» հնչյունից առաջ Սահմ. ներկա ժամանակի հոգն. 1-ին դեմքի նմանությամբ ավելացել է Ն. հին՝ գնայի, գնայիր, գնայիը, գնայաք, գնայիք, գնային. նոր՝ գնայի, գնայիր, գնայիե, գնայիք, գնային. հին՝ գնայի, գնացեր, գնացաք, գնացեք կամ գնայիք, գնային. նոր՝ գնայի, գնացիր, գնացիե, գնայիք, գնային:—Ինչպես կարելի է տեսնել, նոր լեզվի մեջ այս ձեվերը միակերպության են վերածվել անալոգիայով:

2) *Պատճառական բայերի «զարմացուցի» ձեվի անալոգիայով «ժռուցի», «վախուցի» և նման ձեվերի մեջ արեվմտյան բարբառներում ավելացել է «ց» ժռճուցի, վախճուցի:*

3) *Պատճառական բայերի հրամայականի վերջից ավելանում է «ր», որինակ՝ հին մեծացո դարձել է մեծացու, մեծացուր. արեվելյան՝ մեծացլու, հին սիրեա՛, դարձել է՝ սիրե՛, սիրի՛, ապա՝ սիրիր (Տես § 263):*

15. ՁԱՅՆԵՂ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁԱՅՆ ԴԱՐՁԱԼԸ ՑԵՎ ԸՆԴՀԱՆՐԱՊԱՏ ՀԱԿԱՌՈՒԱԾՔ:—1) *Փակվածքի ձայնեղ Բ, Գ, Դ, Զ, Ջ հնչյունները բառերի մեջ և վերջում ձայնավորներից և Ր ու Ռ բաղաձայններից հետո, յերբեմն բառերի մեջ նաև Ն բաղաձայնից հետո, դառնում են ընդհանրապես Փ, Ք, Թ, Ց, Ձ անձայն հնչյուններ, որինակ՝ խաբել, հոգի, ոգ, ած, աչ, զազարել, յերբ, յերդ, գարձ, գաղձ, ազր, անգամ, անդամ—արտասանվում են՝ խաբել, հոքի, ոգ, ոց, աչ, զաթարել, յերբի, յերք, գարց, գախց կամ գախծ, անքամ, անթամ: Ձայնեղ հնչյունների այս չրջումը մի քանի բարբառների, ինչպես և արեվմտյան գրական լեզվի մեջ, ընդհանրացած և բոլոր բառերի համար բոլոր դեպքերում: Արեվելյան բարբառների մեջ էլ կան բառեր, վորոնց սկզբի ձայնեղ պայթականները գարձել են թաւլ, որինակ՝ գտնել, բրդել, գդալ—արտասանվում են՝ քթնել կամ քանել, փրթել, քթալ:*

2) *Փակվածքի անձայն Պ, Կ, Տ, Ծ, Ճ հնչյունները ձայնորդ Ն, Մ, Ր հնչյուններից հետո արտաբերվում են ընդհանրապես ինչպես ձայնեղ Բ, Գ, Դ, Զ, Ջ. որինակ՝ ամպ, բանտ, վանկ, գանկ, ընկեր, ընկնել, յերկար, յերկիր, ընտիր, ճնճուղ, ճանճ—արտասանվում են սովորաբար ինչպես՝ ամբ, բանդ, վանգ, գանգ, ընգեր. ընգնել, յերգար, յերգիր, ընդիր, ճնջուղ, ճանջ: Անձայն հնչյունների այս չրջումն ևս մի քանի բարբառների, ինչպես և արեվմտյան գրական լեզվի մեջ, ընդհանրանալով աոաջ և յեկել բոլոր բառերի համար բոլոր դեպքերում, այնպես վոր այդ բարբառներն ու արեվմտյան գրական լեզուն ունեն միայն յերկու տեսակի պայթական հնչյուններ՝ ձայնեղ Բ, Գ, Դ, Զ, Ջ և անձայն հազագավոր Փ, Ք, Թ, Ց, Ձ: Արեվելյան բարբառների մեջ ևս յերբեմն ուրիշ դեպքերում էլ անձայն պայթական Պ, Կ, Տ, Ծ, Ճ հնչյուններին փոխանակում են համապատասխան ձայնեղ հնչյուններին. որինակ՝ ընկեր յերեվանցիների արտասանությամբ այդ անձայն պայթականները յերկու ձայնավորի մեջ փոխվում են համապատասխան ձայնեղ հնչյունների, ինչպես՝ գատիկ, ածել, ապրել—գաձիկ, աձել, աբրել. նույնպես արտասանում են՝ կնիկ, պատ, բայց՝ կնիգը, պադը: Այսպես և «սկիզբ», «պղպ» և նման նրանք արտաբերվում են անձայն՝ սկիսպ, ասկ: Առհասարակ պետք է նկատել, վոր ձայնեղ և անձայն պայթական հնչյունների այս չրջման գործունեությունը լեզվի մեջ դեռ վերջացած չէ, այդ պատճառով գրական լեզվի մեջ, յերթե վերջնականապես հաստատված կարելի չէ համարել վորոշ թվով բառերի համար փոխված արտասանությունը, ինչպես են՝ մարդ—մարթ, ած—ոց և նմանները, ուրիշ բառերի համար չկա միակերպ արտասանություն, այլ հաճախ, յերբեմն նույն իսկ միևնույն մարդիկը, նույն բառերն արտաբերում են թե ձայնեղ և թե անձայն, ինչպես՝ թե ընկեր, ընկնել, սկիզբ, և թե ընգեր, ընգնել, սկիսպ:

3) *Ձայնեղ Ղ հնչյունը բառերի մեջ պայթական բաղաձայններից առաջ, դառնում է ընդհանրապես անձայն Խ, որինակ՝ ազր, վոզր, յեղբայր, ազջիկ և նմաններն արտասանվում են՝ ախպ, վոխպ, յեխպայր, ախճիկ:*

16. ԿԻՑ ԿԱՄ ՄՈՏԻԿ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՄԱՆՈՒՄ: ՏԱՐՆՄԱՆՈՒՄ:—*Աոաջին Ն հնչյունը չրթնային Բ–ից առաջ գառ-*

նում է չբխնային Մ, ինչպես՝ անբիծ–ամբիծ, անբավ–ամբավ, «ճանապարհ» դարձել է «ճանապա» ապա՝ ճամբա, ճամփա. «ընդբռնել», «ընդբերանել», Դ հնչյունի դուրս ընկնելուց հետո, դարձել են՝ ըմբռնել, ըմբերանել: Իսկ չբխնային Մ հնչյունը կատարյին (վերջաբաղային) Ջ հնչյունից առաջ դառնում է քմային Ն (տես § 33, 3), այսպես օրինակ, բայերի ներկա ժամանակի հոգնակի առաջին դեմքը հին լեզվի մեջ է՝ գնամք, գրեմք. նոր լեզվի մեջ դարձել է՝ գնանք, գրենք:

Ցերկու կից կամ մոտիկ հնչյունների այս չբխումը, մորով մի հնչյուն մի ուրիշի ազդեցության տակ նույնանում է նրա հետ կամ նույն կարգին է վերածվում, կոչվում է հնչյունների առնմանում (ասիմիլյացիա). օրինակ՝ բարբառներիս մեջ՝ վռաններ, մառաններ և նմաններըը դառնում են՝ «վաններ», «մաններ». բանալիք դառնում է «բանլիք», «բալլիք», լընել–ելլել: Նույնպես հին «բոկիկ» դարձել է «բորիկ»: Սրանք ամբողջական առնմանում կամ նույնացում են, մինչդեռ «անբիծ» բառը «ամբիծ» ձևով միայն առնմանում է լինում. այս դեպքում արնպային–աստամնային Ն հնչյունը հաջորդ չբխնային Բ հնչյունի ազդեցության տակ վերածվում է ընդպային–չբխնային Մ հնչյունի, այսինքն՝ Ն հնչյունը վերածվում դառնում է Բ հնչյունի կարգի մի հնչյուն: Առնմանումը նրանից է առաջ գալիս, որ հաջորդ հնչյունի պատկերացումն ավելի վառ է ծնվում մեր մեջ, ուստի և բանի մեջ ավելի վառ է կազմվում նրա արտաբերության համար պահանջված դրությունը. օրինակ՝ «անբիծ» բառի արտասանության ժամանակ դեռ Ն հնչյունի համար հարկավոր դրությունը չկազմված՝ առաջ է գալիս Բ հնչյունի համար պահանջված վիճակը, որ և Մ հնչյունի համար է. ուստի և «անբիծ» բառն արտասանվում է «ամբիծ»: Իսկ «բոկիկ» ձևից «բորիկ» ձևի անցնելը նրանով է բացատրվում, որ Բ հնչյունի պատկերացումն ավելի յրկար և տևում և ազդում է Կ հնչյունի Բ վերածելուն:

Առնմանումով են բացատրվում հնչյունների չբխման շատ դեպքերն էլ այն, որ լեզվի մեջ անձայն բաղաձայններին հաջորդում են ընդհանրապես անձայնները, իսկ ձայնեղներին՝ ձայնեղները, ինչպես՝ ապտ, ապդ, վաչտ, լատտ: Նույնպես առնմանում է տեղի ունենում, երբ անձայն բաղաձայնները ձայնեղ են դառնում ձայնեղներից հետո, ինչպես՝ ամպ, ընկեր, բանտ և նմաններն արտա–

նամում են՝ ամբ, ընգեր, բանդ. այս դեպքում ձայնալարերի տատանումն ավելի յրկար է տևում, քան հարկավոր է: Նույնպես՝ մի անգամ վռաց, վոդր, յեղբայր, աղջիկ և նման բառերի մեջ ձայնեղ Ղ հնչյունը դառնում է անձայն Խ, հաջորդ ձայնեղ հնչյուններն էլ դառնում են անձայն, և այդ բառերն արտասանում ենք՝ ախոպ, վոխոպ, յեխպայր կամ յեխփայր, ապճիկ կամ ապչիկ: Այսպես և «ծագիկ» բառի մեջ Ղ հնչյունը պահում է իր ձայնեղ արտաբերությունը, բայց նույն հնչյունը «ծագիկել» բառի մեջ դառնում է Խ՝ հաջորդ անձայն Կ հնչյունի ազդեցությամբ, և այդ բառն արտասանում ենք «ծախկել»:

Առնմանումին հակառակ յերևույթ է տարնմանումը (դիսիմիլյացիա), մորով փոխվում են իրար վրա–կից և մոտիկ յեղած հնչյունները մի բոլորովին ուրիշ բառի ուրիշ հնչյունի ազդեցության տակ. օրինակ՝ հին «փերբուար» տարնմանությամբ դարձել է «վեռաուար», այժմ՝ վեռաւվար, մինչդեռ հին «յանուար» առնմանությամբ դարձել է «յունուար», այսինքն առաջին վանկի Ա ձայնավորը դարձել է ՈՒ, յերկրորդ վանկի ՈՒ ձայնավորի ազդեցությամբ. ապա այժմ՝ հունվար: Այս բառը վորոշ մարդկանց բերանին «վեռաւվար» բառի տարնմանությամբ արտասանվում է «հունրվար»: Նույնպես «սեպտեմբեր» բառը «հոկտեմբեր» բառի տարնմանությամբ արտասանում են «սեկտեմբեր»:

47. ՆԱՅ Ր ՀՆՉՅՈՒՆԻ Լ ԴԱՌՆԱԼԸ, ՑԵՎ ԸՆԴՀԱԿԱՌԱԿՆ:— Այսպես փոխվում են արդեսկանները, հին՝ մի դարմանար, մի առեր, նոր՝ մի դարմանալ, մի առել: Ուրիշ բարբառների մեջ, ընդհակառակն, հին՝ չեմ դարմանալ, չեմ ուռել, նոր՝ չեմ դարմանար, չեմ ուռեր. հին՝ տեսել եմ, չեմ տեսել, նոր՝ տեսեր եմ, չեմ տեսեր:

Բացի վերևում (§§ 40—47) հիշվածներից, բարբառների մեջ կան ուրիշ փոփոխություններ էլ բազաձայնների նկատմամբ, ինչպես՝ հաց–խաց և ուրիշները: Ձայնավորների կրած փոփոխությունները ներքևում առանձին են բերված:

48. ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ և ՆՈՐ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՅԱՌԳՈՒՄ ԼԵԶՎԻ ՄԵՋ:—Հնչյունների չբխման հետևանքով, յեր–

նում է չբշնային Մ, ինչպես՝ անբիծ–ամբիծ, անթալ–ամբալ, «ճանապարհ» դարձել է «ճանապա» ասա՝ ճամբա, ճամփա. «ընդբռնել», «ընդբերանել», Դ հնչյունի դուրս ընկնելուց հետո, դարձել են՝ ըմբռնել, ըմբերանել: Իսկ չբշնային Մ հնչյունը կատակին (վերջաբաժային) ջ հնչյունից առաջ դառնում է քմային Ն (տես § 33, 3), այսպես որինակ, բայերի ներկա ժամանակի հոգնակի առաջին դեմքը հին լեզվի մեջ է՝ դնամք, դրնմք. նոր լեզվի մեջ դարձել է՝ դնանք, դրնանք:

Ցերկու կից կամ մոտիկ հնչյունների այս չբշումը, որով մի հնչյուն մի ուրիշի ազդեցության տակ նույնանում է նրա հետ կամ նույն կարգին է վոխվում, կոչվում է հնչյունների առնմանում (ասիմիլյացիա). որինակ՝ բարբառներից մեջ՝ վոռանը, մառները և նմանները դառնում են՝ «վոննը», «մաննը». բանալիք դառնում է «բաննլիք», «բալլիք», նշնել–նշլել: Նույնպես հին «բոկիկ» դարձել է «բոբիկ»: Սրանք ամրողջական առնմանում կամ նույնացում են, մինչդեռ «անբիծ» բառը «ամբիծ» ձևով թեթև առնմանում է լինում. այս դեպքում ընդհայնապատմական Ն հնչյունը հաջորդ չբշնային Բ հնչյունի ազդեցության տակ վոխվում է ոնղային–չբշնային Մ հնչյունի, այսինքն՝ Ն հնչյունը վոխվում դառնում է Բ հնչյունի կարգի մի հնչյուն: Առնմանումը նրանից է առաջ գալիս, վոր հաջորդ հնչյունի պատկերացումն ավելի վառ և ծնվում մեր մեջ, ուստի և բերանի մեջ ավելի վառ է կատվում նրա արտաբերության համար պահանջված դրությունը. որինակ՝ «անբիծ» բառի արտասանության ժամանակ դեռ Ն հնչյունի համար հարիսավոր դրությունը չկատվածՙ առաջ է գալիս Բ հնչյունի համար պահանջված վիճակը, վոր և Մ հնչյունի համար է. ուստի և «անբիծ» բառն արտասանվում է «ամբիծ»: Իսկ «բոկիկ» ձևից «բոբիկ» ձևի աստիճանաբար նրանով է բացատրվում, վոր Բ հնչյունի պատկերացումն ավելի յնդկար և տեղում է ազդում է Կ հնչյունի Բ վոխվելուն:

Առնմանումով են բացատրվում հնչյունների չբշման շատ դեպքերը և այն, վոր լեզվի մեջ անձայն բաղաձայններին հաջորդում են ընդհանրապես անձայնները, իսկ ձայնեղներին՝ ձայնեղները, ինչպես՝ ապզ, ապղ, վաչա, լաստ: Նույնպես առնմանում է տեղի ունենում, յերբ անձայն բաղաձայնները ձայնեղ են դառնում ձայնեղներից հետո, ինչպես՝ ամպ, ընկեր, տանտ և նմաններն արտա-

նանվում են՝ ամբ, ընգեր, բանդ. այս դեպքում ձայնավորների տատանումն ավելի յնդկար է տեղում, քան հարիսավոր է: Նույնպես՝ մի անգամ վոր ապր, վոդր, յեղբայր, աղջիկ և նման բառերի մեջ ձայնիվ Ղ հնչյունը դառնում է անձայն Ք, հաջորդ ձայնեղ հնչյունները ևս դառնում են անձայն, և այդ բառերն արտասանում ենք՝ ախպ, վոխպ, յեխպայր կամ յեխբայր՝, ապճիկ կամ ապչիկ: Այսպես և «ծաղիկ» բառի մեջ Ղ հնչյունը պահում է իր ձայնեղ արտաբերությունը, բայց նույն հնչյունը «ծաղկել» բառի մեջ դառնում է Ք՝ հաջորդ անձայն Կ հնչյունի ազդեցությամբ, և այդ բառն արտասանում ենք «ծաքիկել»:

Ասիմանումին հակառակ յերևույթ է տարմանումը (դիսիմիլյացիա), վորով փոխվում են իրար վրա–կից և մոտիկ յեղած հնչյունները մի բոլորովին ուրիշ բառի ուրիշ հնչյունի ազդեցության տակ. որինակ՝ հին «փեբրուար» տարմանությամբ դարձել է «փետրուար», այժմ՝ փետրվար, մինչդեռ հին «յանուար» առնմանությամբ դարձել է «յունուար», այսինքն առաջին վանկի Ա ձայնավորը դարձել է ՈՒ, յերկրորդ վանկի ՈՒ ձայնավորի ազդեցությամբ. ապա այժմ՝ հունվար: Այս բառը վորոշ մարդկանց բերանին «փետրվար» բառի տարմանությամբ արտասանվում է «հունրվար»: Նույնպես «սեպտեմբեր» բառը «հոկտեմբեր» բառի տարմանությամբ արտասանում են «սեկտեմբեր»:

47. ՆԱՑ Ր ՀՆՉՅՈՒՆԻ Լ ԴԱՌՆԱԼԸ, ՅԵՎ ԸՆԴՀԱԿԱԴԱԿՆ:— Այսպես փոխվում են արգելականները, հին՝ մի դարմանար, մի ասեր, նոր՝ մի դարմանալ, մի ասել: Ուրիշ բարբառների մեջ, ընդհակառակն, հին՝ չեմ դարմանալ; չեմ ուսել, նոր՝ չեմ դարմանար, չեմ ուսեր. հին՝ տեսել եմ, չեմ տեսել, նոր՝ տեսեր եմ, չեմ տեսեր:

Բացի վերևում (§§ 40—47) հիշվածներից, բարբառների մեջ կան ուրիշ վոփոխություններ ել բաղաձայնների նկատմամբ, ինչպես՝ հաց–խաց և ուրիշները: Ձայնավորների կրած վոփոխությունները ներքեվում առանձին են բերված:

48. ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ և ՆՈՐ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄ ԼԵԶՎԻ ՄԵՋ:—Հնչյունների չբշման հետևանքով, յեր-

բեմն լեզվի միջից դուրս են ընկնում հնչյունները, և կամ, ընդհակառակն, լեզվի մեջ առաջ են գալիս այնպիսի հնչյուններ, որ առաջ չեն լսվել: Այսպես մեր լեզվի մեջ չկան այլևս հին Ի, Ѳ առոգի համապատասխան հնչյունները. իսկ, ընդհակառակն, Ֆ հնչյունը, որ առաջ չի լսվել մեր լեզվի մեջ, այժմ լսվելուն և լսվել մեր մի քանի բարբառների մեջ. օրինակ՝ հողի, հոտ, հոգ—արտասանում են՝ ֆոդի, ֆոտ, ֆոգ:

Մեր Ղ հնչյունի կրած չրջումի մեջ միաժամանակ անցնում ենք այս լսվելու լսելությանն ևս: Դա լսվել և անլսելիս հավանորեն ձայնորդ կտակային է, որ արտասանվել և լեզվի յետևյալ մասի և կտակի միջև. լեզվի յետևյալ մասը բարձրանալով դեպի կտակիկը՝ նեղացնում է բերանի անցքը, ուր և արտասանվելով է հնչյունը՝ առանում և կտակային բնավորություն: Դա Ղ առաջ հին հնչյունն է, որ հին ժամանակ անշուշտ ավելի է և ըմբռնվել, քանի որ առարտվել, ավելի հաճախելեն, է հնչյունը առատարձել են դրանով, ինչպես՝ Ղազար, Ղուկաս և այլն: Բայց հետագայում այս հնչյունի արտաբերության ժամանակ լեզվի յետևյալ մասն ավելի ևս բարձրանալով դեպի կտակիկը, լեզվի և կտակիկի միջի անցքն ավելի ևս նեղացնում է, ուստի և հին հատակաձայն Ղ հնչյունը, որ է-ի մոտ է լսվել, փոխվել և նեղվածքի չնչական ձայնով Ղ հնչյունին, ինչպես լսվում է այժմ, որինակ, «ազատակել» բառի մեջ, որով լեզվից դուրս է ընկել Ղ առաջ հին հնչյունը, բայց միաժամանակ լեզվի մեջ առաջ է լսվել մի նոր հնչյուն—այժմյան ձայնով Ղ, համապատասխան անձայն Խ հնչյունին: Այս ձայնով Ղ հնչյունն այնուհետև, ինչպես անուանք, որոշ դեպքերում գործել է անձայն Խ: Կան սակավաթիվ բառեր, որոնց մեջ հին Ղ հնչյունը գործել և պարպակես է, ինչպես՝ այդ, անագի, մատաղատա—գործել են՝ այդ, անալի, (անկի, այանի) մատաղատա:

Ֆրանսերենի U, գերմաներենի Ü հնչյունի մասին մեր բարբառների մեջ տես § 51, 4.

49. ԲԱՌԱՇԵՇՏԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ:—Նախագրաբարյան շրջանում հայերենի չեշտը լսվել և բառերի նախավերջին վանկի վրա. չեշտի աղդեցությամբ բառերի վերջը դուրս և ընկել, որով չեշտը մնացել և վերջին վանկերի վրա, բացի «ին», «որ», «ոյ», վերջացած սակավաթիվ բառերից, ինչպես՝ գո՛ւրն, մո՛ւկն, գո՛ւսպը, քա՛դյը, ա՛ռարյ: Բառերի վերջի ձայնավորի դուրս ընկնելու հետևանքով չեշտի ուժը թուլացել և: Բարբառների մեծ մասը, ինչպես և նոր գրական լեզուն, պահում են հին լեզվի այդ թույլ չեշտադրությունը վերջին վանկի վրա:

Արևելյան բարբառների մեծ մասի մեջ, սակայն, չեշտը վերջին վանկից տեղափոխվել և վերջընթեր վանկի վրա. չեշտում են վոչ թե դանա՛կ, հարսանի՛ք, կառավա՛ր, գնացի՛, այլ դա՛նակ, վոչ թե հարսա՛նիք, կառա՛վար, գնա՛ցի: Շեշտի այս գրության վրա չեն ազդում բնավ բառի վերջից ավելացած հոդերը, ուստի չեշտվում են գործածել դա՛նակը, դա՛նակիդ, հարսա՛նիքը: Բայց յերբ վերջընթեր վանկի ձայնավորն Ը հնչյուն են, չեշտը մնում և վերջին վանկի վրա. ինչպես՝ կըսա՛վ, պատրաստա՛վ, յերկնքի՛: Վորոշ դեպքերում այս կամ այն դավառաբարբառի մեջ չեշտադրության այս ընդհանուր կանոնը սահմանափակվում և ստանձին պայմաններով. որինակ՝ կան յենթաբարբառներ, վորոնց մեջ հոդնախադրյալ «ներ» վանկն և չեշտվում՝ քաղաքնե՛ր, փողոցնե՛ր, մինչդեռ ուրիշների մեջ այս դեպքում ևս չեշտն անցել և վերջին վանկին՝ բաղա՛քներ, փողո՛ցներ: Բացի այդ՝ տեղափոխված չեշտադրություն ունեցող բարբառների մեջ կան բառեր, վորոնք փոխառություն են դրսերից և դեռ պահում են հին չեշտադրությունը վերջին վանկի վրա: Շեշտի ուժի նկատմամբ պետք է դիտել, վոր բարբառները տարբերվում են միմյանցից. Այրարատյան բարբառը (Ձերվան, Եջմիածին և այլն) համեմատաբար ավելի թույլ չեշտ ունի, քան Արցախի, Լոռու և տաճկահայաստանի յեկերային բարբառները: Բայց վերջընթեր վանկի վրա տեղափոխված այս չեշտն բնդհանրապես ավելի ուժեղ է, քան հին չեշտը վերջին վանկի վրա:

Ամբողջ կենդանի խոսակցության ժամանակ, նույն իսկ մաքուր գրական լեզվով խոսելիս, սովորաբար պահվում է փոխված չեշտադրությունը, յերբ խոսողի մայրենի բարբառն ունի այդ չեշտադրությունը. իսկ դիտական ու գրական և այլ նյութերի մասին խոսելիս և մա՛նավանդ կարդալիս՝ դեռ պահվում է հին չեշտադրությունը վերջին վանկի վրա: Բայց յերբ գրվածքն ունի ժողովրդական բնավորություն և լեզվով մոտիկ է բարբառին, այսպիսի դեպքում կարդալիս էլ այժմ սովորաբար պահվում է

վերջընթերը վանկի չեշտադրությունը: Վերջերս նաև իսկ պատահություններն ու ճառերը լսում են փոխված չեշտադրությամբ, առանձնապես այնպիսի անձերից, որոնք հայ դպրոցներում չեն սովորել և գրական լեզվին վարժվել են դպրոցից դուրս:

50· ՍՂՈՒՄՆԵՐ ՇԵՇՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՄԲ:—Շեչամած վանկը, ինչպես տեսանք, ավելի մեծ ուժով և արտաբերվում, քան մյուսները: Շեչամած վանկից առաջ և հետո ընկած վանկերի ձայնավորներն անուժության պատճառով փոփոխության են ենթարկվում: Դրանք չեշտի ազդեցության տակ ժամանակի ընթացքում հետզհետե ավելի թույլ արտաբերվելով՝ առնում են մերձմընջաձայն հնչյունների բնավորություն: Ձևը արտաբերության թուլությունը մեծանում է, այդ ժամանակ մեր ականջն այլևս տարբերություն չի դնում այդպիսի ձայնավորների կերանդի մեջ, և նրանց տեղ անցնում է թույլ Ը ձայնավորը, և կամ նրանք բոլորովին դուրս են ընկնում բառի մեջից: Որինակ՝ հարսանի՛ք բառի մեջին Ս. ձայնավորը թույլ արտաբերվելով մի քանի բարբառների մեջ դարձել է ը՛մընջաձայն, ասած՝ Ը ձայնավոր՝ հարսընի՛ք, և նույն իսկ դուրս է ընկել, որով այդ կեսավանկ բառը դարձել է կերկավանկ՝ հարսնի՛ք: Ձայնավորների այս փոփոխությունը կոչում ենք սովորաբար սղում:

Սղված Ը ձայնավորի մնալը կամ դուրս ընկնելը կախված է հաճախ հնչերանի բազաձայնների կապակցության ընդհանուր բնավորությունից: Ձևը սղումից հետո այնպիսի բազաձայններ են հաջորդում իրար, որ կարող են միանալ առանց Ը ձայնավորի, այն ժամանակ վերջինս կորչում է: Որինակ՝ կերը հին կոտրատել բառը կերկրորդ վանկի Ո ձայնավորի սղումով դառնում է կոտրատել, այդ ձայնավորը դուրս է ընկնում և քառավանկ բառը դառնում է կեռավանկ, որովհետև մեր լեզվի հնչյունների կապակցության օրենքով հետևա արտասանում ենք կոտ–րա–տել: Բայց կերը այս վերջին բառի մեջին Ա. ձայնավորն էլ սղվում է և բառը դառնում է կոտրտել, մենք այս բառն արտասանում ենք կոտրրտել· որովհետև մեր լեզվի մեջ չենք կարող կերկավանկ արտասանել «կոտր–տել» և ոչ էլ «կոտ–րտել»· քանի որ վանկի սկզբում կերկու բազաձայն «րտ» չեն կարող ընկնել, իսկ վանկի

վերջում մի բազաձայնից հետո Ր չի կարող դալ առանց մի ձայնավոր ունենալու մեջին. կոտր—մենք կարող ենք արտասանել միայն կոտրը, ինչպես արտասանում ենք՝ քաղցը, բարձը, ծաննը: Դարձյալ կերը նույն կոտրատել բառի առաջին վանկի Ո ձայնավորն է սղվում, մենք բառն արտասանում ենք կրտրատել, որովհետև մեր լեզվի մեջ բառի սկզբում կերկու և ավելի բազաձայններ չեն կարող ընկնել մեկ վանկի մեջ: Նույնպես կերը հին մտուցաւել բառը սղվելով դարձել և մտցնել, մենք արտասանում ենք մըտցընել, և ոչ կերկավանկ «մըտց–նել»· որովհետև մեր լեզվի մեջ վանկի վերջում չեն կարող դալ «ց», մենք չունենք «մըտց», «մտաց», «մուտց» և նման վանկեր: Ը ձայնավորը միշտ անպատճառ սղված ձայնավորի տեղ չի մտնում, այլ կերբեմն ավելանում է այնպիսի բազաձայնների մեջ, ուր ոչ մի ձայնավոր չկա բառի հաղված ձևով· որինակ՝ պառավներ բառի կերկրորդ վանկի Ա. ձայնավորը մի քանի բարբառների մեջ սղվում է՝ պառվներ· բայց այս սղված ձևը չի արտասանվում ոչ կերկավանկ «պառվ–ներ», որ անհնարին է, որովհետև «պառվ» վանկ չկա մեր լեզվի մեջ, և ոչ էլ «պառվներ»» ինչպես պիտի սպասեինք, այլ պառվրներ:

Սղումը շեշտից առաջ միակերպ չի առաջ կինում բոլոր բարբառների մեջ: Տարբերությունն առաջանում է չեչամ դրության և ուժի տարբերությունից: Վերջաչեշտ բարբառների մեջ սղվում է կերկուսից ավելի վանկեր ունեցող բառերի վերջընթեր վանկի ձայնավորը· մինչդեռ հարաչեշտ բարբառների մեջ, այսինքն այն բարբառների, որոնց վերջընթեր վանկը դրեթե չեշտ ունի, սղվում են վերջընթեր վանկից առաջ ընկած վանկերը: Որինակ՝ հարսանի՛ք, դպրևո՛ւ, տատակե՛լ, վաթթմե՛լ, չալակե՛լ, սովորե՛լ, խոտրովե՛լ, կերկո՛ւն բառերը վերջաչեշտ բարբառների մեջ դառնում են՝ հարսնի՛ք, դպրև՛ւ, տատկե՛լ, վաթթմե՛լ, չալկե՛լ, սովրե՛լ (սորվե՛լ), կերկո՛ւն: Այսպես և շատ բառեր՝ վախնալ, մոռնալ, դողնալ, մոռնալ, մեծնալ, ըսել, ընել, չիտկել (չահել փոխ. չիտակել), համբել, պարպել և այլն: Մինչդեռ հարաչեշտ բարբառների մեջ նույն բառերը դարձել են հրսա՛նիք, դպա՛րել, տպա՛կել, վթթա՛թել, չտա՛կել, ավո՛րել, բի՛կուն և ուրիշ շատ բառեր՝ բի՛վալ (—կերեվալ), հմա՛տալ, համբա՛րել, բժա՛նել և այլն:

Այս սղումներից առաջին տեսակը, որ ծագում է հնչեմ հին դրությունից վերջին վանկի վրա, դրծել և նաև արևելյան բարբառների մեջ, որոնց թվում և նոր գրական լեզվի մայր Այրարատյան բարբառն է. ուստի և գրական լեզվի մեջ ընդունված են այսպիսի սղումներ՝ մանել, յելնել, տանել, գոնել, ընկնել; թողնել, մեծացնել և նմանները, որոնցից հին լեզվի՝ մոռանել, նլանել, տեղանել, անկանել, թռուցանել, մեծացուցանել և նման ձևերի նույնպես կրկնավոր բառերն ու բայերը՝ վատվատուն, թափթափել, վազվազել և նմանները գործածվում են ավելի սղված ձևով՝ վառվռուն, թափթփել, վազվզել, և ուրիշ շատ բառեր՝ կտրատանել–կտրտել, կտրատել–կտրատել, պատառատել–պատառել, պատառատել–պատառատել, պատռատել–պատռատել, հովահարել–հովհարել, հովահարել, ավելացնել–ավելցնել, կճեպել–կճղել; ատակել (հին՝ ատատակել), յերկուշաբթի, յերեքշաբթի և այլն (հին՝ երկուշաբթի, երեքշաբթի), լուկան (հին լուսական), բանվոր, շատախոս, կռճկել, կատր (հին՝ կոտոր), վրա (հին՝ վերա), սրա, դրա նրա (հին՝ սորա, դորա, նորա) և այլն: Այս և նման բառերի չսղված ձևերից մի քանիսի գործածությունը գրական լեզվի մեջ, անշուշտ, փոխառություն է դրաբարից: Նույնպես սղված ձևերից մի քանիսը թե Այրարատյան բարբառի և թե մեր նոր գրական լեզվի մեջ անպայման փոխառություն են ուրիշ բարբառներից. իսկ ուրիշները, ինչպես են՝ մոռնել, թռցնել, կատր և այլն, արևելյան հարաշեխտ բարբառների, որոնց թվում և Այրարատյան բարբառի մեջ առաջացել են նախ քան չեշտի տեղափոխվելը վերջնահեր վանկի վրա. ուրեմն նախ, որինակ, տեսանե՛լ, սատակե՛լ, դաբձել են՝ տեսնե՛լ, սատկե՛լ, և ապա նոր չեշտն անցել է վերջընթեր վանկի վրա՝ տե՛սնել, սա՛տկել:

62. ԽՈՍՔԻ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ նշանակությունը, ինչպես սովորաբար բառերի ձևվական մասերի նշանակությունը, պարզ է լինում, յերբ գրվում են խոսքի մեջ նյութական նշանակություն ունեցող բառերի, կամ խոսքերի հետ: Դրանք իրենց նշանակությամբ լինում են՝

Ա. Կապակցական բառեր, որոնք ծառայում են խոսքի մասերն ու խոսքերը միմյանց հետ կապելու պահպան հարաբերություններով, և իրենց կողմից բաժանվում են՝ 1. կապեր (նախադրություն և յեռադրություն՝ գնալ, առանց, հետ և այլն), որոնք խոսքի մեջ ստորադաս գոյականն իրրև լրացում (խնդիր) կապում են վերադաս բառի հետ, որ և լրացյալը կամ խնդրառուն. 2. Ստորադասական շաղկապներ, որոնցով կապվում են ստորադաս խոսքերը գերադաս խոսքի հետ (թե, որ, յեթե, որպեսզի և այլն), 3. Համադասական շաղկապներ, որոնցով միմյանց հետ կապվում են համադաս բառերը և համադաս խոսքեր (և, ու, այլև, բայց):

Բ. Յեղանակական բառեր կամ մասնիկներ՝ թերևս, գուցե, հա, ապաքեն, արդյոք, գոնե, դեթ, իրոք, մերթ, գրեթե, կարծես, կարծեք, անշուշտ, հարկավ, հավանորեն և այլն, որոնք որևե կերպ յեղանակավորում են խոսքը գրվելոյ հաճար բայերի կամ ուրիշ բառերի վրա (§ 250):

Գ. Բացասական մասնիկներ՝ «ոչ», «չը», որոնցով կապվում են բացասական խոսքեր:

Դ. Պատասխանական բառերը՝ այո՛, ո՛չ:

Այս վերջին յերեք առանձին բառերը չատ քերականներ դնում են մակբայների մեջ. բայց դրանք իսկապես ձևվական նշանակություն ունեցող բառեր են, ինչպես և կապակցական բառերը, որոնց բոլորի նշանակությունն ու ֆունկցիան բացատրվում է բառերի ու խոսքերի կապակցության —շարահյուսության մեջ:

63. ԲԱՅԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Բառերը խոսքի մեջ, ինչպես ասացինք (§ 10) գործածվում են մերթ ընդհանուր, վերացական նշանակությամբ, մերթ հատուկ, թանձրացական (կոնկրետ) նշանակությամբ: Սակավաթիվ բառեր միայն ունեն կամ մեկ, կամ մյուս նշանակությունը:

Գոյականներից մերթ մեկ, մերթ մյուս նշանակությունն ունեն հատական անուները, որոնցով ամանվում կամ կոչվում են առարկաները: Այդ բառերը, առանց վորևե վորոշոց հանգամանքի, սովորաբար հասկացվում են ընդհանուր վերացական նշանակությամբ (որով սեռի անուն ամենամեծ ծավալով և ամենաոքը բովանդակությամբ: Բայց յերբ այդպիսի մի անվան վրա գրվում է մի վորակական ածական, այն ժամանակ բառի նշանակության ծավալը փոքրանում է, իսկ բովանդակությունն, ընդհակառակն, մեծանում է, և բառի ընդհանուր կամ սեռի նշանակությունը փոխվում է առանձին նշանակության: Որինակ՝ «ծառ» բառով հասկանում ենք բոլոր ծառերի ամբողջությունը (որը և այդ բառի նշանակության ծավալը) իր նույն ընդհանուր էական հատկություններով (որը և այդ բառի նշանակության բովանդակությունը): Բայց յերբ ասում ենք «ծիրանի ծառ», այլևս աչքարհի բոլոր ծառերը չենք հասկանում, այլ ծառերի մի առանձին առարկը: Անման վրա դրված ածականով՝ անվան ցույց տված գաղափարի վրա ավելանում է սրա մեջ չնշանակված մի նոր գաղափար, որով ընդլայնվում, ընդարձակվում է անվան նշանակության բովանդակության կողմից. ծավալի կողմից, ընդհակառակին, նեղանում է: Ամեն «ծիրանի ծառ» ծառ է, այսինքն ունի այն բոլոր ընդհանուր հատկությունները, որ ունին բոլոր ծառերը, այլև ծիրանի ծառի առանձնահատկությունները. բայց ամեն ծառ ծիրանի ծառ չէ, որովհետև ամեն ծառ չունի ծիրանի ծառի առանձնահատկությունները: «Ծիրանի ծառ» կոպակցությունն էլ, սակայն, իրրև առանձին անուն, ունի ընդհանուր, վերացական նշանակություն:

Բոլոր ածականներով և նույնիսկ ամեն անգամ վորակական ածականներով այսպես չի փոխվում անվան նշանակությունը: Յերբեմն վորակական ածականները գրվելով անվան վրա՝ վոչ թե մի նոր առանձին են կազմում, այլ միայն զգալապես պարզում, բացահայտ են դարձնում անվան նշանակության բովանդակությունը, ցույց տալով առարկայի այնպիսի էական հատկությունը,

վոր առարկան ունի իր մեջ իրրեվ իր էական հատկանիշ։ Որինակ՝ «սպիտակ ձյուն», «փայլուն արեգակ» կապակցութիւններից մէջ «սպիտակ», «փայլուն» բառերը վոչ մի նոր հատկութիւն չեն ավելացնում ձյան կամ արեգակի նշանակութեան վրա։ առանց դրանց էլ մենք ձյունից անբաժան մտածում ենք սպիտակութիւնը, լինչպես և արեգակից՝ փայլը։ Այդ ածականները դրված են իրրեվ լոկ բանաստեղծական «զարդարուն մակդիրներ» առարկայի պատկերացումն ավելի կենդանի ու վառ դարձնելու համար։

Հատարակ անվան նշանակութիւնը վոխվում չի կրում նաև «ամէն», «բոլոր» ածականներով, վորոնք ունեն քնիհանիպագական նշանակութիւն և դրվելով մի անվան վրա՝ միայն պարզորոշ կերպով վերցնել են ուզում անվան նշանակութիւնը իր ընդհանուր էական բովանդակութեամբ, «բոլոր» բառով նաև ամբողջ ժամանակ։

Հատարակ անվան նշանակութիւնը կարող է առհասարակացվել միայն ժամանակի կողմից, երբ վրան դրվում է մի թվական կամ բաճախական ածական, լինչպես են՝ հիմնական թվականները՝ մեկ, երկու, երեք և այլն ու անորոշ քանակութիւն ցույց տվող ածականները՝ մի քանի, շատ, սակավաթիվ, յուրաքանչյուր, քանի, վորքան և այլն։ Որինակ՝ երբ ասում ենք՝ «երկու ամսից», այդ ժամանակ «ամսից» բառը նշանակութիւնը «երկու» բառով միայն ժամանակի կողմից առհասարակացվում է առանց բովանդակութեան կողմից հարստանալու։

Անվան նշանակութեան ծավալը կարող է այնքան փոքրանալ, մինչև վոր մի հատի, մի վորոշ անհատ առարկայի վերածվի. այս դեպքում նշանակութեան բովանդակութիւնն ամենից հարուստ է լինում։ Որինակ՝ երբ մի հատուկ ծառ ցույց տալով ասում ենք՝ «այս ծառը», հասկանում ենք միայն մի հատ վորոշ ծառ, մի հատուկ ծառ, վորը իրոք գոյութիւն ունի. բայց այդ ծառն ունի վոչ միայն ծառի սեռի բոլոր ընդհանուր հատկութիւնները, այլև իր անկրկնելի սեփական առանձնահատկութիւնները, վոր վոչ մի ուրիշ ծառ չունի աշխարհում։

Գրեթե ամեն հատարակ անուն էլ կարող է խոսքի մեջ դրված լինել կամ ընդհանուր, վերացական նշանակութեամբ իրրեվ սեռի կամ տեսակի անուն, ցույց տալով առարկայի ընդհանուր պատկերացման բովանդակութիւնը տեղից ու ժամանակից դուրս, կամ դրված լինել անհատական, թանձրացական կամ հատուկ նշանակութեամբ, ցույց տալով մի հատ էական առարկա, վոր առանձին գոյութիւն ունի վորոշ տեղում ու ժամանակում։ Այսպես այս երկու նշանակութեամբ դրված են վոչ միայն անջատական անունները, վորոնք ցույց են տալիս մի հատ անբաժանելի առարկա, այլև հավաքական անուանները, վորոնք նշանակում են միատեսակ անձերի, կենդանիների կամ իրերի բազմութիւն, համախմբութիւն, լինչպես՝ զորք, հոտ, երամ, նախիր։ Արդարև այս անունները հատուկ նշանակութեամբ դրված ժամանակ նա մեր մտքի մեջ պարթևացնում են ի մի խմբված շատ համանման առարկաներ, բայց այդ համախմբութիւնն ինքն առնվում է իրրև մի առանձին առարկա. որինակ՝ երբ ասում ենք՝ «այս նախիրը», չենք հասկանում «նախիրի» ընդհանուր վերացական պատկերացումը, այլ մի վորոշ տեղում ու ժամանակում ամրամանավակված մի հատուկ նախիր։

Հատարակ անուններից ընդհանուր նշանակութիւնը հատուկ նշանակութեան վրա՝ 1) Ցուցական ածականներով՝ այս, այդ, այն, սույն, դույն, նույն, վորոնք ցույց են տալիս առաջին կամ յերկրորդ դեմքի մոտ, կամ նրանցից հեռու դտնված մի առարկա, լինչպես՝ այս գիրքը, այդ գիրքը, այն գիրքը, 2) Դասական թվականներով, առաջին, յերկրորդ, յերրորդ և այլն. 3) Հոդերով՝ ԸՍ, ԸԴ, Ը կամ Ս, Դ, Ն, վորոնց պաշտոնն է թանձրացականն արտահայտել, լինչպես՝ գիրքս, գիրքդ, գիրքը։ Աչխարհաբարում, սակայն Ն (Ը) հոդը գործածվում է նաև սեռի դասական ցույց տալու համար, լինչպես՝ «ձին արագավազ կենդանի է» խոսքի մեջ «ձին» բառը։ Ուրիշ պայմաններ էլ կարող են մտածողութեանը վորոշ ուղղութեան տալ՝ բառը հատուկ նշանակութեամբ հասկացնելու կամ հասկանալու համար. որինակ՝ առաքյան, վորի մասին խոսվում է, կարող է աչքի առաջ լինել և աչքով կամ ձեռքով ցույց արվել, կամ թե կարող ենք մտքով ակնարկել։ Նրան, կամ առաջուց կարող է խոսքի մեջ հիշված լինել, կամ վերևի ուրիշ անհատական թանձրացական նշանակութիւն ունեցող բառով, միաժամանակ նաև հոդով վորոշվել, լինչպես՝ իմ գիրքը, մեր բնակարանը, մյուս գրիչը և այլն։ Նույն նպատակին կարող է ծառայել նաև խոսողի ու խոսակցի կենալու տեղն ու ժամանակի դրութիւնը, նրանց ընդհանուր պարապմունքը, չասե-

ըի ընդհանրութիւնը և այլն. կա՛մ խոսողին ու խոսակցին կապող և առաջուց վորևէ կերպ ծանոթ լինել սուրկան, վորի մասին խոսում է և այլն: Որինակ՝ վորևէ քաղաքի մէջ գտնվող ցենների խոսակցութեան մէջ «քաղաքը» բառով կարող է հասկացվել մի հատուկ, Թանձրացական քաղաք: Նոյնպես մի-ևնոյն քաղաքի բնակիչների բերանին հատուկ նշանակութիւն ունեն՝ քաղաքային խորհուրդը, ջրմուղը, թատրոնը (գիմի մեկ թատրոն կա քաղաքում) մի-ևնոյն տան բնակիչների համար՝ խոհանոցը, ննջարանը. նոյն զորքի աշակերտների համար զորոցը, համալսարանը, ուսուցչը: Դարձյալ՝ գործ ու գեղարվեստների համար բոլոր խոսքի մէջ հատուկ նշանակութիւն ունեն՝ հայրիկը, մայրիկը և այլն: Այսպես և վորոշ ժամանակի համար գերը սուում ենք՝ տասաւորութեան կամ խորը և նմանները, հասկացվում է մի հատուկ ,անհատ կամ խոր: Նոյնպես գերը սուում ենք՝ «կիրակի որը», կարող է հասկացվել կամ մոտիկ անցյալ, կա՛մ մոտիկ ապագա կիրակին, բայց գերը սուում ենք՝ «նա կիրակի որը գիմով», բայց ժամանակից հասկանում ենք հասկապես մոտիկ անցյալ կիրակի որը. իսկ «նա կիրակի որը կը գա» խոսքի մէջ բայի ապառնի ժամանակից հասկացվում է մոտիկ գիմով կիրակին:

Հատուկ անուններն նոյնպես ունեն Թանձրացական, կոնկրետ նշանակութիւն. դրանք էլ սուրկաններն (գլխաւորապես մարդկանց և աշխարհագրական տեղերի, գերբերն նաև կենդանիների) կոչումներ են, ինչպես և հասարակ անունները: Բայց մինչ վերջիններս կարող են գործածվել թե իրրեև սեռ կամ տեսակի անուն և թե իրրեև անհատի անուն, իսկ գերը անունը նշանակ է ցույց տալիս՝ թե իրրեև նշանի ամբողջութեան և թե իրրեև նրա մի մասի անուն,—հատուկ անունները ցույց են տալիս մի վորոշ անհատ սուրկա մեկին՝ նման տեսակի սուրկաների մէջ և չեն կարող գործածվել իրրեև սեռի անուն: Որինակ՝ «ձի» բառով կարելի է կոչել և «ձի» տեսակն ընդհանրապես և ամեն մի գիտական ձի, այս կամ այն ձին. նոյնպես «գետ», «ջուր» կոչվում է և ընդհանրապես ամեն գետ կամ ջուր նշանակ, և նրանց մի մասը, մի կտոր գետ, մի կաթիլ ջուր: «Գետ» կոչվում են և բոլոր նման տեսակի հատոց ջրերը և նրանցից ամեն մեկը. բայց «Երասխ» կոչվում է հատկապես գետերից մեկը միայն, և այդ անունով մի գետ գործածվում է բոլոր գետերի միջից. Երասխը գետ է. բայց ա-

մեն գետ Երասխ չէ: Միևնույն հատուկ անունը, սակայն, կարող են ունենալ նաև գանազան մարդիկ կամ տեղեր. ուստի նոյնիսկ հատուկ անունները գործածել գերբերն իրենց Թանձրացական նշանակութիւնն սուանում են այն ժամանակ, գերբ վորևէ կերպ վորոշվում են, սովորաբար տղղանունով, իսկ պատմականները նաև մականունով, ինչպես՝ Աշոտ Ողորմած, Վարդան Մամիկոնյան, Աշոտ Յերկրորդ, Հին Նախիջևան, Նոր Նախիջևան:

Թանձրացական հատուկ նշանակութիւն ունեն դերանուններն՝ անձնական՝ ես, ինքս, դու, ինքդ, նա, ինքը. ցուցական՝ սա, դա, նա, այս, այդ, այն. փոխադարձ՝ միմյանց, իրար, մեկմեկու. հարաբերական՝ կամ շաղկապական՝ «որ», նոյնպես և ցուցական մակրայները՝ աստ, անդ, այստեղ, վորտեղ, գերևի, այստեղ, այդտեղ, այնտեղ և այլն: Այս բառերը, սակայն, վորոշ հատատաուն նշանակութիւն, ուրիմն և ըստ ինքյան Թանձրացական վորոշ բովանդակութիւն չունեն, այլ իրենց հատուկ նշանակութիւնն սուանում են միայն խոսքի մէջ ունեցած դրութիւնից, գերբ գործածվում են վորոշ անհատ սուրկայի անվան, կամ ժամանակի ու տեղի մի վորոշ մասի անվան տեղ: Սակայն դերանուններն էլ, բայց սուաջին ու գերկրորդ դեմքերից, կարող են գործածվել նաև ընդհանուր վերացական նշանակութիւն ունեցող անուններն տեղ. որինակ՝ «կետ ձուկը պատկանում է կաթնասուններին. նա կենդանի ձագեր է բերում» խոսքի մէջ «նա» դերանունը գործած է «կետ ձուկ» սեռի անվան փոխանակ, ուստի և ունի այս դեպքում ընդհանուր վերացական նշանակութիւն:

Իրենց բովանդակութեամբ ընդհանուր վերացական նշանակութիւն ունեն անորոշ անուն (անորոշ դերանուն) կոչված բառերը և մի քանի անորոշ ածականներ ու մակրայներ, վորոնք ցույց են տալիս անորոշ, անձանոթ իրեր կամ անձեր, բան կամ մարդ, չատ սուրսում և ընդհանուր ձևով հայտնելով միայն սուարկայի էութիւնը, սեռը կամ տեսակն ընդհանրապես սուած, գերբեմն սուանց վորոշելու նրան իսկ տեսակի անունը. այսպես են՝ բան, իք. իմքին, ինչ, ինչոր, ինչինչ, վոչինչ, ամեն ինչ, ամեն բան, ինչն և է, մարդ (մարդ իմանա ի՞նչ... մարդ ուսում է ուսում, չի կշտանում), վոմն, վոք, ոքմին, վոչոք, ոչով, ով, ոմոր ոմիև, մի քանիսը, քանիսոր, յուրաքանչյուրը, չատ, մեկը, քչերը, ամեն, ամենայն, ուրիշ, վորևէ, բոլոր, այսինչ, այնինչ, գերբեմն, գերբեք, գերբևէ, ուրևէ (ուրիք), և մի քանի ուրիշներ: Այս բառերից մի քանիսը գրաբարից կամ ժողովրդական լեզ-

վից են առնված և քիչ են գործածվում, բայց և այնպես պատահում են նոր գրական լեզվի մեջ. ինչպես օրինակ՝ լրագրերից բերված հետևյալ կտորների մեջ.—Միևնույն բոպիկին խանութից դուրս գալով՝ մի վոմն կրակում և սպրծանակը. բաբեմիա վոմն. մեծ վոմն և կարծում իրեն. Մի վոմն Սահեխանոս անուներ...Նա գաղարիաճևոն վերադառնալով՝ միայն քսանհինգ ռուբլի չ սահցել վոմնից: Յեթե վոք վող ուված լինի՝ թող հայտնի...Ովոր գալիս է: Ելի ինչի համար ել (մի բանի համար) գրկեց նրան... Յեթե ասե՝ այսինչը գիտեմ, իրոք ել գիտե, յեթե ասե՝ այնինչը կանեմ, անպատճառ կանե: Նա իմ ովն է ովր (սովորաբար՝ նա իմ ինչն է). ավո մնաց. բարոյական տեսակետից անարժեք ինչ է:

Այս բառերի մեծ մասի նշանակությունը պահպանում է լեզվի բարձրագույն ընդհանրացումներին. դրանց բավանդակությունն այնքան ազգատ է, որ դրանցով կարելի չ ամեն բան ասել և խոհապես վոչինչ վորոշ չասել: Որինակ յերբ մի անդարմացած մարդկամ յերբ մեկը իսկական բառը չմատնելով ասում է՝ «իբր ինքն իք արեց», «ես իբր», մենք իսկապես վոչինչ չենք հասկանում վորովհետև առարկայի, գործողության վերացական պատկերներ են միայն հայտնում այդ «իբ», «իբ անել» բառերը. այնպես որ վերևում գրված խոսքը վորոշ ասկի խոսքի իսկ ձևին և միայն, գրեթե առանց բովանդակության:

Բայերից ածական վերացական բնավորություն ունեն սովորաբար «եմ», «լինեմ», «անեմ» բայերը, առանձնապես յերբորդ դեմքով. որինակ՝ «է» միևնույն է, թե՝ «իբր իք է», «անել» միևնույն է թե «իբ անել»: Ուսած խոսքի մեջ այդ բայի հետ առորոշ նշանակության համար, որով լրացվում է գրանց իմաստի թերին, ինչպես՝ բաց անել, լաց լինել, ջուղ է:

Բ.

ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

64. ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ:—Բառերը հնչյուններով ու նշանակության փոփոխությունները միմյանցից անկախ են առաջ գալիս. ուսած կարող են մի բառի հնչյուններըփոխվել, իսկ նշանակությունը՝ անփոփոխ հինը մնալ, որինակ՝

տեսանել, որպի գարձել են՝ տեսնել, վորբի, բայց գրանց նշանակությունը չի փոխվել. իսկ մորթել բառի հնչյուններն անփոփոխ են մնացել, բայց նշանակությունը փոխվել է. այս բառը հին լեզվի մեջ նշանակում է՝ քերթել, մորթը հանել, իսկ նորի մեջ՝ վիզը կտրել, փազատել: Կարող են բառի թե՛ հնչյունները և թե՛ նշանակությունն էլ փոխվել. որինակ՝ հին յուզել, վոր գրաբարում արդեն արտասանությամբ գարձել է հուզել, հին լեզվի մեջ նշանակում է՝ վորոնել, փնտռել. խառնել, տակն ու վրա անել— գրգռել, չարժել: Այս վերջին նշանակությամբ նաև նոր գրական լեզվի մեջ գրաբարից փոխառությամբ, ինչպես՝ ծովը հուզված է— ալեկոծված է. հուզում—իրարանցում, խռովություն, նաև՝ արաբ հուզում, արբաստհուզյ-արաստչարժ: Նույն բառը, սակայն փոխված ձևով նշանակում է՝ խնդրել, ցանկալ, պահանջել. ինչպես և հին լեզվի մեջ խնդրել նշանակում է՝ վորոնել, փնտռել, և ապա՝ ուզել, խնդրել:

Յերբեմն բառերի նշանակությունն այնպես փոխվում է, որ նոր նշանակությունը հնից-խիստ հետևանում է, և պատահում նույնիսկ, որ բառը ակզբնական հակառակ նշանակություն է առանում: Որինակ՝ պարապ նշանակում է, գատարկ, անզործ, առանց գրաղմունքի. գրանից՝ պարապարտ, պարապ մնալ— գատարկ մնալ, անգործ լինել. պարապ ժամանակ— գործից ազատ ժամանակ պարապություն—գատարկություն. գատարկ, չգրնած ատրածության լիրկու առարկայի մեջքով. անպործություն, գործից ազատ, հարմար ժամանակ, «ժամ պարապ»· պարապել—գատարկել, պարպել. ազատ ժամանակ ունենալ, բան ու գործ, գրաղմունք չունենալ: Այս նշանակություններն մեկից մյուսին անցումը հասկանալի չե. բայց նույն պարապել բառը թե հին և թե նոր լեզվի մեջ նշանակում և նաև մի բանով գրաղվել, գործ կատարել. նա իր գործով է պարապում — նա գրաղված է, գործ է անում. պարապմունք-գրաղմունք: Ինչանակե՝ այս բառը առաջ և ակզբնական հակառակ նշանակություն: Գա առաջ է յեկել հին լեզվի սրտական խնդրով գործածություններից՝ «պարապել իմիք», վոր նշանակում է՝ ազատ ժամանակ ունենալ մի բանի համար. իսկ «մի բանի համար ազատ ժամանակ ունենալ» նշանակում է՝ ազատ ժամանակ ունենալ այդ բանն անելու

համար, ինչպես և նոր (ավելի ժողովրդական) լեզվի մեջ ասում է՝ «մինչև այժմ չեմ պարապել, որ քո ուզածն անեմ», այսինքն ազատ ժամանակ չեմ ունեցել, որ այդ անեմ: Այս գործածությունից հետևությամբ կարող է «պարապել խմիթ» նշանակել «զբաղվել», ինչպես և սովորական և գրաբարում, մինչդեռ բացառական խնդրով «պարապել յիմէն» նշանակում է՝ մի բանից ազատ լինել, դադարիանալ: Հետագայում արդեն նոր լեզվի մեջ «պարապել» բառը, կերը առացել և «զբաղվել» բառի նշանակություն, այս բառի պահանջած գործիական հոլովով և առնում խնդիրը՝ «պարապել մի բանով», բայց աշխարհաբարի հին գրվածքների մեջ դեռ պատահում են սրական խնդրով գործածություններ՝ «պարապել մի բանի»:

65. ԲԱՌԵՐԻ ԱՌՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ՋԱՆԱԶԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.—Պատահում է լեզուներն, որ բառերի սկզբնական նշանակությունը լեզվի մեջ մոռացվում՝ մթնում և նույնիսկ մոռացվում է, և նոր նշանակություն պատռում է սովորական: Որինակ՝ «մորթել» բառի «կերթել» նշանակությունը մոռացվել է: Նույնպես՝ «ծառայ» հին լեզվի մեջ նշանակում է ավելի՝ «սարուկ», իսկ նորի մեջ «սպասավոր»: «Ապրել» հին՝ պատռվել, պրծնել մի վտանգից. նոր՝ կենալ, կյանք ունենալ. ապա՝ կենալ մի տեղ, բնակվել: «Ապրանք» հին՝ պատռուք. նոր՝ վաճառքի իրեր, առացվածք: «Ապրուստ» հին՝ պատռուք. նոր՝ ապրելու միջոց, ուտելիք, հագնելիք և այլն: Բազմաթիվ այսպիսի բառեր կան, որոնց սովորական նշանակությունները հին ու նոր լեզուների մեջ տարբեր են: Բայց բառերի հին նշանակությունները սովորաբար չեն մոռացվում, այլ պահվում են նորերի հետ, և այսպես վոչ միայն տարբեր բարբառների մեջ, այլ հաճախ նաև միևնույն բարբառի և գրական լեզվի մեջ: Այսպիսով միևնույն բառը միաժամանակ կերկու կերևք և ավելի նշանակություններ և ունենում, ինչպես ասում էն, տարբեր առումներով գործածվում: Որինակ՝ գրաբարում «քաջ» բառը նշանակում է՝ 1. ուժեղ, կարիճ, անվեհեր, ինչպես և աշխարհաբարում. գրաբանից՝ քաջարանց, հականիշը՝ վատ, վատարանց, 2. լավ, ինչպես՝ քաջ գիտեմ, քաջ բժիշկ, քաջ խոսել. վերջինս նաև ճարտար խոսել, քաջարան—ճարտարարան, լեզվանի. 3. խիստ չատ. վաղ քաջ ընդ առաւօտն—առավոտյան չատ վաղ. քաջ ի բացխնա հետու, քաջախոր, քաջաժիր—չատ խոր, խիստ ժիր և այլն: Նոր լեզվի մեջ «ծանր»՝ 1. կշռով ծանր (քար), 2. լուրջ, ծանր մարդ, 3. դանդաղ, հականիշը՝ արագ, ծանր չարժվել, ծանր քայլել, 4. հղի, վատը ծանր, ծանրել—հղանալ (անասունների համար), 5. ծանր լսել—դժվար լսել. ականջը ծանր, ծանրալուր, 6. ծանր խոսք—վիրավորական խոսք, 7. ծանր հանցանք—մեծ հանցանք, 8. ծանր պինի, ծանր ջուր, ծանր յուղ—դժվարախառն, դժվար ուտելի, 9. ծանր հաս, ծանր հաս—անախորժ, 10 ծանր ձևոք ունենալ—պինդ, ուժեղ, 11. ծանր միտք, ծանրամիտ—բթամիտ, 12. ծանր ապրանք—թանկ, և այլն: Նույնպես՝ «ջուր»՝ 1. ջուր հեղուկը, 2. ծով, լճերը ջուր գործածելուն—թրջվելուն, 3. կրեսի ջուր, կրեսաջուր—ամոթ, պատկառանք. կրեսի ջուրը գնալ, թափել—ամոթ չունենալ, 4. աշխատանքը ջուր գառնալ—վչանալ, 5. դանակը ջուր անել, ջրի պես սուրել—լավ սավրել, 6. ջրի դինը չատ ժամ, 7. ջուր բնկնել—պատի հատնել սկսելը, 8. ապառանկի ջուր— վհատիլ. 9. կրկաթի մխումը, մսխո. ջուր տալ—մխել. այս պանակը լավ ջուր ուժած է, ջուր ունի, և այլն:

Բառի գանազան նշանակություններից մեկը սկզբնական կամ հիմնական նշանակությունն է, որ և հաճախ ընդհանուր սովորականն է, իսկ մյուսը կամ մյուսները պատահական կամ անձնական և քիչ գործածական: Շատ անգամ, ի հարկե, դժվար է բառերի սկզբնական նշանակությունը իմանալ, որովհետև այդ նշանակություններ կարող է գործածությունից դուրս ընկնել և բոլորովին մոռացվել: Ինչպես որ ատանց վորևե վորոշ հանգամանքի բառերը հասկանում ենք ընդհանուր վերացական նշանակությամբ, նույնպես և այս դեպքում կերբ մարդ լսում է մի բառ, ատանց վորևե վորոշ հանգամանքի, նա ամենից առաջ կը մտածի բառի սովորական նշանակության մասին, որ և ընդհանրապես հիմնական նշանակությունն է: Որինակ՝ «քար» բառը լսելով՝ մենք ամենից առաջ մտածում ենք քարի մասին ընդհանրապես, երբեմն մի տարր, այսինքն՝ հանքային մի պինդ առարկա. «ծաղիկ» բառը մեզ ամենից առաջ հիշեցնում է ծառի ծաղիկը կամ մանիշակը, վարդը և այլն: Բայց կերբ կա մի վորոշ պայման, այն ժամանակ մենք հասկանում ենք նաև բառերի անսովոր և նույնիսկ հակադիր նշանակությունները. որինակ՝ կերբ նարդի խաղացողներն ասում են՝ «քարերը պակաս են», «քարերը չարիր», այդ դեպքում արդեն

«քար» բառով հասկանում ենք նարդու խաղաքարը, վոր նույնիսկ քարից չի չինված, այլ փայտից կամ վոսկորից: Նույնպես յերբ մի բան կշռելիս ասվում է՝ «քարը պակաս է», «ո՞ւր են մեր քարերը», հասկացվում է կշռաքար, վոր գործածել կարող է և նույն իսկ քարից չլինել, այլ յերկաթից: Գործածել՝ յերբ պատռելում կամ գաշտում պրոանելիս ասում ենք՝ «տես այն ծառիկն ինչ լավն է», անշուշտ, այս բառը հասկանում ենք սովորական նշանակությամբ: Բայց յերբ հիվանդությունների մասին խոսելիս լսում ենք՝ «քաղաքում չատ ծաղիկ կա, մեր յերեխայի ծաղիկը պետք է կտրել», այս դեպքերում չատ վորոշ հասկանում ենք «ծաղիկ» կոչված հիվանդությունը: Նույնպես բոլորովին ուրիշ բան ենք հասկանում, յերբ լսում ենք՝ «հացի ծաղիկ», «գինու ծաղիկ» և կամ նույն իսկ «մածիկ» հատուկ անունը:

Իրրեվ վորոշող հանգամանք կարող են ծառայել խոսքն ասելու ժամանակ ասողի ու լսողի դրությունը, շրջապատը, խոսքի ընդհանուր բովանդակությունը, խոսողի ու իր խոսակցի արվեստակցությունը, նրանց ընդհանուր պարապմունքը և այլն: Յեվ վերջապես բառերի զանազան նշանակություններից մեկը մյուսն հասկանում ենք առհասարակ խոսքի կապակցությունից, նայելով թե բառն ուրիշ ինչպիսի բառերի հետ և դրված, ինչպես կարելի յե այդ տեսնել վերևում բերված «քաջ», «ծանր», «ջուր» բառերի առումների նկատմամբ: Նույնպես յերբ ասվում է՝ «քար ու կըչեռք», հասկանում ենք կշռաքար: Այսպես և «խաղ», «խաղալ» բառերի զանազան նշանակությունները վորոշվում են բառերի կապակցությամբ. 1. Յեղեխանները խաղ են անում, 2. Նրանք թուղթ, նարդի, շահմատ են խաղում, 3. քանի՞ խաղ խաղացին—մեկ անգամ խաղալ-պրծնելը, 4. մեկն ուրիշի մի խաղ խաղալ, 5. խաղ ասել, խաղ կանչել-յերգել, խաղ ու ասդ, 6. խաղով հասկացնել-կոմիտակը կերպով հիշեցնել, 7. նրա հարսանիքին աղջկերքը չատ խաղացին—պարեցին, խաղ ու պար, 8. այսօր թատրոնում ի՞նչ են խաղում—նկարագրում, 9. մտան խաղերը, 10. աչքս խաղաց, մարդ պիտի գա-չարժվել: Այս ինչ խաղերը, 10. աչքս խաղաց, մարդ պիտի գա-չարժվել: Այս ինչ խաղ է, քանի չի խաղում. ուրիշին ասել խաղացին—չարժվեցին. 11 խաղը ու խաչատուկ լինել, խաղը լինել: Յես քո խաղաո՞ն եմ—ծաղրի առարկա. խաղատեղ՝ նաև խաղալու տեղ, 12. Գետի խաղերը, և այլն: Այսպես և «քաշել» բայը՝ 1. քաշել, ձգել, ձիգ տալ. պարանի ծայրը քաշիր. 2. վառնելով քեզ քաշիր—

ամփոփել, յետ քաշել, 3. նրա ձեռից ինչեր չեմ քաշել—կրել. կոտոր քաշել. 4. քաշիր, տես քանի՞ ֆունտ է կշռում, 5. Պատից քաշել մի բան, քաշ անել—կախել, կախ տալ, 6. պատկեր քաշել—նկարել, 7. գիծ քաշել—գծել, 8. սեղան քաշել, հաց քաշել—սեղանի վրա դնել մի ուտելիք, 9. կերակրի, կաթի յերեսը քաշել—վերցնել, 10. Նա հոգն է քաշել—նմանել, 11. Հինգ րոպե չքաշեց—չտևեց, 12. ոչ քաշել—հոգոց հանել, 13. լվացքը ջուրը քաշել, 14. ատամ քաշել—հանել, 15. գինու կուժը գլխին քաշել—խմել, 16. տախտակ քաշել-տախտակ չինել սղոցով, 17. Ջուրը քաշվել է- վերացել, գոլորշիացել է: Ամպը քաշվել է, 18. Մարդիկ քաշվեցին իրենց տները. նա քաշվեց լեռները—հեռացավ, առանձնացավ, 19. լիքը քաշվեցին ճոնները-բարեգացան, 20. Նա վոչոխից չի քաշվում-չի ամաչում, չի ակնածում, 21. այս կտորը լրանալուց չատ է քաշվել-մաել, կարճացել, և այլն:

Բառերի զանազան առումների մեջ առանձնապես պետք է նկատի ունենալ փոխանցումը գոյականի և ածականի մեջ, այն է՝ գոյականների գործածությունն իրրեվ ածական, և ընդհակառակն. որինակ՝ առն որ, վոսկի բաժակ, քար սիրտ, ձմեռ ժամանակ, լույս աչեկ-իրրեվ առնական որ, վոսկեզեն բաժակ, քարեզեն սիրտ, ձմեռնային ժամանակ, լուսավոր աչեկ: Նույնպես՝ մութ, խավար, աուտ, ծակ, հանգիստ և չատ ուրիշ բառեր գործածվում են նաև իրրեվ ածական՝ ծաղիկ հատակ, հանգիստ տեղ, գիշեր ժամ, ապառաժ քար, հրեշ մարդ: Իսկ ածականները՝ ապրատ, մուրացկան, անասուն, թռչուն, կենդանի, սուր, գուրտ, տաք, չոր և այլն նաև գոյական են: Կան ածականներ ևս, վորոնք գոյականաբար գործածվելով առանձին նշանակություն են առանում. ինչպես ժողովրդական լեզվի մեջ «յես հիմա գրա կարմիրը կը կապեմ» (կոպտանեմ). «բարով կարմիրդ կապենք»(պսակենք քեզ): Ածականների գործածությունն իրրեվ մակրայ տես § 61.3:

66. ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԻՐՐԵՎ ՀԵՏԵՎԱՆՔ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ.—Ինչպես տեսանք, բառերի նոր նշանակությունները ծագում են պատահական նշանակությամբ գործածվելուց. իսկ այս լինում է այն պատճառով, վոր խոսողն ավելի չատ գաղափարներ ունի արտահայտելու, քան գրա համար բառեր կան, կամ ինքը գիտե, կամ թե ժամանակի ընթացքում փոխվում է նրա պատկերացումը մի առարկայի մասին,

վորով այդ առարկայի անվան նշանակությունն էլ է փոխվում: Արդ, ինչպես անհատների, նույնպես և ամբողջ ժողովրդի մեջ դարերի ընթացքում վոչ միայն պատկերացումներն են փոխվում, այլև նայելով նրա կուլտուրական առաջադիմությանը՝ առաջ են գալիս նորանոր զաղափարներ, կյանքի նոր պայմաններ ու հարաբերություններ, նորանոր իրեր, և այլն, վորանց բոլորի արտահայտության համար կամ նոր բառեր են առնվում, կամ դրածածվում են հին բառերը: Հետևաբար և բառերի նշանակությունը փոխվում է համեմատելով ժամանակի մշակութական պահանջներին, այնպես վոր կարելի է ասել, թե բառերի նշանակության փոխվելությունը զուգընթաց է միշտ պատկերացումների բազմացման և փոփոխության հետ: Որինակ՝ «նավ» բառը սկզբնապես գործածվել է մի նախնական պարզ անոթի համար, վոր է՝ ծառի հատած բունը՝ մեջը փորած, վորի մի կողմը մի կտոր տաշած, վոր բանեցրել են ջրերի վրա լողալու համար: Հետագայում ինչքան կատարելագործվել է դա, մինչև այժմյան մեծ նավերը, դարձյալ նույն անունով է կոչվել: Նույն «նավ» անունով, սակայն,—մեր մի քանի բարբառների մեջ «վակ» ձևով, վոր «նավակ» բառի սղումն է,—կոչվում է նաև ջրագացի վրայի կիսախողովակը, վոր իսկապես դրևից նախնական նավի կարմրությունն ունի, մեջը փորած հատա դևրան, վորի միջով ջուրը որրնիից իջնում է ցած: Բայց միևժամանակ նույն «նավ» անունով կոչվում է նաև այն փայտե տաշտակը, վորով բանվորները ցեխ են կրում չինության համար: Յեթե «նավ» բառը գործածվում է ջրով ճանապարհորդելու չնայած քի պահպան տեսակների համար, սկսած ամենատարած տեսակից մինչև ամենատարած ռազմանավերը,- այդ հասկանալի է, վորովհետև դրանք նույն նպատակին են ծառայում, թեպետ այդ բառի հետ կապված պատկերացումները շատ տարբեր են միմյանցից: Բայց ջրագացի «նավը» և ցեխի «նավն» այժմ ծովային մեծ նավերի հետ կապվում են միայն հնչյունների, և ով վոր չգիտե, թե ինչպես են լեզվի նախնական նավերը, նա մինչև անգամ չի կարող հնարավոր համարել, թե ինչպես ջրագացի նավը և ցեխը կրելու տաշտակը նույն անունով են կոչվել, ինչ վոր ռազմական մեծ նավերը:

Այսպես փոխվել են կամ տարբեր նշանակություններ են տարել բազմաթիվ ուրիշ մշակութական տարրականների ու արդյունքների անունները, յերբեմն նույն իսկ անտգամների կերպով. որինակ՝ «քար» կամ «կշտաքար» կոչում ենք ծանրության չափը՝ վոր նաև այն ժամանակ, յերբ յերկաթից են չինված, վորովհետև դրանք սկզբնապես քարից են յեղել, ինչպես յերբեմն այժմ էլ քարերից ենք բռնում այդ չափերը: Շատ բառերի առումներ հիշեցնում են մեզ նախնական կուլտուրական վիճակը, վորով միայն բացատրվում է դրանց նշանակությունը. որինակ՝ «կրակի գին է» նշանակում է՝ չափազանց թանկ է. վորովհետև նախնական մարդու համար չափազանց դժվար ձեռք բերելի, ուրեմն և թանկ է յեղել կրակը. իսկ ջուրն, ընդհակառակն, իրրեվ ապրուստի միջոց, հեշտ կերպով է ձարվել, ուստի և «ջրի գին է» նշանակում է՝ շատ ևժան է:

67. ՍԵՌԻ ԱՆՎԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԻՐՐԵՎ ՏԵՍԱԿԻ ՈՒ ԱՆՀԱՏԻ ԱՆՈՒՆ, ՅԵՎ ԸՆԴՀԱԿԱՌԱԿՆ.— Վերևում բերված որինակներից յերևում է արդեն, թե ինչպես ընդհանուր նշանակություն ունեցող բառերը գործածվում են նաև մասնավոր նշանակության համար իրրեվ առանձին անուն: Ամեն հատարակ անուն էլ կարող է, ինչպես ասացինք, մի վորոշող վերադրով գործածվել իրրեվ առանձին անուն, որինակ՝ առաջաստավոր նավ կամ առաջապահական նավ, առևտրական նավ, ռազմական նավ կամ ռազմանավ, հածանավ և այլն: Բայց կարող է բառի նշանակությունն այնպես փոխվել, վոր սեռի անունից առանձին և նույն իսկ անհատի անվան նշանակություն առնել՝ առանց վորևե վորոշող բառի և յերբեմն այնպես, վոր սկզբնական նշանակությունը մոռացվի: Որինակ՝ հին լեզվի մեջ «հավ» նշանակում է թռչուն. դրանից՝ հավահմա, հավորս (թռչնորս). այս նշանակությամբ նոր լեզվի մեջ կա, ավելի ժողովրդական, միայն «հավք» ձևով: Ապա այդ «հավ» բառով կոչվել է նաև թռչունների մի առանձին-հայրենի ընտանի թռչունը, թե արուն և թե էգը. ուստի ունինք «հավախոս» բառը «աքլորականչ» նշանակությամբ. բայց այժմ «հավ» նշանակում է միայն այդ ընտանի թռչունի մարին, էգը: «Հավկիթ» բառի մեջ հակառակ յերևույթին ենք առնում. սկզբնապես՝ հավի ձու, բայց շատ բարբառների մեջ նշանակում է՝ ընդհանրապես ձու, այնպես վոր ասում են նույն իսկ «ձկան հավկիթ», փոխանակ «ձկնկիթ» կամ «ձկան ձու» ասելու: «Վորձ» բառը նշանակում է ընդհանրապես արու, նաև մարդկանց համար. վորից կա հին լեզվի մեջ «որճակոտոր առնել»-արուները կտտրել. մի քանի բարբառների մեջ «վորձ» նշանակում է յերկու տարեկան արու վոչխար (վոչ խոյ). այլև «վորձակ» նշանակում է՝ աքլոր: «Ճնու»

վորով այդ առարկայի անվան նշանակությունն էլ է փոխվում: Արդ, ինչպես անհատների, նույնպես և ամբողջ ժողովրդի մեջ դարերի ընթացքում վոչ միայն պատկերացումներն են փոխվում, այլև նայելով նրա կուլտուրական առաջադիմությանը՝ առաջ են գալիս նորանոր զաղափարներ, կյանքի նոր պայմաններ ու հարաբերությունները, նորանոր իրեր, և այլն, վորանց բոլորի արտահայտության համար կամ նոր բառեր են առնվում, կամ դրծածվում են հին բառերը: Հետևվարար և բառերի նշանակությունը փոխվում է համեմատելով ժամանակի մշակութական պահանջներին, այնպես վոր կարելի չէ ասել, թե բառերի նշանակության փոփոխությունը զուգընթաց է միշտ պատկերացումների բազմացման և փոփոխության հետ: Որինակ՝ «նավ» բառը սկզբնապես գործածվել է մի նախնական պարզ անոթի համար, վոր է՝ ծառի հատած բունը՝ մեջը փորած, վորի մի կողմը միակուռ տաշած, վոր բանեցրել են ջրերի վրա լողալու համար: Հետագայում ինչքան կատարելագործվել է դա, մինչև այժմյան մեծ նավերը, գործ դրել նույն անունով և կոչվել: Նույն «նավ» անունով, սակայն,—մեր մի քանի բարբառների մեջ «վակ» ձևով, վոր «նավակ» բառի սղումն է,—կոչվում է նաև ջրագացի վրայի կիսաքողոքակը, վոր իսկապես գրեթե նախնական նավի կատարելությունն ունի, մեջը փորած հատած գերան, վորի միջով ջուրը որրնվում է նույնպես և գած: Բայց միաժամանակ նույն «նավ» անունով կոչվում է նաև այն փայտե տաշտակը, վորով բանվորները ցեխ են կրում չինարության համար: Յեթե «նավ» բառը գործածվում է ջրով ճանապարհորդելու չինված ամենագործ գանագան տեսակների համար, սկսած ամենատարող տեսակից մինչև ամենատարող ռազմանավերը,- այդ հասկանալի է, վորովհետև դրանք նույն նպատակին են ծառայում, թեպետ այդ բառի հետ կապված պատկերացումները շատ տարբեր են միմյանցից: Բայց ջրագացի «նավը» և ցեխի «նավը» այժմ ծովային մեծ նավերի հետ կապվում են միայն հնչյունների միության, և ով վոր չգիտե, թե ինչպես են լինել նախնական նավերը, նա մինչև անգամ չի կարող հասկանալ, թե ինչպես ջրագացի նավը և ցեխ կրելու տաշտակը նույն անունով են կոչվել, ինչ վոր ռազմական մեծ նավերը:

Այսպես փոխվել են կամ տարբեր նշանակություններ են ստացել բազմաթիվ ուրիշ մշակութական տարրականների ու արդյունքների անունները, յերբեմն նույն իսկ անտգիտելի կերպով. որինակ՝ «բար» կամ «կշռաքար» կոչում ենք ծանրության չափը

րը նաև այն ժամանակ, յերբ յերկաթից են չինված, վորովհետև դրանք սկզբնապես քարից են յեղել, ինչպես յերբեմն այժմ էլ քարերից ենք բանում այդ չափերը: Շատ բառերի առումներն էլ հիշեցնում են մեզ նախնական կուլտուրական վիճակը, վորով միայն բացատրվում է դրանց նշանակությունը. որինակ՝ «կրակի գին է» նշանակում է՝ չափազանց թանկ է. վորովհետև նախնական մարդու համար չափազանց դժվար ձեռք բերելի, ուրեմն և թանկ է յեղել կրակը. իսկ ջուրն, ընդհակառակն, իրրեվ ապրուստի միջոց, հեշտ կերպով է ճարվել, ուստի և «ջրի գին է» նշանակում է՝ շատ էժան է:

67. ՍԵՌԻ ԱՆՎԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԻՐՐԵՎ ՏԵՍԱԿԻ ՈՒ ԱՆՀԱՏԻ ԱՆՈՒՆ, ՅԵՎ ԸՆԴՀԱԿԱՌԱԿՆ.— Վերևում բերված որինակներից յերևում է արդեն, թե ինչպես ընդհանուր նշանակություն ունեցող բառերը գործածվում են նաև մասնավոր նշանակությամբ իրրեվ առարկի անուն: Ամեն հատարակ անուն էլ կարող է, ինչպես տեսանք, մի վորոշող վերադրով գործածվել իրրեվ առարկի անուն, որինակ՝ առաղաստավոր նավ կամ առագաստանավ, առևտրական նավ, ռազմական նավ կամ ռազմանավ, հածանավ և այլն: Բայց կարող է բառի նշանակությունն այնպես փոխվել, վոր սեռի անունից առարկի և նույն իսկ անհատի անման նշանակություն ստանա՝ առանց վորևե վորոշող բառի և յերբեմն այնպես, վոր սկզբնական նշանակությունը մոռացվի: Որինակ՝ հին լեզվի մեջ «հավ» նշանակում է թռչուն. դրանից՝ հավահմա, հավորս (թռչնորս). այս նշանակությամբ նոր լեզվի մեջ կա, ավելի ժողովրդական, միայն «հավք» ձևով: Ապա այդ «հավ» բառով կոչվել է նաև թռչունների մի տեսակը-հայոց ընտանի թռչունը, թե արուն և թե էգը. ուստի ունինք «հավաթոս» բառը «աքլորակռնչ» նշանակությամբ. բայց այժմ «հավ» նշանակում է միայն այդ ընտանի թռչունի մարին, էգը: «Հավկութ» բառի մեջ հակառակ յերևույթին ենք տեսնում. սկզբնապես՝ հավի ձու, բայց շատ բարբառների մեջ նշանակում է՝ ընդհանրապես ձու, այնպես վոր ասում են նույն իսկ «ձկան հավկութ», փոխանակ «ձկնկութ» կամ «ձկան ձու» տեսլու: «Վորձ» բառը նշանակում է ընդհանրապես արու, նաև մարդկանց համար. վորից կա հին լեզվի մեջ «որձակոտոր առնել»-արուները կտտրել. մի քանի բարբառների մեջ «վորձ» նշանակում է յերկու տարեկան արու վոչխար (վոչ խոյ). այլև «վորձակ» նշանակում է՝ աքլոր: «Ձեռ»

նշանակում և արտ գոված, հաջորդ· վանի բարբառով՝ վառիկ· ուրիշ բարբառների մեջ՝ աքլոր· վրրից՝ ճնեխառաց–աքլորականչ: «Զագ» բառը մի քանի բարբառների մեջ ոտացել և հատկապես «գոմշի ձագ» նշանակութիւնը: «Պատուղ» Այրարատյան բարբառի մեջ ոտացել և նաև այդ կերպութիւն ժամանակ աչքաթող արած պատուղը, լինի ծառապատուղ թե այլ պատուղ· դրանից «պատուղ անել» նշանակում և «ճոպաքաղ անել»: «Գրպղ» ընդհանրապես մի բան դրպղ· մանավորապես՝ հեղինակ, մատենագիր: «Կծոտող» ընդհանրապես ով որ կծոտում է· մանավորապես՝ շուն: Այսպես «մոխրաթխամած» ոտացել և ևչ բառի նշանակութիւններ, և ուրիշ չատ նմանները:

Նոյնպես առանց վրեի վերաչդ բառի, սեռի կամ տեսակի հատարակ անուններից ծագում են նաև հատուկ անունները, ինչպես՝ Ծագիկ, Աստղիկ, Գոհար, Մանուշակ, Վարդ, Հասմիկ, Համբարձում, Հարութիւն, Մանուկ, Կարապետ, Մկրտիչ, Հայրապետ, Գալուստ, Սրբուհի, Տիրուհի, Թագուհի, և այլն· Նորք, Ծագիկաձոր, Ջրաբերդ, Նորաշեն, Նորապատիճ, Քարահունչ և այլն: Սրա հակառակն է հատուկ անվան կերտութիւնը հատարակ անվան նշանակութիւնից, ինչպես՝ Մկնիկատ: Այս կարգին պատկանում և նաև նյութի անվան գործածութիւնը նույն նյութից չինված ատարկայի կամ անոթի անվան նշանակութիւնով, օրինակ՝ «պղինձ» ընդհանուր նշանակութիւնով այդ անունով մետաղը, ապա՝ մանավորապես՝ կաթսա· «վառիկ»՝ մետաղը և վառիկի գրամ· պղպեղաստիկ–պղպեղատու թուր:

Պետք է նկատի ունենալ, որ ոչ ամեն նեղ նշանակութիւնով գործածվող բառ սկզբում ավելի լայն նշանակութիւնով է գործածվել իրենց սեռի (կամ տեսակի) անուն և հետո իրենց տեսակի (կամ հատուկ) անուն: Մի անգամ որ լեզվի մեջ կան այդպիսի բառեր, որոնք լայն նշանակութիւնից անցել են նեղ նշանակութիւնի, դրանց նմանութիւնով կարող են ուրիշ բառեր հենց սկզբից նեղ նշանակութիւնով գործածվել· օրինակ՝ հատուկ անունները Տիգրանակերտ, Վաղարշապատ, Սահմանավան և այլն հենց սկզբից հատուկ նշանակութիւն են ունեցել և ոչ ընդհանուր նշանակութիւն, ինչպես այդ բառերի ստուգաբանութիւնից պիտի ստանանք: Նոյնպես «ձիաքարշ» բառն էլ ստուգաբանութիւնով պիտի նշանակեր՝ ինչ որ ձիով է քարշվում, բայց այդ բառը կազմված և հատկապես ձիով քարշվող յերկաթուղու համար:

68· ԲԱՌԵՐԻ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՄԱՆԱԿԱՆ ԶՈՒԳՈՐԴՈՒԹՅԱՄԲ.— Բառերի նշանակութեան փոփոխութեան մի ստանձին տեսակն է բառի գործածութիւնը մասնական նշանակութեամբ, այն է՝ բառի բովանդակութեան բազմաթիվ տարրերից մեկն անջատելով մյուսներից՝ առնում և իրեն սովոր բառի նշանակութիւն: Բառերի այդպիսի գործածութիւնը, որով բառի նշանակութիւնը սահմանափակվում է իսկական կամ սովորական նշանակութեան մեկ կողմի համար միայն, հիմնվում է նմանական բաղդատութեան վրա· մի տարրական վրեն և հատկութիւնը գուզորդութեամբ հիշեցնում է մեզ մի ուրիշ տարրական ծանոթ վրեի հատկանիշը, և այս յերկրորդ տարրական անունով կոչվում և տարբեն տարրական, կամ նրա հատկանիշը: Բաղդատութիւնը լինում է սովորաբար «նման», «պես», «ինչպես» բառերով: Յերբ մեկի համար ասվում է՝ «այսինչ մարդը կեղտոտ և ինչպես խոզ», կամ «նա խոզի պես կեղտոտ է», այդ յերկուսի, խոզի և մարդու, նման հատկութիւնները բաղդատում ենք իրար հետ: Բաղդատութիւն ենք անում դարձյալ, յերբ ասում ենք՝ «այսինչը խոզի պես է»· այս դեպքում էլ հատկանում ենք խոզի վոչ բոլոր հատկութիւններն, այլ նրա բնորոշ հատկութիւններից մեկը: Նույնն ավելի կարճ ասում ենք՝ «այսինչը խոզ է»: Այս վերջին դեպքում այլևս բաղդատութիւն չենք անում, բայց և այդ խոսքով այդ մարդուն յերբեք չենք նույնացնում խոզի հետ և վոչ էլ խոզ տեսակի մեջ դրնում նրան ու խոզի բոլոր հատկութիւնները վերագրում նրան,– ինչպես՝ յերբ ասում ենք՝ «ծիծեռնակը թռչուն է», թռչուն տեսակի ընդհանուր հատկութիւնները վերագրում ենք ծիծեռնակ տեսակին,–այլ միայն մեր մտքում կատարված բաղդատութեան հետևանքն ենք հայտնում առանց բաղդատական ձևի, այդ մարդուն վերագրելով խոզի հատկութիւններից մեկը, սովորաբար ազատութիւնը: «Խոզ» բառն, ուրեմն, գործածում ենք այդ բառի բովանդակութեան մի մասի համար, որով այդ բառն ստանում է նոր նշանակութիւն: Բառի այսպիսի մասնական նշանակութեամբ կիրառութիւնը կոչվում է բառի փոխաբերական նշանակութիւն: Այսպես նաև, օրինակ, յերբ ասում ենք «առյուծանման Մհերը», բաղդատութիւն ենք անում. բայց յերբ ասում ենք՝ «առյուծ Մհերը», այլևս բաղդատութիւն չենք անում, այլ բառը գործածում ենք փոխաբերական իմաստով: Ցերկու դեպքում էլ չեն ստ–

նվազում «տալուց» կենդանու բոլոր հատկությունները, այլ նրանցից մեկը մյուսից ուժը կամ անվերջությունը:

Փոխաբերությունը հաճախ լինում է զգայարանները պատկերավոր, ցայտուն արտահայտելու համար, և բանաստեղծները սիրայորալ գիմում են այս ձևին: Բայց չատ անգամ էլ փոխաբերությունը գործածվում է արտահայտելու համար մի զազափար, որի համար առանձին բառ չկա. օրինակ՝ անտառը քնած է. այս լեռնվակայության, հուսները խորտակվեցին. հարբել եմ սիրով և այլն: Անտառի մի պրոցեսը, որի համար առանձին բառ չկա, արտահայտում է մարդուս հատուկ «քնել» բառով. նույնպես սիրուց ունեցած հոգեկան վիճակին՝ ուրիշ բառ չլինելով՝ արտահայտում է գինուց ունեցած վիճակին հատուկ «հարբել» բառով: Այսպես և հետևյալները:

Ցերկու դեպքում էլ փոխաբերությունը,—լինի բանաստեղծական պատկերավորության համար թե հատուկ բառ չլինելուց գործածված,— կարող է պատահական մնալ, կարող է նաև գործածվելով ընդհանրանալ և մտնել սովորական լեզվի մեջ, ինչպես օրինակ՝ լեռնվում գրվածները այնքան սովորական են, որ ամենքս էլ գործ ենք ածում: Բայց ինչքան էլ սովորական դառնան բառերի այսպիսի կիրառությունները, քանի դեռ խոսողը գիտակցում է, որ ինքն իր մտքի առարկայի համար գործածում է մի ուրիշ առարկայի հատուկ բառը,—այսպիսի կիրառությունները, ինչպես են լեռնվում գրվածները, մնում են դեռ փոխաբերական, այսինքն բառը մնում է նույն բառը, միայն առարկը առումով գործածված: Իսկ երբ բառի իսկական նշանակությունը, որ առիթ է ավել բազդատության, գեռ մղվելով մոռացվում է, և կամ փոխաբերությունն այնքան մաշվում է, որ խոսելու ժամանակ այլևս չենք գիտակցում, թե գործածված նշանակությունը փոխաբերական է,—այն ժամանակ առաջ է գալիս բառի բազմիմաստություն և նույն իսկ առարկը բառ: Որինակ՝ «լույսը բացվել», «մութն ընկնել», «սիրտը նեղանալ», «մեկին նեղություն տալ» կապակցությունների մեջ այլևս անգիտալի չեն փոխաբերությունները: Արդարև, մենք դեռ գիտում ենք, որ այս «նեղանալ» «նեղություն» բառերը նույնն են ինչ որ «տեղի նեղություն», «նեղ դուռ» կապակցությունների մեջ. բայց «տեղի նեղություն», «գոռան նեղություն» և «սրտանեղություն» ու «մեկին

նեղություն տալ» կապակցությունների մեջ այդ միևնույն բառը տարբեր նշանակություններ ունի: Իսկ «լույսը բացվել», «մութն ընկել» կապակցությունների մեջ փոխաբերությունն այնքան մաշված է, որ նույնիսկ մոռացված է. մենք այլևս չենք մտածում վոչ «բացվելու» և վոչ «ընկնելու» մասին. այլ այդ բառերն առացել են ընդհանուր վերացական բնավորություն, ինչպես յեթե ասեյինք «լույս գարձավ», «մութ գարձավ», կամ մի բառով՝ «լուսացավ», «մթնեց»: Առնենք մի ուրիշ որինակ: Ցերբ ասում ենք, «եչ մարդ», «նա եչ է, բան չի հասկանում», ամենքս էլ զգում ենք, որ «եչ» բառն այստեղ իսկական իմաստով չի գործածվում, այլ մտանական կամ փոխաբերական նշանակությամբ իրերի հիմար: Բայց ահա նույն «եչ» բառով կոչվում է նաև գութանի մասերից մեկը, որ մի յերկու բարբառի մեջ կոչվում է նաև «խարսան». դա գութանի այն հատ ու յերկայն կորնթարդ փայտն է, որի վրա հատատաված են գութանի մյուս մասերը, որի վրա և ամրացնում են լուծը. «եչն ատավ. յես որ ըլեմ վոչ, գութանը վարիլ չի» (առած): Այս գործածությամբ այնքան մթնած է փոխաբերությունը, որ նույն իսկ նոր բառ է առաջ յեկել: «Եչ» կոչվում է նաև ջութակի այն փոքրիկ մասը, որի վրա հենվում են լարերը:

Բառերի նշանակության այսպիսի փոփոխությունն առաջ է գալիս բազմապան կերպով. վորովհետև առանձին անհատների բառական պատկերացումներն, ինչպես տեսել ենք, մեկմեկուց տարբեր են. մեկ անձի համար չհասկացած և լինում պատկերացման մի կողմը, մյուսի համար՝ մի ուրիշ կողմը: Ուստի, որինակ, նույն «խոզ» բառի համար մի քանի տարբեր մտանական նշանակություններ կարող են առնվել. ինչպես՝ «Այս տուն չէ, խոզարան է», այսինքն կեղտոտ է: «Խոզ յերեխա յե, այնքան ատում եմ՝ մռաս արի, չի գալիս», այս խոսքի մեջ «խոզ» նշանակում է՝ անհամբույր, մարդու չմտածող: «Այնքան կերել է, որ խոզ է գարձել», այսինքն չատ է գիրացել:

Բառերի այսպիսի կիրառությունն առաջ է գալիս սովորաբար առարկաների արտաքին կերպարանքի, ձևի, դրության կամ վերին ուրիշ հատկության նմանության համար. ինչպես՝ աչք, իսկական նշանակությամբ մարդու և կենդանիների համար, իսկ փոխաբերական իմաստով ասում ենք՝ պահարանի աչք, ջրաղացի աչք

և այլն: Նմանպես՝ գլուխ, մարդու գլուխ, սարի գլուխ, չաքարի գլուխ, սոխի գլուխ, կաղամբի գլուխ, ամանի գլուխ – (ամանի գլուխը դատարկվել է), գլխածքի գլուխ, այդն գլուխ և այլն. գլուխ– նաև սկիզբ (են գլխեն, գլխից սկսել): Պոչ՝ շան պոչ, հագուստի պոչ. թիկունք՝ մարդու, աթոռի, լեռան և այլն: Թեր՝ վարդի, թղթի և այլն. նաև՝ լրագրի. և շատ նմաններ: Նույնպես և տարբեր զգայարանների ըմբռնումները նույն բառով են արտահայտվում, ինչպես՝ քաղցր համ, քաղցր (անուշ) հոտ, քաղցր հայացք, քաղցր ձայն և նմանները. տեղի տարածության և ժամանակի համար նույն բառերն ենք գործածում՝ մի տարի առաջ, յերկու քայլ առաջ. կարճ տարածություն, կարճ ժամանակ. յերկար (ավելի յերկարն) ճանապարհ, յերկար ժամանակ: Այսպես և ֆիզիկական ըմբռնումների բառերը հոգեվոր և բարոյական նշանակությամբ, ինչպես՝ լույս ֆիզիկական և լույս մըտավոր. խավար ֆիզիկական և խավար անգիտության. ելեկտրաէներգիա, լուսավորության կոմիսար. վայրկյան այրվում է, սիրտս այրվում է. վեղեցիկ տուն, վեղեցիկ միտք. մանուկ սենյակ, մանուկ զգացմունք. կծու տաքանոց, կծու խոսք. այս մարդը սրտի թրթռուց ունի, այս մարդը սիրտ չունի, սիրտս չարեց, սիրտը կտրվեց. համարիր, անս քանիսն է, լավ եմ համարում գնալ, քան...: Յերբեմն այսպիսի գործածություններից, յերբ փոխաբերություններն զգալի չէ, առաջ են գալիս բոլորովին տարբեր բառեր, որինակ՝ ռուլա՝ 1. բամբակի քուլա, զգած բամբակի ձվաձև հատ փաթաթ, 2. ձյան քուլա–փաթիլ. քուլա–քուլա ձյուն է գալիս, 3. ամպի կամ ծխի հոդ. քուլա քուլա ծուխ էր բարձրանում, 4. ոսկանդի խոշոր կտոր. Հմմտ. Յերեմյանում՝ «սոսով» բառը «ոսկանդ» նշանակությամբ. 5. ջրի հոդ հոսանք:

69. ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿԱԿԻՑՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԱԿԻՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՅՈՐԴԱԿԱՆ ՋՈՒԳՈՐԴԱԿԻՑՈՒԹՅԱՄԲ:—Այս դուգորդությամբ բառի նշանակությունը մի առարկայի գաղափարից անցնում է մի այնպիսի առարկայի գաղափարի, որ տեղով, ժամանակով, պատճառով կամ վրան ուրիշ առնչությամբ կապվում է առաջինի հետ: Բառի նշանակության այս փոխոխությունը հարատևության մեջ կոչվում է փոխանանունություն (մետոնիմիա), որով ինչպես բացատրում են, պատճառի անունը դրվում է հետևանքի անվան փոխանակ, հետևանքը՝ պատճառի, հեղինակի անունը՝ հեղինակության, գրքի. պարունակողը պարունակվածի կամ ընդհակառակն և այլն: Որինակ՝ Խորենացի կարդալ, Խորենացու մեջ գրված է, փոխանակ՝ Խորենացու գրած հայոց պատմության: Նույնպես ասում ենք՝ «մի բաժակ խմել», այստեղ պարունակող «բաժակ» բառը դրվում է իր պարունակած նյութի անվան տեղ: Այսպիսի պատահական կիրառությունները առհասարակ մնում են իրրեվ մտածողության ձևերը. այդ հանգամանքով դրանք մի նոր առանձին նշանակություն չեն ստանում,—ինչպես բաժակ բառը վերեվի գործածության մեջ, որը կարող է լինել՝ մի բաժակ ջուր, մի բաժակ թեյ և այլն,—բայց կարող են յերբեմն նաև սովորական դառնալ որոշ դաշափարներ արտահայտելու համար և առնվել իսկապես մի նոր նշանակությամբ: Բերենք մի քանի այդպիսի կիրառություններ:

Ա) Տեղը և տեղում յեղողները նույն անունով. որինակ՝ Տուն նշանակում է բնակարան իր մասերով, այլև մի տան մեջ բնակվողները, ընտանիք: Երջապատ—մի բանի շուրջ յեղած տեղվանքը, այլև նույն տեղում յեղողները:

Բ) Առարկայի մասի անունը ամբողջի անվան տեղ և ընդհակառակն. որինակ՝ Տուն նշանակում է ընդհանրապես ամբողջ բնակարանն իր մասերով մարդկանց և անասուններին համար, բայց մեր գյուղերում այդ բառով կոչվում է մասնավորապես այն սենյակը, ուր կենում են տանեցիք: Տուն՝ նաև վաճառանոցների մասերը: Այսպես և հին լեզվի մեջ երդ, որ նշանակում է տան առաստաղից բացված լուսամուտ, գործածվում է նաև «երդիկ» ձևով «կատուր» նշանակությամբ, ասած՝ նաև ամբողջ տան, այլև ընտանիք բառի նշանակությամբ: Սույն նշանակությունը նոր լեզվի մեջ առացել և ծուխ բառը. որովհետև ամեն տան մի մեջ առացել և ծուխ բառը. որովհետև ամեն տան մի երդիկից ծուխ է դուրս գալիս: Այսպես և «գլուխդ ողջ լինի» փոխանակ «դու ողջ լինես»: Հինգ գլուխ տավար, չորս թեվ հավ, վեց բևռան յերեխա և նմանները:

Գ) Հատկության վերացական անունները հատկության ունեցող առարկաների անվան տեղ. որինակ՝ նորություն—նոր լինելը, նորի հատկություն, այլև նոր բան, նորույթ: Հարբություն—հարթ լինելը, այլև հարթավայր: Այսպես և՝ բարձրություն, խորություն, մեծություն և այլն: Հաճախ այսպիսի վերացական անունները, ինչպես և ուրիշ անունները, գործածվում

են իրրեւ հավաքական անուն, օրինակ՝ բանվորություն, ուսանողություն, աշակերտություն, դյուղացիություն, ազնվականություն, հասարակություն, բազմություն, ղեսպանություն, դերություն և այլն:

Դ) Գործողության անուններըը գործող անձերի համար հավաքական նշանակությամբ՝ օրինակ՝ խորհուրդ—խորհրդակցություն, խորհուրդ անելը, այլև խորհրդին մասնակցող անձերի համախմբությունն, ինչպես՝ մանկավարժական խորհուրդը վճռեց: Այս բառը նշանակում է նաև դիտավորություն, դաղանիք: Այսպես և ժողով՝ ժողովվելու, ժողով անելու գործողություն, այլև ժողովականների համախմբություն, ժողովը վորոշեց. կառավարություն մի ասն, մի յերկրի, այլև Հայաստանի կառավարությունը վճռեց— իրրեւ կառավարության ադամները:

Ե) Գործողության անունն իրրեւ առարկա, լինի գործողության արդասիք թե կրող առարկա, մեջոց և այլն. օրինակ՝ հունձ՝ հնձելու գործողություն, հունձը սկսվել է, հնձի ժամանակ, այլև հնձի արդասիք, այս տարի լավ հունձ ունեցանք: Այսպես և քերք, ապրուստ, աճ և այլն: Վերջին բառը նշանակում է՝ ածելու գործողություն, աճելություն, այլև ածած, ծառի տեր, ճուպը. ձմերկներ, դդմենու, վարունգենու ածած թփերը, թաղերը: Մուտք, ասիցք, յելք, եջք—մտնելու, անցնելու, յելնելու, իջնելու գործողություն, այլև այդ գործողությունների ճանապարհը: Գնացք—գնալը, այլև ճանապարհ, հետք. հին լեզվի մեջ նաև վարք, կյանք. նոր լեզվի մեջ նաև՝ յերկաթուղու մի անպամիջ գնացող կառախումբ:

Զ) Գործողի անունը այն մեջոցի կամ գործիքի անվան վերածական, վորով կատարվում է գործողությունը. օրինակ՝ գրիչ նշանակում է ընդհանրապես գրող, ապա՝ գրելու գործիքը, յերկաթե գրիչ. իսկ «նա լավ գրիչ ունի», «սուր գրիչ ունի», նա լավ վոճ ունի: Վարիաւտ—քար կարող մարդը և կարելու գործիք և այլն:

Է) Գատճառի անունը հետևանքի անվան վերածական՝ օրինակ՝ վատառակ նշանակում է՝ գործ, ծառայություն, չահ. վատառակել—գործել, ծառայել, չահել, հոգնել. վորովհետև գործողը և՛ ծառայում և չահվում է, և գործելուց հոգնում: Շատանալ— բազմանալ, բավականանալ, գոհանալ. վորովհետև չատը բավականանում է, իսկ բավականացումը գոհության և պատճառում: Սուղ—

կաթ, վոգը, բարակ, նուրբ, քիչ, թանկ. վորովհետև ինչ վոր հարճ է՝ և վոգը է և քիչ. ինչ վոր քիչ է՝ թանկ է:

Շատ անգամ դժվար է վորոշել թե բառի սկզբնական կամ իսկական նշանակությունը վորն է և թե ինչպիսի զուգորդություններով բառը ներառնոր նշանակություններ է ստանում. վորովհետև մի ինուն բառը կարող է բազմապան կերպերով անցնել մի նշանակությունից մյուսին, մերթ նշանակության լայնացումով, մերթ նեղացումով, մերթ նմանական, մերթ վորևե կյանքական զուգորդություններով: Բերենք մի քանի օրինակներ ևս: Ճաշ. 1. Ճաշելու գործողությունը, 2. կեսոր, վորովհետև ճաշը սովորաբար կեսորին ենք անում. որը ճաշ դառավ, այսինքն՝ կեսոր: Բառբառների մեջ նաև՝ 3. կերակուր ընդհանրապես և կամ հատկապես մի ստանձին տեսակի կերակուր. ճաշ ուտել—կերակուր ուտել. թանով ճաշ, մսով ճաշ, կաթնով ճաշ և այլն: Հաց՝ 1. սովորական նշանակությունից զատ նաև՝ 2. ճաշ, հացկերույթ. հաց ուտել-ճաշել, ընթրել. վորովհետև ուտելիքների մեջ հացն ամենամեծ տեղն և բռնում: Ապա նաև՝ 3. կերակուր, հացի դդալ—կերակրի դդալ, 4. ապրուստ, ապրելու միջոց, նա հացի տեր դարձավ, 5. խնճույք, ուրախություն, 6. մեղրի պան, մեղրահաց, 7. հացով մարդ—հյուրասեր, աստամաճեռն: Սեղան՝ 1. սեղան սովորական նշանակությամբ 2. հացի սեղան, սեղանի նստել, զավակական՝ «սեղան-տախտակ», 3. կերթակուր, հաց ուտելը, վորից սեղանատուն-ճաշարան, 4. զոհի սեղան, բեմ: Գիր՝ 1. տառ, 2. նամակ, 3. վորևե գրություն, 4. կախարդական հմայք, գիր անել: Թուղթ՝ 1. թուղթ, սովորական նշանակությամբ, 2. նամակ, գիրք թղթից, 3. վիզատոմպի և նմանները: Ձիկ՝ չուր տալ մի անասունի, 2. վառոդել, 3. հերքել: Ձեռ՝ 1. մարդու ձեռք, 2. իշխանություն, իրավունք. նրա ձեռքից պրծա. նրա ձեռքն է, ձեռքի տակ է. իմ ձեռքիս չի—չեմ կարող, 3. գիր. նրա ձեռքը պարզ չէ. այս ում ձեռքն է, 4. համալիր, կոմպլեկս. մի ձեռք հագուստ: Ճուտ՝ 1. ճագ կենդանիների, նաև մարդու, 2. ճուտեր կամ ճուլափակ—չափկի և այլի կոդերին, քղանցքին ձգած ու կարած քառանկյունի վոգը կտորը, վոր ուրիշ բարբառներում ասվում է «գուսպակ». ճուտ է ուզում, ճուտ դցել: Ձագ՝ 1. ընդհանրապես կենդանիների ճագ, նաև մարդու համար. վորից՝ անեծագ. 2. մանավորապես գոմշի ճագ, վորից «ճագատել» բայը միայն գոմշի համար, 3. մեղվի ճագ, ճագուց մեղը, ճագի

մեզը, ձագ ասել–ձագ հանել (մեկի մեզուելի համար), 4· վա–
ռել, 5· մանր թռչուններ և ապա ընդհանրապես թռչուններ, 6·
ճնճղուկ, ձագի լեզու կամ ճնճղկան լեզու, ծաղապաչար (բույս),
7· աղբիկ, նաև աբեզածաղ, 8· վարտիքի և անգրավարտիքի ձա–
գը, ազվեսուկը–յեռանիկյունի կտոր՝ լայնացնելու համար: Չմոռա·
ցուտը չափիկ, 9· վարակիչ վերքի չուրջն յուղած յերկրորդական
պղտիկները· 10· ձագավ ոյուն, ձագ ոյուն–կիսաոուն, փոքր ոյու–
ներ, որը առչեզ դնում են պլեսավոր ոյան յերկու կողմից՝ իրրեվ
նեցուկներ, 11· ձագ մաճ կամ մաճապրեր–գութանի մաճի հետ ա–
չեզ գրած վայրը և այլն· Նաև՝ «Ձագ» հատուկ անուն գյուղի
(ծագած և «Ձագավան» բառից): Ոլոսի—1· հնձած յորեն, գարի,
որ թափված կամ դիզած և առանց ծեծելու, քաղաչ, 2· ոլոսն
բարձած սայլը, 3· յորենի, գարու խուրձ, հին լեզվի մեջ «ոլոշ»,
4· հունձք:

70· ԴԱՐՁՎԱԾՆԵՐ:—Վոչ միայն առանձին բառերի նշանակու–
թյունն և փոխվում, այլ նաև բառերի կապակցություններին: Ին–
րանք նույնիսկ սկզբում միայն պատահաբար են առնվում նոր
նշանակությամբ, բայց այս վերջինը կրկնվելով՝ դառնում է սո–
վորական: Բառերի այսպիսի նորմասոս կապակցություններին
սովորաբար կոչվում են դարձվածներ, ոորանք, ասակաց, մի բառի
նշանակությունն են սոսնում և կարող են նաև մի բոլոր բուն հա–
մարվել: Որինակ՝ յերբ մեկը ձեռը մի բանի, դեղաբ, սեղանի
կանում ենք իսկական նշանակությամբ· Նա, վորին ուղղված է
խոսքը, ձեռքը հեռացնում կամ բարձրացնում է սեղանից: Բայց
նույն խոսքն սոսնց «ձեռք» բառի վրա հոդ դնելու, «ձեռք քաշիր
սեղանից», ենթք մոսծում իսկական նշանակությամբ, թե ձեռ–
քը սեղանի վրա դրված է և լողը պետք է ձեռքը յես սոսնի· այլ
նշանակում է՝ թողնել, լքել մեկ բան, զղջալ մի բան ո–
նելուց, հրաժարվել, յես կանգնել մի բանից, մի բան անելուց·
Այս նոր նշանակությունն սոսցել է վոչ «ձեռք» բուն առանձին,
վոչ էլ «քաշել» բառը, այլ յերկուսը միասին՝ «ձեռք քաշել» այն էլ
բացատական ինդրով· Որովհետև սույն այս բառերի կապակցու–
թյունը մի սրական ինդրով՝ «ձեռք քաշել մի բանի, մի թղթի»·
բոլորովին ուրիշ նշանակություն ունի, այն է՝ սոսրագրել: Այս–
պես բազմաթիվ բառական կապակցություններ սունեն մի նոր վոչ–

ֆիզիկական նշանակություն, ինչպես՝ «ձեռքը լաց», այլև բոլոր
ձեվով՝ «ձեռնոսաց» նշանակում է՝ սոսոս, սոսոսաձեռն· ձեռքը
լիքիվ, վոսը թևքիվ–բարեհաջող, վոսը ծանր— անբարեհաջող·
սրինակ՝ բժշկի վոսը թևքիվ եր, հիվանդը չատ լավացավ: Յերբ–
մեկի ընկնել– յերեսից գրկվել, ապա՝ հարգը, պատիվը կորցնել
մեկի մոտ, սասլի դառնալ: Յերես սունենալ—վարկ, համարում ու–
նենալ· Նա վոչոքի մոտ յերես չունի, կամ յերեսսունկ չունի—պա–
սվով, համարձակություն չունի: Յերես սալ–չատ սիրելով համար–
ձակություն սալ, ապա՝ չվարցնել· անամոթացնել· յերես սա–
նել— չատ սիրվելուց համարձակ դառնալ, ապա՝ վիշանալ·
պրշտանալ: Մի սրիշ կողմից՝ «յերես» բառն սոսցել
և «ամոթ» բառի նշանակությունն, ինչպես՝ աներես–ա–
նամոթ: Յերես պոկռնել (թևքել, չատ սալ) մեկից—
սյլևս չսիրել, սևսնել չսզել, արհամարհել մեկին:
Ձեռ(ք) առնել մեկին—ծաղրել·պլսել սալ մեկին—պլսով բարեվել·
ձեռք սալ մեկին—ձեռքը ձեռքի մեջ դնելով բարեվել և այլն: Մի–
նույն դարձվածը, նույն իսկ միևնույն հոլովով ինդրի հետ կա–
պրտ և մի քանի նշանակություն սունենալ· ինչպես՝ «ձեռք սալ մե–
կին, մի բանի» նշանակում է նաև՝ ձեռքով դիպչել մեկին, մի բա–
նի, որինակ՝ նրան ձեռք մի սա, հիմա կքնի, այլև՝ ձեռնասուն,
ձեռնասու, չահախեա լինել, ինչպես պարապ մարդը ձեռք չի
սալ: Աոաոսի ժամանակ սովորական եր լսել հետևյալ խոսքերը·
—Տասը պակաս, սասլի՞ս ես· դի՛ ձեռքդ սուր (իսկական նշանա–
կությամբ· առավոսի ժամանակ ձեռքը դնողի ձեռքի մեջ դնելը
համաձայնության նշան է):—Չե՛, յեղբայր, այդ դնավը ձեռք չի
սալ» (ձեռնասու չի): «Ամբողջովը ձեռք կաս» նշանակում է նաև՝
հմոսակ, կրթավե, բանիման է:

Վերջին առումների մեջ «ձեռք սալ» կապակցության նշանա–
կությունն այնպես է փոխվել, վոր այլևս չենք մոսածում «ձեռք»
բառի վրա և մինչև անգամ, յերբ առանձին ուշադրություն ենք
պարձնում այդ դարձվածի վրա, դժվարանում ենք բացատրել, թե
ինչ պատճառներով «ձեռք սալ» սոսցել է՝ նշանակելու,
ոգտակար և բանիման լինելու նշանակությունը: Գրաբարում «ձեռն
սալ սմեք» (ձեռք սալ մեկին) նշանակում է ոգնել, ձեռնասու
—ոգնող, ձեռնասուություն–ոգնություն: «Ձեռք սալ» կապակցու–
թյան անցումն այս նշանակությանը՝ հասկանալի է· վորովհե–

տեվ մեկին ընկած տեղից հանելիս՝ ոգնելու համար՝ խնդրելս ձեռքներս տալիս ենք նրան և բռնում բարձրացնում: Այսպես և նոր լեզվի մեջ՝ «ձեռք մեկնել մեկին» նշանակում է՝ ոգնել մեկին: Ապա «ոգնել» նշանակությունից այդ «ձեռն տալ» կապակցությունը բնականաբար անցել է «ոգանել», «ոգուտ լինել» նշանակությանը· վորովհետև մեկին ոգնելը և ոգանել, ոգուտ տալ է, ինչպես և գրաբարում «օգնել» բայը առացել է «ոգուտ տալու» նշանակությանը, «օգնէ» նշանակում է՝ ոգուտ է, կոպտ: Այսպես ուրեմն «ձեռն տալ» առացել և նախ՝ «ոգնել» բառի նշանակությանը, և ապա՝ սրանից անցել է «ոգուտ լինելու» նշանակությանը· բայց վորովհետև նոր լեզվի մեջ «ձեռն տալ» կապակցության համար չի մնացել «ոգնելու» նշանակությունը, ուստի առանց գրաբարի այդ նշանակության՝ աչխարհաբարով միայն մոռին և մնում, թե ինչպես ձեռք տալ կապակցությունն առացել և «ոգտակար, չահավետ» լինելու իմաստով (§ 80·3):

71· ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ:— Բառերի նոր նշանակությունները չեզքեմն այնքան հեռանում են սկզբնականից, վոր մեր գիտակցության մեջ այլևս չեն կազմում իրար հետ իրերի նույն բառի մի հիմնական ընդհանուր նշանակության փոփոխություններ· այլ համարվում են հնչյուններով նույն, բայց միմյանցից անկախ և տարբեր բառեր—համանուններ: Առանձին ուսումնասիրությունը միայն կարող է ցույց տալ, վոր համանուն բառերը հաճախ նույն ծագումն ունեն, ինչպես են, որինակ հետևյալները· փող նշանակում է՝ 1· խողովակ (չեզնդի և նման բաներին), 2· հովվական սրինգ, 3· դաւնա, 4· կոկորդ, 5· վիզ (վորից՝ վզպատ, վզգաւել—վիզը կարել), 6· բիթի խոռոչ (բիթափող), 7· վարաիքի փոքր, 8· նեղ անցք, վտակ (փողան),—բոլորը ծագել են հիմնական խողովակ նշանակությունից: Բարձ նշանակում է՝ 1· գլխատակի բարձ, 2· նստարան (հնումն նստում էին բարձերի վրա), 3· պատիվ, իշխանություն (ծագած է թագավորի մոտ նստելու բարձ ունենալուց, վորից և բարձակից—աթոռակից, պատվակից), 4· ոզոր, նստատեղ (վորովհետև ծալապատիկ նստում են ոզորների վրա), 5· ալան գլուխ—գլխափայտը, վոր դնրանը կրում է իր վրա, 6· ամլի բարձ—առնդների տակ դրված մոտերը, 7· յուռանկյունու

և ուրիշ ձևերի խոլխոլ,—բոլորը ծագած են մի հիմնական նշանակությունից՝ բառնալ բայի բարձ բնից, վոր է՝ կրել, վրան ունենալ:

Կան համանուններ էլ, վորոնք ծագում են տարբեր բառաձևության պատահական նույնացումից, ինչպես՝ անցավ—առանց ցավի, և անցավ–անց կացավ, կամ բոլորովին տարբեր բառեր են, տարբեր արմատներից, որինակ՝ փող (խողովակ) բառի հետ համանուն է փող բառը դրամ նշանակությամբ, վոր բոլորովին ուրիշ ծագում ունի: Այսպիսի համանուններ են նաև՝ այր—1· ոգոտ մարդ և 2· քարայր· մայր—ծնող մայր և 2· մայր ծառ· մոր—1· ճահիճ և 2· մայր բառի սեռական–տրական հոլով· կույս—1· աղջիկ և 2· կողմ (վորից կուսակալ), թեր— 1· կանաչեղեն (լիարմ և չորացած)«թերթ» բառից և 2· կողմ (թեր և գեմ լինել)· հար (գրաբար՝ յար)—1· կից, 2· միշտ: Կան մի քանի այնպիսի համանուններ էլ, վորանք հին գրական լեզվի մեջ առուգրաբանորեն և նշանակությամբ իրարուց անկախ բառեր են և տարբեր կերպով էլ արտասանվել և գրվել են· բայց հնչափոխությամբ վաչնչացել և գրանց արտասանության տարբերությունը, գրանք գարձել են համահնչյուն, նոր ուղղագրությամբ նաև համագիր համանուններ: Դրանք են՝ սեր—1· սիրել (հին ուղղ· սէր), սիրվել, սերտուղ· հարկ—1· տան հարկ (հին ուղղ· յարկ), 2· տուրք· մեզ—1· միզելը (հին ուղղ· մէզ), 2·մենք բառի տրական հոլովը·—հոտ—1· վոչխարի հոտ (հին ուղղ· հօտ, հաւտ), 2· վարդի հոտ·պետ(ի)1· պետուչք (հին ուղղ· պէտ(ք), 2· մեծ· գեր—1· չաղ (հին ուղղ· գէր), 2· բարձր, վեր (գերադանց):

72· ՆՈՒՅՆԱՆԻՇ ԲԱՌԵՐ:—Լեզվի զարգացումը առաջ է բերում մի կողմից՝ բառերի տարբեր նշանակություններ և նույն իսկ համանուններ, մյուս կողմից՝ նաև նույնանիշ բառեր, վորանք նույն նշանակությունն ունեն, բայց հնչյուններով տարբեր են և տարբեր էլ բառեր են: Նույնանիշներն առաջ են գալիս գանազան հանգամանքներով: Լեզվի մեջ արգեն լինում է մի բառ, բայց նույն նշանակության համար մի ուրիշ նոր բառ է մտնում կամ ուսյալ լեզուներից, կամ ուրիշ բարբառներից, կամ թե խոսողը,—ոչ պատճառով վոր չգիտե լեզած բառը, կամ խոսելիս չի հիշում, և կամ վորևե ուրիշ պատճառով,—կազմում է մի նոր բառ, վոր

տեվ մեկին ընկած տեղից հանելիս՝ ոզնելու համար՝ խոսակցական ձեռքներս տալիս ենք նրան և բռնում բարձրացնում: Այսպես և նոր լեզվի մեջ՝ «ձեռք մեկնել մեկին» նշանակում է՝ ոզնել մեկին: Ապա «ոզնել» նշանակությունից այդ «ձեռն տալ» կապակցությունը բնականաբար անցել է «ոգտել», «ոգուտ լինել» նշանակությանը· վորովհետև մեկին ոզնելը և ոգտել, ոգուտ տալ է, ինչպես և գրաբարում «օգնել» բայը ստացել է «ոգուտ տալու» նշանակություն, «օգնէ» նշանակում է՝ ոգուտ է, կոգտ է: Այսպես ուրեմն «ձեռն տալ» ստացել է նախ՝ «ոզնել» բառի նշանակությունը, և ապա՝ որանից անցել է «ոգուտ լինելու» նշանակությանը· բայց վորովհետև նոր լեզվի մեջ «ձեռն տալ» կապակցության համար չի մնացել «ոզնելու» նշանակությունը, ուստի ստանց գրաբարի այդ նշանակության՝ աշխարհաբարով միայն մութն է մնում, թե ինչպես ձեռք տալ կապակցությունն ստացել է «ոգտակար, չահավետ» լինելու իմաստով (§ 80·3):

71· ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ:— Բառերի նոր նշանակությունները յերբեմն այնքան հեռանում են սկզբնականից, վոր մեր գիտակցության մեջ այլևս չեն կապվում իրար հետ իրերի նույն բառի մի հիմնական ընդհանուր նշանակության փոփոխություններ· այլ համարյում են հնչյուններով նույն, բայց միմյանցից անկախ և տարբեր բառեր—համանուններ: Առանձին ուսումնասիրությունը միայն կարող է ցույց տալ, վոր համանուն բառերը հաճախ նույն ծագումն ունեն, ինչպես են, օրինակ հետևյալները· փող նշանակում է՝ 1· խողովակ (յեղեգնի և նման բաներից), 2· հովվական սրինգ, 3· զուռնա, 4· կոկորդ, 5· վիզ (վորից՝ փողփող, փողանել—վիզը կորել), 6· բիծ խոտոչ (բիծավոր), 7· վարսիքի փողք, 8· նեղ անցք, փողոց (փողան),—բոլորը ծագել են հիմնական խողովակ նշանակությունից: Բաւթ նշանակում է՝ 1· գլխաոսկի բարձ, 2· նռատարան (հնումն նռաուտ էլին բարձերի վրա), 3· պատիվ, իշխանություն (ծագած է թագավորի մոտ նռանելու բարձ ունենալուց, վորից և բարձակից—աթոռակից, պատվակից), 4· ապրի, նռատարկ (վորովհետև ծալապատիկ նռաուտ են ապրների վրա), 5· սյան գլուխ—գլխափայտը, վոր գերանը կրում է իր վրա, 6· ոտյին բարձ—ոտներին տակ դրված մահերը, 7· յեռանկյունու և ուրիշ ձևերի խարխափ,—բոլորը ծագած են մի հիմնական նշանակությունից՝ բառնալ բայի բարձ բնից, վոր է՝ կրել, վրան ունենալ:

Կան համանուններ էլ, վորոնք ծագում են տարբեր բառաձևերի պատահական նույնացումից, ինչպես՝ անցավ—առանց ցավի: և անցավ–անց կացավ, կամ բոլորովին տարբեր բառեր են, տարբեր արմատներից, օրինակ՝ փող (խողովակ) բառի հետ համանուն է փող բառը դրամ նշանակությամբ, վոր բոլորովին ուրիշ ծագում ունի: Այսպիսի համանուններ են նաև՝ այր—1· տղամարդ և 2· քարայր· մայր—ծնող մայր և 2· մայր ծառ· մոր—1· ճահիճ և 2· մայր բառի սեռական–տրական հոլով· կույս—1· աղջիկ և 2· կողմ (վորից կուսակալ), թեր— 1· կանաչեղեն (լմամ և չորացած)«թերթ» բառից և 2· կողմ (թեր և զեմ լինել)· հար (գրաբար՝ յար)—1· կից, 2· միշտ: Կան մի քանի այնպիսի համանուններ էլ, վորոնք հին գրական լեզվի մեջ առուգրաբանորեն և նշանակությամբ իրարուց անկախ բառեր են և տարբեր կերպով էլ արտասանվել և գրվել են· բայց հնչափոխությամբ վոչնչացել և գրանց արտասանության տարբերությունը, գրանք գարձել են համահնչյուն, նոր ուղղագրությամբ նաև համագիր համանուններ: Գրանք են՝ սեր—1· սիրել (հին ուզբ· սէր), սերվիլ, սերտնդ· հարկ—1· տան հարկ (հին ուզբ· յարկ), 2· տուրք· մեզ—1· միզելը (հին ուզբ· մէզ), 2·մենք բառի տրական հոլովը·—հոտ—1· վոչխարի հոտ (հին ուզբ· հօտ, հաւտ), 2· վարդի հոտ·ոտիկ(ի) 1· պտուղ (հին ուզբ· պէտ(ք), 2· մեծ· գեր—1· չոր (հին ուզբ· գէր), 2· բարձր, վեր (գերադանց):

72· ՆՈՒՅՆԱՆԻՇ ԲԱՌԵՐ:—Լեզվի զարգացումը առաջ և բերում մի կողմից՝ բառերի տարբեր նշանակություններ և նույն իսկ համանուններ, մյուս կողմից՝ նաև նույնանիշ բառեր, վորոնք նույն նշանակությունն ունեն, բայց հնչյուններով տարբեր են և տարբեր էլ բառեր են: Նույնանիշները առաջ են գալիս գանազան հանգամանքներով: Լեզվի մեջ արդեն լինում է մի բառ, բայց նույն նշանակության համար մի ուրիշ նոր բառ է մտնում կամ ոտար լեզուներից, կամ ուրիշ բարբառներից, կամ թե խոսողը,—այն պատճառով վոր չգիտե յեղած բառը, կամ խոսելիս չի հիշում, և կամ վորևե ուրիշ պատճառով,—կազմում է մի նոր բառ, վոր

և յերբեմն ընդհանրանում է: Որինակ՝ հին լեզվից ունենք արդեն՝ բնականաբար, բնականապես, բայց վերջին տասնամյակներում նույն նշանակությամբ կապված և մի յերրորդը՝ բնականոթեն: Հին լեզվի մեջ ունենք աչեզր, բայց Ա. Խտահակյանը, անշուշտ հանդի համար, կազմել է նույն նշանակությամբ աճապի բառը. «Յեվ ուղիս անհատնում է և անսիմ», թեպետ «յեզը» և «սիմ» նույնպես չեն: Տարբեր ածանցներով կազմված համանիշներ են՝ յերկրագործ, յերկրային. ահեղ, ահավոր. Ֆարյա (Ֆարե), Ֆարեղեն և այլն: Ունենքինք արդեն՝ նահանգական, տեղական բառերը. բայց դրանց նշանակությամբ վերջերս նոր կազմված են՝ նահանգային, տեղային. հին մատենագրական բառը համապատասխան նոր կազմված է գրագրական. ժողովրդական լեզվից ունենք բուշ բառը, բայց հին լեզվից առած գործածում ենք ավելի այս. ունենք ասվորական մոտ բառը, բայց մի քանի հեղինակներ արևմտյան գրական լեզվից վերս առած գործածում են նաև Ֆով բառը (անգլ. ներ Ֆով), այլ և գրաբարի մերձ բառը:

Նույնանիշ բառերն առաջ են գալիս նաև տարբեր բառերի համեմատ գործածությամբ, այսինքն՝ տարբեր բառերի նշանակությունները միևնույն ուղղությամբ վերաբերում՝ նույն կամ տարբեր բարբառների մեջ մեռած, հանում են նույն նշանակության: Որինակ՝ ճետ և վարձակ բառերը նշանակության փոփոխությամբ առացել են աճապաղ բառի նշանակություններ, վերջ համար ունենք նաև ոչխար: Այսպես և ոչնուն բառը, որ նշանակում է ոչնդ. նշանակության նեղացումով առացել է հավի բառի նշանակություններ: Այսպես և միևնույն նշանակության համար տարբեր բառերից կազմված են բարբառների մեջ՝ գլուխ, գլուխ, քամակ, ըսքար, կատաքար— որ այն կլոր քարն է, որ կատրների վրա գլուխ են հանդն ամրացնելու համար, որպեսզի առանր չիաթի:

Նոր գրական լեզվի մեջ նույնանիշները ծագում են տարբեր բարբառներից. նպատակ ի գրագր որ բարբառի պատկանելության առակ է, գործածում է այս կամ այն բառը. որինակ՝ մեկը գործածում է Ֆուլա, մի ուրիշը՝ փաթիլ, մի յերրորդը՝ գլուխ (անգլ. Ֆլաֆֆին): Բայց ավելի հաճախ նույնանիշ բառերը ծագում են մի կողմից՝ ժողովրդական կենդանի լեզվից, մյուս կողմից՝ հին լեզվից. բայց այդ գրաբարում էլ արդեն կան նույնանիշ բառեր, որոնք բոլորն էլ գրեթե մտնում են նոր գրական լեզվի մեջ, որով վերջինս չատ հարստանում է այդպիսի բառերով:

Բերենք մի քանի բառեր մարդու մարմնի մասերի անունները. Գագաթ, կատար. մազ, հեր, վարս գես. գլուխ, կատարի. վիզ, պարանոց, ուր, փող, ճիտ, չինք. յերես, դեմք (անձն, դեմք). ականջ, ունկն. աչք, ակն. (քար, ակ. անիվ, ակ). վտակ, (գրաբարում և բարբառներում) աք, վորից՝ աքացի, ճուռ (ամբողջ վտակը— Ֆամ, արտնք և ապրը միասին, կա նաև՝ ախուր առուց, քիմ, ունչ. բերան, յերախ (անխ). ատամ, ծնուլ. չրթունք, պռունչ, պռունկ. ծնոտ, կզակ (կուզ), կլոր. ատամ, ակռա, կռնակ. կաթված, լանջ. վորովայն, փոր. թիկունք, կռնակ. բազուկ, կուռ, ծոիք, թեվ. ապրը, գլուխ, բարձք. ծունկ, գուճ, արտնք, ոտք և այլն: Այս բառերից մի քանիսն անգործածական են, բայց դրանցից կազմվածները սովորական բառեր են: Բերենք մի քանի ուրիշ նույնանիշներ ևս: Գնալ, յերթալ. մեկ, մի. սառն, պաղ, ցուրտ. բարեմասնություն, չատություն. գործություն, ուժ. վատ, գեշ. վճռել, ծախել. առուել, ջրել. գեղեցիկ, սիրուն, սպիտակ. քամ, ապեկ. գործել, բանել. չիջեցնել, մարել, հանգցնել. մեռանիլ, մեռանել. ահ, յերկյուղ, վախ. վորոնել, փնտրել. հզոր, քաջ. հեղձուցիչ, խեղդող. գյուղին, հեչտ. գազանի, ծաձուկ. անձրեվ, ջուր, թոթոռ. անձրեվային, թոռացին, յեկայնաբերդակ, արեվ, արիւ. վահան, ասպար. ձի, յերիվար, նժույգ. վախճան, վերջ. բացի (քեզնից), (քեզնից) զատ. և չատ նմանները:

Ժողովրդական առօրյա խոսակցության համար նույնանիշ բառերն ավելորդ ծանրաբեռնություն են. վորովհետև այդ մարդակ լեզուն բանեցնում ենք մեր մտքերը պարզապես արտահայտելու և ուրիշներին հասկանալու համար, ուստի նույնանիշ բառերի կարիք չկա, քանի վոր մեկ բառն էլ բավական է մտքին արտահայտելու համար: Այդ պատճառով, յեթե մի կողմից նույնանիշ բառեր են առաջ գալիս, մյուս կողմից էլ բարբառները ձգտում են այդ անպատճառ աստառությունը թոթափելու:

Այսպես չէ, ասկան, գրական լեզվի մեջ: Այստեղ պահվում են այդպիսի բառերը. վորովհետև գրական լեզվի մեջ մտքերի իսկ արտահայտել չի պահանջվում, այլ, վորքան կարելի է, նաև գեղեցիկ, ներդաշնակ և ընտիր ձևով գրել և խոսել: Նույն իսկ պրոպագիկ գրվածքների մեջ պահանջվում է վորոշ չափով գեղեցիկ ոճ. իսկ դրա համար պետք է բառերը կրկնությունից խուսափել և յեթե հարկ է նույն միտքը յերկրորդել, այդ պետք է տարբեր բառերով կատարվի, ինչպես վարվում են մի քանի հայ.

ակ հեղինակները, որոնք հայտնի չեն իրենց վոճի պետական-թյամբ: Նույնանիշ բառերը շատ ավելի պիտանի չեն ճարտասանական և բանաստեղծական լեզվի մեջ, բառերի ընտրության և ներդաշնակության տեսակետից, մանավանդ չափածո դրվագքների մեջ: Շատ անգամ վտառնավորների չափը, հանգի ու հնդհատության նկատմամբ մի բառ հարմար չի գալիս իր վանկերի թվով ու հնչյունների տեսակով, մինչդեռ մի ուրիշը պատշաճում է. ուստի և բանաստեղծն ազատությամբ փոխելով բանեցնում է նույնանիշ բառերը: Նույնը պետք է ասել և նույնանիշ բառաձևերի ու կապակցության ձևերի մասին: Որինակ՝ փոխանակ գրելու՝ «Հուշի պես բարակ մի թել կապում է իմ սիրտը քեզ.— ի՛մ կյանքիր, սիրտդ արդյոք դո՞ւմ է հոգուս տենդը», բանաստեղծը (Զարենց) չչահելի ալիթմական դասավորության համար, ոգտվելով լեզվի մեջ կեղած նույնանիշ չարադասական ձևերից, գրում է. «Հուշի պես թել մի բարակ՝ կապում է սիրտը իմ քեզ.— կյանքի՛ր իմ, սիրտդ արդյոք դղդո՞ւմ է տենդը հոգուս»: Սրանով և հենց մեր բանաստեղծական լեզուն տարբերվում մեր արձակ լեզվից, այնպես որ մենք ունինք թե՛ պրոզայիկ լեզու, առանց նույնանիշ բառերի և միակերպ պարզ չարահյուսությամբ, և թե՛ բանաստեղծական լեզու, նույնանիշ բառերի և նույնանիշ չարահյուսական ձևերի ապատ դրվածածությամբ: Այս է պատճառը, որ մեր հասարակ ժողովուրդը մեր գրական լեզուն «գրաբար» է համարում: Ցեմ իսկապես, մեր նոր գրական լեզուն մասամբ նաև գրաբար է. վորովհետև նախ՝ շատ բառեր գրաբարից են առնված, հաճախ գրաբարից ենք ոգտվում նույնանիշ չարահյուսական ձևերի դարձվածության նկատմամբ, մանավանդ բանաստեղծական լեզվի մեջ. և ապա՝ նույնիսկ արձակ գրվածքների մեջ շատ անգամ գերազանցություն ենք տրվում հին բառերին, քան նույնանիշ ժողովրդական բառերին. որինակ՝ ավելի շատ այսօր, կտռուցել են գրում այժմ, քան թուշ, շինել. վերջերս կազմել են և գործածում են նույնիսկ «ընթերցել», փոխանակ «կարդալ» բառի:

73. ԲԱՌԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ:—Ժողովրդական լեզուն, ինչպես տեսանք, սիրում է պարզություն, այսինքն՝ մի գաղափարի համար բավականանում է մի բառով. ուստի նույնանիշ բառերի ավելորդ բերը պետք է ձգում: Դա լինում է բնական ճանապարհով. նույնանիշ հեղինակներից մեկը գրելիս պատճառով ավելի գործածական է դառնում, քան մյուսները. այս վերջիններս հետզհետե քիչ գործածվելով՝ վերջիվերջո մոռացության են տրվում: Որինակ՝ հին լեզվի բազում բառը, որոնք նույնանիշ են շատ, խոսակցական և նույն իսկ նոր գրական լեզվից արդեն դուրս է մղվել. բայց ունենք դեռ դրանից կազմված բազմանիշ, բազմությունն գրական բառերը:

Բառերի կորուստը կապված է նաև նրանց արտահայտած գաղափարների կորստի հետ, իսկ այս վերջինը սովորաբար հետևանք է լինում մշակութական մեծ հեղաշրջումների և ազդեցությունների: Որինակ՝ քրիստոնեության մուտքի հետ մեր կողմից՝ նոր բառեր են մտել հայերենի մեջ, ինչպես՝ յեկեղեցի, քահանա և այլն. մյուս կողմից՝ հեթանոսական կրոնի հետ մոռացության են տրված և շատ հին բառեր: Մեր ժողովուրդն այլևս չգիտե՝ քուրմ, մեհյան, բագին, դիք, դիցազն և այլն, որոնք գրական լեզվի մեջ պահվում են միայն գրաբարից: Այս կերպ սահմանափակվել հին բառերը՝ քաջ, վիշապ, դեվ, յերեխ մնում են ժողովրդական լեզվի մեջ, վորովհետև դրանց, այդ վոչնչերի հավատն էլ դեռ մնում է: Կան այնպիսի հին կրոնական բառեր էլ, որոնք ապրում են քրիստոնեական կերպարանքի տակ, ինչպես՝ դրախտ, դժոխք, և այլն: Նույնպես հին քաղաքական կարգերի փոփոխության հետ մոռացության են տրված և նրանց արտահայտող բառերը, ինչպես են՝ նախարար, սեպուհ, պայազատ և այլն, որոնք դարձյալ գրական ճանապարհով մտել են կամ մտնում են նոր գրական լեզվի մեջ: Այսպես և ուսաց տերապետության ժամանակ 19-րդ դարում յերեխ մի կողմից՝ յերևան են յկել նոր բառեր՝ հաշտարար դատավոր, նահանգապետ, փոխարքա և այլն, մյուս կողմից՝ ժողովրդի մեջ մոռացված են բազմաթիվ բառեր, ավելի թուրքերեն կամ պարսկերեն: Ղ. Աբովյանի «Վերք Հայաստանի» գրքի մեջ յեղած շատ բառեր այժմ վոչ միայն ընդհանուր գործածական չեն, այլև յերբեմն, մանավանդ ոտար բառերը, անհասկանալի յեն նույն իսկ բնիկ յերեվանցիների համար:

—

Ոտար բառերի կորստի համար պետք է նկատի ունենալ և հետևյալը: Մինչդեռ լեզվի նախագրաբարյան շրջանում այլ լեզուներից փոխ առած բառերն արդեն հայացած են, գրաբարյան շրջանից սկսյալ մեր լեզվի մեջ արաբերենից, պարսկերենից ու թուրքերենից մտած բազմաթիվ բառերը մեծ մասամբ հարատած չեն հա-

մարվում և 19-րդ դարում, վերածնության հետ միաժամանակ, դրական լեզվից մեռժված են. վորով առաջ և յեկել լեզվի պիտակացարար մաքրում այդպիսի բառերից, վորոնց վոխանակ գործածվում են կամ հին հայերեն (գրաբարի) կամ բարբառային հայերեն բառերը, կամ նոր հայերեն բառեր են կազմվում: Գրական լեզվի այս հատակումը հիմնովին և յեղել և չարունակվում է մինչև այժմ էլ, և այդ լեզուն իր կազմից, գրերոց և լրագրության միջոցով, ապրել և նաև սովորական խոսակցական լեզվի, վորոշ չափով նաև բարբառների վրա: Այս վերջիններից էլ հետզհետե պակասում են ոտար բառերը: Այս հատանքն ազդում է նաև յեվրոպական լեզուներից նոր բառեր ընդունելու վրա. մենք այժմ էլ ընդհանրապես խուսափում ենք առանց անհրաժեշտության վորևե նոր ոտար բառ ընդունելուց:

74. ՆՈՒՅՆԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ:—Լեզուն մի ուրիշ հանապարհով էլ ձգտում է պարզության նուլնանիշների նկատմամբ. նուլնանիշները պահվում են, բայց կապվելով վորոշ կիրառությունների հետ՝ նշանակության նուրբ տարբերություններ են առնում, վորով և վերանում է նուլնանիշների ամբողջ իմաստը: Նշանակության նուրբ կերպով իրարուց տարբերվող բառերը սովորաբար կոչում ենք համանիշ բառեր, ինչպես՝ գտամանալ, հետևել, սքանչանալ. բարկություն, սրտմտություն, ցասում: Այսպիսի բառերն իսկապես դեռ նուլնանիշ են. բայց տարբերակումով (դիֆերենցիացիա) յերբեմն առաջ են գալիս նաև բոլորովին տարբեր բառեր տարբեր նշանակություններով: Միայն, վորովհետև այս տարբերակումն ընթանում է աստիճանաբար, ուստի և հաճախ դժվարանում ենք իմանալ դրանց նշանակության նուրբ տարբերությունները, և վորոշել, թե արդյոք յերկու բառ համանիշ են, թե արդեն տարբեր նշանակություններ ունեն.

Նուլնանիշ բառերի տարբերակումն ոտաջ և գալիս բնականաբեն. դա էլ սկսվում է անհատներից: Նուլնանիշների արտահայտած պատկերացումներն էլ, ինչպես ամեն պատկերացում, բոլոր են, ուստի և դրանց պատկերացումներն էլ տարբեր են զանազան անհատների մեջ. մեկի մեջ գործող և պատկերացման մի կողմը, մի ուրիշի մեջ՝ մի ուրիշ կողմը: Բացի այդ՝ ինչպես ուրիշ բառեր, նուլնպես և նուլնանիշները հաճախ ունեն զանազան նշանակություններ և կիրառություններ: Այդ պատճառով լինում են անհատներ, վորոնք նուլնանիշներից մեկը կապում են պատկերացման ավելի մի կողմի հետ, կամ զանազան նշանակություններից ավելի մեկի հետ, իսկ ուրիշ անհատներ՝ միևնույն պատկերացման մի ուրիշ կողմի հետ, կամ զանազան նշանակություններից մի ուրիշի հետ: Այսպիսով անհատական լեզվի մեջ առաջ և գալիս նուլնանիշների նշանակության նուրբ տարբերություն, վոր առանձին անհատներից անցնում է ուրիշներին, մինչև գալիս և ժամանակ, յերբ նուլնանիշ բառերը բոլորովին տարբեր նշանակություն են առնում: Բերենք մի քանի որինակներ: Հին լեզվի բարի և լավ, չար և վատ բառերի նշանակություններն արդեն տարբերակման են յենթարկված: Հին լեզվի մեջ ասվում է՝ բարի մարդ, բարի ծառ, բարի պտուղ և չար մարդ, չար ծառ, չար պտուղ: «Մաս բարի՝ պտուղ բարի առնէ և ծառ չար՝ պտուղ չար առնէ». բայց նոր լեզվի մեջ այլևս չենք ասում՝ «բարի ծառը բարի պտուղ է անում, իսկ չար ծառը՝ չար պտուղ», այլ ասում ենք՝ «լավ ծառը՝ լավ պտուղ է տալիս, վատ ծառը՝ վատ պտուղ»: Նոր լեզվի մեջ բարի և չար բառերը առմանատիկվել են միայն մարդկանց վորոշ բարոյական կողմի համար. ուստի բարի պտուղ նշանակում է վոչ թե «լավ պտուղ» (ծառի), այլ բարի զավակ (մարդու): Նուլնպես չար բառն առել է հին ընդարձակ նշանակության բարոյական կողմը միայն— չար մարդ, չար վոգի, իբրեվ չարիք դործոց: Բայց այս բառն ունի արդեն մի ուրիշ գործածություն էլ՝ «չար յերեխա», յերեխայական չարության անող, իբրեվ անհանգիստ յերեխա:

Այսպես նշանակության տարբերակման յենթարկված են նաև հետևյալները. վերջանալ, վախճանվել (մեռնել). ականջ, ունկ (ամանի կանթ). աչք, ակ (ջրի, ապրյուրի և այլն). քար, ակ (ճանկապլին քար, այլև անիվ). չրթունք, պռոշ, պռունկ (պռունկ ամանի, այլև մարդու՝ «քիթ ու պռունկ» կապակցության մեջ, իսկ «չուրթ» թռների). ծունկ, ծունր (դնել). ուժ, զորություն (ապդեցություն). արևագակ, արեվ (արեվոտ տեղ, արեվ ժամանակ): Գրական լեզվի մեջ էլ չատ բառեր ձգտում են տարբերակվելու, օրինակ՝ աչխատասեր, յերկ, յերկարերություն (գրական). չինել, կատուցել, կերտել (արվեստով). վերջ, վախճան (կյանք, մահ, նպատակ). զիրք, մատյան (հաշվի և այլն): Մտցնել, մուծել (մատյանի, ցուցակի մեջ). չատություն, բազմություն (մարդկանց մեծ խումբ). կտրել, բակել (մեհու, բնտրություն). սայ-

թաքել (սեթ տալ), դալթակղվել (բարոյական)· բարձր, վեհ (բարոյական և արվեստի վերաբերյալ)· ջարդել, խարտակել (հույս և այլն, նաև յերկաթուղու)· վիպ, ճիա, պարանոց (աչխարհագրական)· չարժել, հուզել (բարոյական)· մուխ, խավար (այլև մուռավոր)։ Այս և սրանց նման նուինիշնևրից բուն աչխարհաբար բառերն ունեն ավելի ընդարձակ նշանակութիւն, մինչդեռ դրաբարից առնվածնևրը գործածվում են առհմանափակ, ավելի բարոյական իմաստով։

Նշանակութեան տարբերակման յենթարկվում են նաև նույն բնիկ նույնանիշ ածանցներով կազմված բառերը, ապա և իրենք ածանցական մասնիկները։ Այսպես օրինակ՝ հին լեզվից ունինք յերկու հոմանիշ ածանցներ՝ «ական» և «ային»։ Գրաբարում «ական» ածանցը շատ ավելի գործածական և գործուն է յեղել, քան «այինը», ուստի հին լեզվի մեջ ունինք հազարից ավելի բառեր «ական» ածանցով կազմված, մինչդեռ «ային» մասնիկով կազմված-ների թիվը վաթսունից չափ է. մոտ հարյուր բառ էլ կան թե՛ «ական» և թե՛ «ային» ածանցով կազմված։ Նոր գրական լեզվի մեջ, սակայն, վերջին ժամանակներս ավելի «այինն» ածանցով են բառեր կազմվում, քան «ական»։ Բացի այդ՝ այս յերկու ածանցնևրը հին լեզվի մեջ սովորաբար անխտիր նույն նշանակութեամբ են գործածվում. Եղնիկ Կողբացու «Եղծի» մեջ, օրինակ, միայն մի բառ կա «այինն» ածանցով՝ «ցամաքային օձ», բայց նա ունի «Ջրական կենդանիք, ծովական գազան, ծովական ձուկն, ամֆիբիական կապիկք, ցամաքական բնութիւն, երկրական անասունք»։ Նույնպես Մ. Խորենացին անխտիր գործածում է նույն նշանակութեամբ՝ «հիւսիսական ազգք, հիւսիսական կողմանք, հիւսիսականք» և «հիւսիսային կողմն, հիւսիսային գօրք, հիւսիսային գունդ, հիւսիսայինքն» (ազգեր)· «ազգական, ազգայինք», և բոլորովին նույն նշանակութեամբ՝ «ազգային, ազգայինքն, առհմային»։ Այսպես և ուրիշները. «երկիր լեռնային և դաշտական ծագիկ· օդական թռչուամբք (թռչունք)»։ Այժմ, սակայն, այլևս չենք ասում՝ լեռնական յերկիր, լեռնական ծագիկ, դաշտական ծագիկ, ջրական կենդանի, ցամաքական բնութիւն, ծովական գազան և այլն, այլ միայն՝ լեռնային յերկիր, լեռնային ծագիկ, դաշտային ծագիկ, օդային թռչուններ, ջրային կենդանի, ծովային գազան, հյուսիսային ազգեր, ցամաքային բնութիւն և այլն։

Նույնպես այժմ տարբեր նշանակութիւններ ունեն՝ ազգական (ցեղակից, արենակից մարդ) և ազգային (ազգի վերաբերյալ)· լեռնական (լեռնաբնակ, լեռնցի) և լեռնային (լեռան վերաբերյալ)։ Լեզվի պատմական զարգացումն այս յերկու ածանցնևրի մեջ հաճախ նշանակութեան տարբերութիւն է առաջ բերել· ինչպես՝ քաղաքական (պոլիտիկ), քաղաքային (քաղաքի վերաբերյալ)· անասնական (ճղնաժոր), անասնային (անասնասում կամ անասնից յեղած)· սիրական (սիրող), սիրային (սիրո վերաբերյալ)· անձական (տանեցի), անձային (գործեր)։ Առաջինները, «ական» ածանցով կազմվածները ստացել են հաճախ ավելի գոյական բնավորութիւն, ավելի նեղ նշանակութեամբ, մինչդեռ «այինն» ածանցով կազմվածնևրն ունեն ավելի ածականի բնավորութիւն։ (Տես §§ 140· 142)։

75· ՆՈՒՅՆ ԲԱՌԻ ԿՐԿՆԱԿՆԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՏԱՐԲԵՐԱԿՈՒԹԻՒՆԸ։ Գրական լեզվի մեջ կան մոտ թվով բառեր կրկնակ ձևերով, հաճախ նաև տարբեր նշանակութիւններով։ Այսպիսի բառերից մեկը սովորաբար աչխարհաբար է, բարբառից և անցել գրական լեզվին, իսկ մյուսը, մոտ գարձյալ նույն բառն և հին ձևով, գրական փոխառութիւն է գրաբարից։ Որինակ՝ կանչ, կոչ· հատցնել, հատուցանել· ճմռել, ճմլել· մոռնալ, մոռանալ· մոռանալով· պահածու, պահածո։ Այս բառերի մեջ, ինչպես կարելի է տեսնել, մոտ միայն նշանակութեան, այլ և հնչյունական տարբերութիւն կա, և նշանակութեամբ ու ձևով տարբեր բառեր են առաջ յեկել նույն բառից։ Կան և այնպիսի կրկնակներ, մորոնք յերկուսն էլ գրաբարից են կամ գրաբարում կան, կամ յերկուսն էլ միայն աչխարհաբարում կան· ինչպես՝ համբարձում, ամբարձում· հոգի, մոգի (հին ուղղագրութեամբ՝ ոգի)· հրաչք, հրեչ (ք)· հատանել (գրար· հատանել), հատել (գերեզման)· արհեստ, արվեստ· ծախել, ծախսել· կտտրել, կտրել· կարիճ, կորիճ· քարհատ (մարդ), քարհատ (մուրճ)· վայրահատ (մարդ), վայրատատ, վհատատ (քլունդ)· դռնափակ (դռան վակ), դռնփակ (փակ դռնով)· խրել, խցել· պարապել, պարպել· դասել, դարսել· բանավոր, բանվոր· վերացնել, վերցնել· ճղել, ճեղքել· կոթ, կանթ և այլն, և այլն։

Նույն բառի կրկնակներ կազմվում են հաճախ գրաբարի հոգնակիների «Ք» մասնիկով, մոր աչխարհաբարում կորցրել և իր

թվական նշանակութիւնը. բայց այսպիսի բառերն այլ մասնիկով և առանց այդ մասնիկի չատ անգամ ունեն տարբեր նշանակութիւններ, ինչպես՝ դէր, դէրք· հաւ, հաւք· փող, փողք· կաթել, կաթիլք· կուրծ (կռվի), կուրծք (մարդու)· սեղան, սեղանք (սեղանատամներ)· առհման, առհմանք (սովորութիւն, օրէնք)· առնդր, առնդերք (բուրդ դզելու) և այլն: Այս կարգի մէջ պիտք է դնել նաև դրաբարի «ուիf», «մուիf» վերջացած հոդնակեռով կազմվածների հետ նրանց յեղակի ձևերը· ինչպես՝ չուրթ, չըրթներ (թոնրի), չրթունք (մարդու)· պաչուն, պաչատմունք· բերում, բերմունք· բաժանում, բաժանմունք· մատծում, մատծմունք· համարում, համարմունք· ուսում, ուսմունք և այլն: Սրանցից՝ «ումն» ածանցով կազմվածները ցույց են տալիս ավելի գործողութիւն, իսկ «մունք» վերջացածներն ունեն ավելի վերացական գրութեան կամ վորևէ ուրիշ կողմնակի նշանակութիւն ևս:

Նշանակութեան տարբերակումով կրկնակները են առաջ եկել նաև դերբայական ձևերից· օրինակ՝ գրաբարի անցյալ դերբայի ձևերը գործածվելով նոր գրական լեզվի մէջ, առանձնացած են մնում և առնում են իրրև մի ածական· այս ձևերն այլևս չենք կապում նոյն ձևերի հետ, վոր հնչափոխութեամբ մնում են նոր լեզվի մէջ· ինչպես՝ անցյալ (գրաբարում՝ անցեալ) և անցեալ նոյն բառն են, բայց մեկն արդեն ածական, իսկ մյուսը դերբայ: Նոյնպես մեկուսացած իրրև ածականներ գրաբարից մտել են գրական լեզվի մէջ՝ հնաոիյալ, ննջեցյալ, առուցյալ, մեռյալ· հնձյալ և այլն:

76· ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ, վոր ուսումնասիրում է բառերի նշանակութեան պատմութիւնը, ընդհանրապես դեռ զարգացած չէ: Իսկ ինչ վերաբերում է հայոց լեզվի բառերի զանազան նշանակութիւններին, այդ մասին գրեթե բան չկա արված: Դրա համար, անշուշտ, նախ պիտի հավաքվեն բոլոր բառերը թե գրավոր աղբյուրներից և թե բարբառներից, ճշտվեն նրանց նշանակութիւնները ու կիրառութիւնները· ապա նոր առանձնապես ուսումնասիրվեն, թե մեր լեզվի բառերի զանազան առումներից, վո՛րը հիմնական, ընդհանուր նշանակութիւն է, վո՛րը պատահական, բայց՝ սովորական զարճած· թե վո՛ր բառը, կամ բառի վո՛ր նշանակութիւնը գրաբարից է, թիշին գրական լեզվից կամ բարբառներից:

Այսպիսի հետազոտութեան ժամանակ չպիտի մոռացվեն, հարկավ, նաև ոտար լեզուների ազդեցութիւնները:

Այժմ հայոց լեզվի բառերի նշանակութիւնը սովորելու համար կարևոր աշխատանքներ են՝ գրաբարի համար «ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԱՆ ԼԵԶՈՒԻ», յերկու հատոր, Վենետիկ 1836–1837· բարբառների համար՝ Ս. Վ. Ամատունու «ՀԱՅՈՑ ԲԱՌ ՈՒ ԲԱՆ», Վաղարշապատ, 1912· և Հ. Աճառյանի «ՀԱՅԵՐԵՆ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ», Թիֆլիս 1913: Բացի սրանցից՝ նաև Աճառյանի արմատական բառարանը, վորի տպագրութիւնը դեռ վերջացած չէ:

Զ ո ր ր ո ր դ մ ա ս

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Ա.

ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

77. ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ։—Հնդեւրոպական ատրբերակումին, ինչպես տեսանք, հաճախ հետեվում է նշանակութեան ատրբերակումը, վորով իսկապես նոր բառեր են առաջ գալիս լեզվի մեջ (քորել—քերել· արհեստ—արվեստ)։ Բառակազմութեան տեսակետից դանակը, սակայն, և՛ բաղադրութիւնը, վորով լեզվի մեջ յեղած բառերից և արմատներից կազմվել են ու կազմվում են նոր բառեր—բարդ և ածանցական բառերը։

Հայերենը շատ մեծ չափերով ընդունակ է բաղադրութեան։ Հին լեզվից ունենք բազմաթիվ բաղադրված բառեր, վորոնց անալոգիայով այժմ էլ կազմում ենք նոր բառեր։ Այս հատկութիւնը նպաստում է մեր լեզվի բառամթերքը հարստացնելու և տալ, մանավանդ գիտական ու տեխնիկական բառերի փոխանակ՝ հայերեն նոր բառեր կազմելու։ Այս է պատճառը, վոր թե հնումն և թե այժմ մեր լեզուն տալ գիտական բարդ բառերի նշանակութեանն և մեկն անում է իր սեփական բառերով դրանց համապատասխան բաղադրութիւններ և կազմում։ Այսպիսի նոր բառերը հետեվութեամբ դոբծածվում են ընդհանրանում են· բավական է մեկին, վոր տալ բառի համապատասխան նոր բառը ճշտութեամբ արտահայտի այլազգի բառի նշանակութիւնը, կազմված լինի հայերենի բառակազմութեան օրենքներով և, վորքան կարելի է, կարճ ու ներդաշնակ լինի։ Դրա համար հաճախ առնում են այնպիսի հին բառեր և արմատներ, վոր թեպետ աշխարհաբարում գործածական չեն, բայց հասկանալի են։

78. ՀԻՆ ՅԵՎ ՆՈՐ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ։—Գետք է տարբերել յերկու տեսակի բաղադրութիւններ· մեկը՝ հին, մեռած բաղադրութիւններ, վորոնք ծագում են ուղղակի հնդեվրոպական նախալեզվից և կամ նախապարսկական շրջանում կազմված են նախալեզվի օրինակի համեմատ, և մյուսը՝ նոր, կենդանի բաղադրութիւններ, վորոնք կազմված են դրաբարյան և գրաբարյան շրջաններում կամ գարձյալ նախալեզվյան օրինակի համեմատ և կամ որանից անկախ, մեր լեզվի մեջ գործածած յեղանակով։

Առաջին տեսակի հին բաղադրութիւններն այժմ հաճախ այլևս մեզ համար ըմբռնելի չեն հայոց լեզվի արդի վիճակի տեսակետով։ Այսպես օրինակ՝ գրաբարից ունենք՝ իլու, իմուտ, իզօր, վորոնք բարդ բառեր են, կազմված իր<հու բառից և լու (լուր, լու և լաւ), մուտ, զօր բառերից։ Այդ «հու» բառը, սակայն, նույն իսկ գրաբարում անկախ գոյութիւն չունի և բաղադրութիւնների մեջ գրա նշանակութիւնն զգալի չէ. համեմատական քերականութեան ոգնութեամբ միայն լսանում ենք, վոր «հու» նշանակում է լավ, և վոր վերեվի յերեք բառերը բարդ են. հլու—լավ լսող, հզօր—լավ զորել, շատ զորել, հմուտ—լավ թափանցած մի բանի մեջ, ներհուն, խելամուտ։ Դրանք քարացած, մեռած բաղադրութիւններ են։ Կան և այնպիսի հին բաղադրութիւններ, վորոնց ցեղակցութիւնն գրալի չէ մեզ համար, ինչպես ջերմ, ջերմին, ջեր (վորից գրաբարի՝ ջերանիմ, ջերին, ջեռանիմ, ջեռնում). զգեցնում, զգեստ (բարբառային զենալ, զեստ)· սերմն, սեռ, սեր, (վորից սերունդ)։ Բայց գրանց կազմութիւնը շատ հին է, գրանք նույնպես քարացած են, և գրանց բաղադրիչ մասերի (մ, մն, ստ) նշանակութիւնը համեմատական քերականութեամբ անգամ հնչակ չե բացատրել։ Դրանց անալոգիայով մեր լեզվի պատմական շրջանում նոր բառեր չեն կազմվել և այժմ էլ չեն կազմվում։

Այսպես չեն նոր, կենդանի բաղադրութիւնները. մենք այժմ մեր լեզվական գգացումով վոչ միայն ըմբռնում ենք նրանց բաղադրիչ մասերն ու նրանց նշանակութիւնները, այլ և նրանց անալոգիայով նոր բառեր ենք կազմում։ Բարդ բառերի մեջ գտնում ենք մեզ համար հասկանալի յերկու բառ կամ արմատի միացում, ինչպես՝ սեղանատուն, հիասթափվել· իսկ ածանցական բառերի մեջ՝ մի բառ կամ արմատ և մի ձեվական մաս, վորի նշանակութիւնը

նույնպես մեզ համար դժալի ու հասկանալի չե և վորով մենք նոր բառեր ենք կազմում ուրիշ բառերից, ինչպես՝ քաղաք–ացին, սրճ–ացին, չրջան–ացին:

79· ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ:— Հայրենի բարդ բառերը, ինչպես ընդհանրապես բոլոր բաղադրված բառերը, ծագում են յերկու սկզբնապես ինքնուրույն բառերի այնպիսի չարահյուսական կապակցութիւններից, վոր ըմբռնվում և իրրեվ մի առանձին բառական միութիւն, մեկ բառ մեկ նշանակութիւնով: Ամեն տեսակի չարահյուսական կապակցութիւններից կարող են բարդ բառեր առաջ գալ· բայական է միայն, վոր չարահյուսական կապակցութիւնը վորևե պատճառով այլևս դժալի չի լինում իրրեվ կենդանի չարահյուսական ձեվ: Սակայն հաճախ դժվար է լինում վորոշել, թե յերկու բառի կապակցութիւնը սովորական չարահյուսական է, թե արդեն բարդ բառ է դարձած: Ուստի հաճախ բարդ չեն համարվում և իրրեվ այնպիսին միացած իրրեվ մեկ բառ չեն դրվում մի քանի չարահյուսական կապակցութիւններ, վորոնք արդեն մեկ բառի նշանակութիւն ունին· վորովհետև կան աստիճանավորումներ, մինչեվ վոր յերկու բառի չարահյուսական կապակցութիւնը դարձնա և իրրեվ մեկ բառ դրացվի: Որինակ՝ մի ժամանակ ախարհաբարում դրում եյին ջոկ ջոկ «այս օր», (ինչպես այժմ դրում ենք նման կապակցութիւնները՝ այս չաբաթ, այս ամիս, այս տարի), իսկ այժմ դրում են միացած՝ «այսօր»: Այս աստիճանավորումները նկատի ունենալով՝ հայերենում պետք է վորոշել յերեք տեսակի բարդութիւններ·

1) Հարադրութիւններ:—Այսպես կոչում ենք բառերի այնպիսի կապակցութիւնները, վորոնք թեպետ մեկ բառի նշանակութիւն ունին, բայց սովորաբար մեկ բառ չեն համարվում և միացած իրրեվ մեկ բառ չեն դրվում, որինակ՝ բաց անել, պար դալ, ցույց տալ: Հարադրութիւնը բարդութեան հիմնական տեսակն է, վորի մեջ չարահյուսական կապակցութիւն դպացումը թեպետ մթնած է, բայց հաճախ դեռ բոլորովին անդրալի չէ: Այսպիսի կապակցութիւնները յերբ միացած իրրեվ մեկ բառ են դրվում, դառնում են արդեն՝

2) Կցական բարդութիւններ, վորոնք թե նշանակութեամբ և թե դրութեան ձեվով մեկ բառ են, առանջացած լեզվի սովորական չարահյուսական ձեվերից, որինակ՝ այսպես, կեսօր, առնտիկին:

3) Իսկական բարդութիւններ, վորոնց յերկու բաղադրիչ մասերը միշտ միացած իրրեվ մեկ բառ են դրվում, և յերկուսը միասին մեկ նշանակութիւն ունին, ինչպես՝ գորտաղ, լուսաբեր, մեծատուն· բայց նրանց չարահյուսական կապակցութեան ձեվը իրրեվ այնպիսին բոլորովին մոռած և լեզվի մեջ և պահվում է միայն բարդութեան մեջ և բարդութեան համար: Դա բաղադրութեան հնագույն յեղանակն է, վոր այժմ էլ կենդանի գործոն է, և այս յեղանակով միշտ նորանոր բառեր ենք կազմում:

Բ.

ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ՅԵՎ ԿՑԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

80· ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԵՐՆ առանձնապես հատուկ են հայոց լեզվին· կազմվում են մի բայից և մի հարադիր բառից, վոր լինում է բայի լրացումը· բայն ու հարադիրը միասին առանում են մեկ բառի նշանակութեան և կարող են հաճախ մեկ բառով փոխանակվել· ինչպես՝ բաց անել—բանալ, լաց լինել—լալ, զրույց անել—զրուցել, ցույց տալ—ցուցանել, յեռ գալ—յեռալ, ձայն տալ—ձայնել, խաղ անել—խաղալ, թուլ տալ—թուլլատրել, գուբս անել—արտաքսել· ներս անել—մտցնել: Կան այնպիսի հարադրական բայեր, վորոնք թեպետ մեկ բառի նշանակութեան ունին և ուրիշ լեզուների մեջ մեկ բառով են արտահայտվում, բայց հայերենում չունին համապատասխան նշանակութեամբ նույնանիշ բայեր մի բառով, ինչպես՝ յերես տալ, յերես առնել: Կան և այնպիսիները, վորոնց հարադրիչ կազմված բայերն արդեն տարբեր նշանակութիւն ունին, ինչպես՝ թաք տալ—թաքցնել, կանգ առնել—կանգնել, քաշ տալ—քաշել, ման տալ—մանել, հատ տալ—հատել:

Հարադրական բայերի մի քանի տեսակներ պիտի տարբերել:

1) Հարադրական բայեր կազմվում են հաճախ ընդհանուր վերացական նշանակութեան ունեցող առնել կամ լինել բայերով և մի հարադրով, վոր վորոշում է բայի բովանդակութիւնը՝ ինչ տալը կամ ինչ լինելը, որինակ՝ ջանք անել (ջանալ), բան անել (բանել), խմաց անել (խմացնել), սիրտ անել, միտք անել, վոռնակոխ անել, վոռնակոխ լինել, լաց լինել, քուն լինել:

2) Շատ դործածական են այնպիսի հարադրութիւնները, վորոնց մեջ բայը պահում է իր նշանակութիւնը, և հարադիր մասը,

սովորաբար մի տեղական անուն կամ մակրայ, միայն ձևափոխում է, դրացնում կամ պարզում և բայի նշանակությունը, ինչպես՝ դուրս գալ, ներս գալ, մեջ գալ, վեր գալ, վայր գալ, (ցած գալ), յետ գալ, մոտ գալ, շուրջ գալ, շուռ գալ և այլն: Այս բազդությունները համապատասխան են ռուսը լեզուների նախադասություն կամ նախդրավոր բայերին. բայց մինչ ուրիշ լեզուների մեջ հարադիրը հանգես բայից անբաժան մնում և դարձած, ինչպես ասպնջականում, կամ յերբեմն բայի հետ միանում է, յերբեմն բաժանվում, ինչպես դերմանականում է, մեր լեզվի մեջ այս կարգի բայերի հարադիրը մասերն ավելի անկախություն ունին և միշտ անջատ են գրվում ու խոնարհման ժամանակ հարադիրն ու բայը մեկմեկուց բաժանվում են ուժանդակ «եմ» բայով, ինչպես՝ ներս գնալ, ներս գնաց, ներս է՞գնացել: Հարադիրը մասը նախդիրի կերպով մի մակրայ՝ բայից հետո եկ և գրվում՝ գնաց ներս: Բայց և այնպես այս բայերը մեր լեզվական զգացումով ըմբռնում ենք որպես մի միություն և մեկ բառ. ուստի և սովորական, ամենայն ժողովրդական լեզվի մեջ, հաճախ «կը» և «չը» ձևական մասնիկները գրվում են միշտ թե բայի, այլ հարադիրի վրա, ինչպես կը գնա ասի, կը գնի ընկնի, կը գնի տա, չը գնի ընկնի, կը դուրս գա, չը դուրս գա: Այսպես և ուրիշ կարգի հարադրությունները՝ կը ցույց տա, կը դեմ առնի, չ'անց կացավ, կը մոտ գամ. չը մոտ գամ:

Ամբողջ բառարանը գործ և հավաքել մակրայներով կազմված և մյուս տեսակների հարադրական բայերը, որոնց վրա մինչև այժմ հարկավոր ուշադրություն չի դարձված: Այստեղ կը դնենք տեղական մակրայներով կազմված մի քանի ամենահին բայեր միայն իրրև օրինակ:

Ներս գալ, ներս ընկնել, ներս ձգել, ներս քաշել, ներս ածել, ներս բերել, ներս առնել, ներս անել, ներս առնել, ներս տալ, ներս մտնել:

Դուրս գալ, դուրս ընկնել, դուրս ցցվել, դուրս ձգել, դուրս քաշել, դուրս ածել, դուրս բերել, դուրս առնել, դուրս տալ, դուրս կենալ:

Մեջ գալ, մեջ ընկնել, մեջ քաշել, մեջ բերել, մեջ առնել, մեջ տալ, մեջ մտնել:

Վեր (վերեվ) գնալ, վեր առնել, վեր կենալ, վեր քաշել, վեր առնել, վեր ձգել:

Վայր, վեր (վար, ներքեվ, ցած) ընկնել, վայր ձգել, վայր բերել, վեր տալ (ցերդ), վեր գալ (մի տեղ), վայր գնել:

Յետ գալ, յետ ընկնել, յետ ձգել, յետ քաշել, յետ ածել, յետ բերել, յետ առնել, յետ գարձնել, յետ տալ, յետ նայել:

Առաջ գալ, առաջ ընկնել, առաջ քաշել, առաջ բերել, առաջ առնել, առաջ տալ, առաջ անցնել, առաջ դիմել, առաջ խաղալ, առաջ նայել:

Վրա գալ, վրա ձգել, վրա վազել, վրա բերել, վրա տալ, վրա հասնել, վրա պրծնել:

Դեմ ընկնել, դեմ տալ, դեմ առնել, դեմ գնալ, դեմ բերել:

Մոտ գալ, մոտ ձգել, մոտ քաշել, մոտ բերել, մոտ առնել:

Շուրջ (շուռ) շուրջ գալ, շուռ գալ, շուրջ անցնել, շուռ անցնել. շուռ տալ, շուրջ բերել, շուռ բերել:

Դես (դեպի խոսողը) գալ, դես բերել, դես ձգել, դես քաշել:

Դեն (խոսողից հեռու) գնալ, դեն առնել, դեն ձգել, դեն քաշել, դեն ընկնել, դեն ածել, դեն թափել, դեն դնել:

Այս բոլոր մակրայների հետ կարող է գրվել նաև «անել» բայը, ինչպես՝ ներս անել, դուրս անել, մեջ անել, յետ անել, դեն անել, դեմ անել, վրա անել, առաջ անել, վեր անել (մերսել) և այլն:

Տեղ, տակ, հետ բառերը բայերի հետ գրվում են հոդով, օրինակ՝ տեղն ընկնել, տեղը ձգել, տեղը գալ, տեղը բերել. տակը գծել (ընդգծել), տակը ձգել. հետը գալ, հետը բերել, հետը առնել, հետս լինկան, հետս կըբերեմ, հետդ կըգամ: Հոդով ասվում են նաև՝ առաջն առնել, դեմն առնել: Այսպես նաև մեջ, վրա, դեմ, առաջ, մոտ բառերը կարող են Ս, Դ, Ն հոդերով ևս գործ ածվել, կամ բայից բաժանվելով իրրև յետադրություն գրվել գոյականի հետ, ինչպես՝ լինկավ մոտս–լինկավ ինձ մոտ: Այսպիսի կապակցությունները, սակայն, լոկ չարահյուսական են (Տես § 90, Նախդրավոր բայեր և § 101, Առաջադրներով բարդություններ):

3) Կան բարմաթիվ հարադրական բայեր, որոնք իրենց հարադիրը մասի հետ սկզբնապես լեզվի մտածության առանձին չուռ տված ձևերը, շրջաբանական առաջյուններ. բայց հետզհետե որոնց պատկերավոր կամ ձևավոր նշանակությունը և չարահյուսական կապակցությունը մթնել են, և այդպիսի կապակցություններն սուացել են վերացական բայերի իմաստ: Որինակ՝ պար գալ, պար ածել, սկզբնապես մտածվել և ասվել են «ի պար գալ», «ի պար ածել», այսինքն՝ պարի մեջ գալ, պարի մեջ բերել («ածել» հին լեզվի մեջ նշանակում և «բերել»), ապա հետագայում սուացել են «պարել», «պարել տալ» նշանակությունը:

Այսպես և ցույց տալ սկզբնապես գործածվել և սեռական խնդրով, որինակ՝ սովել է՝ «յարդանաց—Տարդանքի ցույց տալ», վրի մէջ «ցույց» բառը պահում էր գոյականի և հայցական հոլովի նշանակութիւնը. բայց այժմ «ցույց տալ» իբրեւ մի ներգործական բայ՝ հայցական է առնում՝ «Տարդանք ցույց տալ»։

Յերբեմն դժվար է վորոշել, թե յերբ բառերի այսպիսի կապակցութիւնները պահում են իրենց սկզբնական նշանակութիւնը և յերբ մի բայի ընդհանուր վերացական նշանակութիւն են առացել. միևնույն կապակցութիւնը մերթ այսպես և հասկացվում, մերթ այնպես, նայելով առանձին անհատների մտածողութեան յեղանակին։ Ուստի լեզվի մէջ յեղած բոլոր չբջարատական կապակցութիւնները կարելի չէ հարազրական բայ համարել, այլ միայն այնպիսիները, վորոնց չարահյուսական կապակցութեան յեղանակը այլևս պարզ դրալի չէ խոսողի համար, և կամ հարազիրը մենակ անկախ չի գործածվում։ Այդպես՝ հարազրական բայերը են նաև հետեվյալները. գործածել (գրվում և նաև միացած՝ գործածել, բայց խոնարհվելիս յերկու մասերն անջատվում են՝ գործ եմ ածում. ծագում է հին «ի գործ ածել» «գործի մէջ բերել» կապակցութիւնից), գործ դնել. ման տալ, ման ածել, ման բերել, ման դալ. քարշ տալ, քարշ դալ, ղլուխ դալ, ղլուխ բերել, ղլուխ յելնել. յեվ դալ, յեռ դալ, յեվ տալ, յեռ տալ, լույս ընկնել, հուպ տալ, հուպ դալ, թաթ տալ, հայդն։

Այս կարդի հարազրական բայերի մէջ պետք է դնել և այնպիսի դարձվածները, վորոնց չարահյուսական կապակցութիւնը հեշտ հասկանալի յե, բայց բայն ու հարազիրը միասին, իմաստի փոփոխութեամբ, առանում են մի նոր, ընդհանուր նշանակութիւն։ Այսպիսի բայերի հարազիրը հոդ չի առնում, ինչպես՝ վրեժ առնել, վրեժ խնդրել, յերես տալ, յերես առնել, ծաթ տալ, ձայն տալ։ Այսպիսի կապակցութիւնները, յերբ հարազիրը հոդ է առնում, դառնում են դարձեալ սովորական չարահյուսական. ինչպես՝ նա վրեժ առավ թշնամիներից. նա իր վրեժն առավ թշնամիներից։ Ձեռ նրան ձայն տվի. յես իմ ձայնը տվի նրան։ Այսպես և՝ ձեռ մեկնել մեկին, ձեռ հասցնել մեկին նշանակում են իրրեւ մի բայ՝ հրնել մեկին, իսկ ձեռը մեկնել մեկին, ձեռը հասցնել մեկին կապակցութեան մէջ պահվում է իսկական նշանակութիւնը, այն է՝ ձեռը յերկարացնել և հասցնել մին-

չեվ մեկը։ Ձեռ գարնել մի բանի նշանակում է՝ սկսել, ձեռնարկել. իսկ ձեռը գարնել մի բանի նշանակում է՝ ձեռը խփել, դիպցնել մի բանի։ Ձեռ բերել նշանակում է՝ առանալ, աշխատել. այլ և վերացական իմաստով՝ «դիտութիւն ձեռք բերել», վորի մէջ «ձեռք» բառի մասին այլևս չենք մտածում։ Այսպես առանձին բառերի նշանակութիւն ունեն հետեվյալները՝ իրար անցնել, դլխի ընկնել, ուշքի գալ, խելքի գալ, ուշից գնալ և բազմաթիվ ուրիշ գարձվածներ։ (Տես § 70)։

4) Միացած մի ընդհանուր նշանակութիւն են առանում հաճախ յերկու բայի հարադրութիւնները։ Այս դեպքում էլ յերկու կից բայերն առնում են իրրեւ մեկ բայ, և գրութեան ժամանակ լրիվ ձևի մէջ առարկա գնելն ավելորդ է. որ՝ պռկվել բնկնել, մեռնել պրծնել, ասորել պրծնել, թողնել գնալ, թողնել փախչել, գալ մոռնալ, գնալ հետանալ, կորել գեն ձգել, կրել բերել, կրել առնել, վազել գալ, վազել գնալ, թռչել գալ, թռչել գնալ, քշել առնել, կտրել թռչել, այրվել գնալ, մեռնել գնալ, հրել ջարդել, ծակել հանել, ծակել դուրս գալ, կորել հանել, (թռավ յեկավ, թռան գնացին), գալ հասնել, գնալ հասնել։

81. ԿՅԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱԳՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻՑ։—

Հարադրական բայերը մխանում են իրրև մի բառ, որինակ՝ «աչք ածել» անջատ ենք գրում, իսկ «ակն ածել» գրաբարում արգեն «պատակառել» նշանակութեամբ գրվում է միացած ակնածել, վրից ակնածու։ Գրաբարի ի զոր ածել այժմ գրում ենք սովորաբար «զործածել», թեպետ ասում ենք նաև «գործ եմ ածում»։ գրաբանից կազմված է գործածութիւն։

Յերբ հարադրական բայերի բներից նոր բառեր են կազմվում, վերջիններիս մէջ հարադիրն ու իր բայի բանը միացած իրրեւ մի բառ են գրվում, վորովհետեվ բարդութեան յերկրորդ անդամը չի գործածվում այն ձևով կամ նշանակութեամբ, վոր ունի բարդութեան մէջ։ Այս կարդի բարդութեան մէջ հարադրի ձայնավորները անփոփոխ են մնում։ Որինակ՝ հանձն առնել (գրաբար՝ յանձն առնուլ), բայց հանձնառու, հանձնառութեան (գրաբար՝ յանձնառու, յանձնառութիւն). վրեժ խնդրել, բայց վրեժխնդիր. վրեժխնդրութեան. վրեժ առնել (գրաբար՝ վրէժ առնուլ), վրեժառու, վրեժառութեան, կա նաև իսկական բարդութեամբ վրե-

ժառու, վրիժառություն: Այսպես նաև՝ «ծունր դնել», բայց ծունրպրություն, կա նաև իսկական բարդությամբ ծնրադրություն:

Գրաբարից ունենք՝ հանճնարար, հանձնարարել (գրաբարի՝ «յանձն առնել» բայից, վորի կատարյալն է՝ յանձն ոտարի), հուշարար, հուշարարություն (գրաբարի՝ «յուշ առնուլ», «յուշ ոտարին» ձևից): Գրաբարի «ի կիր առնուլ», «ի կիր արկանել» բայերից՝ կիրարկություն, կիրառություն. «ակն կալել» բայից՝ ակնկալություն: Նույնպես գրաբարի «բանս արկանել» բայից՝ բանաարկու. օրհնս դնել-օրհնադիր, այժմ՝ արհնադիր (արհնք դնող). նույնպես օրհնս ղեալ-օրհնաղէտ, այժմ՝ արհնաղետ (արհնք ղեցող): Սրանց անալոգիայով, բայց ինչը ըմբռնումով, վերջերս կազմված են «դիծ» և «դիրք» անուններին հետ՝ «որհնադիծ», «որհնադիրք», փոխանակ իսկական բարդության— «որինադիծ», «որինադիրք»=որհնքի նախադիծ, որհնքի դիրք (տես 94-4):

Ժողովրդական լեզվի մեջ հաճախ կազմվում են էական բարդությունը վոչ միայն հարադրական բայերից, այլ և ամեն բայից ու իր լրացումից: Այսպիսի բարդությունները վերջից սովորաբար ունեն մի ածանցական մասնիկ: Որինակ՝ իրար անցնել-իրարանցում, սիրտ կտրել-սրտակտրում, խոսք առնել-խոսքառում, յերես բռնալ-յերեսբացում, գլուխ կախել-գլխկախում, հոգի քակել—հոգեքակում, ճրագ անցնել—ճրագանցում. յերես ծեծել-յերեսծեծանք, գլուխ ծեծել-գլխածեծանք, ծառ կոտրել-ծառկոտրանք. ճրագ վառել—ճրագվառոց, ճրագ կպցնել—ճրագկպոց, արեվ մտնել-արեվմտոց, արեվածագ, հավքոտոց, աչերիվ թռչել—աչերեվթռչոց, աչքի լուսել—աչքլուսոց. մեռ մորթել—մեռամորթեք. դաւրանեք, ճոթկարեք, ականջկալիք, բերանբացեք, բերան-վրակեք—նչան ոտք-ձիշատուք, բարեվ ոտք-բարեվոտուք.—ազա բերել-տղարերք. ճունհալք, վրա դնել-վրադիր(ք)-առատ ասել-առատասան. քար քաշել—քարքաշի. դուռ դալ-դռբեկան. որթծածկան (որթոցի ծածկոց), պատճական (պատ ծածկող) կուժ կոտրել-կուժկոտրուկ, ամանկոտրուկ (կախաչ). սիրտկտրուկ, սիրտմաշուկ (իսկական բարդությամբ՝ սրտմաշուկ): Այուվերիկ, հողփորիկ, մարդխարիկ (թռչուն է), ալուրմաղիկ (թիթեռ), բանջարբուսիկ, բանջարբուսուկ, ապվենխրատուկ

(բույս է), իշխրատուկ, արունդվիկ (արունդմա), ամանդվիկ (ամանդմա).—սիրտխառնուկ, յերեսառուկ, բերանբացուկ, խոսքխուկ.—Առաջը կալել—առաջկտրուկ (խաղ, առաջկտրուկի տալ) կուտրոնուկ, ականջրոնուկ, ականջքաշուկ, աչքխփուկ (ի խաղ). յերեսարբիչ, յերեսարբիկ, բուրդ ճաղկել-բուրդճաղկիչ, կրակիմափիչ, այլև կրակիմափ.—վրեն ածել—վրեենածդվի (առանց հարձնելու, վրան դցած հարուստ), բանուղովի (բանեցնելու ոգած).—գլուխկոնծի (տալ, իսկական բարդությամբ՝ գլխակոնծի), գլուխկաւգնուկի, գդալփոխի:—Առանց ածանցական մասնիկի՝ դիրիժոր, ապշիկաս, խոսքկոպ, կրակքաշ:

Գրական լեզվի մեջ ևս վերջին ժամանակներս կազմվում են այսպիսի էական բարդություններ. որինակ՝ մաս հանել—մասհանում, մեջ բերել—մեջբերու. մեջ խաղալ-մեջխաղացում, առաջ քաշել-առաջքաշում, առաջքաշուկ, առաջ անցնել-առաջանցում, վրա խաղալ-վրախաղացում, յեա գառնալ, յեագարձում, յեախաղացում, չարքը կալնել—չարքկալ, առաջ չարժվել.—առաջչարժում, յեա չարժվել—յեաչարժում. (Հմմտ § 103 «առաջ», § 118 «յեա»):

82. ԲԱՂՀԱՅՈՒՄԱԳԱՆ ՀԱԲԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:— Հաճախ նույնանիշ և համանիշ (մոտիկ նշանակություն ունեցող) բառերը, «ու» (և) չաղկապով, կամ առանց չաղկապի, հարադրվելով՝ առնվում են իրրև մի բառական միություն: Այսպիսի բառերը յերբ առանց «ու» (և) չաղկապի յեն, վոչ մի կնատարություն չեն բաժանվում, այլ, ընդհակառակն, կարող են միանալ դծիկով: Այս հարադրությամբ առատանում կամ պրանում է բառի խմասը: Այսպիսի բառերով կազմվում են նաև հարադրական բայեր. որինակ՝ ջաղջղ ու բուրդ անել, յեր ու ցան անել, հալ ու մաշ լինել, գունդ ու կծիկ, լուս ու մունջ, ձայն ու ծուռ, ահ ու սարսափ, աղ ու վախ, հառ ու կտոր. թիվ ու թիվունք, ահ ու դող, ծեծ ու փետ, ձայն ու ծպտուն.—լրիվ-մնջիկ, յեր-յան, գոռում-գոչում, ճար-ճարակ, թիվ-թիվունք, հատած-կտրած, կորած-մոլորած, գուգված-պարզարված, այրել-մրիկել:*

Այս կարգին պատկանում է նաև այնպիսի բառերի հարադրությունը, վորոնք իրենց նշանակությամբ վորևե առնչության ունեն միմյանց հետ, բայց հարադրվելով չեն պահում յուրաքանչյուրն իր առանձին նշանակությունը, այլ միասին մի նոր ընդհանուր, յերբեմն հավաքական իմաստով են առնվում իրրև մի

բառական միութիւն: Սրանք էլ սովորաբար միանում են «ու» (և) շաղկապով կամ թէ չէ՝ դրվում են առանց վերևի կետադրութեան, յերբեմն միանում են դծիկով. օրինակ՝ առ ու լիս (սկզբնապես՝ առնել ու լսել. ապա՝ դրույց, խոսակցութեան, ուրիշի վրա վայրկվերս դրույց), յեփ ու թուխս, տուն ու տեղ, կեր ու խում, վար ու ցանք, անց ու դարձ, չինք ու չնարհք, որ ու դիշեր, ծառ ու ճուղ, հալ ու ճիվ, թուք ու մուր, տես ու ճանաչ, մին ու հար, կալ ու կապ անել, տուր և առ, վեր ու վայր, դես ու դեն, քար ու քանդ անել, բաց ու խուփ անել, տակն ու վրա անել.—կառնէչ-կարմիր (ծիածան), դիշեր-ցերեկ, բարձի-թողի անել, տալ-խոսել, գրել-կարդալ, գնալ-գալ, ճյուն-ճմեռ, ծալ-ծիծաղ:

Այս հարաբերութեան մի առանձին տեսակն են կազմում և իրար հաջորդող թվականների (միավորների ու տասնավորների) միացումները, որոնց մէջ թվականները չեն պահում իրենց նշանակութիւնը, այլ ներկուսը միասին մի մեծավոր անորոշ թիվ են ցույց տալիս: Սրանք էլ կարող են դծիկով միացած գրվել, ինչպես՝ մեկ-յերկու, մի-յերկու, յերկու-յերեք, յերեք-չորս, չորս-հինգ և այլն. տասը-քսան, քսան-յերեսուն, յերեսուն-քառասուն, հիսուն-վաթսուն և այլն:

Այս բառերի միացմանն իրրև մի բառական միութեան՝ ծառայում է այն, որ դրանք հոդ առնում և հոլովվում են ինչպես մեկ բառ, օրինակ՝ անց ու դարձը, անց ու դարձի, անց ու դարձից, անց ու դարձով. լաց ու կոծը, լաց ու կոծի, լաց ու կոծից, լաց ու կոծով. գրել-կարդալը, գրել-կարդալու, գրել-կարդալուց, գրել-կարդալով. գնալ-գալ, գնալ-գալու, գնալ-գալով և այլն: Հաճախ իրրև մի բառ հոլովվում և հոդ են առնում նաև ուրիշ բառերի հարաբերութիւնները, որոնք սովորաբար գործում են բնդհանուր նշանակութեան են առանում. ինչպես՝ մարդ ու կնիկ (ամուսիններ), մարդ ու կնիկա. հայրն ու մայրը (ծնողներ), հորն ու մոր, հորն ու մորից, հորն ու մորով: Այսպես նաև մեր ու մանուկ, մեր ու ապա, մեր ու աղջիկ, հարսն ու սկեսուր, հարս ու փեսա, շուն ու գել և այլն, որոնք հոլովվում են իրրև մեկ բառ:

83. ԿՅԱՆՔԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՂՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ:— Մի անգամ, որ մեր լեզվական պատկերավոր հոդի և հոլովվելու նկատմամբ՝ բազմահյուսական հարաբերութիւնները իրրև մի բառական միութիւն են ըմբռնվում, վերջին վերջը պրանք ձգտում են կցվելու իրրև մեկ բառ և մեկ դառնալու: Կան նուիրական բառեր, որոնք չառնելն արդեն միացած են գրում իրրև մեկ բառ, ինչպես՝ կերսուսանգես, անցուդարձ, յեռուգետ, առուվոր, միմուռաք: Կան և այնպիսիները, որոնք արդեն միշտ միացած են գրվում՝ այրուձի, առուտուր, տարուրեր, յերթեվեկ, յելեվէջ և այլն:

Այսպիսի բառերի կցմանն իրրև հիմք ծառայում է միշտ այն, որ դրանց նշանակութիւնը բոլորովին փոխվում է և դրանք իրրև մեկ բառ են հոլովվում ու հոդ առնում, այլև այն, որ հարաբերութեան անդամներից մեկը, կամ յերկուսն էլ մենակ ու անկախ չեն գործածվում, կամ թէ դրանցից նոր բառեր են կազմում, որոնք միացած են գրվում, և այս նոր բառերի անալոգիայով նաև դրանց բունը միացած է գրվում: Այս պայմաններից մեկը միայն բավական է այդ բառերը միացած գրելու համար. բայց յերբեմն ազդում են բոլոր պայմաններն էլ միասին: Որինակ՝ առուտուր, առեվտուր, որ նշանակում՝ առնել ու տալ, միացած է գրվում, որովհետև առաջել է «վաճառականութեան» նշանակութիւն և դրանից էլ կազմվում է առեվտրական բառը: Բայց յերբ այդ բառերը սկզբնական նշանակութեամբ են առնվում, գրվում են անջատ, ինչպես հետևյալ առածի մեջ, «Ասել են՝ առ ու առը և գոչ առ ու կուլը»: Յելեվմուտ, յելումուտ— սկզբնապես՝ յելնել ու մտնել, ապա դրարարում՝ «յելմուտք» նշանակում է՝ յելնող-մտնողներ. ճանապարհներ. հոլովվում է՝ «յելմտից». «յելումուտք» այժմ նշանակում է ֆինանս. գրանից «յելեվմտական»: Բայց յերբ այդ բառերը պահում են իրենց սկզբնական նշանակութիւնը, հոլովվում և հոդ առնում են յերկու անդամներն էս, ինչպես՝ նա հետևում է իմ յելին ու մտին (իմ նեբա ու դուրս անելուն): Յերթեվեկ—սկզբնապես՝ գնալ ու գալ, օրինակ՝ մարդկանց յերթեվեկը կտրվեց. ապա գնացող-յեկող, օրինակ՝ յերթեվեկ աշակերտ, յերթեվեկ դպրոց. դրանից՝ յերթեվեկել, յերթեվեկություն: Գրաբարում՝ «յերթեվեկ ծառայութեան և մակընթացութեան: Այս բառը դրաբարում արդեն հոլովվում է իրրև մեկ բառ՝ յերթեվեկի: Այրուձի— սկզբնապես՝ ազատարշ ու ձի, գրաբարում հոլովվում է՝ առն և ձիոյ, բայց և իրրև մեկ բառ՝ այրուձիոյ. առաջել է «հեծելազոր» նշանակութեան: Յելևէջ— սկզբնապես՝ յելնել և իջնել. ապա՝ առաջման և ձայնի յելևէջները: Աղուհաց առաջել է պանապան նշանակու-

թյուններ՝ հյուրասիրություն, մանրիմ բարեկամություն, ջերմախոհ, մեկին սրած լավություն, սրինակ՝ ապ ու հայս աչքդ բոնի: Աղուհացը մոռանալ—ջերմախոհը մոռանալ· աղուհացը չառ ուժով և յեղել— չառ բարիք և սրած յեղել· Աղուհացիկը (մանրիմ) մարդկանց կարառ մնացի· Աղուհացով մարդ ե (հյուրասեր ե)· Այսպես և կերուխում— խնճույք, ուրախություն· միուռնար, մեկուճար—միամոր· կալուկապ անել, կալուկապվել—պապանձվել, չչկլվել, չխոթվել· կալուկապ ընկնել, կալուկապ դնել, չխոթեցնել: Անցուդարձ—սկզբնապես՝ անցնել ու դառնալը· ապա՝ յերթևեկություն, դնալ-գալ· անցուդարձ անել· ապա՝ նաև տեղ ունեցած դեպքեր, որվան անցուդարձը: Բացուխուն անել, բացուխուվիլ, բացխովիլ խոս: Կպուռմիջ անել, կամքիջ անել: Տալուբեր, տարուբերել— սկզբնապես՝ տանել ու բերել· ապա չարժել, ծռալ, տատանել, ալեկոծել: Ջարդուբուրդ անել, ջախուբուրդ անել, կազմված և այնպիսի բաներից, որոնք միևնույն անկախ չեն գործածվում կամ սակավ են պատահում· Ջախել (ջարդել) և բրդել (մանրել, կտտրել) բայերի արմատները· «բուրդ» նաև «բանը բուրդ ե» դարձվածի մեջ:

84· ԿՅԱՆՔԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐ ԴՈՅԱԿԱՆԻՆ, ԱՅԼԵՎ ՈՒՐԻՇ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ:— ա) *Միացած պրվում են սեռական վերաբերյալ ու իր պոյականը, ինչպես՝ հորեղբայր, մորեղբայր, յեղբարորդի, հորքույր, մորքույր, վորոնք իրրեվ մի բառ առնելով՝ հոդը առանում են վերջից՝ հորեղբայրս, մորքույրդ, յեղբարորդիս, մինչդեռ յերբ իրրեվ առանձին բառեր են առնում, հոդը պրվում է սեռականի վրա՝ հորս յեղբայրը, յեղբորդ վորդին, մորս քույրը: Գրաբարից առնենք՝ «քեռայր», «քեռորդի», վորոնց մեջ սեռականները (քեռ) հնացած են, ուստի և այդ բառերը կորցրած են իրենց չարահյուսական նշանակությունները: Այսպես նաև՝ հանուսուտակ, ընկերի (ընչուն), արենակեր (արյանակեր), արենապատ, արենհատ, տանուտիկին, վորից տանուտիկնության, տանուտեր· տանուկեր (իսկական բարդության՝ տնատեր): Այսպես կան բարբառների մեջ հնացած սեռականներով՝ ոտացաման (վոտնաման), աչիցուկնիկ և նմանները: Այս բացառություններն, ապրվելով իսկական բարդություններից, կազմվում են նաև «Ա» հոդակապով՝ հորաքույր, մորաքույր, մորա-*

ուսա, հորաղբայր, չանուճանճ, ձեռացաչուր, ձեռացապիր, ձեռացավոլ:

բ) ավելի հաճախ միանում են իրրեվ մի բուռ ածական վերաբերին ու իր պոյականը, յերբ առաջինը կամ ավելի յերկրորդը իրրեվ անկախ բառ չի գործածվում, կամ յերկուսից մի նոր նշանակությամբ բառ և կազմվում· ինչպես՝ հարյուր ամ, հազար ամ, բայց հարյուրամյա, հազարամյա· հիսուն ամ, ութսն ամ, բայց՝ հիսնամյակ, ութսնամյակ· յերկու ամիս—յերկամսյա, յերկամսյակ· յերկայրի, յերկդեմի, յերկոտանի· —չորսլին, աքաղաղ (պրպրիկ)· կեսոր (յերեկվա ժամի 12-ը· կես որ—երեկվա կեսը, 12 ժամ), կեսգիշեր· կեսգիշերային: Այսպես և ուրիշ բարդություններ՝ ամպհովանի, հինավուրց, կինամամուտ, կախարսպան (ձող), կերցավ, վոչոք, վոչինչ, ոչավ, սրմին, իքմին· գործածական՝ մեկել, մեկուսակ, մեջտեղ, այսինչ, այնինչ·—նուիրհատյան, նուիրժամյան, ձերբազատում (ձերբ-ձեռքով՝ հնացած գործնական հոլով)· նուիրակս «ս» հոդակապով՝ ձերբակալ, ձերբազատ·—Այսպես, այդպես, այնպես, նուիրպես, վորպես, վորպեսզություն, ինչպես· Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նուիրպիսի,—Այսքան, այդքան, այնքան, նուիրքան, վորքան, վորքանություն·— Այսչափ, այդչափ, այնչափ, նուիրչափ, վորչափ, ինչչափ·— Այստեղ, այդտեղ, այնտեղ, վորտեղ, ինչտեղ, մեջտեղ:

գ) Միացած պրվում են և ուրիշ բառեր, վորոնց բերականական ձևերը հնացած են, կամ չարահյուսական կապակցություններ, մանավանդ յերբ նախդիրներով են, անհատականալի յեն, և կամ առնում են իրրեվ մի բուռ մի նոր նշանակությամբ· որինակ՝ այսուհետև, այնուհետև, վորսվհետև· վարևվայ, մեջտեղ, մոռևմոռ, փսիևփսի, տակնուռա, հասկնհաս, փոխներփոխ, սրնցոք, վարդեցորդի, տարեցտարի, ժամևժամ, անդնուռանդ, սրբնդմեջ, բերանբերիվար, բերանբերիվեր, պառանիվեր, պառանիվարս, զարիզուռս, զարիվեր, գլխիվեր, գլխիվար, գառիվեր, պահիվայր, տեղեցտեղ անել, տերեցտեր անել, գերիվերս, վերիվերս, վայրիվերս, վերջիվերջս, վերիվայրում·— ակնհայտանի, տիեզերիվ, գամհանդիման:

դ) Կան մի քանի բարդություններ ևս, վորոնք կազմված են ամբողջ խոսքերից, ինչպես՝ վարևս, ովևս, ինչևս, ովևիցե, ուրևիցե, յերբևիցե, վորևիցե, տերտողմյա (համբիչ, համբիկ), մնասարևվ (անել, տանել), քաջալերել («քաջ լիր» խոսքից):

Այսպես և ուրիշ բառեր՝ հաճախ իրար հետ գրվելով վերջվերջս ձգտում են միանալու, ինչպես՝ նայիվ (նաև), այլևվ (այլ և), նա՛մանավանդ:

ե) Թվականները՝ տասնումեկ, տասնմեկ, տասնմեկու, տասնմեկը, տասնուչորս, տասնչորս, տասնուհինգ, տասնհինգ, տասնումեկս, տասնմեկս, տասնմեկը, տասնումեկը, տասնմեր: «Քառասից» սկսած «և» չակերտով սովորաբար անջատ են գրվում՝ քան և մեկ, քանմեկու, քանմեկը, քանչորս, քան և չորս, քանհինգ, քան և հինգ և այլն. յերկու հարյուր, յերկը հարյուր, չորս հարյուր, յերկու հազար, յերկը հազար և այլն:

Հետևյալ տեսակի բարդությունները սովորաբար գրում են անջատ կամ դծիկով են միացնում. յերկու-պլխանի, յերկը-աչքանի մեծ-բժանի, կարմիր-քամի, կանաչ-կարմիր, (ծխածան), իրատասածի, բայց՝ իրատասածություն: Դծիկով են միանում նաև վոչ-ոնդեկի, վոչ-հետու, վոչ-մեծ և նմաններըը:

85. ԿՐԿՆԱՎՈՐՆԵՐ:— Հարադրության մի տասնձին տեսակն է նաև բառերի կրկնությունը, որով կազմվում են կրկնավոր բառերը: Կրկնվում են սովորաբար կարճ՝ միավանկ, յերկվանկ և յերկվանկ բառերը, վորոնք գրվում են անջատ, յերբեմն միանում են «ու» (և) չակերտով կամ դծիկով:

Գոյականների կրկնություններով կազմվում են վորակական ածականներ, վորոնք կարող են և իրրև մակրայ գործածվել, ինչպես՝ կերպ կերպ, վունչ վունչ, տեսակ տեսակ, թել թել, բուռը բուռը, խումբ խումբ, տեղ տեղ: Այս կրկնություններըը՝ նայելով կերտառության՝ տասնում են պատահականության, բազմակրնության նշանակություն, կամ ցույց են տալիս համապրի բանների հաջորդության ունակ սովորաբար գրվում են հոդնակի գոյականի հետ. ինչպես՝ տեսակ տեսակ հագնը—պատահան տեսակի, շատ տեսակների հագնը. վունչ վունչ ծաղիկներ—պատահան կամ շատ փնջերով ծաղիկներ. գունդ գունդ գորքեր—պատահան կամ շատ գնդերով գորքեր. բուռը բուռը արտասուք թափվեց—բռներով արտասուք: Զորքերը գնացին գունդ գունդ—գնդերով, գունդ գնդի յետևիցից, գունդ առ գունդ: Նրանք խումբ խումբ հետացան—խմբերով, խումբ խմբի յետևիցից: Տեղ տեղ յերևում եր արդեն կանաչը— այստեղ այնտեղ, պատահան տեղերում:

Այսպիսի կրկնությունների մեջ յերբեմն մտնում է «առ» նախդիրը, ինչպես՝ արտագրել տող առ տող, բառ առ բառ. ժամանակ առ ժամանակ յերևում էին. մեկ մեկ թվել, մի առ մի թվել: Թուի առ թուի (թվենթուի) վորոնել:

Դերանունների կրկնությունները, սովորաբար «ու» չակերտով, տասնում են բազմակրնության նշանակություն, յերբեմն ցույց են տալիս մենակ, առանձին մի բան անելը, որինակ՝ ո՛վ ով, ո՛վ ու ով են գնացել: Ի՞նչ և (ու) ինչ ասած քեզ-կես ու կես նստած մտածում էի. ինձ ու ինձ այրվում եմ. նա իրան իրան մխաք է անում:

Ածականների ու մակբայների կրկնությունները առատացնում են ածականների իմաստը՝ մեծացնելով նաև բազմակրնության նշանակությունը, ուստի գործ են ածվում սովորաբար հոդնակի գոյականների հետ. ինչպես՝ ծանր ծանր խոսքեր (խիստ ծանր), սուր սուր (փշեր), լավ լավ (ջրեր), դառը դառը, կլոր կլոր, սև սև (աչքեր), մոտիկ մոտիկ, կամաց կամաց, քիչ քիչ, արագ արագ, շուտ շուտ (խոսել).— մերթ մերթ, յերբեմն յերբեմն, հաճախ, սովոր ու սովոր (առատացած). դեմ ու դեմ (դեմ առ դեմ) կանգնած էին (ուղղակի իրար դիմաց). ինչ ինչ բաներ, շատ շատ, ո՞վ ու ո՞վ բաները. այս ու այն բաները: Այսպիսի կրկնությունները՝ իրրև մակրայ գործածվելով բայի հետ՝ ցույց են տալիս նաև գործողության կրկնություն, յերբեմն նաև մի առարկայի վիճակը կամ դրությունը, ինչպես՝ մանր մանր վերհել. ուշ ուշ գալ. նրանք շատ շատ (հաճախ) գալիս են մեզ մոտ. քիչ քիչ խմել. մեկիկ մեկիկ բացատրել. թեյը առաջ առաջ խմել. սառը առած ուտել մի բան. յերկաթը առաջ առաջ կծեծեն. հիվանդը հիվանդ՝ տեսից վեր կացավ (հիվանդը դրությամբ). ամանը լիքը լիքը տարավ:

Թվականների կրկնությունները բացի բազմակրնություններից՝ տասնում են նաև բաշխական նշանակություն. «մեկ մեկ», «մի մի» նշանակում է՝ մարզագլուխ մի, յուրաքանչյուրին մեկ, մեկական, որինակ՝ նրանք մի մի գերք առան ու գնացին. յերկու յերկու, յերկերկու, յերկուական. յերկը յերկը, յերկերկական և այլն: Յերկու-յերկու, յերկերկու գնալ, յերկը-յերկը կանգնել, չորս-չորս կանգնել (յուրաքանչյուր չորքում յերկու կանգնել): Քանի՞ քանի՞ անգամ (խիստ շատ անգամ):

86. ՀՆԶՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՄԲ ԿՐԿՆԱՎՈՐՆԵՐ:- Բառերի կրկնության ժամանակ՝ բառերից մեկի ձայնավորը կամ բառաձայնը յերբեմն վոխվում է ուրիշ հնչյունի, կամ գալս և ընկ

նում: Այսպիսի կրկնություններով ընդարձակվում և բառն նշանակությունը. առնվում և մի առարկա իր նմանութեամբ, իր պարագաներով, կամ մի հատկություն իր նման կամ մոտիկ հատկություններով: Միանում են «ու» շաղկապով կամ դիմիով, այսպես՝

1. Յերկրորդ մասի մէջ ձայնավորը փոխվում է «ու» ձայնավորի՝ ծակ ու ծուկ (ծակծուկ), մարդ-մուրդ, ալքատ-ուղքատ, վալաս-փուլաս, մանր-մունր, ձեն-ճուն: «Մեր մարդ-մուրդը չըթացել է» (Պռոշ.), հարայ-հուրայ, վառա-վուռա, հայ-հույ, ապատ-ապուռ (պրպարբից):

2. Յերկրորդ մասի սկզբում բազաձայնը վոխվում և ուրիշ բազաձայնի, սովորաբար «մ», ինչպես՝ հաց ու մաց, առատ-մատ առատ ու մատ, ժուռ ու մուռ, անվիկ-մնվիկ, ճանճ ու մանճ, ցախ ու մախ, կլոր-մլոր, պարապ-սարսպ:

3. Յերկրորդ մասի սկզբում ավելանում է մի բազաձայն, սովորաբար «մ». ինչպես՝ ոլոր-մոլոր, ամել-մամել, ամոն-չամոն, աղ ու մաղ, առակ-չառակ, առակ-պառակ (խոչտառակ):

4. Առաջին մասի սկզբում գուրս է ընկնում բառասկզբի բազաձայնը. ինչպես՝ ալլուն-վալլուն, ավալ-թավալ գալ, առաջ-վառաջ. առջ ու վառջ, արան-չարան. «Ունդ-բունդ չես ճանչնար» (Գամառ Քաթիպա), ապաղ-ճապաղի գալ (Հանկարծամահ լինել. ճապաղել—փոխել բառից):

5. Փոփոխությամբ կրկնավորների մէջ պետք է դնել նաև ածականների (ավելի գործ ցույց ավող) առաջին վանկի փոփոխությամբ կրկնությունը բառի սկզբում, վորով առատականում է բառի նշանակությունը. ինչպես՝ կախ-կանաչ, ճեփ-ճերմակ, ճխփ-ճերմակ, սիպ-սիպատակ, սեվ-սեվ, սիվ-սեվ, կաս-կարմիր, կուպ-կարմիր, միս-մենակ. լեփ-լեցուն, լեփ-լիքը և նմանները:

87. ԿՅԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐԿՆԱՎՈՐՆԵՐԻՑ:— Բառերի կրկնությունները հաճախ միացվում են դիմիով, բայց ունենք բավական թվով կրկնավոր բառեր, վորոնք միացած երբեմն մի բառ են գրվում, առանձնապես անդամխնները, վորոնց քերականական կապակցությունը մթնած է կամ նախդիրներով մխանալու, կամ հնչյունների փոփոխության պատճառով, կամ թե նրա համար, վոր դրանցից նոր բառեր են կազմվում, ինչպես են՝ դուդմդուդմ (դուդուկ), պռոխպռոխ, փայլփայլ, կապկպոտ, պաչպչոտ,

վոխվոխ, վոխաոխ, խառնիխուռն, չաբչաբ, մեքմեքմեքմ, մեջընդմեջ, պեմապեմ.—բևկբևկ, բևկբևկան. գնդգնդ, դեպդեղել. վառվառ, վառվառուն, վառվռուն. պնապնա, պնապնություն. վարվրուկ, թրթիռ, թրթռալ, թրթռուն. կոկիճ, կոկճալ. ոռոռուռ, ոռոռալ, սրռռալ. չաղչղդ, չաղչղդալ. մեկմեկու, չորչրուկ, ջրջրուկ, խլխլուկ:

Հին լեզվից ևս ունենք բազմաթիվ այսպիսի կրկնավորներ, որինակ՝ բարբառ, հեգեղ, խորխորատ, ապատապատուկ («ապուռ» բառից), միմյանց («մի մի» բառից, ինչպես «մեկ մեկու»), քաբքառատ և այլն: Այսպես և բարբառներից՝ չեմուչեմ անել («չեմ» բայի փոփոխությամբ կրկնությունից), կացուկամ, կացուկում անել (կազմված «կաց» և «կամ» բառերից):

Պրպարբից ունենք կրկնավորներ նաև իսկական բարդության ձևով, ինչպես՝ գունդապունդ, դեղդեղ (առանց Ու, Յ ձայնավորների փոփոխության), չեղջաչեղջ, կեղբակեղբ, գանգատան, ձեձամեձ, ջեբամջեբամ, նազանազ, չաբաչաբ, ապջամապջ, ժանտամուտ, արհամարհել, խառնամառն, հատատմհատ, խոժոռոտ:

88. ԿՐԿՆԱՎՈՐ ԿԱՄ ԿՐԿՆԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ ցույց են տալիս գործողության կրկնություն կամ բազմապատկություն. կապված են արմատի կրկնության հետ, իսկ հարազրական բայերի համար հարապնդին և կրկնում. որինակ՝ թավալ թավալ անել, փոնթ փոնթ գալ, վեր վեր ընկնել, վեր վեր թռչել, յեա յեա գնալ, պատառ պատառ անել, ոպիկ ոպիկ գալ և այլն: Այսպես և մյուս բայերից՝ չավել-չավչվել. վազել-վազվզել. թավել-թավթավել, թավթավել. ծակել, ծակծկել. խապել խապխպել. վառել, վառվառել, վառվռել, վռվռալ.—բևկել, բևկբևկել, կցել, կցկցել, կցմցել. ջախել, ջախջախել, ջախջխել, (ջնջխել). ձգել, ձգձգել, խլել, խլխլել. ջրջրել, ջրջրկել. ջրել, ջրջրել, (ջրջռել). փայլել, փայլփայլել, փայլփլալ, փրփլալ, ծփալ, ծփծփալ, դոզալ, դոդոզալ. չոզալ, չոչոզալ. ոլոլալ.—թրթռալ, մամռալ, փոխել, փոխփոխել, փոփոխել. հեծել, հեծեծել. բախել, բարախել. դարել, դաղարել:

Այսպիսի կրկնավորները կազմվում են հաճախ բնաձայնության ցույց տալու համար, ինչպես՝ ճվալ, ճվճվալ. ծվալ, ծվծվալ. պվալ, պվպվալ. ավավալ, խշխշալ, թրթշալ, վշվշալ, խոխոխալ, ճրըճռալ, մրմռալ, կրկռալ, գռգռռալ, կռկռալ, կղկղալ, գնգնալ,

փոխած և այլն։ Նույնպես բազմաձայնների փոփոխությամբ՝ թքա-
վոտ, գոմաղ, ջրվժալ, ճրթվրթալ, ծվվալ- զռվռալ, չմմփալ,
չըմմփչըմմփալ, չրմչրմչմալ· բրխալ, բրբրխալ· զրզրխալ,
պըրխպըրխալ։

89· ՆԱԽԴՐԱՎՈՐ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ։—Նախդիրները՝ ԱՌ,
ԸՆԴ, ԸՍՏ, Զ, Ի, (Յ), Յ, վորոնք հին հայերենի մեջ չատ կարե-
վոր տեղ են բռնում, նոր լեզվի մեջ բոլորովին կորել են՝ փոխա-
րեն նախդրավոր բառերով կամ հոլովներով։ Բայց հին լեզվից բա-
վական թվով նախդրավոր բառեր մտել են նոր գրական լեզվի մեջ,
նախկինով ուրիշ բառերով կամ հոլովներով։ Բայց հին լեզվից բա-
վական թվով նախդրավոր բառեր մտել են նոր գրական լեզվի մեջ,
և նրանց անալոգիայով մեկմեկ նոր բառեր էլ են կազմվում։ Նախ-
դիրների հարաբերությունը գոյականների հետ կից է դրվում, քա-
նի որ նախդիրներն այժմ այլ ևս անկախ գործածություն չունեն։
Այսպես կոչված բարդությամբ կազմված են ԱՌ ևախդրով՝ առ-
այժմ, առժամանակ, առժամանակյա· առաիչա, առժամյա (առ-
ժամ, առժամայն)· առորյա (առոր), առամոյա (առամբա, առ-
այսոր, առաղագա)·—առհասարակ, առնչություն («առ ինչ»
հարաբերություններից), առձեռն, առանձին, առընթեր,
առաչոք·—առողջ, առիա, առկախ, առչեզ, առիչեզ, առկայ, առ-
լեզի, գառիվայր,—առավել, առաոտավելն, առնվազն, աճապար (ա-
վելի մոտ առարածություն), առաջնյա և այլն։ «Ազգանուրյան»,
«առարտիկյան» և նման կազմություններն վերոհիշյալ այժմ ավելի
գործ են ածվում «մերձգանուրյան, մերձբարյան»։—ԸՆԴ ևախ-
դրով՝ ընդհանուր, ընդունայն, ընդդեմ, ընդառաջ, ընդերկար,
ընդառաջ, ընդմիջում, ընդամենն։

90· ՆԱԽԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐ։— Բայերի վրա դրվող նախդիր-
ները կամ, ինչպես ասում են «նախաբայերը»,—վոր մեծ տեղ են
բռնում հնդեվրոպական հին լեզուների մեջ, ինչպես՝ հու-
նարենում ու լատիներենում, իսկ նոր լեզուներից՝ ռուսերենում
ու գերմաներենում,—հայերենում նախադրարարյան չրջանում
ու գերմաներենում,—հայերենում նախադրարարյան չրջանում
արդեն գործածություններից դուրս են եկել։ Նախդիրները փոխա-
նակել են սովորաբար մակրայները, ինչպես, որինակ, գրաբա-
բար՝ ի բաց դնալ, վանկել ի նեբքո, առնուլ անդրէն, հանել չուրջ,
արկանել ի վերայ, առնուլ փոխարէն և այլն· կամ նախդրով գե-
րանուն լինդիրները, որինակ՝ կոչել առ ինքն, առնուլ ընդ իւր և
այլն։ Աբստահայերության այս մնացուն վեզանակները մնում են

նաև մեր նոր լեզվի մեջ՝ նեբառում վանկել, չորս կողմը կամ չուբ-
ջը նայել, փոխարենն առնել, մոտ կանչել, կամ նայելով գրու-
թյան Ա, Դ, Ը հոդեբով, ինչպես՝ մեջը մացնել, մոտս կանչե-
ցի, հետս տարա, հետդ տարար, հետը տարավ և այլն։ Բացի
այդ, ինչպես ասացինք, մեր նոր լեզվի մեջ կան արդեն բարդաթթիլ
հարաբերական բայեր, վորոնք առնվազն են երբեմն մի բառական
մխուրյուն և համապատասխան են ուրիշ լեզուների նախդրավոր
բայերին։ (Տես § 80·2, հարաբերական բայեր, և § 101· առաջա-
բերեալով բարդություններ)։

Գրաբարում կան նաև սակավաթթիլ բայեր, վորոնց սկզբից
մեացած կա մի նախդիր։ Այսպիսի բայերի մի մասը, սակայն,
իսկական նախդրավոր բայեր չեն, այսինքն՝ նախաբայի և բայի
հարաբերությամբ չեն կազմված, այլ նախդիրները նոր դրված են
անուններին վրա, և ապա նոր կազմվել են բայեր այդ նախդիր ունե-
ցող անուններից։ Տեսնենք նախ այս վերջին տեսակի բայերը, վո-
րոնք մոտ բոլորը գործածական են նոր գրական լեզվի մեջ։

Զ ՆԱԽԴՐՈՎ՝ զգեստել (զգեստին խնել) «զգեստի զարկանել»
ձևից։ ԱՌ ՆԱԽԴՐՈՎ՝ առչեզել (զգալ մի կողմ չեզել) առչեզ
բառից· առանձնել (վրան առնելնալ, վրան առնել, ապա՝ անվա-
կանել) «առ անձին առնել» ձևից· առձեռնալ, առձեռել (առյ ձևո-
րը, ձևոք ձգել) «առ ձեռն առնել, առյ» ձևից· առոտնել (վառքի
առակ առյ) «առ ոտն կոխել, առ ոտն հարկանել»
ձևից· առկայծել (կայծկ մտաենալ, մարելու մոտ լինել) «առ
կայծ մեբձել» ձևից։ ԸՍՏ ՆԱԽԴՐՈՎ՝ բառասնձնել, առանձնել
(վրան առնել) «բառս առանձին առնել» ձևից։ ԸՆԴ ՆԱԽԴՐՈՎ՝ ընդ-
բերաբանել· հնչափոխությամբ՝ բմբերաբանել (բերանին դալ, բերանը
կապել· խոչընդել) «բնդ բերան հարկանել» ձևից– բնդբռնել, հնչա-
փոխությամբ՝ բմբռնել (բռան մեջ առնել, բռնել·ասած՝ մաքով
բռնել, հասկանալ) «բնդ բռտն առնուլ» ձևից· բնդգրկել (գրկի
մեջ առնել) «բնդ գիրկ առնուլ» ձևից բնդգոգել (գոգի մեջ առ-
նել) «բնդ գոգն առնուլ» ձևից· բնդձեռել, բնձեռել (ձեռքի մեջ
դնել·առյ,բնծայել· հանձնել)«բնդ ձեռն առյ» ձևից·բնկոտմանել,
բնկոդմռել (մի կողմի վրա պառկել, թեք բնկնել) «բնդկողմն առ-
կանել» ձևից· բնդոդրել (կռնակի վրա բնկնել) «բնդ ոդն» նաև
ձևից·բնկրկրկել բնկրկել(կրունկի վրա յետ,յետև գառնալ·կրունկի
առակ կոխել, կրնկակոխ անել) «բնդ կրուկ գառնալ» և «բնդկրունկն

կոխել, հարկանել» ձեվերից. ընդվզել (գլխովայր ընկնել. հոխորտալ, բարձրամտություն անել, գլուխ բարձրացնել, ապըստամբել) «ընդ վիզն երթալ, անկանել» և «ընդ վիզ հարկանել» ձեվերից. ընդգնել, ընգգնել, ընկնել (ծունկի գալ, ծունկ չոքել. ծնկի տակ առնել, ճնշել) «ընդ դուռն հարկանել, իջանել, կալ» և «ընդ դռօք առնել» ձեվերից. ընդոտնել (վռաքի տակ տալ) «ընդ ոտն առնել» և «ընդ տաւրք կոխան առնել» ձեվերից. ընդպատպել (տալով տակ ծածկել, թաղել) «ընդ ափսով առնել» ձեվից. ընդհարկել (հարկի տակ դնել) «ընդհարկաւ առնել, դնել» ձեվից. ընդառաջել «ընդ առաջ երանել» ձեվից. ընդերկայնել «ընդ երկար առնել» ձեվից: Սրա նմանությամբ նոր կազմված և ընդլայնել: Այսպես կան նաև ընդօրինակել, ընդերկայնել, ընկապնել (կապկրպվել) «ընդ կապիճս դնել» ձեվից. ընդունել (մի տակ առնել) «ընդ ուրմբ առնել» ձեվից (ուն—վիզ):

Իսկական նախդրավոր բայերի սկզբի նախդիրները նախադեր են, այսինքն դրված են անմիջապես բայերի վրա: Այսպիսի նախդիրները բայերի ընդհանրների նախդիրներն են, մասնակ կրկնվում են նաև բայերի վրա, որինակ՝ ընդհարկանել ընդ ինչ, ընդ ումեք. առանցանել առ իւիք, առ ամաւր պանցանել պիւիք, պամաւր: Այսպես աշխարհաբարում էլ մեկ մեկ առում ենք՝ վրա փակել մեկի վրա, մի բանի վրա. մոտ դալ մեկի մոտ, առաջ, քաշել սեպանի առաջ և նմաններըը:

Գրաբարում կան «Ա» ՆԱԽԴՐՈՎ հետևյալ բայերը, որոնք աշխարհաբարում գործածական չեն. Առանցանեմ—առաջ անցնել. դուրս ցըցվել. առաքից անցնել: Առածանիմ, առածիմ—չըջարկել. պատվել, պատնաշ իր վրա: Առավելում—վրան ավելացնել. գերազանցել. սրանից՝ առավել, առավելություն: Առեղծանեմ—մեկնել, հանելուկը լուծել. սրանից՝ առեղծուած:

«Ա» նախդրով բայերը փիլիսոփայական գրվածքների մեջ մեծ մասամբ կազմված են հունարենի «սրօս», լատիներեն «սրը», «եպի» նախադրյալով կազմությունների նմանությամբ: «Ա» նախդիրն այս հարագրություններում պահում է իր նշանակությունները, որ են՝ 1) գործողության ուղղում դեպի որևէ մեկի մոտ, 2) գործողության կատարումը մեկի մոտ, 3) վրա, վրան, 4) առաջ, առաջը, դիմացը, 5) դեմ, ընդդեմ: Այսպիսի բայերից մի քանիսն են միայն աշխարհաբարում գործածական գրվածք, ինչպես՝ Ա-

ռագանել, վրից՝ առագանություն—լրիվ՝ ոտել (լրիվել, առնել) առ այլս: Առարկել, առարկանել—արկանել առ այլս—առաջը ձգել. սրանից՝ առարկու—դեմ ձգող, դիմախոս, դիմամարտ. առարկություն—առաջարկություն. նախագաուություն, ճառ. գնդիմություն, դիմախոսություն. առարկ, առարկված—պրոբլեմա, առնգծված. առարկ, առարկա—առաջ ձգած բան: Առառել—առնել առ այլս—խոսքն ուղղել. դեպի մեկը. ապա՝ անվանել, կոչել. սրանից՝ առասություն, առասացություն—առություն առ այլս. ապա՝ ճառ, խոսք. անվանում, կոչում. առասական անուն—հատարակ անուն: Ակնչել—կոչել առ... կոչ անել դեպի մեկը. մոտ կանչել. ապա՝ անվանել: Առձայնել—ձայնել առ... ձայնել դեպի մեկը. ապա՝ անվանել. ընդապրել, ընձայել. Առակնարկել—ակնարկել առ... ակնարկել ունկին, նայել դեպի մեկը. ապա՝ նշանակել: Առթեթել—բերել առ... մոտ բերել, առաջ բերել—ապա՝ վրա բերել, վրան կրել, վրան ունենալ: Առանկանել—առաջը, դեմն ընկնել. ապա՝ հանդիպել, պատահել: Առգալ, առրնթանալ, առմտանել—գալ, ընթանալ, մտնել մեկի մոտ, մեկի առաջ: Առնթել—առաջ խթել Առատանալ, առ նգտանել—իրեն առնել, իր մոտ բնդունել: Առգրել· վրից՝ առագրություն—մոտ գրել, հավելված գրություն, մոտը գրված. ապա՝ գրել առ ինչ—մի բան համարել, վերագրել: Ապահել—մոտը կանգնած լինել. հսկանալ: Ապակայել, ապակայանալ—մոտին կանգնել, առաջը լինել. մոտը կանգնացնել, հաստատել: Ապատառել—իրար մոտ դնելով պատել, բապպատել: Ապդնել, ապապրել, վրից՝ առապրություն—դնել առընթեր, մոտը դնել, վրան դնել. ավելացնել վրան, կցել. ապա՝ վերագրել, ընծայել. նոր կազմված է՝ ապիր իրրեվ՝ մոտը գրված, հետը գրված, կցված, հավելված: Ապնստել—մոտը նստել, առաջը նստել, վրան նստել: Ապլնուլ—վրան լցնել. լիքը լցնել. ապլի—լիքլիքուն. ապլցումն—լիքը լցվել կշտանալը: Ապցուցանել—առաջը դնել ցույց տալ: Առնավատել—դեմը ճակատել: «Առապրել» բայի ձևով նոր կազմված է՝ առածգել, վրից՝ առածիգ, առածգական, առածգություն—ձգել առ ինքն, դեպի իրեն ձգել, ձգվել:— Բուն փիլիսոփայական բառեր են՝ առեմ, առգամ, առլինիմ, առգառնիմ—առնթիեր լինել. մոտը, կողքին լինել. «առէ»—ինչ գոր առնթիեր կա: Սրանից՝ առգոյանալ, առգույը և այլն:

«ԸՆԴ» ՆԱԽԴԻՐՆ իրրեվ նախադաս գործածված ժամանակ պահում է իր նշանակութիւնները. 1) մէջ. ներս, միջից, միջում 2) հետ, 3) տակը, տակից, 4) վրա: Դրանով հարազրված բայերը մեծ մասամբ գործածական են աշխարհաբարում: Ընդունել, առնել—ընկալայ—ներս ընդունել, ներս առնել, ապա՝ ինքն առնել—վրան առնել, իրեն առնել: Ընդարձակ—արձակել ընդ ամենայն, տարածել. որանից ընդարձակ: Ընդոստել, գրաբար՝ ընդոստանել, ընդառաջել—ոստոստել ընդ վեր, ընդ ինչ, որինակ՝ ընդոստաւ մանուկն ընդ բանն—վեր ցատկել, վեր թռչել մի բանի վրա, մի բանից, մի խոսքից: Ընդարմանալ—արմանալ ընդ...գրարմանալ մի բանի վրա. ապշել, թմրել: Ընդհատել—հատանել ընդ մէջ...մի բանի միջից կտրել. ընդմիջել: Ընդհարվել, գրաբար՝ ընդ հարկանել ընդ ինչ, ընդ ամէն—զարնվել մեկի հետ: Ընդելանալ «ընդել» բառից, գրաբար ընդելանալ, ընդելնալ ընդ...մարմնավել մի բանի: Ընդելուզել, գրաբար ընդելուզանել ընդ...իրար հետ խլացնել, հազցնել, հետել: Ընդխառնել—խառնել մի բանի հետ: Ընդլծել—լծել մեկի հետ, իրար հետ: Ընծիւղել, ընծիւղել, ընծծիւղել ձեվից—հետը ծլել. որանից ընծիւղ, ընծիղ: Այսպես նաև՝ ընկեր, ընկեր ձեվից—հետևողական: Ընկլել, ընկլուզել, գրաբար՝ ընկլնուլ, ընկլուզանել, «ընկղնուլ», «ընկղկլուզանել» ձեվերից—կուլ տալ ներս, ներս քաշել, ծուղել: Ընդմտանել, ա) մտածել, ընդ ինչ, մտանել ընդ վտիճն—ներս մտնել, միջամտել լինել. բ) ընդմտանել ընդ իւիք—մի բանի տակ մտնել: Ընդչարել ընդ...մեկի վրա չարանալ: Ընդկատակել—մի բանի վրա, իրար վրա կուտակել:—Նոր կազմված են՝ ընդգծել, իրրեվ՝ գծել ընդ բառիս, ընդ բանիս—տակը գծել, տակը պիծ քաշել: Ընդերեվել, իրրեվ երևալ ընդ ինչ, ընդ քոչ—տակից յերևալ, միջից յերևալ:

«Զ» ՆԱԽԴԻՐԸ դրվելով բայերի վրա՝ նրանց նշանակութիւնը աստակացնում է, կամ ֆիզիկական նշանակութիւնը փոխում է բարոյականի, որինակ՝ լքանել—լքնել, դիջանել—խիստ լքնել, ապա՝ բարկութիւնից, հպարտութիւնից լքնել, աշխարհաբար՝ դիջանել, դիջել—տեղի տալ: Զանցանել—աստղ անցնել մի բանից, դէնն անցնել, ապա՝ զանց անել, ուշադրութիւն չդարձնել. գրաբար՝ զանցանել նաև՝ դէրտանցել: Զկոծանել, դկոծել—աստուիկ յեղծել, փչացնել, ջնջել, ապա՝ բարոյապես փչացնել, ապականել.

դրանից՝ դկոծում: Սիմռիել (փոխ. դիմռիել)—թռիլ, դաստակել, ապա՝ իմրութիւնից ուշքի գալ, սիմռիլել: Սքոլել (փոխ. դքոլել)—քոչ քաշել, թաքցնել: Այսպես կան նաև՝ Սրմանալ, Զարմանալ. Եռալ, Զեռալ, վորից՝ յեռ ու դեռ. Զարանալ, Զչարանալ, Զչարիլ. Մայլել, Զմայլել. Ականել, Զականել. Ամպել, Զամպել, վորից՝ ամպ ու դամպ, ամպ ու դումպ. Հովանալ, Զովանալ. (փոխանակ՝ դհովանալ), վորից՝ հով ու դով. Հարկանել, Զարկանել (փոխ. դհարկանել). Յարդարել, Զարդարել, վորից՝ արդ ու դարդ. Օգել, Յօգել, Զօգել, վորից յօգուած (հոգված) զօգուած: Դրաբարում նաև՝ Զնառել—չառ ցած անալ, ապա՝ բարկութիւնը, հպարտութիւնը նառել. Զդնալ—մանը դալ, պատվել. Առանցանել, Զառանցանել—չառ առաջ անցնել, աշխարհաբար՝ գառանցել—ցնորվել, ցնդել, գարս տալ: Այսպես նաև՝ կծել, Զկծել—պայծացնել, սիրտը կսկծացնել: Առածել, Զառածել—աշխուժութիւնամբ յետ գարձնել, պատճնել, ապա՝ ուղիղ ճանապարհից գարձնել, մոլորեցնել. զառածանք—մոլորութիւն, վատ բանի մէջ ընկնել. Աբառուզել, Զարառուզել. Արքուն, Զարքուն, Հեղուլ, Զեղուլ. (փոխ. դհեղուլ) աշխարհաբար՝ հեղել, գեղել և այլն:

«Յ» ՆԱԽԴԻՐԻ նշանակութիւնը բոլորովին մեռած է. ուժակ համաձա գարս է ընկնում, այսպես՝ Աչքոզել, Յաչքոզել. Ապել, Յապել. Երկարել, Յերկարել. աչխ. Ավելացնել, գրաբ. Յաւելուլ:—Մի քանի բայերի մէջ նշանակութիւնը փոխվում է, որինակ՝ անցանել—անցնել, Յանցանել—հանցանք գործել. արձակել—արձակել, Յարձակել—հարձակվել:

Բերել է հնում նաև մի նախադաս «համ», վորով կազմված են մի քանի բառ. Բերել—կրել, առնել (փիզիկական իմաստով). Համբերել—կրել, տանել (բարոյական իմաստով). Համբառնալ, համբառնալ—վեր բարձրացնել. վեր բարձրանալ, համբարձվել, «բառնալ» բայից, վոր նշանակում է՝ բարձել, վերցնել: Արձակել, Համարձակել—համարձակ, բաց գարձնել, որանից՝ արձակ—համարձակ:

ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ

91. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆ։— Իսկական բարդ բառերը կազմվում են այս ընդհանուր կանոնով. 1) Բարդության կերկու մասերի մեջ մտնում է Ա. ձայնավորը, որը կշռվում և հոդակապ. բայց, երբ բաղադրիչ մասերից երկրորդը սկսվում է ձայնավորով (ա, ո, ու, է, ի, ը), այն ժամանակ երկու բառի մեջ հոդակապ չի մտնում. ինչպես՝ գորագունդ, բայց՝ թռնաբամբան։ Բառակազմի «կե» և «վա» կապակցությունների «կ» և «վ» հնչյուններն այս դեպքում զուրս են ընկնում. ինչպես՝ «կեկ», բայց «նրբեկ», «վորակ», բայց «վառվորակ»։

2) Բարդության առաջին մասը համար առնվում է կեզակի ուղղական հոլովը, որինակ՝ մարդ–ա–սեր։

3) Բարդության առաջին անդամի վերջի վանկի ձայնավորները մնալով անչեշտ՝ կրում են ձայնափոխություն, որինակ՝ կերկիր–կերկրագունդ, թռչուն–թռչնաբույն, մատեան–մատենավար։

92. ՀՈԴԱԿԱՊ։—Ինչպես ամեն բազադրություն, նույնպես և իսկական բարդությունը ծագում է չարաշրջական կապակցություններից։ Սկզբնապես այսպիսի բարդ բառերի առաջին բազադրիչ մասը կեզել է բառի բուն առանց վերևի վերջավորության. այսպես որինակ, դիցուք, «մեծատուն» բառի առաջին անդամը կեզել է «մեծ», այլ «մեծա», վորի վերջի «ա» ձայնավորն կեզել է բառարանի ձայնավորը. ուստի մեծատուն բառն իսկապես առաջ կեզել ազատական և գոյականի չարաշրջական կապակցությամբ, այսինքն վերաբեր ազատականի և իր գոյականի միացումով երբեմն մեկ բառ։ Սկզբնապես, ուրեմն, այդ կապակցությունը նշանակել է «մեծ տուն և ապա՝ նշանակության փոփոխությամբ՝ «մեծ տուն ունեցող», ինչպես վոր նոր լեզվի մեջ ծուռբերան, ծուռքիր բարդություններն սկզբնապես նշանակել են՝ ծուռ բերան, ծուռ քիթ. ապա՝ ծուռ քիթ ունեցող, ծուռ բերան ունեցող։

Սակայն 5–րդ գարում արդեն բառերի ուղղականը կորցրած է վոչ միայն իր վերջավորությունը, այլ և բոլ ձայնավորը, և առաջ է լեկած «մեծ» ձևը։ Թեպետ բոլ «Ա» ձայնավորը պահվում է պեռ ևս «մեծա–ւ», «մեծա–ւք», «մեծա–ց» հոլովների մեջ «ւ», «ց» վերջավորություններից առաջ, բայց և այնպես բառերի բոլ

պաշտոնն այլևս չի լեկել մեծատ, մեծաց ձևերի մեջ և դրանց «Ա» ձայնավորը չի պաշտպանել երբեմն բառարանի ձայնավորը, այլ երբեմն «ատ» «աց» վերջավորությունների մի մասը։ Ուստի «մեծատուն» բարդության առաջին մասը համարվում է վոչ թե «մեծա», այլ ուղղական հոլովի՝ «մեծ», իսկ «ա» ձայնավորը պահվում է երբեմն բարդության կազմելու մի հող, կապ, վոր միացնում է բարդության կերկու մասերը և առաջ բերում մի նոր բառ։

Ինչքան էլ բարդության այս կեղանակը ծագած է չարաշրջական կապակցություններից, չպիտի կարծել, թե այդ կեղանակով բարդված բառերը բոլորը կերբեմն չարաշրջական կապակցություն են կազմել. վորովհետև նույնիսկ Հնդեվրոպական մայր լեզվի այն չբնանում, կերբ առանձին լեզուներ են առաջ կեկել, պարտություն չի ունեցել մաքուր բուն առանց վերջավորության։ Ուստի այդ կեղանակով բարդված բառերն ամենամեծ մասով նախնական կազմություններ են այնպիսի նախնական բարդությունների նմանություն, վորոնք չարաշրջական կապակցություններից են ծագած կեկել։ Բացի այդ՝ բառարանի «ա» ձայնավորն անալոգիայով անցել է և այնպիսի բառերի բարդության, վորոնք «ա» ձայնավորով բուն չունեին, և ապա բնդհանրացել է ամեն տեսակի բազադրություններին համար երբեմն հոդակապ. մինչև ուրիշ հնդեվրոպական լեզուների մեջ նույն դերը կատարում է «ո» բոլ «ո» ձայնավորը։ Այսպես «ա» ձայնավորով բազադրվում են նաև Ո, ՈՒ, Ի բներն ունեցող բառերը՝ գարգաչեր, բանասեր, դեատվէժ (բներ՝ գարգու, բանի, դեատ), ինչպես և «ն» «Ր» «Ղ» բազաձայն ունեցող բները, ինչպես ականատես, պատերազմ, ասանպատրղ (անո–ական, դատաստ–դեատեր, աստղ–աստեղ)։ Ապա «ա» ձայնավորն անցել է և նաև լեզվակի ու հոդնակի սեռականով կազմված հարազրություններին, որինակ՝ հորաքույր, մորաքույր, ձեռագրել, ձեռագրիչ, ձեռագրություն, ձեռագործ, արհեստանոց, արհեստարան, կանանոցային. նույնպես նաև լեզվակի գործիականով և հոդնակի հայցականով բազադրություններին, որինակ՝ ձերբակալել, ձերբառնուն (ձեռնակալ, ձեռնառուն), կենսաբեր, կենսատու, կենսարուն և այլն։

Սակավաթիվ բազադրություններ կան հին լեզվի մեջ, վորտեղ մեջ պահվում են բոլ ուրիշ ձայնավորներ, ինչպես հին թվականներից՝ երկուտասան ձև

մէջ յիշուած է «երկու» բառի «երկա» բանը, իսկ ուրիշ թոգոդրուխյուններուն մէջ և «երկու»։ «Երկու», «երկք» և «չորս» բառերի համար կան «երկի», «երի», «չորի», ինչպես՝ «երկեամ», «երեամ» = երկի + ամ, երի + ամ. այլ և հին «երկի-ս», «երի-ս», «չորի-ս» բառերի մէջ, որոնց վրա կրկնելով «որդ» ածանցը՝ առաջ են եկել կրկնածանց երկ-ս-որդ. եր-ս-որդ. չոր-ս-ուրդ բառերը։ «Հնդեաասան» բառի մէջ յիշուած է «հինգ» բառի համար «հնգե» բառը, որուն պէտք է յիշեցնել «հնգե-ր» կազմութիւնը, որուն ածանցով՝ «հինգեր-որդ», և ապա «երորդ» ձևան ընդունել և իրեն մի ածանց և անցել է մյուս թվականներին՝ վեցերորդ, եաթներորդ, և այլն, որով և առաջ է եկել գաղականների «երորդ» ածանցը։ «Ա» հոդակապի փոխանակ «ի» յիշուած է յերեմն մի քանի բառերի մէջ, այսպես որինակ՝ կարնեցի, մշեցի, վանեցի, բայց դյուղացի, քաղաքացի. խոյեցոտիր, չանկան. հաշվեմատյան, հաշվեառմա։ Սակայն կենդանի է միայն «ա» հոդակապը, որով չորանակ նորանոր բառեր են կազմում լեզվի մէջ։

Յետը բայերի դերբորդ անդամը ձայնավորով և սկսվում, «ա» հոդակապը չի դրվում։ Այս կանոնն աչքատեսությամբ առանց բացառության չի պահվում. «ա» հոդակապը մանում է յերկու բաղադրիչ մասերի մէջ նաև ձայնավորից առաջ, յերբ առաջին մասն է «ամեն», իսկ յերկրորդը մի վարդական ածական, որ «ամեն» բառի հետ բարդվելով՝ առանում է դերբաղդական առանձնակի նշանակություն, ինչպես՝ ամենաընտիր, ամենա-ազատական, ամենա-ուժեղ, ամենա-ազգու, ամենա-պինվել, ամենա-անվնաս, որ նշանակում են՝ ամենից ընտիրը, ամենից ազատական և այլն։ Այսպիսի կազմությամբ «ամենա» ձևը ձգտում է առանձնանալու և առանալու դերբաղդական առանձան կազմող մի հատուկ բառի նշանակության։

Ձևի և նշանակության այս չորջանն երբեմն հեմք ծառայել և նաև այն, որ հին լեզվի մէջ սակավաթիվ են ամեն բառով բաղադրություններըը ձայնավորով սկսվող բառերի հետ և ավելի ևս սակավաթիվ՝ այնպիսիները, որ դերբաղդական առանձան նշանակություն ունենան, ինչպես են՝ ամենամբարիշտ, ամենառատաս, ամենաազգալ, ամենաբջանիկ, ամենաընդարձակ, ամենընտիր, ամենիմաստուն, և մի յերկու ուրիշները,—մինչդեռ բաղաձայնից առաջ «ա» հոդակապով կազմվածները դերբաղդական նշանակությամբ՝ շատ ավելի բազմաթիվ են, ինչպես՝ ամենաբարի, ամենաբարձր, և այլն և այլն։ Բնականաբար այս կարգի բազմաթիվ բառերի անալոգիայով նաև ձայնավորով սկսվող բառերից առաջ ավելացել է «ա» ձայնավորը, վորով

առաջ է դեկել միակերպություն կազմության մեջ. ինչպես՝ ամենաբարի, նուիրական և ամենա-ազատական։ Մյուս կողմից այս անալոգիական միակերպությանը նպաստել է և այն, որ յերբ բաղադրության յերկրորդ անդամը բայական իմաստ ունի, այդ ժամանակ առանց հոդակապի բարդությունը յերկդիմի է. որինակ՝ «ամենընտիր», «ամենընդունակ», «ամենընտել» կարող են նշանակել վոչ միայն ամենա-ընտիր, ամենա-ընդունակ, ամենա-ընտել, այլ և ամեն բան ընտրող, կամ ամենքից ընդրված, ամեն բանի ընդունակ, ամեն բանի ընտելացած։ Բացի այդ՝ նուիրական յերեք յերկրորդ անդամը բայական իմաստ չունի, զրկվում միշտ անորոշության և առաջ գալիս. վորովհետև «ամենապինվել», «ամենընտիր», «ամենազգեցիկ» սովորաբար հատկացում է վոչ թե՝ ամենա-պինվել, ամենա-ընտիր և այլն, այլ սովորական համապատասխան չարաճյուղությամբ իրրև «ամեն պինվել» (ընկեր), «ամեն ընտիր» (բան), «ամեն ազդեցիկ» (մարդ), իրրև ամեն մի ընտիր բան, յուրաքանչյուր պինվել ընկեր։ Այս յերկդիմությունն էլ իր կողմից, անշուշտ, ազդել է, որ ձևի և նշանակության տարբերակումով «ամեն պինվել», «ամեն ազատական» կապակցություններ մնում և սովորական չարաճյուղության համար, դերբաղդական առանձանի նշանակությամբ գործածվում է «ամենա» ձևը, իսկ բայական իմաստ ունեցող և ձայնավորով սկսվող բառերից առաջ պահվում է հին բարդության ձևը՝ առանց «ա» հոդակապի վոչ-դերբաղդական նշանակության. այսպես՝ ամեն ընտիր (անջատ դրության) նշանակում է՝ յուրաքանչյուր ընտիր, ամեն անասակ ընտիր, իսկ բարդ բառերը՝ ամենա-ընտիր նշանակում է՝ ամենից ընտիր (դերբաղդական առանձան), ամենընտիր-ամեն բան ընտրող, ամենքից ընտրված։

Ձայնավորից առաջ հոդակապ յերեվում է նաև «կիսա» բառի մէջ՝ կիսա-եվ, փոխանակ «կիսեվ» ձևի, կիսա-ուսումնական, կիսա-ինտելիգենտ. նուիրական և «հակա», «նախա» ձևերը ձայնավորից առաջ, որինակ՝ հակա-ապստամբ, նախա-Աբմենյան՝ փոխանակ՝ «հակապստամբ» «նախաբմենյան» ձևերի։ Ժողովրդական լեզվի մէջ պատահում են և ուրիշ բառեր, ինչպես՝ «դիշերա-եվ», «պլխա-ոսկեիք», «որսա-ուպելիք» փոխանակ ուրիշ բարբառների «որսուպելիք», «պիշերեվ» ձևերի։

93. ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՆՑ ՀՈԴԱԿԱՊԻ։—Հին լեզվից ունենք բավական թվով բառեր, որոնք կազմված են հոդակապով, բայց յերբ բառը մեծանում է նոր ածանցներով, հոդակապը դուրս է ընկնում. օրինակ՝ արծաթասեր—արծաթասիրություն. բնակեբառեր—բնակեցություն, յերկայնամիտ—յերկայնմտություն. արյունահեղ—արյունհեղություն. առատաձեռնական—առատաձեռնակյա. յերգարվեստ—յերգարվեստություն. վողջամիտ—վողջմտություն. լրջամիտ, լրջամտություն—լրջմտություն. չարախոս, չարախոսություն—չարախոսություն. պահպանող—պահպանողություն, և այլն: Այսպիսի բառերի անալոգիայով առաջ են յեկել նոր բառեր առանց հոդակապի, օրինակ՝ բնակերկրաբանություն, բնակերկրաբանական:

Թե հին և թե նոր լեզվի մեջ կան բազմաթիվ բառեր, որոնք կազմված են բաղաձայնից առաջ առանց «ա» հոդակապի: Այդ բառերի մի մասն ունեն նաև հոդակապով ձևերը և հաճախ գործածվում են վորոշել, թե այդպիսի բառերը սկզբնապես առանց հոդակապի յեն կազմված յեղել և հետագայում յերկրորդական հոդակապով ձևերը են առաջ յեկել, թե՞ ընդհակառակն, առանց հոդակապի ձևերը հոդակապով ձևերի պատճեն են: Այսպես օրինակ՝ խրատատու, բանիբեր (որոնց համար կան նաև խրատատատու, բանիաբեր) համարվում են հին բազադրություններ, որոնց առաջին բաղադրիչները՝ մեկն «ու», մյուսն «ի» ընկերին են պահպանում՝ երբեմն նախնական ձևով «խրատատու-տու», «բանիբեր», որոնց բնաբն «ու», «ի» ձայնավորները ձայնափոխության բնդհանուր օրենքով դուրս են ընկել: Այսպես ունենք կրկին ձևերով՝ պինդոպինդավոր, հայթուխ-հայածեռ, ջրկեր-ջրակիր, ջրհեղեղ-ջրածեղեղ և բազմաթիվ բառեր թե «ջրա» թե «ջր» ձևերով. բայց կան նաև մեկն ավելի ձևով՝ ջրմեջ, ջրկատեմ, ջրհան, ջրհոր, ջրմուղ, ջրբաժան, ջրգիծ, ջրշոր, ջրկալ, ջրբովիկ և ուրիշ շատերը թե հին և թե նոր լեզվից: Նույնպես՝ հրձիգ-հրաձիգ. քարատաշ-քարատաշ, քարկոփ-քարակոփ, քարվոգ-քարավոգ, քարկուտ-քարակուտ և այլն. կան և «քար» ձևով մեկն՝ քարկոծ, քարկոխ, քարհանդույց, քարհալած, քարմաղ և այլ: Նույնպես՝ անկալուչ-անակալուչ, անկից-անակից, անպատ-անապատ. մեկն «ան» ձևով՝ անկից, անպատ, անոթ: Այսպես նաև որհաս-որահաս, չարկամ-չարակամ, կամնակեր-կամ-

նակեր, դռնապաց-դռնապաց, դռնապակ-դռնապակ, դռնապացեք-դռնապապացեք, ծովիպ-ծոփիպ, վառնքայլ-վառնաքայլ, վառնհաս-վառնահաս, վառնխոխ-վառնախոխ, վառնկա-վառնակա, վառնրկի և այլն: Լուսնկա-լուսնակա, ձեռնախոխ-ձեռնոխոխ, ձեռնմտի-ձեռնամտի, ձեռնմուխ-ձեռնամուխ, ձեռնատու-ձեռնհատու, ձեռնհաս-ձեռնահաս, ձեռնպահ և այլն. մատնչունչ-մատնոչունչ, մատնոգույց-մատնացույց, մատնատու, մատնկոր, ակնկատույց-ակնակատույց, ակնկուռ-ակնակուռ, ակնամոտ-ակնոտ, ակնահաս-ակնահաս, ակնհարել-ակնհարել, ակընկոր: Այսպես և լրահաս, փայտկեպ, բուրվառ, արևմուտք, հայտկատակ, հայտկերպիլ, հավքաչ, ձկնկիզ, թևբռնոտիլ, թևբռաչ, թևբռաչ, ժամպատ, մամլոճ, մամչոր, ծծմայր, գայլկատ, գայլխեպ, քմծպրել, քմծիծաղ, չնհատպ (չան խաղալ), ասլկաթ (մոժան, ձեռոպիկ, չորքոտան, հայտնի, և բազմաթիվ ուրիշ բառեր ժողովրդական լեզվից, որոնց մեջ չկա «ա» հոդակապը: Կրկին ձևերից «ա» հոդակապով ձևերը հատուկ են արևելյան բարբառներին, իսկ առանց հոդակապի ձևերն ավելի արևմտյան բարբառներին, որոնց հատուկ է բառամջի «ա» ձայնավորի ազդեցությունը (հարթանիք-հարթանիք):

Մի անգամ, որ կան առանց հոդակապի բազմաթիվ բառեր, ինչպիսի ծագում էլ դրանք ունենան, դրանց անալոգիայով են կազմվել, անշուշտ, վերևի բառերի մի մասը, և կազմվում են ուրիշ նոր բառեր: Այսպիսով լեզվական բարդությունը նույնանում է կյանքի բարդության հետ (տես § 81):

1. Գործականի և ածականի միացումով՝ ձայնակապ, յերեսբաց, յերեսպաղ, հավքուր, պատկից, ականջկիպ և այլն:

2. Ածականի և գոյականի միացումով՝ բացբերան, բացգլուխ, սևմորթ, նեգրմորթ, մեծորթ, նեգհոգի, չարկեղ, չորքան և այլ բառերի անալոգիայով առանց ձայնափոխության՝ ծուռբերան, ծուռքիթ, ծուռոտիկ, կուշտփոր, պինդգլուխ, կնոջբան: Կան նաև ձայնափոխությամբ՝ ծռաբերան, ծռբերան, ծռաքիթ-ծռքիթ, կշտաֆոր, կիսաբերան: Բայց մոր «ծուռ քիթ», «պինդ գլուխ»ն ու այլ բազադրություններն առանց ձայնափոխության են, այդ ցույց է տալիս, մոր վերոգիր ածականը և իր գոյականը միացել, մեկ բառ են կազմել առարկան նշանակելու համար՝ ծուռքիթ, ապրինքն ծուռ քիթ ունեցող: Այսպես կազմվել են և ուրիշ բառեր՝ անուշբերան, պեչբերան, ձեռմակաթիկ, յերկաչ-

թաթիկ, տաքդունչ, բոլորպար, նախշունաշք, թթխմոր, (թթու խմոր), կաժպանիք, թևլապանիք, կնոցյալ, սալքար, կեռպոչ, պապխրա, լուսատոպ:

3· Ձևիկու գոյականի միացումով՝ ջրհոր, արևմտաք և այլ բառերի անալոգիայով նաև՝ մկնկապ, ճրագպահ, ճրագպուլա, արևվուլա, արևվող, արևվիող, արևվող, ամպվող, արյունլվան, ակռաժամիկ, բակղուս, անեղձապ, ճաչքուն:

4· Անման և բայարմատի միացումով, որ շատ սովորական և ժողովրդական լեզվի մեջ, մանավանդ յերբ բայարմատի յուրաքանչյուր վերևի մասնիկ է լինում՝ ի, իկ, ուկ, ուտ, ալիճ, իչ, ուճ, ոց, իճ: Այսպես՝ ծամկալ (ծամակալ), ուչկալ (ուչակալ), գնդղիը (գնդագլիը), գնդթամի (գնդագթամի), քարհատ (քարահատ), բանգետ (բանագետ) և այլ բառերի անալոգիայով՝ ճրագկալ, գետակալ, գետաքաչ, կախկալ, կրծկալ, անթևկալ, ակնկալ, ակնկապ, մմնչալ, լրլնճքամիկ, վրլավքամիկ (վրլավքամիչ), ահանջվորիկ, կրակքաչ, կրակքամուկ, կրակքամուկ, հավքաչ, ոտատվորիկ, ոտատվորիչ, կերկոս, կալմուխ, վորոտող, սալջարդ, բաղաքջնախչիկ, ակռանջմոլիկ, ոտատհոտիկ, մազքամի, վայսվոլրիկ, աբյունլվա, բանթոզ, բանջարլուսիկ, ալուքմաղիկ և այլն (տես § 81):

94· ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԴԱՄԸ, ինչպես ասվանք, ե՛ յեզակի ուղղական հոլովը:

1· Գրաբարում կան բառեր, վորոնք գործ են ածվում միշտ, կամ սովորաբար, հոդնակի Ք–ով իրրև անեզական բառեր, որինակ՝ կաթ, վառ, խելք, կյանք, քիմք, մխիթ (մխա), մեզք (մեղ), աչք (աչ): Բառակազմության (բարդության և ածանցման) ժամանակ առնվում և այսպիսի բառերի յեզակին՝ առանց վերջին Ք բաղաձայնի, որինակ՝ կաթամբ, վառատան, վառահեղ, անառիա, խելառ, կենագործել, քմահաճ, մտամոր, անմիա, մեզամոր, անմեղ, աչեղ, չնորհալի և այլն: Աչխարհաբարում, գրական լեզվի մեջ, ընդհանրապես պահվում է բառակազմության այս կանոնը, և հին բառերի անալոգիայով կազմվում են նոր բառեր վերջի Ք–ն դուրս ձգելով:

Սակայն այդպիսի բառերի համար մենք այլևս չունենք վերջի Ք հնչյունի հոդնական նշանակության պատճառը. մեզ համար այժմ «աչք», «միտք», «մեղք», «կաթ» այլևայլևս հոդնակի չեն,

այլ յեզակի. դրանց հոդնակին լինում է՝ աչքեր, մտքեր, մեղքեր, կաթքեր: Ուստի յերե մի կողմից հին բառերի անալոգիայով այդպիսի բառերի վերջի Ք–ն դուրս ենք ձգում կազմությունների մեջ, մյուս կողմից՝ յեզակի ուղղական հոլովից կազմելու անալոգիայով՝ ժողովրդական լեզվի մեջ կան արդեն շատ բազաղրություններ, վորոնց մեջ պահվում է վերջի Ք–ն, այսպես, հին՝ խելացի, անխել, անխելություն. նոր՝ անխելք, անխելքություն, խելքսպահա. հին՝ անշնորհ, նոր՝ անշնորհք. հին՝ աչացավ, աչապեղ, քոպմաչյա, նոր՝ աչքացավ, աչքաբաց, ծակաչք, չորսաչքանի. հին՝ պիտանի, անպետ, նոր՝ պետքական, անպետք. հին՝ պարտաւոր, նոր՝ պարտքաւոր, պարտքակոխ, պարտքովի. հին՝ ղրկակալ, նոր՝ ղրքակալ: Այսպես և կրծքաբաց, վորձանքավոր, մեղքանալ, խոպրություն, ցուցանքավոր, խոսքակոխ (անել), քաչքաքամի, քաչքաճայն, աչունքանալ, աչունքենի, անչունքատանձ և այլն: Գրական լեզվի մեջ կազմված են՝ վարքագրություն, հանքատուր, բերքատու, հանքային և այլն:

2· Այս միևնույն զարգացումն առած է յեկել նաև Ն, Ր, Ղ, բներն ունեցող բառերի նկատմամբ, վորոնց համար հին լեզվի մեջ առնվում են սեռականի ձևերը՝ «ան», «եր», «եղ»: Բայց քանի վոր բառերի մեծ մասի համար բառակազմության ժամանակ առնվում է յեզակի ուղղականի ձևը, ուստի նույնիսկ հին կազմություններըդրարարում արդեն մասամբ վերածվել են ուղղականի ձևին. այսպես ունենք սեռականից՝ ականատես, ականակուռ, ականապարզ, ականավոր, ականել, բայց՝ ակնածել, ակնակալություն, այժմ՝ ակնկալություն, ակնակապիճ, ակնագործ, ակնաճիվ. հին լեզվի մեջ՝ սերմանահան, սերմանացան, սերմանացու, սերմանել. բայց և սերմնահան, սերմնացան, սերմնացու, այժմ նույնիսկ սերմացու, սերմել, իսկ հին լեզվից՝ սերմարուա, սերմակեր: Հին՝ առանձավոր (վոքրիկ մանր յեկող), նոր՝ վոռնավոր, նույնիսկ՝ վոտավոր, վոռնակազ, հին՝ ձկանակեր, այլև ձկնակեր: «Աման» սեռական՝ «ամարան», վորից «ամարանոց», «պարուն», սեռ. «պարնան», պարնան, վորից՝ պարնանային. աչուն, աչնան, վորից՝ աչնանային. աւուն, անվան, վորից անվանական, անվանակոչ: Այսպես հին լեզվի մեջ կան նաև՝ առաւղպահ, առաւղարաչխ, առաւղապարտ և այլն, բայց նաև՝ առաղպահ, առաղարաչխ, առաղապարտ, վո-

բանք այժմ գործածական են: Նույնպես և՝ տաբեւրական, այժմ՝ տաբլական, տաբրապաշա և այլն· բայց և նոր կազմված է՝ տաբերային. հին՝ ծովեզերեայ, այժմ՝ ծովեզերյա-կայսերական. բայց՝ կայսրության· յեղերել, յեղերական, բայց յեղրակացություն և նոր կազմված՝ յեղերային: Նույնպես «արիւն» բառի և «ութիւն» վերջացածների սեռականներից («արեան», «ութեան») կազմված են՝ արենապին, արենապուն, արենախմիմ, արենապարա, արենհեղություն, բայց՝ և արիւնապին, արիւնախմիմ, արիւնահեղություն և թարգմանիչ ուրիշները «արիւն» ձևով. որ ընդունված և նոր լեզվի մէջ· ժողովրդական լեզվի մէջ նույնիսկ արնապին, արնապուն, արնախմիմ և այլն· բայց կան նաև՝ արենխում, արենպարա, արենաեր: Սակավաթիվ բառեր կան հին «ութեան» սեռականից, ինչպես՝ վերկութենաբեր, վերկութենական, բայց և վերկութիւնաբեր: Նոր լեզվի մէջ ևս հարկ չկայ դնելում յերկու ձևով էլ կազմում ենք, ինչպես՝ մխութենական, մխութենական:

3· Հին լեզվի մէջ «ին» վերջացած բառերի վերջի «ին» մասը նոր լեզվի մէջ զարս է ընկել, որինակ՝ ուսումն-ուսում, մասն-մաս, ձևն–ձև, մասն–մաս: Բառակազմության (բարդության և ածանցման) ժամանակ, ինչպես և հոդնակի թվի մէջ, սակայն բացառությամբ, այսպիսի բառերի վերջի «ն» ասոր վերականգնվում է, ինչպես՝ ուսումնական, մասնացույց, ձևնաստուն, մասնակից· այսպես և ածանցման ժամանակ՝ մասն–ոց, ձևն–ոց, ակն–ոց, մասն–ավոր: Այդ բառերի մի մասի յեզ· սեռականը զարմանում, մի քանի բառերինը նաև աշխարհաբարում, լինում է «ան» ձևով, որինակ՝ դուռն–դուռ, սեռ· գրաբար՝ դրան, աշխ· դռան· նուռն–նուռ, սեռ· նռան: Այսպիսի բառեր են՝ կոպմն–կոպմ, (կոպմնացույց, բայց՝ կոպմիր), ակն–ակ, արեգակն–արեգակ, վայրկեան–վայրկեակ, կայծակն–կայծակ, հիմն–հիմ, հիմք, որդն–որդ (որդնել, բայց՝ որդուիր), շուրթն–շուրթ, հիւսն–հյուս, գիակն–գիակ, սիկղբն–սիկղբ, ձուկն–ձուկ, մուկն–մուկ, այծեամն–այծյամ, եղեամն–յեղյամ, եղեգն–յեղեգ, ծիծեռն–ծիծեռն, ասեղն–ասեղ· դուռն–դուռ, անկն–անկ, սերմն–սերմ (սերմնացան, բայց սերմիր), ոչն–ոզ, մասն–մաս, (մասնակից, բայց՝ մասիր), ամէն–ամ (ձևերի· իսկ գեմ ամբ միայն «ամ»ձևով)· սրանից՝ ամենայնի, բայց ամեր· բուռն-բուռ, թռուն-թռուռ, անձն

անձ (անձնասպան, բայց՝ անձիր), հարան–հարս, գառն–գառ, բեռն–բեռ, ևղն–յեզ, ձեռն–ձեռ, ոռն–ոռ, կաթն–կաթ (կաթնատու, բայց՝ կութիր), լեառն-լեռ, և մի քանի ուրիշները: Թվականներից եօթն–յոթը, յոթ, իննն–ինը, տասն–տասը, տաս:—Այսպես նաև «ումն» ածանցով կազմվածները՝ ուսումն-ուսում, չարժումն–չարժում և այլն:

*4· Հարադրական բառերի կցումից, ինչպես առաջք (§ 81), կազմվում են կցական բարդություններ· դրանցից «կենդանատոյց» բառը յենթարկվելով ձայնափոխության զառնում է՝ «կենդանատոյց»· սրա նման կան կազմված ուրիշ բառեր ևս՝ կենդանծին, կենդանարուխ, կենդանասեր, կենդանատու, կենդանանոց, կենդանխրախուսյա, (ի կենդան խրախուսող) և այլն: Ապա սրանց անալոգիայով դրարարը տալցականն անցել է և այնպիսի բառերի համար, որոնց մէջ տալցական չպիտի լինի, ինչպես՝ կենդանաժպիտ, կենդանատուն, կենդանական և այլն, այլև նոր կազմված՝ կենդանրախ: Այսպիսով «կյանիֆ» բառից բարդությունների համար առաջ է եկել կեանդ, կենդ-ձևը **փոխանակ** կեան, կեն ձևի, ինչպես են կենդրան, կենդաբեր, կենդանի և այլն: Սույն անալոգիայով կազմած ունենք՝ մեղաբեր (մեղր բերող), մեղաձու, մեղսունակ, մեղսասեր, մեղամած, և նույնիսկ մեղայլին, մեղսբերն, վորով առաջ է եկել բաղադրությունների համար «մեղս» ձևը փոխանակ, «մեղ» ձևի, ինչպես է՝ մեղադրել, մեղավոր, մեղաթարթ բառերի մէջ: Նույնպես «օրէնք» բառի «օրէնս» հայցականից կազմված են՝ օրէնսդիր, օրէնսդեա, վերջերս նաև պրականներին հետ՝ օրէնսդիծ, օրէնսդիրք, փոխանակ իսկական բարդության ձևիրի, որ են՝ օրինադիծ, օրինադիրք (§ 81):*

95· ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ:—Յերբ բառակազմության ժամանակ բառն աճում է, այսինքն բառի վերջից նոր վանկ կամ վանկեր են ավելանում, շատ անգամ փոխվում են վերջին վանկի վրա, այդ ժամանակ վերջին փակ (բաղաձայնով վերջացած) վանկի ձայնավորները, շատ անգամ փոխության պատճառով, փոխության են յենթարկվում: Նոր գրական լեզվի մէջ պահվում է գրաբարի ձայնափոխությունը, նկատելով, որ հին լեզվի ԵՒ. (ՅՒ.), ԵՒՅ (ՅՒ.), ՈՅ (ՈՒՅ) յերկբարբառները իրենք և իրենց ձայնափոխությունն այլ ևս կենդանի չեն աշխարհաբարում:

1) Ի, ՈՒ ձայնավորները բառավերջի փակ վանկերի և փակ միավանկերի մեջ կամ դուրս են ընկնում, կամ դառնում Ը ձայնավոր, որ չի գրվում. որինակ՝ Ջուր—Ջրային, Ջրկիր. քան—քննիռա, քննաճաք. ունչք—ընչացք. ուղղ—ընդակիր. ապառաժ—ապարժել. անառուն—անառնաբուժ. պիծ—պըծել, պըծապիր. թիվ—թըվական. ճմարիտ—ճըմարտասեր:

Մի քանի միավանկ բառերի սկզբում կամ մեջ Ի, ու ձայնավորները անփոփոխ են մնում. դրանք են՝ հինդ—հինգերորդ, հինգական, բայց՝ հնգամատյան. հիմն—դիմնադիր. իր—իրական. իժ—իժական. իմ—իմանք. ինչ—ինչացու, բայց՝ ընչեղ. ինն—իններորդ, իննամյա. ինքն—ինքնամոր. իսկ—իսկաբիյան. ութ—ութերորդ. ուղտ—ուղտապան. ուխտ—ուխտել. ուշ—ուշադիր. ուլ—ուլիկ. ուն—ունայնաբար. ունկն—ունկնդիր. ուռ—ուռենի. ուս—ուսնոց. չուրջ—չուրջանակի, բայց՝ չրջան, չրջագատ. ռուս—ռուսական. թուրք—թուրքական, այլ և՝ Թրքական:

2) Վարոչ թվով բառերի մեջ հին Ի>Ե ձայնավորը դառնում է Ի. որինակ՝ հին՝ նուէր—նուիրել. նվեր—նվիրել. հին՝ պատուէր—պատուիրել. պատվեր—պատվիրել. հին՝ սէր—սիրել. սեր—սիրել և այլն: Լեզվի մեջ գոյություն ունեցող այս հին կարգավիճակների անալոգիայով կարգվում են նաև նոր բառերը, ինչպես, որինակ, նոր բառերը՝ սիրավեպ, սիրերգ:

Հին Ի>Ե ձայնավորը Ի ձայնավորի վոխարեն է հանդիպում բառերի մեջ՝ անէծք—անիծել. անուրեն—անուրիներ, բայց՝ անուրեքություն. ապտակեն—ապտակիր. ասպարեզ—ասպարիսկան, գնչ—գիչատիչ. գեղ—գիղություն. գես—գիտավոր. գեսպան—ազգ, գրագիտ—գիտություն, տգիտություն, գրագիտություն, գիտուն. գեր—գիրանալ. գեղ—գիղել. գեղք—գիղչել. գետ—գիտել. գինք գիներ. ժապավեն—ժապավիներ. լեզ, սինակալեզ—լիզել. խեթ—խիթալ. ձեռ—ձիտական. կեղ, սրտակեղ—կիզել. կեռ—կիտել. հանգեղ—հանգիրել. հանգեռս—հանգիտավոր. հեղ—հիզություն, հեն, ծոլահեն—հինհատար. հրավեր—հրավիրել. ձեվ—ձիվել. մեղ—միզամած. մեղ—միզել. մեջ—միջին. յեղեց—յեզիցյան. նեվեր նիվերական. չեկ—չիկանալ, այլ և՝ չեկություն. չեջ, ամչեջ—չիջնել. սրենք—սրինական. պատվեր—պատվիրել. պարտեզ—պարտիզպան. պեռ—պետություն, պետական. պետք—պիտանի, բայց՝ պետքական. սեղ—սիզամեմ. սեզ—սիզավեռ. սեր—սիրա-

կան. սեռ—սիրել, սիրք—սիրտավոր. սրեժ—սրիժառու. սրբեզ—սրիզել. սեղ—սիզարան. տեր—տիրանալ, տիրություն, բայց և տերություն, տերունի. տնօրեն—տնօրինել, բայց՝ տնօրինություն. փոխարեն—փոխարինել, քեն—քինախնդիր: Հատուկ անուններ Նեռսես՝—Ներսիսյան, Արիստակես—Արիստակեսյան, և մի քանի ուրիշներ:

3) Հին ԵՒ, նոր Յա յերկրորդական դառնում է Ե. որինակ՝ մատեան, մատյան—մատենագիր. անեծակ, անեյակ—անեծքանա: Լեզվի մեջ գոյած հին կարգավիճակների անալոգիայով կարգվում են և նոր բառերը, ինչպես են՝ մատենավար գրատենյակային. գրեան, գրյան—գրենական:

Այս ձայնափոխություններ նոր լեզվի մեջ կենդանի չեն. ուստի և պարզության հայելին չհավատած մարդիկ սխալ կարգավիճակներ են անում, ինչպես են՝ «գրատենյակային», «հոբելյանական» վոխանակ «գրատենիկային», «հոբելենական» ձևերի:

4) Հին ԵՍՅ, նոր ՅՍ բառավերջում՝ դառնում է «եՅ», հին ուղղագրությամբ՝ «է», որինակ՝ քրիստոնեայ, քրիստոնեյա—քրիստոնեական, քրիստոնեություն. հրեայ, հրեյա—հրեական, հրեություն. միջնորեայ, միջնորեյա—միջնորեական: Այսպիսի բառերի անալոգիայով նաև նոր կարգավիճակները, ինչպես են՝ պարծանայ, պարծանյա—պարծանություն. պաշտանայ, պաշտանյա—պաշտանություն:

5) Հին ՈՅ, նոր ՈՒՅ դառնում է «ՈՒ», որինակ՝ ծոյլ, ծուլ—ծուլություն. վոչնչանայ—վոչնչանել. պատյո—պատնավոր. բուսյա—բուսական: Սրանց անալոգիայով նաև նոր կարգավիճակները, ինչպես՝ բուսակեր, բուսաբանություն: Բացառություն կարգում են՝ նաև—նաւնություն, քաւրաթիվ, պաւնդպան, և նոր կարգված՝ «քաւրեկ», վոխանակ հին և ժողովրդական՝ «քաւրեկ» ձևի:

6) Յերբ բառավերջի «Ի» ձայնավորի հետ միանում է «Ա» մասնիկը, այդ ժամանակ «ԻԱ» կապակցություններ դառնում է հին ԵՍ, նոր ՅՍ, որինակ՝ վարպե—ակ, հին՝ վարպեակ, նոր՝ վարպետյակ. պատանե—ակ, հին՝ պատանեակ, նոր՝ պատանեյակ: Բացառություն են միավանկերից կազմվածները՝ միակ, թիակ, պիակ, ձիակ:

7) Բազմամանկ բառերի վերջի «ի» ձայնավորը հաջորդ Ա. ձայնավորի հետ կազմում է հին ԵԱ, նոր ՅԱ. յերկվավանք, վագ և դառնում է Ե. սրինակ՝ բարի+արար—բարերար. այգի+ա+պարտ—այգեպարտ. պինի+ա+սեր—պինեսեր, հոգի+ա+կան—հոգեկան: Հին բառերի անալոգիայով կազմվում են նորերը, սրինակ՝ հոգեբանություն: Սակայն այս ձայնավորություններ նույնիսկ հին լեզվի մեջ հաստատուն չեն. սրինակ՝ հնուց ունենք «մարդի»-(հին՝ արդի) բառից՝ մարդկեր, մարդկություն և այլն, բայց և մարդիացող, մարդիական, և մոչ՝ մարդկեան, ինչպես և՝ հոգի—հոգեկան: Այսպես և՝ խնամի—խնամիանալ (հին՝ խնամեանալ), բարի—բարիանալ. կղզի—կղզիարնակ և այլն: Միևնույն բառերից՝ միանալ, ձիավոր:

Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ, որ բազմամանկ բառերի վերջի «ի» ձայնավորը հաճախ զուրս է ընկնում, զարձյալ ոչ հաստատուն կերպով. սրինակ՝ բարի—բարություն, բայց՝ «բարեկամ», բարիանալ. արդ—արություն, բայց նաև՝ արիություն, արիանալ, արիական. յեկեղեցի—յեկեղեցական. կառավար—կառավարություն. խնամի—խնամություն, բայց՝ խնամիական. միշնամի—միշնամանալ, միշնամություն, միշնամական. հայրենի—հայրենական, հայրենասիրկ, հայրենակից. վայրենի—վայրենանալ. վրացի—վրացական, և շատ նմաններ: Այսպես պետք է կազմել նաև՝ դյուղացի—դյուղացական, դյուղացություն:

96. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ բառակազմության ժամանակ առաջ է գալիս միայն Ո և Ր բաղաձայնների նկատմամբ, այն էլ հին լեզվի մի քանի բառի մեջ, այն է՝ արմատական Ն հնչյունից առաջ ընկնում է Ո հնչյունը, բայց վերջինս, երբ հետևում է Ն հնչյունից, դառնում է Ր. սրինակ՝ հին լեզվի մեջ «ամոն», «ձիեան», «զուան», «լեառն», բառերը սեռական ունեին՝ ամարան, ձիերան, զրան, լերին, լերանց: Այսպես և՝ ամարային, ամարանոց, ձիերային, ձիերոց: Բայց այս փոփոխությունը հաստատուկ չէ աշխարհաբարին, որ ունի՝ զուռ—դռան, լեռ—լեռան, ձիեռ—ձիռան կամ ձիեռոմ. ամառ—ամռան կամ ամառոմ: Այսպես և՝ ամառային կամ ամռի՝ ամառնային, ձիեռային կամ ձիեռնային, ամառանոց, բայց՝ հին լեզվից մնում են՝ ձիերել, ձիերոց, դրանիկ:

97. ԲԱՂԱԴՐԻՉ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՇԱՐԱՀԱՅՈՒԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ:—Ինչքան էլ իսկական բարդության մեջ չարահյուսական կապակցության ձևի իրրև այնպիսին անհետացած է, բայց և այնպես յերկու բաղադրիչ մասերի չարահյուսական հարաբերության պատճառով մնում է: Սակավաթիվ են այնպիսի բարդությունները, որոնց յերկու մասերը ունեն համադասական հարաբերություն, այսինքն մեկը մյուսի լրացումը չի դառնում, այլ յերկու մասերը միանում են իրրև համապատ բառեր, ինչպես բազմությունների մեջ, կամ ինչպես կրկնավորները, սրինակ՝ անգաստաբան, իրրև՝ անգ ու ստաբան, ապրստամբ—ապր ու ստամբ, չեզջակուլա—չեզջ ու կուլա, յեզջերվաքար—յեզջերու և քար, բնձառյուծ—ինձ և առյուծ, ցյամարա—ցյուղ և մարա, խուրհույր—խուլ և կույր, զունդապունդ—զունդ զունդ, պետպետ—պետ պետ, չեզջաչեզջ—չեզջ չեզջ:

Սովորաբար բարդության բաղադրիչ մասերի հարաբերությունը առդրադասական է. մասերից առաջինը ըստ իմաստի լինում է լրացում յերկրորդի, այսինքն՝ բարդ բառի պլեսով կամ հիմնական նշանակությունը յերկրորդ մասի մեջ է, առաջինը միայն որև կողմից վորոշում, լրացնում և յերկրորդի իմաստը. սրինակ՝ հացատուն, սեվահող, մեծասիրտ, բացագլուխ, գլխաբաց, մեծապայծառ վերածվում են՝ հացի տուն, սեվ հող, մեծ սիրտ ունեցող կամ մեծ սրտով, բաց գլուխ, գլուխը բաց, մեծապես պայծառ (շատ պայծառ): Նույնպես՝ մայրդասեր, արագավազ բառերի հիմնական մասերն են՝ «սեր» «վազ», որ ունին սիրող, վազող բառնականների նշանակությունը, իսկ մարդ և արագ նրանց լրացումներն են, իրրև՝ մարդ սիրող, արագ վազող: Այսպես և մայրաքաղաք մասնում ենք իրրև «մայր քաղաք» (ինչպես՝ մայր հող, մայր յերկիր, մայր լեզու), իսկ հաղթամայր, իրրև «քաղաքների մայր»: Նույնպես գյուղամեղաք՝ իրրև գյուղատնտեսության քաղաք, իսկ հաղթագյուղ—գյուղ, որ քաղաքի նման է. հաղթաբերդ—քաղաքի բերդ, իսկ բերդատեղաք—բերդ ունեցող, բերդավոր, բերդի նման, կամ բերդի դեր կատարող քաղաք: Նույնիսկ համանիշների բաղադրություններ մասնում են յերբեմն իրրև սովորական բաղադրություններ, ինչպես՝ կերակուր (կեր ու կուր) մասնում է իրրև ուտելու կուր. յեկամուտ իրրև յեկած մուտ (բ), սպա-

տահմ՝ իբրեւ «տահմ ապրի», ինչպես սովորական և դրարարում համանիշների գործածում:

Ամեն բարդ բառի նշանակութիւն կարելի է պարտադրել այսպես ասելով չարահաճական կապակցութեամբ: Այդ դեպքում յիշեն առաջին բաղադրիչը դառնում և լրացում յերկրորդի, կը նշանակի բաղադրութիւնը կազմված և հայերենի բարդութեան կանոնով. հակառակ դեպքում՝ բառը կազմված և ոչով լեզուների համանուագութեամբ: Որինակ՝ ունինք հայերեն կազմութեամբ սիրաժան, պատուարժան, որ նշանակում են՝ սիրու արժանի, պատուի արժանի. բայց ունինք նաև հնդեվրոպական կազմութեամբ՝ արժանահավատ, արժանապատիվ՝ իբրեւ հավատքի արժանի, պատուի արժանի. սրանք ոչարարան կազմութիւններ են վերջանալ հայկական «հավատարժան» «պատուարժան» կազմութիւններին: Այսպես ոչարարան կազմութեամբ են նաև ստեղծաբան, սիրաբան, վերջնակ հայերեն բանաստեղծ (բան ասելու), բանասեր (բան սիրող) բառերը. հայերենում ստեղծաբան, սիրաբան պետք է նշանակէին՝ ասելու բան (խոսք), սիրու բան, սիրելու բան:

Անհատական բաղադրութիւնների ներքեւում գրված տեսակները պետք է տարբերել բուն չարահաճական հարաբերութեան:

98. Ա. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ, ԱԺԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ԲԱՅԱՐՄԱՏՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹԻՒՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ:—Կազմվում են գոյականները. յերկրորդ բաղադրիչը, որ գոյական է, պահում է իր հիմնական նշանակութիւնը, իսկ առաջին բաղադրիչը յերկրորդի լրացումն է, որ չարահաճական կապակցութեամբ արտահայտում է հոլովներով և նախադրութիւններով ու յետադրութիւններով. որինակ՝ լուսապայծառ—լույսի պես պայծառ, կամ լուսով պայծառ. մեծապայծառ—մեծապես պայծառ, վառնաթեվով—վառից թեվով, արտասրց—սիրար բաց. այսպես և՝ գոնապահ, մարզապահ, հոգապահ, լուսամուտ, ջրամուտ (լույսի, ջրի մուտ), յետամեծ—յերկից մեծ. ջրբաստան, մատամոլը, ականակուռ, հոգնաստան—հոգի հետ խառն, յերկնատարած—յերկնքի պես, յերկնքի չափ բարձր. մարդամոտ, յերկրամեծ, մատամարժ:

100. Գ. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԱԺԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՄԻ ԲԱՅԱՐՄԱՏԻ ԿԱՄ ԲԱՅԱՌՆԻ ՀԵՏ:—Կազմվում են գոյականներ և ածականներ. վերջիններս կարող են նաև գոյականաբար գործածվել: Բաղադրութեան յերկրորդ մասն ունի առաջին

պեպքում անորոշ դերբայի, ուրեմն մի վերացական անման կամ գործողության անվան նշանակության, իսկ յերկրորդ դեպքում կամ մի յենթակայական դերբայի, ուրեմն գործող անձի անվան, կամ մի անցյալ դերբայի նշանակության: Բայազրության առաջին մասը զանազանում է լրացում յերկրորդի՝ ամեն տեսակ հարաբերություններով, որ բայազրության մեջ մտնող բայը կարող է ունենալ իր լրացումի նկատմամբ. ուրիշ խոսքով, բայի և իր լրացման ամեն տեսակի չարահյուսական կապակցություններ, որ արտահայտում են հոլովներով և նախադրություններով, կարող են այսպիսի բարդությունների արտահայտվել: Առանձին ուշադրության պիտի դարձնել, որ բայազրության առաջին մասի համար «ություն» վերջացած անուններից վերանում են նրանց բները, որինակ՝ վերանում կամ սրբություն նման կամ սրբություններ, մաքրություններ կամ մաքրություններ, մեծություններ, իշխանություններ, վերություններ, կամ՝ սրբություն, մաքրություն, մեծություն, իշխանություն, վերություն, վեր կարող են նշանակել նաև՝ սուրբ սիրող, իշխան սիրող:

կան դրացումով այդ բառի առաջին մասը դեռ կապում ենք «ինչ» բառի հետ. բայց վերջի «նդ» (րդ) մասն այլևս չենք նույնացնում ոչ մի բառի հետ, այլ համարում ենք մի առանձ մասնիկ, իսկ «ինչ-նդ» բառը՝ մի ածանցաւոր բառ. մինչդեռ միջին հայերենում այդ բառը բաղդ. ե՝ ինչ+ցեղ բառերից կազմված «ձեղ»-ի միջին հայերենում նշանակում է՝ առանձ, կերպ, ուրեմն «ինչցեղ»—ինչ առանձ, ինչպես, ինչ կերպ:

Մասնիկով կազմված բառերի ստուգաբանությունն են թողնում և բարբառների մեջ գեղած չմչմակեր., չմչակեր և չմակեր բառերը, քանի որ, «չմչմ» «չմչ» «չմ» մասերը ոչ մի բառի հետ չենք նույնացնում: Ձևերն էլ նշանակում են՝ շնչին հայ ուտող, չատ քիչ ուտող: Դրանցից առաջին չերկուսը ծագել են ն>մ փոխարկությամբ «չնչնակեր» և «չնչակեր» բառերից. (այսպես կազմված կան նաև «չնչահամառ» և այլն): Այս վերջիններից առաջինը դրացվում է երրեմ բարդ բառ, որտեղ «չնչին» բառը սովորական բառ է. իսկ չերկրորդի կազմությունը մթնած է, որտեղ չենք տեսնում այս առաջին բաղադրիչը «չինչ», որից «չնչին», անդրծածական է, և հենց այդ «չինչ» բառի բաղադրությունն էլ, ինչպես ասացինք, մթնած է: «Ճմչմակեր» բառի առաջին մասը «չմչմ» յարդանալ և երրեմ կրկնության և առաջ գեղել «չմակեր» բառը նույն նշանակությամբ, որ և ավելի գործածական է, քան մյուս չերկուսը. դա էլ թողնում է «չմ» առաջադիր մասնիկով (նախածանցով) կազմված բառի ստուգաբանությունն, որտեղ չենք տեսնում «չմմ» կամ «չուտ» բառ: Այս ասես և փղոսկոր բարդ բառը փղոսկր ձևից անցնելով՝ գործել է փղոսկր, որի մեջ «ար» մասն արդեն թողնում է մի վերջածանցի ստուգաբանությունն:

Ինչպես էլ վերևում դրված այդ բառերի «եղ», «չմչմ», «չմչ», «ար» մասերը մասնիկի ստուգաբանությունն են թողնում, բայց դրանք ածանցական մասնիկներ չեն: Այդպիսի բազադրիչ մասերը, որ կոչվել են երանգ ձևեր և անկախ բառական նշանակություններ, այն ժամանակ են միայն ածանցական մասնիկի դառնում, երբ մի ինչ-ում ձևով և միևնույն ընդհանուր ձևական նշանակությամբ չերևան են գալիս, սկզբից կամ վերջից ավելացած մի շարք բառերի մեջ, որոնք մեր լեզվական դրացումով յարդանալ են երրեմ մի առանձին խումբ մի ընդհանուր ձևական նշանակությամբ, որը այդ մասնիկներով ավելանում է այդ խմբի բառերի նշանակության վրա: Այդ, ինչեղ և փղոսկր բառերն առանձնացած են մերձ

նում դրանք առանձին բառերի հետ-հետ փոխված, քարացած ձևերով են մնացել: Թեպետ չերրեմն նույնիսկ մի հետ բառի անալոգիայով ուրիշ բառեր են կազմվում, բայց անալոգիայով բազադրությունները սովորաբար հետաքրքրությամբ առաջ են գալիս, չերբ լեզվի մեջ կան արդեն շատ թվով բառեր նույն կազմությամբ և նույն նշանակությամբ, ինչպես չեթե չոչ միայն փոդոսկր բառը դարձած լիներ փղոսկր, այլև թմբկահար, ճնարահար դարձած լինելին «թմբկար», «քնարար», բայց այդ չկա: Ուստի մենք ավելի մեծ թվով՝ փղոսկր, թմբկահար, ճնարահար, փանդռնահար, արնգահար բառերի նմանությամբ նոր կազմել ենք ջութակահար, դաշնակահար և ուրիշ թե «ջութակար», «դաշնակար»: Վերևում հետված «չմ» մասնիկը ստացան, արդեն կարելի է մի նախամասնիկ (առաջադիր մասնիկ) համարել, որտեղ հետևյալ մենք արդեն «չմակեր» բառի նմանությամբ, նույն ձևով և նույն նշանակությամբ ունենք նաև «չմախառ»—քիչ խոսող, «չմախոս»-քիչ խոսող, բնական փակ նստող, «չմահավան»—ուշ մի բանի չհավանող, կամ շատ քիչ բանի հավանող:

Ածանցական մասնիկների մի մասն այսպիսի հնչյունական փոփոխությամբ և առաջ գեղել նախադրարարության չրջանում: Այսպես՝ մեր լեզվի մեջ շատ կենդանի և գործածական «վոր» (_ավոր) մասնիկը ծագել է «բեր» բառի մի չերկրորդ «բոր»-ձևից, (ինչպես՝ քերել-քորել), որի «ր» հնչյունը չերկու ձայնավորի մեջ գարձել է «վ». ուրեմն «լուսավոր»—«լուսաբոր» նույնն է, ինչ որ «լուսաբեր», միայն ոչ «լույս բերող» նշանակությամբ, այլ «լույս կրող, լույս ունեցող»: Հին լեզվի մեջ «բերել» դեռ նշանակում է նաև «կրել», «վրան կրել», «վրան ունենալ»: Հնչյունափոխության հետևանքով այդ բառի կրկին նշանակություններն էլ տարբերվածքան են չենթարկվել. «վոր» (հին_ւոր) ձևի համար առնվել է միայն այս չերկրորդ նշանակությունը-վրան կրել, ունենալ: Բայց այժմ, ինչպես և հնումը, այլևս «վոր» ձևը ոչ հնչյուններով և ոչ նշանակությամբ չենք նույնացնում «բեր» բառի հետ, և քանի որ «վոր» ձևին անկախ գործածություն էլ չունի, ուստի «լուսավոր» և նման կազմության բառերի մեջ «վոր» մի ածանցական մասնիկ է. մինչդեռ «լուսաբեր» և նման բառերը մեզ համար հասկանալի բարդ բառեր են: Այսպես՝ հնչյունների և նշանակության փոփոխությամբ, «ոտ» մասնիկը համարվում է ծագած «հոտ» բառից. «հի-

վանդատ», «ձխոտ» բառերն, ուրեմն, սկզբնապես կեղել են՝ «հիվանդատոտ», «ձխահոտ», այսինքն՝ հիվանդի հոտ ունեցող, ձխի հոտ ունեցող· ապա՝ զարձել են «հիվանդոտ», «ձխոտ» և ստացել են արդի նշանակությունը:

Այս մասնիկները (վոր-ւոր, ոտ) նախապարբերյան չրջանում են ծագած, ուսոմ դրանց բացատրությունը տրվում է միայն համեմատական քերականության սիմությամբ։ Այդ են ածանցները, վորոնք մեր լեզվի պատմական չրջանում են ստաջ կեկել, և մենք կարող ենք դրանց ծագումները հետևել: Այդպիսի նոր ածանցներից մեկն է «ատ», վոր շատ զործածական է և վորով այժմ՝ շարունակ նորանոր բառեր ենք կազմում թե անուններից և թե բայերից: Դա ծագում է «հատանել» բայի «հատ» արմատից, այսինքն՝ ճեւահատ զարձել է ճեատ (քնից կտրված)· փայտահատ (փայտ կարող մարդը և գործիքը) զարձել է փայտատ (գործիքը՝ կացին, այլ և բրիչ, վոր բարբառային ձևով է՝ փեատ), գլխահատել զարձել է գլխատել, վորից գլխատ (գլուխը կտրած) և ուրիշ բառեր՝ կռնատ, պոչատ, քթատ· յերկատել, ածվատել, մատնատել և այլն:

133· ԱԺԱՆՑԻԿՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ԱՌՆՉՅ ՀՆՉԱԿՈՒԹՅԱՆ:— Ածանցական մասնիկներ ասում են պարզ նաև ասանց հնչյունափոխության: Յերբ բազապրիչ մասերից մեկը իրրև անկախ բառ կըչում է կամ չկա լեզվի մեջ, այլ մնացել բազապրությունների մեջ՝ ասանձում է մի նոր, ձևական նշանակություն,—այն ժամանակ այդպիսի մասն ղգացվում և իրրև ածանցիկ, և յերբ դրա անցագիտով նոր բառեր են կազմվում, զա պատճում է իսկապես մի ասաջադիր կամ վերջավոր մասնիկ: Բերենք մի քանի օրինակ:

1) Ե՛նենք շատ զործածական բախանցել, բախանցում, բա. փանցիկ բառերը: Սրանց յերկրորդ մասը նույնացնում ենք անցնել բառի հետ· բայց առաջին մասի՝ բախ բառի նշանակությունն աշխարհաբարում չկա, և չենք կարող նույնացնել վոչ մի բառի հետ, վոչ «բախել», «բախ տալ» բառերի հետ և վոչ էլ չարժման «բախիր» հետ, վոր նշանակում է՝ ուժ, ասատկություն: «Բախ» հին լեզվի մեջ նշանակում է նաև՝ ասակ, հատասակ, խորք: Դրսարարում կան այս նշանակությամբ՝ «բախ անցանել», «ղբախ անցանել» (անցուցանել), վոր նշանակում է՝ մինչև ասակը, մինչև խորքը անցնել, անց կացնել՝ ապա վարժվեանել մինչև ասին այնելը մինչև մյուս ծայրն անցնել և, ուսոմ և «բախ անցանել» նշանակում է նաև

մի կողմից միևչև մյուս կողմը, մի ծայրից միևչև մյուսն անցնել (անց կացնել) մի բանի միջով: Այս յերկու իմաստով նոր լեզվի մեջ գործածվում է «բախանցել» բառը-բախանցել մինչև խորքը, բախանցել մի բանի միջով: Յեվ վարժվեանե «բախ» բառ չկա «ասակ», «հատասակ» նշանակությամբ, ուսոմ «բախ» մասն ըմբռնում ենք իրրև մի նախամասնիկ: Սուրն նշանակությամբ գրաբարում կան նաև՝ բախանջուղ (բախանցիկ), բախ կամ ընդ բախ հանել, բախ հատուցանել, բախ անկանել, բախ մատնել—մինչև ասակը կամ մի բանի միջով մի կողմից մինչև մյուսը հանել, հատցնել, ընկնել, մտնել· յեվ վերջապես կա կրկնաձայն «բախբնդբախ» կամ «բախնբախ» մակրայը, վոր նշանակում է՝ «բախանցելով» նույն նշանակությամբ նաև՝ բախանց (ածել, լինել), բախանցանց (ելանել, լինել): Ռուսերենի про և գերմաներենի durch նախդիրներով կազմված մի քանի բայերի դիմաց՝ բարբառներում ենք՝ ընդբախ ձգել, նետել· անցնել ընդբախ, բախանցել· ընդբախ նկարել, ընդբախ կազապարել· ընդբախ կարել, ծակել· ընդբախ անցնել, հատել, ծորալ· ընդբախ յերևվալ, տեսնվել· բախանցանց խոցել: Այս բոլորը, սակայն, չեն ընդհանրացած նոր գրական լեզվի մեջ և ասում չի յեկել մի կենդանի գործած նախամասնիկ «բախ» ձևով, կամ բայի հարադիր մաս «բախ» կամ «ընդբախ», «բախանց», «բախնբախ» ձևերով: Հին լեզվից առել ենք՝ «բախանցանել» բայը «բախանցել» ձևով, այլև «բախանցում», բայց վոչ նաև՝ բախ ընկնել, բախ մտնել, բախ հանել, բախ հատնել, ուսոմ անպատճառ չենք կարող՝ բախ կարել, բախ ծակել, բախ յերկել և նմաններըս, կամ բախտատուր լինել, բախահանել, բախատծակել, բախահակատել, բախահատել, բախախոցել, բախերկվել և այլն: Կնշանակի՝ ինչքան էլ «բախանցել» բառի «բախ» մասն ըմբռնում ենք իրրև մի նախամասնիկ, բայց զա գեռ գործած չէ: Միայն Հովհաննես Թումանյանի առասպելներից մի քարտմանության մեջ գտնում ենք՝ «բախ իջավ գեսի նկուղները խոր»: Այս ցույց է տալիս, վոր լեզվի մեջ կարող և ասաջ գալ մի այդպիսի նախածանց մասնիկ:

2) Հին լեզվի «պարզ» բառի մասին խոսելիս ասացինք, վոր հին լեզվի մեջ «արզ» բառը նշանակում է՝ ձեվ, կերպ (այլև հրաշագործ, կարողություն): Աշխարհաբարում գործածվում է այդ բառը միայն կրկնական ձևով՝ «արզ ու պարզ» և բոլորովին ուրիշ նշանակությամբ: Սակայն գրաբարից ունենք՝ խոստանալ,

գմբեթապող, պուտնապող, կոթրնբապող բառերը, որոնք ուշադրության արանքում կարող են ածանցական բառեր համարվել. դրանց մեջ «ապող» մասն ունի մի ընդհանուր նշանակություն և արդեն մի ածանցական մասնիկ է, քանի որ դրանց անալոգիայով կարող ենք յերկրաչափական և անդամագրական ձևերի համար նոր բառեր կազմել և կազմված են՝ անգանապող, քառապող, սանապող և այլն:

3) Ածանցական մասնիկներ առաջ են գալիս և այն ժամանակ, յերբ բառի նշանակություն բազադրության մեջ ձեվական դառնալով այնքանով փոփոխություն և կրում, որ այնս չենք նույնացնում նույն բառի սովորական անկախ գործածության հետ: Այսպես պիտի բացի արմատով կազմված բառերը՝ անբիծապես, ծաղիկապես, թևավոր (թռչունի համար), առնվազն, հերթապես, մատղաշ: Սրանք մեզ համար հասկանալի յեն իրենց բազդ բառեր, որովհետև անբիծ, ծաղիկներ, թևեր (այսինքն՝ թռչնի վերաբերյալ) մաքուր իմաստներ են: Հասկանալի յե նաև «անթամբ» բառը, որովհետև կարող է թամբ և. «անթամբ» բառն, ուրեմն, նշանակում է թամբ չդնելով: Գալով հասկանալի յե նաև թևաթափ (մազերու համար), մաղմոսել, յեղջերսապես և այլ բառերի բազադրություններ, որովհետև դեռ գործածում են՝ թևերը թափվեցին, մեխ թափվեց, մազերը (ցրտից) թափվեցին, պոչերը թափվեցին: Նույնպես բազդ բառ գտած ենք նաև՝ գերնթաթափ, գերազանցապես (գերգիտափ), հազարապես, գրասապատությունն և այլ բառերի համար. վերջինիս «թափել» բառը մեկ դեռ գործ ենք ածում «ապատություն» նշանակությամբ՝ մարդահարկը, գրամը թափել, գերին թափել. «գերազանցապես» բառն, ուրեմն, նշանակում է՝ գերից (թուրքից) ազատող, «հազարապես»՝ հազից ազատող: Բայց կան նաև այս բառերը՝ խելագարել, մտագնացել, ուշագնացել, գունատվել, արտահայտել (արտահայտիկ, սիրտը կտրած»—չկարողանալ չկարողանալ նոր յեզրի «սիրտ թափել»—սիրտ խառնել՝ գործածելե հետո), ոգեկոչել (ուժից ընկած), գրկելագնացել (անգիտակից կերպով), մարդագնացել (մարդկանցից կտրված, անընտանի), հայրենագնացել, բևեռագնացել (բևեռ հասած), սակրագնացել անել (մեռած,—սակրահան անել) և ուրիշները: Այս բոլորը գրաբարում բազդ բառեր են, որովհետև հին լեզվով ասվում է՝ թափել ի խելաց, ի մտաց. թափել գունից, թափել գոգե, գրկից.

գագնացել ի բնակչաց (գագնացել, գառատիկ մնալ), գագնացել ի հայրենեաց (գրկվել), գագնացել գառն (առնը գառատիկել), և այլն: Բայց նոր լեզվի մեջ «գագնել» բայն այսպիսի կիրառություններ և նշանակություններ չունի, ուստի և այդ բառերի բազդ լինելն աչքառնատարում արդեն գագնած է, և յերկրորդ բաղադրիչը «գագ» գոգնում է մի ածանցական մասնիկի ստացություն մի ընդհանուր ձեվական նշանակությամբ՝ իրրեվ զեղծ, հասն, գուրկ, և այդ բառերի անալոգիայով կազմված են նոր բառեր՝ ձեռնագագ, ուժագագ, գիմագագ, գնագագ. որով՝ և «գագ» բառն արդեն դարձել է մի վերջածանց մասնիկ: Վերջերս նույն իսկ «գուրգահագագ անել», որպես խնամով, սակայն, գրում են ավելի «ստահակ գահագատ» (Տես § 130.2 ԱՊ մասնիկ):

4) Գրաբարի «Անձևոն» բառատրության մեջ գտնում ենք անդրադարձ կամ անգիտակ բառեր, որոնք բացատրված է՝ «յերկրային (գրկնաս) մինչև գետին»: Աշխարհաբարի բառարանի մեջ կան՝ ճառագագ, ծնկնկաղ բառերը. առում են՝ գետ, ջուրը կամ ձյունը ծնկնհասագ է. ծնկնհասագ ճառագ ձյուն, այսինքն՝ մինչև ծունկը հասնող-գարնան ճառագագ է, այսինքն՝ հասնում է մինչև մարդու ձիրար, ձիրար ծածկելով: Այդ բառերի կազմություններ բացատրվում է «հարիանել» բայի «հար» արմատից կազմված. ծնկնհասագ, ուրեմն, սկզբնապես՝ ծունկը ծածող, ճառագագ—ձիրար ծածող, ճամփն ծածկող. ապա՝ նշանակության փոփոխությամբ՝ մինչև ծունկը, մինչև ձիրար ծածող, գարնող, հեռվագարար և մինչև ծունկը, մինչև ձիրար հասնող: Այդ «հար» մասն այժմ ընդունում ենք իրրեվ մի ածանցիկ: Բացի վերևի բառերից կան նաև՝ ծանգագագ—մինչև ծանգ. պոկհագ, որ նշանակում է՝ մինչև պոռնկ, պոկհագ-պոռնկ. (բարբառներն մեջ նաև «պոռնհագ»—«պոռնագագ»):

5) Այսպիսի բազդ բառերի մի անդամը ածանցական մասնիկ և գառնում ժամանակի ընթացքում հետզհետև, որովհետև նրա նշանակության փոփոխություն էլ առաջիանարար և առաջ գալիս, այնպես որ մինչև բառը կարող է մեռած ժամանակ մերթ իրրեվ բազդ բառագործվել, մերթ իրրեվ ածանցական, նայելով թե նոր նշանակությանն անցնելը գործած պատճառ յե: Այսպիսի անցման իրրեվ օրինակ ունենք արևելյան բարբառների մեջ «հանել» բայի «հան» արմատից ծագած մի նոր մասնիկ՝ «հան», որ ունի «անց» ածանցի նշանակություններ և որա ազդեցությամբ վերջից մեկ-մեկ

առանում և և «Ձ» հնչյունը, ինչպես՝ լեռնահան կամ լեռնահանց —լեռնանց· տակահան կամ տակնըհան, տակնըհանց—տականց, տակից և այլն: Տեսնենք այս մասնիկի ծագումը:

Ունինք «հան» բառով բազադրված մի չարք բառեր, վորոնց բազադրության լեզվորդ մասը պահում և «հանել» բայի նշանակությունը, ինչպես՝ անհան, անպահան անել, լինել—անից, անպից հանել, հանվել (տմմա. հին՝ անզաթմամ)· պլխահան անել, խելքահան անել—պլխից, խելքից հանել, մոլորեցնել (պլխահան անել—նաև՝ պլխից հեռացնել, այլև մի բան պլխանց, վայրենիբան անել)· ճրմահան անել, կռնահան անել—ճրմից, կռնա հանել (տմմա. հին՝ թեվաթմամ)· վառնահան լինել—պարծանվում և վախված նշանակությամբ երբեմ՝ առաջիկ հագնել, վառնաթմամ լինել· ոսկրահան անել (ոսկրահան, ոսկրբահան)—ոսկորները հանել, պառել մսից (տմմա. ոսկրթմամել)· փեսահան անել—փեսատունը հանել· փեսրթահան անել—կաղը կաղից հանել, պակլ· դուռը կրնկահան անել—դռան կրունկը տեղից հանել: Այս և նման բառերը մեզ համար հասկանալի բազադրյալ բառեր են:

Բարդ բառերի պղպջումը ունինք նաև հնավոյների մեջ, վորոնք, տակաին, իրենց նշանակությամբ առաջնորդում են նախորդներից· ծառն արմատահան անել, տակահան անել—ծառն արմատից հանել, արմատով հանել, արմատն էլ հետը հանել· ծառն արմատահան կտրել, տակահան կտրել,—ծառն արմատահան, տակահան կտրվել և, ծառն արմատահան պոկել, տակահան պոկել—հան կտրվել և, ծառն արմատահան պոկել, տակահան պոկել—արմատը հանելով կտրել, պոկել· արմատից կտրել, կտրվել, ապա նաև՝ արմատաքի, արմատի հետ, արմատով հանելթե կտրել և այլն: Այս կարգին պատկանում են նաև հնավոյները՝ մարդը տակահան (տակնահան) փռել, գետինը լեռնահան քանդել, հողը լեռնահան վերցնել: Այստեղ էլ դեռ կարող ենք մտածել՝ տակից, այսինքն՝ տակի մասը հանելով փռել· լեռնի մասը հանելով քանդել, վերցնել, թեպետ ավելի շատ մտածում ենք՝ տակով, տակից՝ մինչև տակը, տակից սկսած, տակն էլ հետը փռել· լեռնից սկսած, լեռնանց քանդել, վերցնել: Նույնպես՝ «քարտին տակահան կտրել», «ծառը լերդահան կտրել», «մոլորը տակահան խուզել», «արտ տակահան հնձել», «լերդահան հնձել»— այստեղ «տակը հանելու», «լեռնի հանելու» դարձվածքն արդեն բոլորովին մթնած է, և դրանք նշանակում են միայն՝ տակը, տա-

կի մասը (վոչ արմատը) հետը, տակից կտրել, խուզել, հնձել, լեռնի մասը, լեռնանց, լեռնից սկսած կտրել, խուզել, հնձել: Այս կապակցությունների մեջ «հան» մասն այլևս չենք կապում հանել բայի հետ· դա բառին տալիս է բացառական հոլովի, կամ հետ, հանդերձ, միևնույն բառերի նշանակությամբ, թեպետ և հնչառությամբ բոլորովին ուրիշ ձևեր ակզբնապես նշանակել են՝ «տակը (տակի մասը) հանելով» կտրել, խուզել, հնձել, մյուսն «լեռնի մասը հանելով» կտրել, խուզել, հնձել:

Այս բառերը, ֆիզիկական նշանակությունից փոխվելով բարոյական նշանակության, արդեն բոլորովին չեն կապվում հանել բառի նշանակության հետ· «մի բան տակահան մոռանալ» այլևս չի նշանակում՝ «տակի մասը հանելով» մոռանալ, այլ «տակովին», հիմնովին մոռանալ, տակն էլ հետը, տակից, հիմքից մոռանալ: Այսպես տակահան բառը լրիվ մակաբայ է դարձած: Այսպես և հետևյալների մեջ· լեռնահան հոգի, տակահան աժան (լեռնանց—արագաքայա, տակահան—տականց, ներքնատա)· լեռնահան վաչխար և ձեվանում, բայց արտանց պակաս է· լեռնահան խոսում եր...տակնահան ինչ ասա՝ անում է· տակնահան իր բանը չինեց· տակնահանց նայել· տակնահան նա ձեր տունը քանդեց (Պատչ·): Տակահան—առակաբառ, խորամանկ, ծածկամիտ:

Մի անգամ վոր «հան» բառը կորցնելով իր բուն նշանակությունը՝ երբեմ ածանցական մասնիկ և ըմբռնվել՝ բացառական հոլովի, կամ հետ, միևնույն բառերի, կամ մյուսների դարձվածքային հոլովի նշանակությամբ, արմատահան, տակնահան, լեռնահան բառերի անալոգիայով կազմված են և ուրիշ բառեր, վորոնց մեջ հանելու գործողության վրա այլևս չենք մտածում: Այսպես են՝ «ծառը գետնահան կրկտրեա, բարձր չես կտրել», «խոտը գետնահան» հնձել,—չի նշանակում արմատը գետնից հանելով կտրել, այլ գետնից սկսած, գետնի հետ հավասար կտրել, միևնույն գետին: Նույնպես՝ «պատը գետնահան գնել» չի նշանակում գետնից հանելով գնել, այլ գետնից սկսած, գետնի հետ հավասար գնել առանց հիմքի: Այսպես և «գետնահան տուն» —գետնի վրա, գետնի հետ հավասար չինված տուն: Խարթպահան, գաժրահան նայել—բարձրից, ցածրից: Կոդհահան մտիկ տալ—կոդքից, կոդքի կողմից, կոդքի վրա նայել· ապա նաև՝ կոդքահան դնալ, լոկ տալ, թեք ընկնել, դդակը կոդքահան դնել—կոդքի վրա:

Ծնկահաս խրվել գետի մեջ–խրվել մինչեւ ծունկը, ծունկից ակռած գնալ ցած, ծունկն էլ հետը, ծնկահաս խրվել: Գիշերահաս, գիշերահասնել (նաեւ՝ բացառականի «ս» վերջավորությամբ՝ գիշերահասս) մեր կացավ, գնաց —գիշերով, գիշերանց, ի գիշերաց (նաեւ կրկնությամբ՝ գիշերով—գիշերհանս ո՛ւր ես գնում): Առավոտահաս (նաեւ բացառականի «ս» վերջավորությամբ՝ առավոտահասս) ո՛ւր ես գնում–առավոտանց, առավոտանց, առավոտաց, առավոտ չուտով, առավոտից հետ: Շմմո. «Հետ լուսն», «բարի լուսի հետ» մեր կացավ: Երեկոահաս–արեւը ծագելու հետ, առավոտ կանուխ: Շմմո. ծագի հետ մեր կենալ: «Ընդհանուր դուռս թռափկին» նշանակում է՝ մոչ մի չապիկը հառած, այլ շապկով, չափանց, հարմանց, այնինքն մեռնի չապկով. մինչդեռ «շորահաս լինել» բարդ բառ է և նշանակում է՝ չարիքը հանել:

Այս գործածություններից հեշտությամբ անցում է լինում և վարակական մակրայի նշանակության, ինչպես են՝ մեծահաս խոսել, մեծահասն անց կացրու—իրրեւ մեծ կամ մեծատար խոսել, իրրեւ մեծ կամ մեծ լինելով անց կացնել, նեղել: Փոքրահասն գնա, սրա իրրեւ փոքր: Անմիջանց–անմիջ կերպով, գեռ ես բան չկերած (Տ. Նամատարք. Բառ.): Մլաւհաս բռնալ—բարձր բռնալ (ծիլ–վեր, բարձր. ծիլ գնալ, ծիլ լինել—վեր բարձրանալ): Մլուզգհաս վախած գնաց—նոսած անկից հանկարծ վեր ցատկելով՝ փախած. («ծլունդ լինել»—նոսած անկից հանկարծ վեր կենալ, վեր ցատկել):

6) Նոր լեզվի շատ գործածական կենդանի ածանցիկներից մեկն է՝ «վար», «վարի», ինչպես՝ բաղաքավար կամ բաղաքավարի. մարդավար կամ մարդավարի: Դա ծագում է հին վարել բայի արմատից, որի մի քանի նշանակություններից մեկն է՝ կյանք վարել, կենցաղավարել և ավելի՝ վարվել, վարից՝ վարմունք, վարք: Հին լեզվի մեջ հունարան գրողները հունարենի «պոլիս»—«քաղաք» բառից կազմված «պոլիտեյա», «պոլիտեւս» բառերը թարգմանել են բաղաքավարություն, բաղաքավարել, որոնց առաջին նշանակությունն է, բուռ հունարենի, քաղաք (պետություն) վարել, կառավարել. քաղաքի գործերը վարել. ապա՝ իրրեւ քաղաքացի ապրել ու գործել, քաղաքի կյանք վարել; և վերջապես՝ քաղաքացուն արժանի, գովելի վարք ու կյանք ունե-

նալ: Քան ազամ բաղաքավար բառի նշանակությունն է՝ քաղաքի վարիչ, ապա՝ քաղաքացու ձեւով վարվող: Այս բառի նման արձանհունարան հելլինականերից կազմած ունինք՝ աշխարհավար, աշխարհարհավարել, աշխարհավարություն, «աշխարհավար գնանք», որ նշանակում է, աշխարհի, աշխարհականի կյանք վարել. կենցաղավարել աշխարհի օրենքով, հասկացությամբ հոգեվարական կյանքի:

Արդ, հունարան գրողների կազմած բաղաքավար, բաղաքավարության բառը կենդանի գործածության մեջ պահել և ներբորդ իմաստով, որ է՝ քաղաքացու ձեւով վարվել, բարեկիրթ, կոկ ու հղկված. վարվելակերպի քաղաքը կրթության համար ավելի բարձր է, քան գյուղը: Նույն նշանակությունն ունի և Ֆրանսերեն civil, civilité «քաղաք» բառից, մինչդեռ գերմաներենում նույն նշանակությունն ունի hoeflich բառը, Hof «արքունիք», «պալատ» բառից, ինչպես ֆրանսերեն առնենք «արքունավար»: «Քաղաքավար» բառի անալոգիայով բարբառների մեջ կազմվել և գեղացավար. վար նշանակում է գյուղի ձեւով, գեղացիական, գեղացու պես (ուտել, ապրել, նեղան ու կաց անենալ). ապա նաեւ՝ հայավար, թուրքավար, վրացավար. վար նշանակում են՝ հայի պես, թուրքի, վրացու պես. ապա՝ նշանակության փոփոխությամբ նաեւ՝ հայերեն, թուրքերեն, վրացերեն. գրեթե—գրեթե. մարդավար—մարդու պես: Այս ածանցիկն արեւելահայ գրչով «ամարդ—ամարդի», «վաստամարդ—վաստամարդի», «այրուպ—այրուդի» և այլ ածականների այսպիսի կրկին ձեւերից (գուցե և պատկերների նույն «վար, վարի» ածանցիկից, որ և նույն նշանակությունն ունի), ապացել և վերջից «ի». բաղաքավար, մարդավար և այլն ունեն նաեւ բաղաքավարի, մարդավարի ձեւերը: Այս կրկնակների մեջ նույնիսկ կիրառության տարբերություն կա և մեռնում. «հայերեն», «թուրքերեն», «վրացերեն» նշանակությամբ գործածվում են՝ հայատար, թուրքատար, վրացատար (խոսել), իսկ ընդհանուր նշանակությամբ և ավելի իրրեւ ածական՝ մերկատան են՝ քաղաքավար կամ քաղաքավարի, հայավար կամ հայավարի (հնաոճը, հայկական ատրպատ, հայոնակ, հայի պես հագնված), գեղացավար կամ գեղացավարի, գեղավարի, այսպես նաեւ անասավարի, ապավարի, ապրկիավարի (խոսալ, հոլ ձգել),

կնիկավարի (խոսել, կնոջ ձայնով ու ձևերով), պժոխարի, մեծավարի, իշխանավարի, իշավարի, արջավարի և այլն:

Այս մեկնության կապանակով, նշանակության փոփոխությամբ, առաջ են գնում հին լեզվի չաս վերջածանցները, ինչպես՝ քար, օրէն, կից, գուշն և այլն, ինչպես և վարչ թվով նախածանցները կամ առաջադիր մասնիկները, ինչպիսին՝ համ (համանուն, համաժիս և այլ բառերի մեջ), մակ, արամ, յնոր, դեր և այլն:

134· ԱՋԱՆՑԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՅԵՐԿՈՒ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԻՑ:—Վերջադիր մասնիկները լեզուների մեջ առաջ են գալիս յերկու նաև յերկու մասնիկների միացումից, որոնք ըմբռնում են իրենց մի միության և մի նոր ընդհանուր նշանակության մասին: Այսպես օրինակ՝ մեր հին և նոր լեզվի մեջ կա բայերից ածանցող ՈՒԿ մասնիկը, ինչպես՝ վարվապետ, նախանձուկ, մուսացուկ, քնուկ, մրուկ և այլն (Տես § 208), որոնց վրա ավելանում է ՈՏ մասնիկը և կազմվում են՝ վարվապետուկ, նախանձուկոտ, մուսացուկոտ, քնուկոտ, մուկոտ. այսպես և չաս բառերի վրա՝ պրպտուկոտ, վախուկոտ (նաև «վախուտ» բառից «վախկոտ»), յուսուկոտ, պարծենկոտ և այլն (Տես § 184): Յեվ այսպիսով առաջ է գնում ԿՈՏ մասնիկը, որ իր այս ծագման պատճառով, չնայելով բազմաձևության և սովորության, չի պատահում «ակոտ» ձևով, այսինքն չի միանում «ա» հոգնակապով:

Նույնպես առանց հոգնակապի են միանում և բարբառային ԿԱԿ, ԿԵԿ, ԿԻԿ, ԿՈՒԿ մասնիկները, որոնք ծագում են՝ ուկ+ակ=կակ. իկ+ակ կակ. իկ—եակ=կեակ>կեկ ձևերից, այսինքն յերկու նախդական մասնիկների միացումից: Մենք ունենք հին լեզվից՝ պատանեակ+իկ=պատանեկիկ. սեղեակ (փոքր սեղ), որից կրկին նախդական՝ սեղեկիկ. առուակ+ուկ=առուակուկ, նավակ+իկ=նավակիկ և այլն, որոնց մեջ յերկու ածանցների միացումը պզտիկ է. բայց ունենք նաև սեղակ, մանրկեկ և այլն (տես § 180), որոնց մեջ ԿԱԿ, ԿԵԿ բնորոշում են իրենց առանձին մասնիկները: Դրանք ևս ծագած են այսպես՝ սեղուկ+ակ=սեղակ, կամ սեղիկ+ակ=սեղակ. մանրիկ+եակ=մանրկեակ, մանրկեկ:

Այսպես յերկու ածանցիկների միացումից են ծագում հին լեզվի մեջ՝ ածոյ=ած+ոյ (ինչպես՝ նվիրած—ոյ), անք=ան+ք, ակի=ակ+ի, կյան, կեն=իկ+եան, անակ=ան+ակ, անի, ենի=ան+ի, եան+ի. անուա=ան+ուա, եք=ե+ք< եայ+ք և ուրիշները:

135· ՀՆԱՅԱԾ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՅԵՎ ԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԵՐ:—Հին լեզվի հոլովական և բայական ձևերի մասնիկները մեկնելով՝ մեկ մեկ բառերի մեջ քարացած մնում են, այլևս չզգացվելով իրենց կենդանի բառափոխության ձևական մասեր, այլ իրրև բառակազմության ածանցական մասնիկներ: Այսպես՝ գրաբարի հոգնակի կազմող «Ք» հնչյունը չաս բառերի վերջում արդեն այլևս գրեթե չենք ըմբռնում իր հին նշանակությամբ, այլ լոկ իրրև մի ածանցական մասնիկ, որով կազմվում են չաս բառեր, ինչպես՝ գիր—գիրք, տես—տեսք, հայրենի—հայրենիք. (տես § 237): Նույնպես գրաբարի «ումն» վերջացած բառերի հոգնակի ուղղականի վերջի՝ «մունք» ըմբռնում ենք իրրև մի առանձին ածանց՝ բժշանում(ն)— բժշանմունք. պատահում(ն) պատահմունք, մտածմունք և այլն (տես § 188). նույնպես գրաբարի անցյալ դերբայի ԵԱԼ>ՅԱԼ վերջավորության, ինչպես՝ անցյալ, մեռյալ, (տես § 190):

Կան բավական թվով բառեր հին լեզվի գործիական հոլովով վերջանում են քարացած ձևով, օրինակ՝ կանխով, խաղով, ճրչալով, լրով, հագով, գարեջր-գարեջր, ապնով, մատամբ, երամբ, բրնամբ, իրախմբ, խելքով, տեսաք, կարծյաք, երեք, առաք-փառաք, արդյոք և այլն: Ուրիշները հետզհետե այլևս չաս չեն գործածվում, ինչպես՝ անձամբ, ճշմարտով, առատով և այլն:

Այդ հոլովական ձևերից մեկը, առաջին, արդեն կարելի է ածանցական մասնիկ համարել: «Բարի» բառի հին գործիական հոլովի՝ բարեաւ ձևից ունենք բարեւ բառը. նույնպես հին «առաջի» բառի գործիականը՝ առաջեաւ գարձել է առաջեւ, առջեւ. հին լեզվի մեջ գտել և նաև «հետի» բառի գործիականը հետեաւ, հետեւ վերից՝ որովհետեւ, պատուհետեւ, աչքաթողաբար՝ հետեւ, յետեւ: Այս եաւ>եւ>եվ վերջին ըմբռնվել և իրրև մի ածանցիկ և ունենք արդեն դրանց անալոգիայով՝ վերեւ, ներքեւ, ներքեվ, ներսեւ, դրսեւ, միջեւ. վորով եվ գարձել և մի մակրայական ածանց: Նույնպես մի մակրայական ածանց և «ՈՒ»՝ ամսօրու, աշխու, ծիծաղու, ուրախու (ուրախությունից), վոր ծագում և հին լեզվի (աս) ամսօրայ> ամսօրու ձևից: Այսպես և հին լեզվի

հոգն· բացառականի ՈՒՅ վերջը՝ առավօտուց, վաղուց, դարձել և արդեն մի մակբայական ածանց՝ մանկուց, ծերուց, փոքրուց, մօրուց, վոր բարբառների մէջ լեզուում են նաև՝ «մանկութ», «մօրութ» ձևով, վորի մէջ վերջին 3 հնչյուներ վերածվել են բազադրիչ հնչյուններից (թ+ա=ց) առաջինին, որ է՞ թ (տես § 34· 2)։

136· ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆ ՉԵՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։—Վերջածանցները միանալով բառերի յուրաքանչյուր անգամ բառի հիմնական նշանակության վրա ավելացնում են այնպիսի ձևական դաղափարներ, վոր միայն չէրջարանությամբ կարելի չէ արտահայտել։ Դրանք լեզվի բառամթերքի համար հարաստության բազմապան ապրյուրներ են, մանավանդ վոր մի և նույն վերջածանցը, նայելով հիմնական բառերին, տարբեր իմաստներ կարող է առանել։ Որինակ՝ շատ գործածական վերջածանցներից մեկը «ՈՅ» կազմում է գոյական իմաստներով անուններ· այսպես կան՝ դպր—ոց, ծաղկ—ոց, վորոնց մէջ «ոց» ածանցը ցույց է տալիս հիմնական բառի նշանակած առարկայի տեսքը· բայց ունինք և ամառանոց, ձմեռ—ոց, վորոնց մէջ «ոց» ցույց է տալիս վոչ թե այն տեղը, ուր ձմեռն, ամառն է լինում, ինչպես պիտի սպասէինք, այլ այն տեղը, ուր մարդիկ ձմեռը, ամառը անց են կացնում։ Այս յերկրորդ նշանակությունը դեռ մոռա և առաջինին· բայց ունինք նաև մատու—ոց, ձեռն—ոց, ակն—ոց, վորոնց մէջ տեղի գաղափարից անցում է լինում այնպիսի հազուստի կամ անոթի գաղափարին, վոր մարդիկ կրում են մարմնի վորևե մասի վրա։ Ապա ունինք՝ յոթն—ոց, իննն—ոց, տասն—ոց, վորոնք ցույց են տալիս վորևե յոթն, իննն, տասը բան ունեցող իրեր։ Ապա ունինք գործյալ՝ կոտ—ոց, խոպոտ—ոց, վորոնց մէջ «ոց» ածանցը ցույց է տալիս այն գործիքը, վորով կարում, խոպոտում են։ Սակայն կան դեռ փսփսոց, խշշոց, ջարդոց, վորոնց մէջ «ոց» ածանցը ցույց է տալիս փսփսալու, խշշալու, ջարդելու գործողություններ, իսկ արեվմտոց, հավխոտոց՝ նաև արեվմտնելու, աքլորի կանչելու ժամանակը։

Վոր ածանցական մասնիկները հաճախ այսպես բազմապան նշանակություններ ունեին, դրա պատճառն այն է, վոր ածանցիկները ևս, ինչպես ամեն բառ, ժամանակի ընթացքում նորանոր ա-

ստիճաներով են գործածվել, այն էլ բառերի հետ միասին։ Յերբ մի խումբ նույն ածանցներով կազմված բառերի նշանակությունը նույն ուղղությամբ փոխվում է, այն ժամանակ դրանց ածանցական մասնիկին ստանում է նոր ձևական նշանակություն։ Յեվ քանի վոր նոր նշանակությունների հետ սովորաբար պահվում են սկզբնական և հին նշանակությունները, ուստի յերբեմն մի նույն ածանցված բառը թե հին և թե նոր նշանակությամբ է գործածվում, կամ թե նույն ածանցով կազմված մի բառ հին նշանակությամբ է գործածվում, մի ուրիշը՝ նոր։ Դրա հետևանքով և հաճախ դժվար է բնորոշել ածանցների նշանակությունները, և լեզվի ուսանողին հմտությամբ միայն պետք է իմանալ, թե վո՛ր վերջածանցը վոր դեպքում ինչ ձևական նշանակություն ունի։ Որինակ՝ մի քանի բառի մեջ միայն պատահող հնացած ԵՒՑ ածանցը գովնատ բառի մեջ կազմում է գործողության անուն, իրրեվ՝ դավ, գոմաթյուն, գնավելը· պահեստ բառը, սակայն, վոր հին լեզվի մեջ գործածվում է սովորաբար իրրեվ գործողության անուն, իրրեվ պահումն, պահելը կամ պահվելը, նոր լեզվի մեջ նշանակում է՝ պահած բանները, մթերք, ավելի ևս՝ ամբարանոց, մթերանոց· իսկ ուսեստ թե հին և թե նոր լեզվի մեջ գործողության անուն չէ նշանակում, այլ միայն ուսելիք, ուսելու բաները, նորաբերն։ Կա և անգործածական շահեստ բառը, վոր նշանակում է վաստակ, առացած ոգուտ։

Կան ածանցական մասնիկներ ևս, վորոնք, ինչպես այս «եստ» մասնիկը, յերեվան են գալիս հին լեզվի մի քանի բառերի մեջ միայն, վորոնց անհայտության պատճառով մենք այլևս նոր բառեր չենք կազմում, կամ թե նույն իսկ նրանց նշանակությունները չենք նույնացնում· ինչպես՝ հավատարիմ, վոխերիմ, մտերիմ, (հավատ, վոխ, միտ՝ բառերից)· բեկոր, հատոր, մոլոր (բեկել, հատանել, մոլի, պել՝ բառերից)· բորբոս, փտրոհ (բորբել, փտրել)· գաղտնի, հայտնի, նահանջ, բոլորշի· արտաքուստ, վերուստ, ներքուստ, և ուրիշները։ Դրանք քարացած ածանցներ են, վորոնց մի քանի նմանները դեռևս են նկատվում։

Վերջածանցների մի մասը կազմում են միայն գոյականներ, ուրիշները՝ միայն ածականներ, կամ միայն մակբայներ, բայց մեծ մասամբ թե գոյականներ և թե ածականներ են կազմում, նայելով թե ինչ բառի հետ են միացած։ Կան ածանցիկներ, վո-

բնոյով կազմվում են բայերնեը ու գերբայնե:ը: Բազմաձյնով սկսվող ածանցիկներն առհասարակ միանում են Ա. հոդակապով: Ածանցների մի քանի աչքի ընկնող նշանակություններր ցույց են արված ներքեվում:

2.

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐԶԱԾԱՆՅՆԵՐ

137. Ած,—կազմում է սակավաթիվ բառեր բայարմատներից, ինչպես՝ կատարած, կատարած, հատած, վարկած արկած, սպանած, քաղցած: Համմա. ված (ուած) § 228:

Այս ածանցական մասնիկն աշխարհաբարում գործել է անցյալ գերբայի գերջավորության՝ դնացած, տեսած և այլն:

Համանշանն տարբերը ծագում ունի՝ «ոգորմած», «պիտած», «գերկյուզած», «քնեւած» բառերի մեջ «ած» ածանցը, որ կարող է և «ածել» (բերել, կրել, ունենալ) բայից ծագած լինել, իբրեւ սպառմանության, գործ, գերկյուզ բերող, այսինքն՝ կրող, ունեցող:

138. Ածո, հին՝ աձոյ, նոր՝ աձու, ձու,—կազմում է բայերից ածականներ, որոնք կարող են իբրեւ գոյական գործածվել, օրինակ՝ պահածո, ձուլածո, քանդակածո, կոփածո, ապաշածո, ծալածո, չափածո, կտածո, փորածո, բրածո, հանածո, ներկածո, թափածո—թափիծու, պահածո—պահծու, չինածո—չինծու, ժողովածո—ժողովածու, հավաքածո—հավաքածու: Համմա. վածո § 229. ոիի § 199.

139. Ակ,—ա) Գոյական անվանք առլիս և նախդրական, գերբևմն վարդքչական, այլ և նախածական նշանակություն, ինչպես՝ նավակ, անակ, գետակ, թռչնակ, ձկնակ, առվակ, թիակ, ձիակ, գնդակ, սարակ, գոնակ, լիզվակ, կատարակ, կատակ, իմաստակ, վիպակ, գիտակ, լուսնակ,—ապրյակ, պատանյակ, վարպյակ (վարպաքչ.), ժողովակ, բուռակ, իմաստակ, գրչակ (նվաստ.), արվեստակ(ություն): Տես § 191, ա. ՅԱԿ, ԵԿ:

բ) Ածականների նշանակություններր առատացնում կամ ձևափոխում է, ինչպես՝ կլորակ, կապտակ, խառնակ, միակ, մենակ (մենի բառից), միամիտակ, անուշակ, տափակ, բարակ, մերկակ, մերկնակ, աջոզակ, ձախոզակ, հեծելակ:

գ) Գոյականներից և ածականներից կազմում է տարբեր նշանակությամբ գոյականներ, ինչպես՝ որթնակ (որթնջ բառից), քոնակ, վորակ, ոլորակ, ճաշակ, ախորժակ, գաշնակ, առեակ, հորդորակ· խոտնակ, կաշնակ, առհնակ, սողնակ (խոտուն, կաշուն, առհուն, սողուն բառերից)· վոխանակ (Տես § 146 «անակ»):

դ) Բայարմատներից կազմում է գործող անձի, առարկայի և այլ անուններ, «ող» ածանցի նշանակությամբ, ինչպես՝ պահակ, գաղակ (գանող), յերեվակ, ունակ, ընդունակ, հրավիրակ, իմպրակ, հետևակ, եյակ, գոյակ, բուժակ, մոլորակ, ապրակ, գործակ (կենագործակ), յերգակ (վոգերգակ), նախերգակ, պիտակ, պատվիրակ (պատվիրը տանող), նվիրակ (նվիրը տանող), վախտակ, վրիպակ (ինչ վոր վրիպում է):

ե) Թվականներից՝ կրկնակ, յերկակ, յեռակ, հինակ և այլն: Սրանց վոխարեն գործ են ածվում սովորաբար՝ յերկկակ, յեռակ, քառակ, հնդյակ, և այլն: Տե՛ս յակ § 191· Համմա. իկ § 175· ՈՒԿ § 208·

140. Ական,—կազմում է ածականներ: ա) Անձի հատուկ անուններից կազմված ածականները գործ են ածվում նաև իբրեւ գոյական և ցույց են տալիս մի ուսման կամ մի անձի հետևվող լինելը, օրինակ՝ մովսիսական (կրոն, նաև Մովսեսի կրոնին հետևվող), մահմեդական, նեստորական, բուդդայական, պլատոնական և այլն: Այս բազադրություններր վոխանակվում են «ՅԱՆ» ածանցով, օրինակ՝ լենինյան, թորգոմյան, հարեթյան, պլատոնյան, արիստոտելյան (վերլուծություն): Տես § 192·

բ) Անձի հատուկ անուններից, ինչպես՝ հայրական, մայրական, յեղբայրական, քուրական, պապական, վորդիական, յերեխայական, ծառայական, նախապահական, մանկական, պատանեկան, յերիտասարդական, ամիկական, ժողովրդական, բանվորական, զուտանական, յերաժշտական, նկարչական, գարբինական, հյուսնական, թշնամական, բարեկամական:

գ) Կենդանիների անուններից, ինչպես՝ կենդանական, շնական, խոզական, յերիվարական, հավական, խոզական, խելոզական, ապամինական, ձիական, մեղվական:

դ) Ցերկիրների, ազգերի, տեղերի անուններից, ինչպես՝ հռոմայական, հայկական, ռուսական, հրեյական, հունական, պարսկական, թուրքական, սառնիական, վրացական, անդլիական,

դերմանական, յեվրոպական, ասիական, յեգիպտական, ոլիմպիական, անգլական, նահանգական, զամատական, գյուղական և այլն: Այս բազպատկությունները, երբ բանը հատուկ անուն է, փոխանակվում են «ՅԱՆ» ածանցով, ինչպես՝ ամերիկական–ամերիկյան, ամերիկական–ամերիկյան, ոլիմպական–ոլիմպյան:

ե) Ուրիշ ամեն տեսակի գոյական անուններից, լինեն թանձրացական թե վերացական նշանակությամբ, ածականները, վորոնք ցույց են տալիս տեսական հատվի ձեվական նշանակություններ, այսինքն վորևե հարաբերություն կամ վերաբերություն գոյականի նշանակած առարկայի նկատմամբ, ինչպես՝ մարմնական–մարմնեղ վերաբերյալ, հողեկան, առնական, գառական, խմբական, լրջամտական, մեքենական, իրական, պատմական, արմատական և այլն:

Այս ածականներից շատերը գործ են ածվում իբրեվ գոյական, ցույց տալով մի անձ, երբեմն և մի բան, վոր վորևե հարաբերություն ունի ածականի բուն ցույց տված առարկայի կամ տեղի նկատմամբ. ինչպես՝ ձեմարանական, համալսարանական, գպրոցական, ուսումնական, դեպական (գյուղացի, գյուղացիներ), խորհրդական, չինական, ժողովական, հանդիսական, գործակատար, պիեսաբական, անասնական, ապրանական, պիտանական, առաքական, արքունական, արդիլական, ասեղարական, հանրապետական, ամերիկացական, ուրիշական, գրամական, ծննդական, վիճակական, մեջբերական:

զ) Ածականներից, ցույց տալով վերաբերմունք բուն ածականի կամ նրանից կազմված վերացական («ություն» վերջավորությամբ) անության նկատմամբ, ինչպես՝ խղճապական–խղճալի կամ խղճալության վերաբերյալ. առատական, ապատամբական, լրտեսական, վաճառական, քնքշական, արբեցական, մոլեգնական (մոլեգնություն), խելոքական, ուրախական, արամական, անբուժական, պարբերական, նեղչտական, մանրմասնական, անմահական, հիմնական, հիմարական, հպարտական, խանդարհական, մեծամտական, արտական, իրական, նմանական, նմանական, հավերժական, մոլեգնական և այլն:

Տես. «Ական» մասնիկից առաջ «ություն» մասնիկը գործ է բնդհատ. սրինակ՝ իշխանություն–իշխանական և վոչ «իշխանությենական»:

է) Բայարմատներից ու բայարներից բազմաթիվ ածականներ, ինչպես՝ բերիչական, արնական, մերժական, պղծական, կոչական, հրաժարական, պատյական, հեղնական, գմայլական, ճաթեցական, պատմական, կրթական, աշխատական, հնչական, պատրական, հրճվական, հայհոյական, ապաշխարհ–հիացական, վերացական, պարտադական, գնացական և այլն:

Այս կարգի ածականները հաճախ ունեն գործողի անվան նշանակություն և կարող են գործածվել իբրեվ գոյական, սրինակ՝ թափառական (թափառող), աշխնական (աշխող), վերհասական, հազիվական, գաղթական, մխիթարական, սիրական և այլն:

Յերբեմն նույն նշանակությամբ կազմվում են «ՈՂ» ածանցից, ինչպես՝ մարտողական–մարտական. պաշտպանողական–պաշտպանական, հարձակողական, քննողական–քննական. պատրողական–պատրական. համարողական, բնաբողական–բնաբական. ձգողական–ձգական:

Տես. «Գործ» և «փորձ» բառերից կազմվում են՝ գործնական, փորձնական:

ը) Հետևյալ բառերի մեջ միայն «կան» ձեվով՝ առանց «ա» հոդակապի, նաև իբրեվ գոյական՝ վարձկան (վարձական), լրծկան, բարձկան, վարսկան (վարսական), մուրացկան–լուկան (լալական), լացկան, ծրտկան, խուզիկան, թռչկան: «Կան» մասնիկն այս բառերի մեջ ունի «ող» ածանցի նշանակություն, իրրեվ վարձվող, լծվող, վարսող և այլն. բայց վերջին հինգ և ուրիշ բառերի մեջ առացել է «հեշտ, շուտ–շուտ» կամ լինող, հնչտ մրսասող և այլն նշանակություն: Համմա. ԿՈՏ մասնիկը՝ մրսկոտ, բարկացկոտ և այլն. § 184.

թ) Թվականներից կազմվում են ածականներ բաշխական նշանակությամբ, ինչպես՝ քանիսակո՞ն,— մեկական, երկուական կամ երկուական, երեքական, հարյուրական և այլն, վորոնք նշանակում են՝ ամեն մեկը երկու, ամեն մեկին երկու և նմաններ, կամ մեկ–մեկ, երկերկու և նմաններ:

Այս ածականները գործածվում են նաև տարեթվերը տասնյակներով անվանելու համար, ինչպես՝ 1800–հիսնական թվականներին, այսինքն՝ 1850–ից մինչև 1859 թվականը ներառյալ:

ժ) Բացատական «ան» մասնիկով՝ առանում է «ելի», «ալի» վերջածանցների նշանակություն. ինչպես՝ անբժշկական–անբժշկելի, անուժական–անուժելի, անդրդվական–անդրդվելի, անեղծա-

կան· անչափական, անչափական, անմարսական: Տես § § 74. 142 «ական» և «այլին» ածանցների տարբերակման մասին:

141· Ակի,—ա) կազմում և ածականներ, որինակ՝ ուղղակի, չեշտակի, շեղակի, կողմնակի, թեթեվակի, թուլակի, հանկարծակի, մասնակի, անցողակի, ձախողակի, կտրտակի, որոշակի, պղակի, սովորակի, վայելչակի, ուժգնակի, արշավակի, վազվզակի, հաճախակի, առանձնակի, ինքնակի, թափառնակի, փութանակի, խառնրնակի, լայնակի, յերկայնակի:

բ) Թվականների հետ ունի բազմապատկական նշանակություն, ինչպես՝ միակի, յերկակի, կրկնակի, յեռակի, քառակի, հնգակի, վեցակի, յոթնակի, իննակի, հնյանակի: Այսպես և՝ յերդակի, հազնակի, բազմակի:

142· Ային:—Այս ածանցը հին լեզվի մեջ սահմանավոր գործածություն ունի· գրանով կազմված են ածականներ ներքինում դրված նախնական աշխարհագրական անուններից, վորոնք ցույց են տալիս՝ տեղ, աշխարհի կողմը, յեղանակ (տարմա և որմա), հոգս տարերք և այլն, և կազմած են նախնական կրոնական հավատալիքների հետ: Այս ածականների մեծ մասը, բացի տատրակ նշանով (*) գրված գոյականներից կազմվածները, հին լեզվի մեջ ունին և համանիշներ ական ածանցով· (տես § 74· «ական» և «այլին» ածանցների տարբերակումը):

Այդ բառերն են՝ յերկին, յերկիր, գրախտ (եղեմ, պարտեզ), գիմնաք (գիմնական), սանդարամետ, անդունդ·— ծով, *ծովակը, *խորք (խորքային), ցամաք, դեպեն, լեռան (լեռնային), դաշտ, *հովիտ, *ծմակ, *ագարակ, անապատ·— *դետ, *վտակ, պղրյուր, *կղզի (կղզային)·—արեւելյան, լուսին, առագ·—հարավ, հյուսիս, արեւելք (արեւելյան), արեւմուտ (արեւմտային), աջ, ձախ, վեր, վերին (վերնային), առաջ, առաջին (առաջնային), բարձր, ներքին (ներքնային)·— Ամառն, ձմեռն, գարուն, *աշունն·—պիշեր, ալիք (առավոտնային), լույս, խավար, առավոտ, նավ·— գիշ, հով, ջերմ, սառն, ցուրտ, *տաք, ցամաք, *չոր, խոնավ, հողմ, *խորշակ, մեզ (մեղային), մառախուղ, *ամպ, *ամպրոպ, *շանթ·—անձրեվ (հին լեզվից կա մնացել «անձրևական») *հուր, ջուր, հող, ոգ (ևթեր)·— *քար, ավազ, *փուշ·— քա-

ղաք, *բերդ, գիղ, տուն (հին լեզվից միայն, «տնական»)·— վայր, գավառ, աշխարհ·— առավոտ, գիք (գիշերային), վեհ, դյուցազն, հրեշտակ, գիվ, ուրուս·—մարդ (մարդկային), առաքել·— ազգ, տահմ, խաւժ, գազան, անասուն, *ժժմակ, որդն:

Մի անգամ վոր հին լեզվի մեջ «ային» ածանցով ածականներ կազմված են միայն վերևում գրված անուններից, լեզվի հետագա գարգացման ընթացքում այդ ածանցի նշանակությունը տարբերվել և համանիշ «ական» ածանցից (Տես § 74): Բայց այդ «ային» ածանցը ցույց է տալիս՝

ա) Այն տեղը, ժամանակը, յեղանակը, և այլն, վորի մեջ, վորի վրա կա, ապրում է, լինում է մի բան իր բնությամբ· ածականն ունի իր բնի ներգոյական հոլովի նշանակություն· ինչպես՝ ջրային (ջրում, ջրի վրա ապրող) կենդանի, ոձ, թռչուն· ծովային կենդանի· ցամաքային կենդանի· հյուսիսային յերկիր· յերկնային լուսատու, ձմեռնային յեղանակ, ամառնային կյանք· ոզային ամբոցներ· աշխարհային կյանք, վայելչություն· յերկրային փառք· գիշերային ճանապարհորդություն· առավոտամեռային խավար· հարավային լեռ· լեռնային ոզ· դաշտային ծաղիկ· խավարային խորհուրդ (խավարի մեջ յեղած)· գրախտային կյանք· վտռնային հակում (վտռի վրա հակում)· աթոռային, միջակային (միջին տեղում յեղող)· մթերային (մթերքի, մթերանոցի մեջ յեղած)· առվերային, առագային, կատարածային (աշխարհի վերջի), ներքնային:

բ) Այն տեղը կամ բանը, վորից ծագում է, առաջ գալիս մի բան, ապա և այն նյութը, վորից կազմվում է մի բան (Շմմա· «եղեն», «յա»)· ածականն ունի իր բնի բացատական հոլովի նշանակություն, որինակ՝ հյուսիսային (հյուսիսից փչող) քամի· արեգակնային ճառագայթ, առագ, լույս· ծովային ազ, ջուր, վտակային ջուր· պղնձային հնչմունք· ամպային, գետնային հոգմիք (ամպերից, գետնից փչող)· միզային խավար· ջրային կազմություն· լուսային, հյուծային, մարմնային, հոգային (հոգեկան), ոզային (ոզեղեն) տարածություն· բոցային (բոցեղեն), խոնավային, յերեքային, կապուտակային և այլն:

Այս նշանակություններից վերջերինով, հեշտությամբ անցում է լինում՝ մի բանի նման լինելու նշանակությանը,

ինչպես՝ ոդայինանկված (ոդի նման թեթև կազ), անդնդային ձոս (անդունդի նման խոր), լեռնեային, հողմային (հզոր մանման), ընկային հատ (ընկանման), պրախտային ագրե (պրախտանման)։

դ) Ինչ վոր իր բնությամբ կա մի տեղում, մի ժամանակում, մի բանի մեջ, կամ թե ունի մի ուրիշ բան, մտատվորապես «ում» ածանցի նշանակությամբ, ինչպես՝ լեռնային լերկիր (լերկիր, ուր լեռներ կան, լեռնոտ լերկիր)· պաչտային, ծմռնային լերկիր, աշխարհ, գոդմ, տեղ (ուր գաշա, ծմռի կա)· ոդմային գոր, ձշտային լերկիր, ջանթային լեռ, քարային լերկիր, խոխոբային գիշեր, ջերմային տեղ, ասիմային, չորային, անձրևիային, լիսային, ամպրոպային (լեզանակ)· հողմային լեզանակ, նամային լերկիր, մեղային որ — սովերային, կանաչային, ախտային բնություն (ախտավոր), մազճային, մեղային։

Հին լեզվի այս լերկը տեսակի ածանցական բառերի անտիպեսով կազմված են նոր լեզվի մեջ շատ ածականներ, ինչպես՝ չրջառային, լեզերային, ծայրային, անտային, ամմանային, վիդոցային, հիվանդանոցային, լեզմային, չրմնային, ատամնային, քմային, կակոզդային (հնչյուններ, վորանց արտասանման տեղն է՝ կակոզդ, քիմք և այլն)· — հրաբխային, կրային, հանքային, ծծմբային, յուղային, մոմային, վոսկրային, կավային, ջրային, մաղտային, արյունային, չաքարային։ հրացանային (կրակ), ինդոնեզիային, չարքային (պինդար), պահակային։ — մինոտաուրային, անտառային, բեվեռային, հատարեական-ձային, արեւպտաձային, համաչխարհային։ ատամնքային (նյութ)։ նետրպային համակարգություն), ապոմային, կրճռակրային (հյուսմածք), ցեղային (հատկություն) և այլն։

Մինչև նոր լեզվի առաջին չրջանում «ական» և «ային» ածանցներով կազմված կրկնականերից ավելի դործածվում էին «ական» ածանցով կազմվածները, ինչպես՝ նահանդական, պոմատական, ռեալական, հրապարակական,— նորագույն չրջանում, ընդհակառակն, հետզհետե ավելի դործածական են դառնում «ային» ածանցով կազմվածները՝ նահանդային, պոմատային, ռեալային, հրապարակային, հատարակային, հանրային, և «ային» ածանցը դործածվում է մի նոր նշանակությամբ, այն է՝ ցույց է տալիս՝

դ) Այն տեղը, բանը և այլն, վորի վրա կա, կատարված է, կատարվում է մի բան։ Այս 4-րդ նշանակությունը ծագում է առարկաների և նոր լեզվի մեջ դործածվում է ավելի ու

ավելի, ինչպես՝ բնակարանային հարկ— բնակարանի վրա դրված կամ բնակարանից առնվող հարկ· լեկտատային հարկ· ծովային իշխանություն· խճուղային, նավային, նավատորմղային վարչություն· հարկային բաժանմունք (հարկերի վրա, հարկերի համար կարդված)· բանտային վարչություն և այլն։

Մի անդամ վոր «ային» ածանցը առացել է այս նշանակություններն ու կիրառությունները, դրանց համապատասխան «ական» ածանցով կարդված ածականները, վորոնք իրրեվ կրկնակ կան հին լեզվի մեջ, մեծ մասամբ կամ դործածությունից դուրս են գնել, կամ առացել են և հետզհետե աստիճանաբար առանում են ուրիշ նշանակություն, ավելի իրրեվ պոլական և անձի համար, ինչպես՝ § 140, ա, ե, է, ը, բերվածները մասամբ· սրինակ՝ պատասական, դեղական, լեռնական և այլ բառերը, վորոնք իրրեվ պոլական և անձ են ըմբռնվում, նույնպես՝ ազգական-ազգային, քաղաքական-քաղաքային, անհական-անձային և այլ բառերը, վորոնք աստիճանաբար են չենթարկված (§ 74)։ Այս պատճառով և մեր ազդ պատճառով, սրինակ, գիշերական բառն այլ ևս չի նշանակում պիշերային, ինչ իմաստով դրած է Պետիմաչյանը՝ «Գիշերական մանչ սովերներ չարչ կային», այլ ավելի՝ գիշերի կատմակից, գիշեր ուղղ։ Ապա պետք է նկատի ունենալ և այն, վոր ատրերանման չենթարկված կրկնակաների անտրոպիայով նոր բառեր ևս կազմվում են. ինչպես կա «ազգային» (ազգաբան), «ազգային» (ինդիր), նույնպես կազմված են՝ հանրային դրազատան, հոգային ինդիր· ապա՝ հոգային (հարկ), պրանային (աշխատանք), քառային (դրամ թյուն), դեկրետային (կարդով), հաբվածային (իսում), ատկատային (հարաբերություն), մարկային (ընկերություն), պարհակային (կարդով) և այլն։ Բայց այդ՝ պետք է ատհատարակ նկատի ունենալ, վոր երբ այս լերկու («ական», «ային») համանիշ ածանցներից մեկով կա արդեն մի բառ և հարկավոր է ատարբեր նշանակությամբ մի ուրիշ բառ, այն ժամանակ պահանջ ենք մյուս ածանցից և նոր բառ կազմում, կամ թե հին բառերից մեկը նոր նշանակությամբ ենք գործածում· սրինակ՝ անենք խորհրդական և հարկավոր է լինել «խորհուրդ» բառից նոր ածական կազմել նոր նշանակությամբ, և բոլորովին նոր կազմվել է խորհրդային (իշխանություն), վոր իր կազմությամբ հետևան է «ային» ածանցի 3-րդ գործածությանը։ Այսպես նոր կազմված է և մոսկվին, վորից մոսկվուհի— վոչ միայն, մր-

ածաղկաբեմյան վորոշ յեղանակ ունեցող հոդևկան վիճակ,—դարձյալ ուրեմն, ըստ 3-րդ կետի. իսկ մտական հին բառը, վոր հին լեզվի մեջ նշանակում է՝ միտք ունեցող, բանական, այժմ նշանակում է՝ մտքի վերաբերյալ (կամք, միտք, դպացում—կամական, մտական, դպացական): Գաս բառից ունինք դասական (պիտույքներ, գրվածք) և նոր դասային (դասակարգային). գործարանական—որպանական, իսկ գործարանային—ֆաբրիկայի վերաբերյալ և այլն:

«Ակն» մասնիկով ածականները չեն կազմվում առհասարակ, այլ «ական» ածանցով՝

1) Անձի հասուկ և հասարակ, ինչպես և տեղի հասուկ անուններից (§ 140, ա, բ, դ,): Հին լեզվի մեջ կան մնացյալ նեստորային, աղամային, առնային, վորոնք կազմված են վոսանավորի հանգի համար, բայց և տարբեր նշանակությամբ. աղամային—աղամից ծագած. առնային—իր այրից ծագած (ըստ հին առասպելի՝ Եվան իր մարդու կողից է չինված). մինչդեռ «առնական» նշանակում է «այրական»: Ասպա հին լեզվի մեջ ունինք մարդկական բառի հետ և մարդկային, վոր ավելի զործածական է, քան հրեշտակական: Նոր լեզվի մեջ, սակայն, վերջին առանձնակում անձի անուններից ևս «ային» ածանցով ածականներ են կազմվում, ինչպես՝ «դահճային», «հեղինակային», վոխանակ «դահճական», «հեղինակական» ձևերի, «պրոլետարական և ուղեկցային դրամատնություն», վոխանակ «ուղեկցական»:

2) Բայանուններից (բայարմատներից և բայարներից) և նրանցով կազմվածներից (§ 140·է): Հին լեզվի մեջ՝ «Թափանցական», «ծուալական» բառերի հետ կան և «Թափանցային», «ծուալային», այլ և «յարաշարժային», վորոնք հանգի համար կազմված անստոր ձևեր են: Կա և «որոճային» (Եղնիկ, Մռութնոտի), վոխանակ «որոճական»: Նոր լեզվի մեջ «ային» ածանցով կազմվում են ածականներ այն ժամանակ, երբ բայանուն կորցրել և իր բայական նշանակությունը, ինչպես՝ «ծուալական»—ծուալել բայի իմաստով երբեք «ծուալային»—«ծուալ» բառից երբեմն առարկայի «ծուալային» վերաբերյալ: Նույնպես «արեվազարձային»—արեվազարձ բառից, վոր

այլ ևս բուն կազմության չունի մտածում, այլ երբեմն մի անդ: Հին «յեկամտական» (գրոից յեկած, մտած) բառի հետ կա նոր «յեկամտային», յեկամուտ բառի այժմյան սովորական նշանակությունից. «կատարածական»—ի կատար ածելու. «կատարածային»—վերջի, վախճանի, «կատարած»—«վերջ» բառից: Այսպես՝ «հնազրական», «հնախոսական» բառերի վոխանակ այժմ սրդեն կազմված են՝ «հնազրային», «հնախոսային» և շատ նմանները, վորոնց մեջ այլևս նկատի չունի առնում «գարձ», «մուտ», «գիր», «խոս» բայարմատները:

143· ԱՅՆ,— սակավաթիվ բառերի մեջ՝ առժամանակ, նույնժամային, նաստնեհատյան, մեծանդամային, մեծային, լուսյային, համային, վաղորդային, գիշերային:

144· ԱՆ, ԱՆՔ,— յերկուսն էլ նույն ածանցն են, յերկրորդը գրաբարի հոդնակի Ք-ով, բայց ստացել են մասամբ տարբեր ձևական նշանակություններ. «ան» յուրց և տալիս ավելի գործող և գործիք, իսկ «անք» ձևը՝ ավելի գործողություն: Նույն բառը կարող և մի քանի նշանակություն ունենալ:

ա) Գործող անուն, ավելի «ան» ձևով: Գրաբարում սակավաթիվ բառեր կան, աշխարհաբարում սովորական են այս նշանակությամբ կազմությունները, ինչպես՝ գովասան,—1· գովք առող, 2· գրաբարում նաև գովասանելու գործողություն, գովասանություն, գովասանք. վիպասան—1· վիպ առող, 2· վիպասանք—վիպասանություն. ճարտասան (ճարտար առող), աստուածան, իշխան, բուժան, ճոճան: արժան (արժող, ուզա՝ արժեհի և «ժան»), պիտան (պիտուկ),— վատան (վատուկ), կծան, խածան, կտրան, խրատան, թռչան, կպչան, հարբան, ճիճման, ճոճան և այլն: Ծորան—ծորացող, և ուզա ծորանք—ծորացող ջուր. գրաբար նաև՝ ծորումն. հոսան— հոսող, ուզա՝ ձյունն այս ու այն կողմ քշող քամի. հոսանք—1· հոսող ջուր. 2· հոսում. սահանք:

բ) Կրող և արդյունք առարկան. արդյունքն ավելի «անք» ձևով: Բայն առնվում է կրավորական նշանակությամբ. ինչպես՝ կծան—կծվող, կծանք, խաւան— խաւավող, խաւանք, ցուցանք—ցույց տրվող, ցուցնելիք. վիրան—1· վիրվող, վիրաւն, 2· վիրվածք, վիրուք, վիրանք, վշրան, վշրանք—վշրվածք. քերանք (անս «ուք» ածանց), լվացանք (լվանալու ջուրը՝ մի բան լվանալուց հետո). հանդերձան, հանդերձանք—պատրաստած բաները, կարմած, հորինվածք. նախերգան, նախերգանք—ինչ վոր ամենից ա-

ագ յերթալ և · պատվիրան–պատվիրած · բազմանք, անհչանք–1· անհչացած, ցանկացած բանը, 2· բազմալու, անհչալու գործողություն · հայհոյանք—1· հայհոյածը, ասած հայհոյական խոսքերը, 2· հայհոյելու գործողություն · գողանք–գողացած բան · պղպանք – 1· պղպածը, պղպելու ջուրն պղպելուց հետո, 2· պղպելու գործողություն · լիքապանք– 1· լիքացած բանը, 2· լիքացնելը · աշխատանք– 1· աշխատածը, վաստակ, 2· աշխատելու գործողություն · հեռվմանք–ինչ մը հեռվում և, հեռվածը · պատառանք–փախցված բան · փոքձանք, գլխավոր նաև փոքձան –1· գլխին յեկած պատահար, ասպ՝ դժբախտ պատահարներ, փորձվելու գործողություն · կցկցանք · արտագրանք և այլն : Տես ՈՒԲ § 222 · 174 · ծան · 2 :

գ) Գործիք, միջոց, ելք, նյութ, որ բանեցնում են մի գործողության կատարելու համար, կամ ինչով որ մի բան անում են · գործիքի անուններ մեծ մասամբ «ան» ձևով, որինակ, խփան, ջնջան, գլան, ասլան, ասլան, արտրան, կտան, կտրվան (կտրվելու գործիք), փական կամ փականք, յեղան (յեղել–շրջել, շուռ տալ բանից), պատան կամ պատանք, փախցման, փրկան (փրկից՝ փրկանակ) կամ փրկանք, պատուհան կամ պատուհանք, սեխմեխանք, գարգարանք, պչրանք–1· այն բաները, որոնցով գարգարում պչրում են 2· պչրվելու գործողություն · պարծանք –1· պարծանքի նյութը, առարկան, որով պարծենում են, 2· պարծենալը · ամոթանք –1· ամաչեցնող բանը, 2· ամաչելու գործողություն · չգարանք –1· այն բանը, որով չգարում են, չգարվելու ներկը, 2· չգարվելու գործողություն · կապան (կապով կերտ), կապանք (չղթա) և նմանները :

դ) Գործողության ունկի անուն, ինչպես՝ որսան –1· որսելու, որկելու գործիք, 2· ճանապարհի կամ փողոցի որոշվող ունկը կամ մասը · արգելան–արգելարան, բանա · պատապարան–պատսպարվելու տեղ · կայան–կենալու, կանգնելու տեղ, կայարան :

ե) Գործողության անուն : Այս նշանակությամբ առկախաթիվ բառեր կան Ան ձևով · սովորականն և Անք ձևը թվ գործածում և թվ աշխարհաբարում : Սակայն այս ածանցներով կազմված բառերը սովորաբար մաքուր գործողություն չեն ցույց տալիս, ինչպես «ում(ն)» ածանցը, այլ հաճախ նաև գործողության հետևանքը իրեն գրության կամ վերևիում գրված նշանակությունների մեկը · ինչպես՝ կարկատան, գրարար՝ կարկապանք –1· այն

կտորը, որով կարկատում են, 2· կարկատելու գործողություն · սրսման –1· աչխ· սրսճացող, 2· գրարար՝ սրսճում · կցան –1· ինչ որ կցվում և, 2· կցում · չրջան –1· չրջում, փոփոխություն, 2· չրջելու ճանապարհը, ապա և՝ բոլորակ · թռչան · 1· աչխ· թռչող, 2· գրարար՝ թռչում, թռիչք · լեվան–լեվելում (լեվելան պես) · տրավիրանք, գրարար տրավիրան և այլն : Բերվելք բառեր էլ անիմ ձևով, առանց առարկի նշանակությունները բացատրելու · այսպես՝ մեղապրանք, բամբասանք, վիրավորանք, պրկանք, պղմանք, հարգանք, սիրանք, գարմանք, գարհուրանք, դղմանք, ատելանք, պեպեքանք, ծփանք, յուսանք, հանգանք, և այլն : Տես՝ ՈՒԲ, ՈՒՆԲ, ՄՆԲ (§ 222) :

145· Ան, Անք ուրիչ ծագումից են քան նախորդները· գրարար՝ ԵԱՆ ձևով · բարբառային ՎԱՆՔ · անհն հոդնակի հատկանի նշանակություն, ինչպես՝ ձիան կամ ձիանք · լման · խոան, լարբառներում՝ խլմանք, նաև ինչպես՝ անգմանք · ուզան ձիան(ք), թծան, գիման կամ գիմանք, կեղևմանք, գեղանք, կտրատանք, ատկերանք, ճոխանք · գրարարից՝ գրչանք · գրարար կան նաև բերլեան, տեսլեան, խլեան, խոպեան և այլն : Տակաւին (առակաւք, առգրանք, առկայք)—մարևե բանի առկը մնացած վատ մասը, գեղ· նաև առկանք–գիրք, մրուք · կալի առկանք · մոլի առկանք · գրիթաւին–մոլի յերեսին մնացած վատ մասը : Տես § 166 ԵՆԲ · § 222 ՈՒԲ :

146· Անակ, (ան + ակ), —ինչպես՝ ճճմանակ, փրկանակ, գաղանակ, վախանակ, հոգիմանակ –1· հոգիմոգ, 2· հոգիմություն, 3· հոգիմության նշան՝ գլուխ ու վարձ· մրցանակ –1· մրցանք, մրցում, 2· գլուխ և վարձ մրցանքի · վարձանակ –1· վարձ, 2· մրցանակ · ցուցանակ–երբեմ գույց ավող, նշանակ· յեղանակ (յեղում, յեղել–փախել, գարձնել բայերմատից)—փոխհարաբերություն (ոճ, առթիվ, յեղել), ապա և՝ փոխհարելու կերպը : Նոր բառեր են՝ զսպանակ (գսպել, գսպված լինել բառից), ուժանակ և այլն :

147· Անակ, Նակ (Ակ) նշանակում և՝ կերպ, գես, որինակ՝ հին «ապառնակ», գարձել և «առանկ» նաև գսպես «ապանկ», «անանկ»· քրղանակ, չեղջանակ (չեղջի նման գերված)· խառնրնակ (խառնր,

ծուռ կլլալով, լայնակլի), սուսնակ, հայհնակ (հայհնակ), վրացնակ և այլն: Տես § 141 «ակլի»: Համմա· «վարլի»· §§ 230· 133,6·

148· **ԱՆԻ**,— «ունեցող»· ինչպես՝ լեզվանի (ճարպատ խոսող· շատախոս), զեզանի (զեզեցիկ), մարվանի (միշտ ունեցող): Գործածվում է սովորաբար թվականների կամ ուրիշ անականների հետ, ինչպես՝ մեծ–քիմանի· յերկու– զոնանի, հինգ–տչքանի (Ջաղաց), յերկու–գլխանի: Համմա· ԵՆ § 164·

149· **ԱՆԻ**,—հին լեզվից հոդնակի հավաքական նշանակությամբ ունենք՝ նամականի, ապատանի, ավազանի, կանանի (բարբառ· կնանիք):

Ծան· Այս ածանցը մի քանի բարբառների մեջ գործել է հոգնակի թվի վերջավորության բազմավանկ բառերի համար՝ քաղաքնի–քաղաքներ, վոզոգնի–վոզոգներ: Նույն ածանցն է նաև «սրտերնիա» (մեր սիրտը), «պարտեզնիդ» (ձեր պարտեզը), «պարտեզնին» (իրենց պարտեզը) ձևերի մեջ:

— **ԱՆՈՑ**, տես, նոց § 195·

244. **Անցեալ դերբայը**, որ ցույց է տալիս կատարված վերջացած յեղելութիւն, ունի յերկու տեսակ վերջավորութիւն, վաղակատար եւ. (հին՝ եալ) և հարակատար ած: Յերկու վերջավորութիւններն էլ գրվում են՝ 1) Պարզ եւ վերջացած, ինչպես և բազմապատկական ու կրավորական բայերի անորոշ դերբայի «ել» վերջի տեղ, որինակ՝ գրել–գրած, գրել· նստանել–նստոտած, նստոտել· գրվել—գրված, գրվել։(Ինչպես կարելի է տեսնել, անորոշ դերբայն և «ել» վերջավորութիւնով անցյալ դերբայն այս ածական բայերի համար ձեվով նուչնանում են)· 2) Ալ, ալալ, եցնալ վերջացած անորոշ դերբայների այս վերջերի տեղ գրվում են ած, ի բայարնի ացնել ացրնել ածանցների հետ, որինակ՝ գնալ–գնացած, գնացնել· գարմանալ–զարմացած, զարմացնել· մոռանալ–մոռացած, մոռացնել· 3) ՝ել, չել վերջացած անորոշ դերբայների այս վերջերի տեղ գրվում են ած, ել, որինակ՝ տեսնել–տեսած, տեսել· վախչել–վախած-վախել· 4) ՝ցնել վերջացած պատճառական բայերի անորոշ դերբայի այս վերջերի տեղ գրվում են ած, եւ դրանց կատարյալի բնի ը մասնիկի հետ, որինակ՝ մոռեցնել, մոռեցրած, մոռեցրել։

Կան նաև անկանոն կազմութիւններ, ինչպես՝ պա–յ–կա–յ–կել, յ–կած· ասլ–ասի–ասել, ասած· կ՚ընալ–կացա–կացել, կացած· գառնալ—գարձա—գարձել, գարձած· գնել—գրի–գրել—գրած· առնել—առի—առել—առած· լինել–յեղա–յեղել—յեղած· տե՛ս § 263·

245· **Ապառնի դերբայը**, որ ցույց է տալիս յեղելութեան դեռ նոր կատարելի լինելը, կազմվում է ՈՒ, Ի, ԻՔ, վերջավորութիւններով, որոնք ավելանում են անորոշ դերբայի վերջից, որինակ՝ գրել–գրելու, գրելի, գրելիք։ Ի, ԻՔ ածանցներով կազմութիւնները առնվում են իրրեվ գոյական և ածական անուններ, ուստի դրված են վերեվում առանձնական ածանցումների մեջ· (Տես § 174· գ· և· դ)։ Բայական ձեվերի կազմութեան համար առնվում է միայն ՈՒ վերջացած ապառնի դերբայը, վորին համապատասխան և դերբայի ՈՑ վերջավորութիւնով կազմութիւնը, որինակ՝ գալու–գալոց, գրելու–գրելոց։

Հ ի ն գ ե r n r դ մ ա ս

ԲԱՌԱՁԵՎԵՐ

(ՁԵՎԱԲԱՆՈՒԹԻՒՆ)

Ս.

ԲԱՅԵՐԻ ՁԵՎԵՐԸ

246· **Թեքումի**։—Անցման մեջ մտնում և նաև բառերի թեքումը, այսինքն՝ այնպիսի ձեվերը, վորոնք սովորական անցման մեջ նրանով են տարբերվում, վոր մի հատուկուն չափով կազմվում են բոլոր գոյականներից ու բայերից և, ինչպես տեսանք, նոր բառեր չեն համարվում, այլ միևնույն բառի փոփոխութեան նպատակ կամ բառափոխութեան ձեվերը։ Այս պատճառով և թեքման ուսումը կոչվում և նաև ձեվաբանութեան։ (Տես § 3· Բառափոխութեան ձեվական մասեր և բառաձեվեր)։

Բառափոխութեան ձեվերով արտահայտվում են յերկու տեսակ հարաբերութիւններ· 1) Սառորդելութեան հարաբերութիւն, վորով մի առարկայի իրրեվ յենթակայի վերաբերվում է մի հատկանիշ իրրեվ առարկայել և կազմվում է խոսքը։ Այս հարաբերութեան ձեվերն ունին միայն բայերը (Տես § 13· 3)։

2) Լրացական հարաբերութիւններ, վոր գոյականներն ու գոյականաբար գործածված ածականներն ունին բայի նկատմամբ իրրեվ բայի լրացումներ և հենց իրենց լրացումների նկատմամբ իրրեվ լրացման լրացումներ (Տես § 265)։

247· **Բայերի դեմքերը**։—Բայական ձեվերը մեծ մասամբ ծագել են անձնական դերանունների կցումով բայարնների հետ։ Դերանունները գրվել են բայարնների վերջից դեմքը, հեղակի կամ հոդնակի, իրրեվ յենթակա վորոշելու համար։ Սկզբում, անցալ-

ման, դերանուններըը բայից անկախ են յեղել· բայց լինելով բայից անբաժան և վերջածար (էնկլիտիկ), կցվել են նախորդ բայի վերջից և համաձուլվելով նրա հետ՝ դարձվել են վոչ թե իրրեվ անկախ բառեր, այլ իրրեվ վերջավորութիւն: Ժամանակի ընթացքում, սակայն, բայերի վերջերն այնպիսի փոփոխութեան են ենթարկվել, վոր բայարձերի ու դերանունների բաղադրութիւնը կա՛մ վոչնչացել է, կա՛մ այլևս դարձի չի լեզվի մեջ, և միայն համեմատական լեզվաբանութեան միջոցով հնարավոր է վորոշել դերանունների կցումը բայարձերի հետ:

Այսպես ծագել են, անշուշտ, նաև հայերենի բայարձերի վրա ավելացած վերջածանցները, ինչպես զրաբարում՝ դնա-մ, դնա-ս, դնա-ց, դնա-մք, դնա-ջք, դնա-ն: Բայց պիտի նկատի ունենալ, վոր հայերենի խոնարհման ասրբերը, ըստ Մեյեի, «մեծ մասամբ դեռ ևս կամ չեն բացատրված, կամ բավարար չափով չեն բացատրված»: Մեր լեզվի հնագույն շրջանում անդամ դարձի չի յեղել դերանունների կցումը բայարձերի հետ, մանավանդ վոր հայերենի մեջ ևս, ինչպես ուրիշների, բայերի վերջի մասերը փոփոխութեան յենթարկվելով՝ յերբեմն նշանակ դուրս են ընկել: Բայց չնայելով դրան, ինչպես հին հնդեվրոպական լեզուները, հայ լեզուն ևս թե հին և թե նոր, «պահել և ճշտութեամբ հնդեվրոպական վիճակը», այսինքն՝ վերջածանց դարձած դերանունների դիմաց վոր պաշտոնը, վոր յեղել և արտահայտել բայերի դեմքերն իրրեվ յենթակա: Հայերենում բայերի յերեք դեմքերը և նրանց թիվը, յեզակի և հոգնակի, միշտ վորոշ են. դե առանձին բառաձեվ կա յերեք դեմքերից յուրաքանչյուրի համար թե յեզակի և թե հոգնակի. բառաձեվը միայն բայական և դեմքն ու դեմքի թիվը վորոշելու համար: Մեր նոր գրական լեզվի խոնարհման ամբողջ չարքի մեջ միայն սուկ «ալ» կազմութեամբ ունեցող բայերի համար կա մի ձեվ՝ ունա, վոր թե՛ հրամայական յեզ· 2–րդ դեմք և (մնա՛ դու) և թե՛ ըղձական յեզակի 3–րդ դեմք (նա մնա, թող նա մնա): Այդ նրանից է առաջացել, վոր լեզվի զարգացման ընթացքում ըղձական յեզ· 3–րդ դեմքի «յ» վերջավորութիւնը (մնա–յ), վոր կա հին լեզվի մեջ, դուրս է ընկել, և այլևս չտարաոանվելու պատճառով՝ գրութիւնից էլ դուրս ենք ձգում: Այս ձեվերի նույնացումը, սակայն, չի խանգարում դեմքերը վորոշելուն· վորովհետև մեկը հրամայական լինելով՝ միշտ չէշտ է կրում (մնա՛) և դրա-

նով տարբերվում է 3–րդ դեմքից· իսկ վերջինս էլ կամ սովորաբար հնան ունենում է թող բառը (թող մնա), կամ խոսքի մեջ այնպիսի կապակցութեամբ է կիրառվում (յեթե մնա, վոր մնա, ով վոր մնա և այլն), վոր միշտ զգացվում է իրրեվ 3–րդ դեմք:

Այսպես չէ, սակայն, այժմ ուրիշ հնդեվրոպական լեզուների մեծ մասի մեջ· ածանող վերջածանցները հաճախ այլևս բավական չեն դեմքերը ցույց տալու համար· ուստի բայերի հետ գրվում է ընդհանրապես մի դերանուն իրրեվ յենթակա, վորով վորոշվում է բայի դեմքը: Այսպես է, որինակ, ֆրանսերենում և գերմաներենում, վորոնց մեջ սկզբնապես տարբեր ձեվերը հնչափոխութեան պատճառով ավելի հաճախ նույն ձեվին են հանգել, և յեթե դեռ տարբեր ձեվով են գրում, բայց նույն հնչյունով են արտասանում, ուստի և դերանուն յենթակաները անհրաժեշտ են դեմքերը վորոշելու համար: Հայերենում էլ, հարկավ, բայից առաջ կամ հետո գնում ենք հաճախ դեմքի համապատասխան մի անձնական դերանուն, բայց այդ լինում է վոչ թե բայի դեմքը վորոշելու համար, այլ սովորաբար իրրեվ ավելորդություն, կամ յերբ դեմքը պարզ չերևում է, ինչպես՝ Յե՛ս եմ գնում: Միշտ պետք է նկատի ունենալ, վոր մեր լեզվի մեջ դերանման իրրեվ յենթակա կիրառությունն առանց վորևե դիտավորության՝ ընդհանրապես ավելորդ ծանրաբեռնություն է, վոր առաջ և պարես չատ անդամ տարբ լեզուների ազդեցությունից:

248· ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՆ:—Բայական վերջածանցներով վորոշվում են վոչ միայն բայերի դեմքերն ու նրանց թիվը, այլ և ժամանակներն ու յեղանակները: Բայի ժամանակ ասելով հասկանում ենք, թե յերբ և տեղի ունենում յեղելությունը, խոսելու վայրկյանին (ներկա ժամանակ), խոսելու վայրկյանից առաջ ընկնող ժամանակամիջոցում (անցյալ), թե խոսելու վայրկյանից հետո ընկնող ժամանակամիջոցում (ապառնի): Որինակ՝ գիտեմ, գիտես, գիտե, գիտենք, գիտեք, գիտեն բառաձեվերով վորոշ համանում ենք վոչ միայն դեմքերը, յեզակի ու հոգնակի, իրրեվ՝ յես դիտեմ, դու դիտես, նա դիտե և այլն, այլ և այն, վոր խոսողը իր կամ 2–րդ դեմքի, կամ 3–րդ դեմքի գիտությունը դնում է իր խոսելու վայրկյանին, խոսողի ներկայում: Այսպես էլ գիտեյի, գիտեյիր, գիտեր, գիտեյինք, գիտեյիք, գիտեյին ձեվերով մեզ համար

ման, դերանուններըը բայից անկախ են յեղել· բայց լինելով բայից անբաժան և վերջածար (էնկլիտիկ), կցվել են նախորդ բայի վերջից և համաձուլվելով նրա հետ՝ դարձվել են վոչ թե իրրեվ անկախ բառեր, այլ իրրեվ վերջավորութիւն: Ժամանակի ընթացքում, սակայն, բայերի վերջերն այնպիսի փոփոխութեան են յենթարկվել, վոր բայարնների ու դերանունների բազադրութիւնը կա՛մ վոչնչացել է, կա՛մ այլևս դրալի չի լեզվի մեջ, և մեխան համեմատական լեզվաբանութեան միջոցով հնարավոր և վորոշել դերանունների կցումը բայարնների հետ:

Այսպես ծագել են, անշուշտ, նաև Հայերենի բայարնների վրա ավելացած վերջածանցները, ինչպես դրաբարում՝ պնա–մ, պնա–ս, պնա–ց, պնա–մք, պնա–ցք, պնա–ն: Բայց պիտի նկատի ունենալ, վոր Հայերենի խոնարհման տարրերը, բուն Մեյեի, «մեծ մասամբ դեռ ևս կամ չեն բացատրված, կամ բավարար չափով չեն բացատրված»: Մեր լեզվի հնագույն շրջանում անդամ դրալի չի յեղել դերանունների կցումը բայարնների հետ, մանավանդ վոր Հայերենի մեջ ևս, ինչպես ուրիշներըը, բայերի վերջի մասերը փոփոխութեան յենթարկվելով՝ յերբեմն ուշադիրի դուրս են ընկել: Բայց չնայելով դրան, ինչպես հին հնդեվրոպական լեզուներըը, հայ լեզուն ևս թե հին և թե նոր, «պահել և ճշտութեամբ հնդեվրոպ. չան վիճակը», այսինքն՝ վերջածանց դարձած դերանունների դիտավոր պահպանը, վոր յեղել և արտահայտել բայերի դեմքերն իրրեվ յենթակա: Հայերենում բայերի յերեք դեմքերը և նրանց թիվը, յեզակի և հոգնակի, միևնույն վորոշ են. պ՝ առանձին բառաձեվ կա յերեք դեմքերից յուրաքանչյուրի համար թե յեզակի և թե հոգնակի. բառաձեվը միևնույն բայական և դեմքն ու դեմքի թիվը վորոշելու համար: Մեր նոր գրական լեզվի խոնարհման ամբողջ շարքի մեջ միայն սոսկ «ալ» կազմութիւնն ունեցող բայերի համար կա մի ձեվ՝ մնա, վոր թե՛ հրամայական յեզ· 2–րդ դեմք և (մնա՛ դու) և թե՛ ըղձական յեզակի 3–րդ դեմք (նա մնա, թող նա մնա): Այդ նրանից է առաջացել, վոր լեզվի գարեգացման ընթացքում ըղձական յեզ· 3–րդ դեմքի «ց» վերջավորութիւնը (մնա–ց), վոր կա հին լեզվի մեջ, գուրս է ընկել, և այլևս չտարաոանալու պատճառով՝ գրութիւնից էլ գուրս ենք ձգում: Այս ձեվերի նույնացումը, սակայն, չի խանգարում դեմքերը վորոշելուն· վորովհետև մեկը հրամայական լինելով՝ միշտ չեշտ է կրում (մնա՛) և դրա-

նով տարբերվում է 3–րդ դեմքից· իսկ վերջինս էլ կամ սովորաբար հետևյալ ունենում է թող բառը (թող մնա), կամ խոսքի մեջ այնպիսի կապակցութեամբ է կիրառվում (յեթե մնա, վոր մնա, ով վոր մնա և այլն), վոր միշտ դարձվում է իրրև 3–րդ դեմք:

Այսպես չէ, սակայն, այժմ ուրիշ հնդեվրոպական լեզուների մեծ մասի մեջ· այնտեղ վերջածանցները հաճախ այլևս բավական չեն դեմքերը ցույց տալու համար· ուստի բայերի հետ գրվում է ընդհանրապես մի դերանուն իրրեվ յենթակա, վորով վորոշվում է բայի դեմքը: Այսպես է, որինակ, Ֆրանսերենում և գերմաներենում, վորոնց մեջ սկզբնապես տարրեր ձեվերը հնչափոխութեան պատճառով ավելի հաճախ նույն ձեվին են հանգել, և յեթե դեռ տարրեր ձեվով են գրում, բայց նույն հնչյունով են արտասանում, ուստի և դերանուն յենթականերն անհրաժեշտ են դեմքերը վորոշելու համար: Հայերենում էլ, հարկավ, բայից առաջ կամ հետո գնում ենք հաճախ դեմքի համապատասխան մի անձնական դերանուն, բայց այդ լինում է վոչ թե բայի դեմքը վորոշելու համար, այլ սովորաբար իրրեվ ավելորդություն, կամ յերբ դեմքը պրիզ չէ համում է, ինչպես՝ Յե՛ս եմ գնում: Միշտ պետք է նկատի ունենալ, վոր մեր լեզվի մեջ դերանվան իրրեվ յենթակա կիրառութիւնն առանց վորևե դիտավորութեան՝ ընդհանրապես ավելորդ ծանրաբեռնութիւն է, վոր առաջ է գալիս շատ անգամ տարբ լեզուների ազդեցութիւնից:

248· ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՆ:—Բայական վերջածանցներով վորոշվում են վոչ միայն բայերի դեմքերն ու նրանց թիվը, այլ և ժամանակներն ու յեղանակները: Բայի ժամանակ ասելով հասկանում ենք, թե յերբ և ինչ ունենում յեղելութիւնը, խոսելու վայրկյանին (ներկա ժամանակ), խոսելու վայրկյանից առաջ բնդհանուր ժամանակամիջոցում (անցյալ), թե խոսելու վայրկյանից հետո բնդհանուր ժամանակամիջոցում (ապառնի): Որինակ՝ գիտեմ, գիտես, գիտե, գիտենք, գիտեք, գիտեն բառաձեվերով վորոշ ենք վոչ միայն դեմքերը, յեզակի ու հոգնակի, իրրեվ՝ յես գիտեմ, դու գիտես, նա գիտե և այլն, այլ և այն, վոր խոսողը իր կամ 2–րդ դեմքի գիտելը դնում է իր խոսելու վայրկյանին, խոսողի ներկայում: Այսպես էլ գիտեյի, գիտեյիր, գիտեր, գիտեյինք, գիտեյիք, գիտեյին ձեվերով մեկ համար

վարչ են վոչ մեկն գեմքերը, յեզակը և հոգնակը, այլև այն, վոր պետության յեղելության խոսողը գնում է իր խոսելու վայրկյանից առաջ, անցյալում:

249. ԲԱՅԻ ԿԵՐՊԵՐԸ:—Բայերի յուրյ ամեն ամեն յեղելության կարող և յերեք ժամանակի նկատմամբ էլ, այսինքն թե խոսողի ներկայի և թե մի անցյալ կամ մի ապագայի ժամանակահեռի նկատմամբ, լինել չորս կերպ՝ կատարվող, կատարված, կատարելի և պարզ:

1) Կատարվող կերպը յուրյ է տալիս մի չարունակվող, այսինքն ակտիվ և դեռ չվերջացած գործողության. օրինակ՝ Նա հիմա, այս րոպեիս վոր խոսում եմ, դեռ գնում է (ներկա). Նա յերեկ, ժամի հինգին, դեռ գնում էր (անցյալ). Նա վաղը, ժամի հինգին, դեռ գնալիս կը լինի (ապառնի):

2) Կատարված կերպը յուրյ է տալիս մի անցած, արդեն կատարված, վերջացած գործողության. օրինակ՝ Նա հիմա, այս րոպեիս վոր խոսում եմ, արդեն գնացել է. Նա յերեկ, ժամի 5-ին, արդեն գնացել էր. Նա վաղը, ժամի 5-ին, արդեն գնացած կը լինի:

3) Կատարելի կերպը յուրյ է տալիս մի դեռ նոր կատարելի, ապագա գործողության. օրինակ՝ Նա հիմա, այս րոպեիս վոր խոսում եմ, գնալու յե. Նա յերեկ, ժամի 5-ին, դեռ նոր գնալու յեր. Նա վաղը, ժամի 5-ին, դեռ նոր գնալու կը լինի:

4) Պարզ կերպը յուրյ է տալիս մի վորոշ ժամանակակիցում բնական սոսկ գործողության առանց ուշադրության դարձնելու նախորդ յերեք կերպերին—գործողության տեւական, վերջացած կամ կատարելի լինելուն, ինչպես՝ գնամ, տեւանեմ. գնացի, տեւացի գնամ, կը տեւանեմ:

Բայի կերպերը բոլոր լեզուների մեջ միանգամայն հատուկ բառաձևերով չեն արտահայտվում, այլ տարբեր միջոցներով, կամ թե կերպերից մեկը կամ մյուսը մի լեզվի մեջ արտահայտվում է նույն բառաձևերով կամ վերջածանցներով, ինչ վոր բայերի ժամանակներն ու յեղանակները,-ինչպես հայերենում պարզ կերպը,—իսկ մի ուրիշ լեզվի մեջ առանձին միջոցներով կամ առանձին բառակազմության ձևերով: Մեր կատարվող, կատարելի և կատարված կերպերն արտահայտվում են բայերի բուն պրյալ ժամանակներով, վորոնք կազմվում են դերբայներով և «եմ» ու «լինել» բայերով (§ 264):

250. ԲԱՅԻ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ:—Մենուն վերջածանցները, վորոնցով վորոշվում են բայի գեմքն ու ժամանակը, ծառայում են սովորաբար նաև բայի յեղանակները վորոշելու, այսինքն՝ յուրյ տալու խոսողի վերաբերմունքը, հոգեկան տրամադրությունը մյուս խոսքի բովանդակության նկատմամբ: Այսպես, 1) խոսողը կարող է մի յեղելության հայտնել իբրև հաստատ, ստույգ, իրական յեղելություն, վոր իրապես գոյություն ունի (կամ ունեցել է), ինչպես՝ Նա այժմ հասել և տուն է այժմ տանն է: Դա իրողության յեղանակն է կամ սահմանական յեղանակը: 2) Նույնը կարելի է հայտնել և յենթադրարար, ինչպես՝ նա այժմ հասած կարող է լինել. տուն է տանը կը լինի. այստեղ ոչ թե յեղելության իրականությունն է հայտնվում, այլ կարելիությունը, հնարավորությունը. յեղելությունը սակ մտածված, յենթադրված է, հնարավոր և համարված, այսինքն՝ այնպիսի, վոր կարող է լինել, կարելի է վոր լինի: Դա կարելիության կամ յենթադրական յեղանակն է: 3) Նույնը կարելի է հայտնել և անհրաժեշտաբար, ինչպես՝ նա այժմ հասած պիտի լինի տուն է տանը պիտի լինի. այստեղ յեղելությունը մտածում ենք ոչ թե իբրև սակ հնարավոր, այլ իբրև անհրաժեշտություն. յեղելությունն անհնար ենք համարում այլ կերպ ըմբռնել, քան ինչպես վոր ըմբռնում ենք մեր մտածողության հիմամբ, իբրև անհրաժեշտ հարկ ու պետք, պարտք, սահմանք բարոյական պարտքից, բնությունից, դրությունից և այլն, կամ թե իբրև մի տրամաբանական անհրաժեշտություն, վոր հիմնված է մեր խելքի, դատողության վրա: Դա անհրաժեշտության կամ հարկադրական յեղանակն է:

Այս յերեք յեղանակներով կազմում ենք դատողության խոսքեր. վերջացով արտահայտվում է մեր դատողությունն իբրև իրական, հնարավոր կամ անհրաժեշտ: Բայց խոսքը կարելի է արտահայտել նաև իբրև կամք ու հրաման կամ արգելք, վորով հրամայում, կամ արգելում ենք մեկին մի բան անել, ինչպես՝ Չեռացի՛ր այստեղից: Դա հրամայական յեղանակն է. իսկ՝ Մի՛ հեռանար այստեղից—դա արգելական է, այսինքն հրամանը արգելում է արգելելով մի բան անել: Յեվ վերջապես խոսքը կարելի

յե արտահայտել նաև իրրեվ ցանկություն, հորդոր կամ դրդում, մաղթանք ու խնդիր, ասենայնք, իզձ մի բան անելու. ինչպես՝ Գնա՛մ, տեսնեմ նրան. Գիրքդ տա՛ս ինձ. Մի գնա՛, ասես նրան, որ գա ինձ մոտ: Սա էլ ըղձական ձեղաձևն է:

Բոլոր լեզուների մեջ էս խոսքի այս ձեղանակները, հարկավ, պատմություն ունեն, վորովհետև հիմնված են արտահայտության վրա. բայց դրանց արտահայտության ձեվերը լեզուների մեջ միակերպ չեն: Կան լեզուներ, վորոնց արտահայտության համար այս կամ այն լեզվի մեջ հատուկ բառաձևվեր չկան, կամ ընդհակառակն, նույնիսկ միևնույն լեզվի մեջ էս միևնույն լեզուները կարող է մի քանի բառաձևվերով կամ տարբեր մլնջոցներով արտահայտվել, և վերջապես միևնույն բառաձևը կարող է տարբեր նշանակություններ ու կիրառություններ ունենալ: Ձեվ այս պատմանալի չե. վորովհետև արտահայտական և քերականական կատեգորիաները վոչ-միշտ իրար հավասար են, քանի վոր քերականական կատեգորիաները լեզվի պատմական կյանքի փոփոխության արդյունքն են:

Խոսքը, ինչպես չատ լեզուների մեջ, նույնպես և հայերենում, կարելիական կամ հարկադրական բնավորություն է ստանում, կերը բայի սահմանական կամ ըղձական լեղանակի վրա ավելանում և ձեվական նշանակություն ունեցող մի բառ կամ մասնիկ (§ 62, բ), վոր ցույց է տալիս հնարավորություն կամ անհրաժեշտություն, կամ թե անորոշ դերբայը դրվում է իրրեվ լրացում այնպիսի բայերի, վորոնք նշանակում են՝ կարողանալ, կարելի, հնարավոր, կամ անհրաժեշտ հարկավոր լինելու, անհրաժեշտորեն ստիպված լինելու դեպքերում: Դրանք լեզանակական կամ լեղաձակիչ բառեր, մասնիկներ կամ բայեր են:

Գրաբարի ստորոգական լեղանակիչ բայերն են կարելիական նշանակությամբ՝ կարեմ, մարթեմ, մարթի, մարթ է. աշխարհաբար՝ կարող եմ, կարելի յե, գուցե, թերևս և նման բառեր. իսկ հարկադրական նշանակությամբ դրաբարում՝ պարտիմ, պարտ է, հարկ է, պիտի. աշխարհաբար՝ պարտավոր եմ, բարբառների մեջ՝ պետք եմ, պիտիմ: Այս բայերի սահմանական լեղանակի հետ անորոշ դերբայը ստանում է լեղեմադրական կամ հարկադրական լեղանակի նշանակություն: Ձերը ասում ենք՝ «Նա կարող է գալ», հասասատվում է նրա կարողանալու իրական

նությունը. բայց «կարող է» բայն իրրեվ լրացում ունի «գալ». ուստի և այդ խոսքով հաստատվում է նրա գալ կարողանալը. և վորովհետև «կարող եմ» բայն ինքը կարելիություն է ցույց տալիս, ուստի և միանգամայն նրա գալը հաստատվում է իրրեվ կարելի, հնարավոր: Տրամաբանորեն, ուրեմն, այսպիսի խոսքերը՝ կարող եմ գալ, կարող ես գալ, կարող է գալ և այլն կարելիական-լեղեմադրական խոսքեր են, իսկ քերականորեն դրանք սահմանական խոսքեր են:

Նույնպես տրամաբանորեն հարկադրական խոսք է՝ «Նա պարտավոր է գալ» (դրաբար՝ «նա պարտի գալ»), բայց քերականական ձեվով այդ՝ սահմանական է. պարտավոր լինելը նրա համար ճիշտ նույնպես իրրեվ իրական լեղած է ասվում, ինչպես «նա գնում է» խոսքի մեջ գնալը: Ճիշտ է, հարկավ, վոր յերբ մեկը պարտավոր է գալ, դրան էլ անհրաժեշտորեն վերագրվում նրան. բայց դա քերականական ձեվով չի արտահայտվում, այլ մի հետևություն է միայն: Նա պարտավոր է գալ և նա կարող է գալ խոսքերը նշանակությամբ իրարուց խոշոր տարբերություն ունեն, վոր ածանվանում է «պարտավոր լինել» և «կարող լինել» բայերի իմաստից. բայց քերականորեն այդ յերկու խոսքերը միևնույն կազմություն ունեն, սահմանական են, և վոչ մի քերականական դանդաղություն կարելի չե դնել դրանց մեջ այն պատճառով, վոր բայերը՝ «պարտավոր է» և «կարող է» տարբեր են: Նույն կերպ նաև մեր բարբառների մեջ սահմանական լեղանակով հարկադրական լեղանակի նշանակություն և արտահայտվում, յերբ ասում են՝ էս պետք եմ գնալ, դու պետք ես գնալ, նա պետք է գնալ...կամ՝ էս պիտիմ գնալ, դու պիտես գնալ, նա պիտի գնալ, մենք պիտինք գնալ... կամ «պիտեմ» բայի փոփոխությամբ՝ էս՝ տեմ (=պտեմ) գնալ, դու տես գնալ, նա տի գնալ, մենք տենք գնալ, դուք տեք գնալ, նրանք տեն գնալ. կամ յեռադաս՝ Ձես գնալ տեմ, դու գնալ տես, նա գալ տի և այլն: Այս բոլոր դեպքերում բայը սահմանական լեղանակով է, թեպետ և ամբողջ խոսքերն իմաստով հարկադրական են:

Հաճախ բայի լեղանակավորությունը կարելի յե արտահայտել նրա վրա վորևե լեղանակական բառ դնելով, որինակ՝ «Նա գալիս է», իրական խոսք է, «Նա գուցե գալիս է», «Նա թերևս գալիս է»,

«Նա, կարելի է, պալիս է», այս խոսքերն բան նշանակութեան կարեւորութեամբ տալած խոսքեր են, թեպետ և բան յեղանակի՝ «պալիս է» ձեւը առմանական է: Նոյնպես գնա՛մ, տեսնե՛մ բայերի ձեւը ըղձական է և խոսքը ցանկութեան խոսք է. իսկ գուցե գնամ, տեսնեմ խոսքերի մէջ բայերի ձեւը պարզապէս ըղձական է, բայց խոսքը նշանակութեամբ պարզն պատնում է կարելիական, յնթադրական:

Մեր լեզուի մէջ ունինք յնթադրական և հարկադրական յեղանակների համար հատուկ մասնիկ և բան եւս՝ «ԿԸ» և «ՊԻՏԻ» (պիտ), որոնք պրվելով ըղձական յեղանակի վրա՝ նրա ցանկութեան նշանակութիւնը չուն են տալիս, առաջինը՝ կարելիութեան կամ յնթադրականի, յերկրորդը՝ հարկադրականի, բայց բայը ձեվով մնում է ըղձական. կը գնամ, կը գնաս, կը գնա, կը գնանք, կը գնաք, կը գնան. պիտի գնամ, պիտի գնաս, պիտի գնա, պիտի գնանք, պիտի գնաք, պիտի գնան, (§ 260, 261):

Այժմ տեսանենք, թե ինչպիսի պատմական զարգացումով են առաջ յեկել աշխարհաբարի յեղանակները: Նախ հետեվյալը:

251. ԸՂՁԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿԸ:—Բայի յեղանակները հին հնդեվրոպական լեզուների մէջ, ինչպես և հնդեվրոպական նախալեզվի մէջ, յեղել են չորս՝ առմանական, հրամայական, սոսրապատական (կոնյունկտիվ) և ըղձական:

Ըղձականը գուցե և ամէն ցանկութիւն ու կարելիութիւն և յեղել է. 1) ցանկութեան ըղձական, որը սովորաբար ներկայի կամ ապագայի համար և գործածվում, ինչպես նաև հայերենում, որինակ՝ գնամ, տեսնե՛մ նրան: Հետ հանաի պրվում է մի ցանկութիւն գուցե տվող բան, ինչպես և հայերենում՝ յերանի, գեթ, պրաբարում՝ իցիւ, օղ թէ: 2–րդ և 3–րդ դեմքերով արտահայտվում և նաև խնդիր, ինչպես և հայերենում, որինակ՝ պերթդ տա՛ս ինձ: 2) կարեկիանական ըղձական (պատենցիալ ապառաժով), որ բնականաբար հանաի ապագային և վերաբերում, գուցե և տալիս, թե կարելի է, հնարավոր է, կարող է մի բան լինել, կամ յեղած լինել: Հայերենում արտահայտվում է ըղձականի վրա «ԿԸ» մասնիկը դրվելով, ինչպես և հունարենում ըղձականի վրա αν, նաև ke, ken, ka մասնիկներով, որինակ հայերենում՝ Ցեթե աչքդ լինի, կը գնամ, կը տեսնեմ նրան: 3) Պատվիրական ըղձական (պրեսկրիպտիվ ապառաժով), որ գործածվում է միայն 2–րդ և 3–րդ դեմքերի համար և ցույց է տալիս պատվեր. կարող է թե ցանկութեան և թե կարելիութեան ըղձականի փոխարեն տեսակ լինել: Ուսաի և հայերենում այս նշանակութեամբ գործածվում է ըղձականը թե՛ «ԿԸ» մասնիկով և թե առանց դրան, որինակ՝ կը գնա՛ս, կը տեսնե՛ս նրան: Գնա՛ս, տեսնե՛ս նրան, համ: Աչքդ չբացես:

Ստորադասականը ցույց է տալիս՝ կամենալ ու նախատեսում է յեղել է. 1) Կամական (վոլիտիվ), յերբ արտահայտել է խոսողի կամքը. կամեցողը խոսողն է, իսկ յերկրորդական խոսքերի մէջ մասամբ խոսողն է, մասամբ յերկրորդական խոսքի դեմքը, որ տարբեր է խոսողից: Հայերենում արտահայտվում է զարգացել ըղձականով, ինչպես՝ գնա՛մ, ասե՛մ. Աա՛, վոր իմանայիմ: 2–րդ և 3–րդ դեմքերը գործածվում են՝ դրդում, հորդոր ու պատվեր ցույց տալու համար. հայերենում ըղձական «ԿԸ» մասնիկով կամ առանց դրան, որինակ՝ Թե վոր այդպիսի բան պատահի, չվախենա՛ս, կերթաս. ամեհեղ մի ապրյուր կա, նա ապրյուրի վրա կրնստե՛ս, կբապասե՛ս... 2) Խորհրդակցական (դելիբերատիվ), վորով հարցվում է ուրիշի կամքը այն մասին, ինչ վոր պետք է լինի. հայերենում զարգացել ըղձական, որինակ՝ Խոսե՞նք, թե՞ լռենք: 3) Նախատեսական (պրոսպեկտիվ) ապառնի, վոր գժվար է վորոշ կերպով ջոկել սոսրապատականի մյուս յերկու կիրառութիւններից վորովհետև հաճախ գժվար է իմանալ, թե արդյոք սոսրապատականը միայն ժամանակով է հասկացվում, թե՞ իր հետ ունի նաև վրևե կամական սարք: Այս նշանակութեամբ հայերենում գործածվում է ըղձական «ԿԸ» մասնիկով, ինչպես՝ Դուք ինձ հաճելի եք յեղել, և կը լինիմ. Ո՞վ կը տա ինձ այդ: Որ կը գա, յերբ այդ կը կատարվի: Յերկրորդական խոսքի մէջ նաև ըղձական առանց «ԿԸ»-ի, յերբ կա ցանկութեան սարք, որինակ՝ Վոչոք չկա, վոր այդ քեզ բերի (խոսքը ցանկանում է, վոր բերեն):

Ինչպես կարելի է տեսնել վերեվում պրվածից, հին հնդեվրոպական լեզուների ըղձականի և սոսրապատականի կիրառութեան սրոքանները շշափում են իրար: Այս շշափումը, ինչպես պրում է Բրուգմանը, բնականաբար այն հետեվանքը պիտի ունենար, վոր լեզուների զարգացման ընթացքում ըղձական և սոսրապատական յեղանակները պետք է խառնվեին իրար, ինչպես վոր իրար յե-

դել և մի քանի հնդեվրոպական լեզուների մեջ, վորոնց թվում և հայերենում: Մեր արեվելյան գրական լեզվի մեջ, ինչպես վերևում որինակների կարելի է տեսնել, հին լեզուների յերկու յեղանակի, ըղձականի ու աորիստականի դիմաց կա միայն մեկ յեղանակ ըղձական. 1) ՅանկուԹյան ըղձականն և կամական ու խորհրդակցական աորիստականը, ինչպես և նախատեսական ապառնի աորիստականը, յերբ սրա մեջ կա կամական տարր, հայերենում արտահայտվում են ըղձականով առանց «ԿԸ» մասնիկի, քանի վոր այդ բոլորի մեջ կա կամք ու ցանկուԹյուն. 2) Կատեգորիական ըղձականը և աորիստական նախատեսական ապառնին (յերբ վերջինիս մեջ չկա ցանկուԹյան տարր) արտահայտելու համար հայերենում գործածվում է ըղձականը «ԿԸ» մասնիկով. 3) Պատավիրական ըղձականը, 2-րդ և 3-րդ դեմքերը, ինչպես և կամական աորիստականի 2-րդ և 3-րդ դեմքերը, յերբ պատվեր, հորդոր, դրդում են ցույց տալիս մի բան անելու, հայերենում արտահայտվում են ըղձականով ԹԷ՛ առանց «ԿԸ» մասնիկի և ԹԷ «ԿԸ» մասնիկով, նայելով ԹԷ արդյոք խոսքն իր մեջ ունի՞ ցանկուԹյան տարր, ԹԷ լոկ կարելիուԹյուն, հնարավորուԹյուն և ցույց տալիս:

Ինչպե՞ս է առաջացել հայերենի ըղձական յեղանակի այս պրուԹյունը:

252. ԸՂՁԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿԻ ԾԱԳՈՒՄԸ:—Աչխարհաբարի խոնարհման ձևերը՝ 1) մասամբ նոր կազմուԹյուն են, 2) մասամբ ծագում են գրաբարի ձևերից կա՛մ լոկ հնչափոխուԹյամբ, կամ հնչափոխուԹյան հետ նաև յեղանակի չքվելով: Այս յերկրորդ տեսակի ծագումով առաջ և յելել մեր նոր լեզվի ըղձական յեղանակը:

Գրաբարում բայի յեղանակները յերեք են՝ սահմանական, հրամայական (բացառական՝ արգելական) և աորիստական. յեղել է յերկու բուն՝ անկատարի կամ ներկայի բուն և կատարյալի բուն, վորոնց վրա ավելանում են վերջավորուԹյունները և կազմում բայական ձևերը:

I. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ

1. Ներկա

գնամ	գրեմ
գնաս	գրես
գնայ	գրէ=գրեյ
գնամք	գրեմք
գնայք	գրէք=գրեյք
գնան	գրեն

2. Անցյալ

գնայի	գրեի	գնացի	գրեցի
գնայիր	գրեիր	գնացեր	գրեցեր
գնայր	գրէր=գրեյր	գնաց	գրեաց
գնայաք	գրեաք	գնացաք	գրեցաք
գնայիք	գրեիք	գնացէք, գնացիք	գրեցէք, գրեցիք
գնային	գրեին	գնացին	գրեցին

II. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

գնայցեմ	գրեցեմ	գնացից	գրեցից
գնայցես	գրեցես	գնասցես	գրեսցես
գնայցէ	գրեցէ	գնասցէ	գրեսցէ
գնայցեմք	գրեցեմք	գնասցուք	գրեսցուք
գնայցէք	գրեցէք	գնասջիք	գրեսջիք
գնայցեն	գրեցեն	գնասցեն	գրեսցեն

III. ԱՐԳԵԼԱԿԱՆ

մի՛ գնար	մի՛ գրեր
մի՛ գնայք	մի՛ գրէք

III. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

գնա՛	գրեա՛
գնացէք	գրեցէք

Գրաբարի յերկու աորիստականներն էլ, վորոնք աչխարհաբարում դուրս են ընկել, հակադրվում են սահմանականին. մինչ վերջինս ցույց է տալիս իրական յեղելուԹյուն, աորիստականները ցույց են տալիս յեղելուԹյան լոկ հնարավորուԹյուն

կամ ցանկություն: Ակզբնապես, սակայն, դրանք անպայման տարբեր նշանակություն են ունեցել, և տարբերություններ կային և բան կելպի, այն է՝ անկատարի բուն ստորադասականը (գնայցեմ, գրեցեմ) ցույց և ավել կատարվող, տևական գործողություն, ինչպես մոր են նաև բնից կազմված սահմանական ներկան և անկատար անցյալը (գնամ—գնում եմ, գնայի—գնում էի). իսկ կատարյալի բնից կազմված ստորադասականը (գնացից, գրեցից) կեղել և պարզ կերպի, ինչպես մոր և նաև բնից կազմված կատարյալ անցյալը (գնացի): Բայց 5-րդ դարում արդեն կերկու ստորադասականներն իրար հետ չխոթված են հերկայանում և համարս անխախտ մեհնուն նշանակությամբ գործ ածվում:

Սակայն և այնպես կերևում է, որ հին լեզվի մեջ ձգտում կա կերկու ստորադասականները մի նոր տարբերակման ընթացքի, այն է՝ անկատար ստորադասականը գործածվում է լոկ հնարավորություն ցույց տալու համար, իսկ կատարյալ ստորադասականը՝ կամք, ցանկություն, վճռակորություն մի բան անելու. օրինակ՝ աշխարհաբարի «գնամ, տեսնեմ», «գնանք, տեսնենք» ըղձականները գրաբարում միայն կատարյալ ստորադասականով են ասվում՝ «գնացից, տեսից», «գնասցուք, տեսցուք»: Այսպիսի մի տարբերություն կերևում է նաև «մի» և «ոչ» բացասականների գործածության համար. մի՛ առներ և միշտ արդելական նշանակությամբ, ուրեմն կամք ու ցանկություն արտահայտելու համար, օրինակ՝ «մի՛ գրկեսցուք», «մի՛ զարհուրիցիք», «մի՛ ճաշակեսցեն». մինչդեռ «ոչ» բառով իսկ իրողություն և բացասում, օրինակ՝ «ոչ տեսցես», «ոչ գնացից»: Աշխարհաբարում կերկու դեպքում էլ գրվում է «չը», միայն գրաբարի «մի» բառի համապատասխան կերաուրյանների մեջ բայը գրվում է ըղձական՝ չը գրկենք, չը զարհուրե՛ք, չը ճաշակե՛ն, չը գնա՛ն, չը գնա՛նք, գնա՞նք թե՞ չը գնանք (գնասցո՞ւք, եթէ մի՛ գնասցուք). իսկ «ոչ» բառի համապատասխան դեպքերում գործ և ածվում սովորաբար յենթադրական եղանակը՝ չես տեսնիլ, չեմ գնալ:

Միւս կողմից տեսնում ենք նաև այն, որ հնագույն գրաբարում արդեն Սահմանականի ներկա և անկատար անցյալ ժամանակները գործածվում են նաև ստորադասականների փոխանակ: Կերաուրյան այս փոփոխությունը սկսվում է Սահմ. անկատար անցյալի գործածությունից իբրեւ ըղձական: Հնդեվրոպական լեզուներն իրենց զարգացման հետագա շրջաններում դանազան ձանապարհներով ձգտում են անցյալ ըղձականի համար ունենալու առանձին արտահայտություն, որի մեջ անցյալ ժամանակը վերկրկղմի կերպով արտահայտված լինի: Այսպես օրինակ՝ հունարենում Սահմ. անցյալն անցել է ըղձականի ուղղ ցանկության ցույց ավող Eith (էյթ) մասնիկով, իսկ կարելիական (հնդաեվրոպական), ինչպես և անգլիական նշանակությամբ an (ան) մասնիկով (Բրուգման, էջ. 586): Այս միևնույն կերաուրյունն իրբեւ ըղձական ունի նաև գրաբարի Սահմ. անկատար անցյալը ցանկության ցույց ավող մի բառով. իսկ կարելիական և անգլիական նշանակությամբ աշխարհաբարում կը (կու) մասնիկով. օրինակ՝ երանի թէ ի գժոխս պահէիր զիս (Յոր. ԺԹ. 15): երանի թէ թագաւորէիք (Ա. Կոր Դ. 8). Օչ. թէ անասյիր փոքր մի: Այսպես և «թող» բառով՝ Թող ինձն երթայր և առնոյր զթագաւորութիւնն (եղնիկ): Ապա, ինչպես ուրիշ լեզուների մեջ, հայերենում ևս Սահմ. անկ. անցյալը գործածվում է կարելիական, ինչպես և անգլիական նշանակությամբ, այլ և պայմանական խոսքերի մեջ, օրինակ՝ եթէ էր հաւատացեալ թագաւորի առաջի, փութայի և ոչ յապաղէի.—Սա թէ մարգարէ սը էր, ապա գիտէր (Ղուկ. է. 39): եթէ հաւատայիր դուք Մովսէսի, հաւատայիք արդեւք և ինձ: եթէ հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոխել, նախ մարդ փոխէր զկերպարանս յինչ և կամէր (եղնիկ): Բայց թէ պիտէի թէ յայսմ հետէ կայցէ յուխտի իմում, արձակէի (Փ. Բիւզ). աշխարհաբարում՝ ...(կը հավատայիք... կրփոխեր... կ'արձակէի:

Սահմ. անկ. անցյալի այս կերաուրյունն իրբեւ ցանկության և կարելիական ըղձական՝ բնականաբար անցնում է նաև համապատասխան կազմության Սահմ. ներկային՝ «երանի թէ թագաւորէիք» խոսքի անալոգիայով ասվում և նաև՝ «երանի թէ թագաւորէք»: Այս փոփոխությունն ևս գտնում ենք մեր լեզվի հնագույն շրջանում, երբեմն նաև «թող» բառով, օրինակ՝ Թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա՝ փրկիմ (Աւետ.). Թող անիծէ (Թագ. ԺԶ. 10). Թող պրեմ և ցուցանեմ (եղիշէ). Թէ ոչայ՝ մեծ պատերազմ առնէ (Փ. Բիւզ.). եթէ ուանս ի պատգին՝ մեռանիս (եղնիկ): Այսպես նաև նման կազմությամբ ժամանակական և ընդհանրական խոսքերի մեջ. Գիտասջիր, որ որ օր հաւանէ յերկիրն հայոց,

կամ ցանկություն: Սկզբնապես, սակայն, դրանք անցյալման տարբեր նշանակություն են ունեցել, և տարբերություններ լինել է բան կերպի, այն է՝ անկատարի բնի առարտատակները (գնայցիմ, գրեցեմ) ցույց և ավել կատարվող, տևական գործողություն, ինչպես վար են նույն բնից կազմված սահմանական ներկան և անկատար անցյալը (գնամ—գնում եմ, գնայի—գնում էի). իսկ կատարյալի բնից կազմված առարտատականը (գնացից, գրեցից) լեզվի պարզ կերպի, ինչպես վար և նույն բնից կազմված կատարյալ անցյալը (գնացի): Բայց 5-րդ դարում արդեն լեզվու առարտատականներն իրար հետ չխոթված են ներկայանում և հաճախ անխախտ մեկնության նշանակությամբ գործ ածվում:

Սակայն և այնպես լեզվում է, վոր հին լեզվի մեջ ձգտում կա լեզու առարտատականները մի նոր տարբերակման կենթարկել, այն է՝ անկատար առարտատականը գործածվում է լոկ հնարավորություն ցույց տալու համար, իսկ կատարյալ առարտատականը՝ կամք, ցանկություն, պիտանություն մի բան անելու. օրինակ՝ աշխարհաբարի «գնամ, տեսնեմ», «գնանք, տեսնենք» լզձականները գրաբարում միևնույն կատարյալ առարտատականով են ասվում՝ «գնացից, տեսից», «գնացուք, տեսցուք»: Այսպիսի մի տարբերություն լեզվում է նաև «մի» և «ոչ» բացասականների գործածության համար. մի՛ ասվում է միշտ արգելական նշանակությամբ, առանց կամք ու ցանկություն արտահայտելու համար, օրինակ՝ «մի՛ գրկեցուք», «մի՛ զարհուրիցիք», «մի՛ ճաշակեցեն». մինչդեռ «ոչ» բառով լոկ ժխտություն է բացատրում, օրինակ՝ «ոչ տեսցես», «ոչ գնացից»: Աշխարհաբարում լեզվու դեպքում էլ գրվում է «չը», միևնույն գրաբարի «մի» բառի համապատասխան կիրառություններում բայը գրվում է լզձական՝ չը գրկենք, չը զարհուրե՛ք, չը ճաշակե՛ն, չը գնա՛ն, չը գնա՛նք, գնա՞նք թե՞ չը գնանք (գնացո՞ւք, եթե մի՛ գնացուք). իսկ «ոչ» բառի համապատասխան դեպքերում գործ է ածվում սովորաբար լինելության բայական՝ չես տեսնիլ, չեմ գնալ:

Մյուս կողմից տեսնում ենք նաև այն, վոր հնագույն գրություն արդեն Սահմանականի ներկա և անկատար անցյալ ժամանակները գործածվում են նաև առարտատականների փոխանակ: Կիրառության այս փոփոխությունը սկսում է Սահմ. անկատար անցյալի գործածությունից իբրեվ լզձական: Հնդեվրոպական լեզուներն իրենց զարգացման հետագա շրջաններում պահպանել ձգտում են անցյալ լզձականի համար ունենալու առանձին արտահայտություն, որի մեջ անցյալ ժամանակը վերկղմի կերպով արտահայտված լինի: Այսպես օրինակ՝ հունարենում Սահմ. անցյալն անցել է լզձականի ոչ ցանկության ցույց ոչով Eith (էյթ) մասնիկով, իսկ կարելիական (հնդաեվրոպական), ինչպես և անգլիական նշանակությամբ au (աո) մասնիկով (Բրուգման, լեր. 586): Այս միևնույն կիրառությունն իրեվ լզձական ունի նաև գրաբարի Սահմ. անկատար անցյալը ցանկության ցույց ոչով մի բառով. իսկ կարելիական և անգլիական նշանակությամբ աշխարհաբարում կը (կու) մասնիկով. օրինակ՝ Երանի թէ ի ժոխս պահէիր դիս (Յոբ. ժզ. 15): Երանի թէ թագաւորէիք (Ա. Կոր Դ. 8). Օչ. թէ անասիւր փոքր մի: Այսպես և «թող» բառով՝ Թող ինձն երթայր և առնոյր պիտանություն (Եղնիկ): Ապա, ինչպես ուրիշ լեզուների մեջ, հայերենում ևս Սահմ. անկ. անցյալը գործածվում է կարելիական, ինչպես և անգլիական նշանակությամբ, այլ և պայմանական խոսքերի մեջ, օրինակ՝ Եթէ էր հաւատացեալ թագաւորի առաջի, փութայի և ոչ յապաղէի.—Սա թէ մարգարէ աք էր, ապա գիտէր (Ղուկ. է. 39): Եթէ հաւատայիք զոր Մովսէսի, հաւատայիք արդեւք ինձ: Եթէ հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել, նախ մարդ փոխէր զկերպարանս յինչ և կամէր (Եղնիկ): Բայց թէ կիսէէի թէ յայսմ հետէ կայցէ յուխտի խմոյ, արձակիչի (Փ. Բիւզ). աշխարհաբարում՝ ...(կը հավատայիք... կրփոխեր... կ'արձակեի:

Սահմ. անկ. անցյալի այս կիրառությունն իրեվ ցանկության և կարելիական լզձական՝ բնականաբար անցնում է նաև համապատասխան կայմության Սահմ. ներկային՝ «Երանի թէ թագաւորէիք» խոսքի անալոգիայով ասվում և նաև՝ «Երանի թէ թագաւորէք»: Այս փոփոխությունն ևս գտնում ենք մեր լեզվի հնագույն շրջանում, երբեմն նաև «թող» բառով, օրինակ՝ Թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա՝ փրկիմ (Աւետ.). Թող անիծէ (Թագ. ԺԶ. 10). Թող պրեմ և ցուցանեմ (Եղիշէ). Թէ դպայ՝ մեծ պատիժս առնէ (Փ. Բիւզ.). Եթէ ուտես ի պտղոյն՝ մեռանիս (Եղնիկ): Այսպես նաև նման կայմության ժամանակական և ընդհանրական խոսքերի մեջ. Գիտասջիր, թի սբ օր հատանէ լերկիրն հայոց,

պնայն ձայն ածէ ... (Փ. Բիւզ.): Զարոյց սպիան գաանէ ... նորոյզ (Ագաթ.):—Այսպես նաև յերկրորդական խոսքերի, ինչպես և գլխավոր անկախ խոսքերի մէջ, որինակ՝ Ընդէ՞ր ոչ կերտաց թէ ծակէ զորովայնն և ելանէ (Եղնիկ). Այլ ես գիտեմ, պի նոյն ամենատարան ածէ զԱրշակ (Փ. Բիւզ). Ապա գիտացիս դու,... թէ կա՞յ յաւիտեան քում և պահէ զդաչինս քո (Փ. Բիւզ.). Զայս արարէք և ապրիք. Զի եթէ վաղ, եթէ անագան՝ ոսկայն քակաի հնացեալ մարմինն (Ագաթ.). Պինդ կաց և այժմ սեռանես զքրիստոս (Ագաթ.). Բայց եթէ նա ասեաց, նոյն աւետարանն ածէ դնա տո ատս ձեր (Փ. Բիւզ): Վանդի այր քաջ էր՝ առիւզք լծանեն և յարուցանեն զդա (Փ. Բիւզ.): Այսպես և ապառնի նշանակութեամբ՝ Թչնամիք այսու գամապիւռ լինին. Զքո բանս աւազանին հաստատեն. Զայս տեղիս բաց քակեմք (Փ. Բիւզ.). Ոչ առ քեզ գայդ պարգեւ (Ագաթ.). Յոճախեմ քեզ նեղութիւնս (Ագաթ.):

Սահմանական այս նոր կերտուածքն իբրեւ առորագրական, անշուշտ, մի անգամից չի առաջ գալիս. ուստի շատ անգամ այս յերկու տեղանակը դեռ խառն փոխնիփոխ գործ են ածւում, ինչպես՝ Թէ ոչ էրտնեացի,... ոչ ըմբռնէ (Ագ.). Եթէ ապրեացի անօրէնն,... տամ ըմպել նմա (Եղիշէ). Յորժամ հատուցցէ... թիրէ (Ագ.). Յորժամ առցէ Արշակ կին,... աւնարգի զուսոր նորա (Փ. Բիւզ.). Ոչ ոք լիցի մեր հոլիւ... և ոչ ոք նատի յայնմ աթոռ (Փ. Բիւզ.):

Սահմանական ներկայի և անկատար անցեալի այս նոր նշանակութեամբ գործածութիւնը իբրեւ առորագրական, սկսվելով իբրեւ ըղձական կերտուածքից, վերջիվերջո այն հետևվանքն է ունենում, որ գրաբարի առորագրականները լեզվից դուրս ընկնելով մեռնում են, և մինչեն հայերենում նրանց փոխանակում են Սահմանական ներկան և անկատար անցեալը իբրեւ ըղձական յեղանակ՝ հնդեվրոպական լեզուների յերկու յեղանակի, ըղձականի և առորագրականի բոլոր կերտուածքներով, թէ իբրեւ ցանկութեան, կարելիական ու պատվիրական Ըղձական և թէ իբրեւ համական, խորհրդակցութեան ու նախատեսական առորագրական:

253. ՀԱՎԵԼՎԱԾՈՒ ԲԱՅԵՐԻ ՍԱՀՄ. ՆԵՐԿԱ ՅԵՎ ԱՆԿԱՏԱՐ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԸ:—Մի անգամ վոր հին Սահմանական ներկա և անկատար անցյալ ժամանակները

անցնում են մեռնող առորագրականների տեղ, առաջ և գալիս յեղանակների չվոթեւթիւն. գնամ ձեվը միաժամանակ նշանակում է՝ գնում եմ, գնամ, կը գնամ. իսկ գնայի նշանակում է՝ գնում եյի, գնայի, կը գնայի: Բնականաբար լեզուն ձգտում է այս յերեք առորեները նշանակութիւնների համար առանձին ձեվեր առաջ բերելու, այն էլ միքանի միջոցներով:

Հին լեզվի մեջ արդեն կան բայեր միաժամանակ թէ «իլ» և թէ «ենալ» կազմութեամբ՝ մերձիմ—մերձենամ, մօտիմ—մօտենամ, յադիմ—յադենամ, արբիմ—արբենամ և այլն, վորոնք նշանակութեամբ նուն են: Յերբ հին առորագրականը սկսում է մեռնել, այս կրկնակները նշանակութեամբ առորեբակման են յենթարկվում. ձգտում և յերեվում յերկրորդները առորագրականի նշանակութեամբ գործածելու, և դրանց անալոգիայով առաջ են գալիս նոր բայեր «ենամ» ձեվով՝ կամիմ—կամենամ, կարեմ—կարենամ, ուզեմ—ուզենամ, պարտիմ—պարտենամ, արժեմ—արժենամ, վախիմ—վախենամ, հաչտիմ—հաչտենամ, պարծիմ—պարծենամ, դիտեմ—դիտենամ, լինիմ—լինենամ և այլն: Սակայն այս «ենամ» բուն ձեվը իբրեւ առորագրական՝ ծավալ չի առանում. դրանով կանգ չի առնում լեզվի հնուց սկսած գարգացումը, վորով սահմանականը կերտավում և իբրեւ առորագրական:

Այս նոր «ենամ» բունը միայն այն ապրելութիւնն է ունենում, վոր սակավաթիվ բայերի համար, այս նոր առորագրականի պատճառով, մեր նոր լեզվի մեջ մնում են հին լեզվի Սահմ. ներկան և անկատար անցյալը իրենց հին նշանակութեամբ և դրանց համապատասխան առանձին ձեվով առորագրականը: Այդ բայերն են՝ եմ, կամ, դիտեմ, ունիմ, արժեմ: Սահմ. ներկա՝ եմ, ես, է, ենք, եք, են. դիտեմ, դիտես, դիտէ (գիտի), դիտենք, դիտէք, դիտեն. արժեմ, արժես, արժէ (արժի), արժենք, արժէք, արժեն. ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին. այժմ ավելի՝ ունեմ, ունես, ունէ, ունենք, ունէք, ունեն. կամ, կաս, կա, կանք, կաք, կան: Անկատար անցյալ՝ էի, էիր, էր, էինք, էիք, էին. այսպես նաև՝ դիտէի... արժէի... ունէի. կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային: Այս բայերից եմ. կամ ունին միայն վերեվում դրված ձեվերը. սրանց Ստորադասականի համար առնվում է լինիմ բայը, ինչպես և «պետք է», «հարկ է»

պնայն ձայն ածէ ... (Փ. Բիւզ.): Զօրաց սպիսն պատանէ ... նբոդէ (Ագաթ.):—Այսպես նաև յերկրորդական խոսքերի, ինչպես և դլխաւոր անկախ խոսքերի մէջ, որինակ՝ Ընդէ՞ր ոչ դիտաց թէ ծակէ գրօվայնն և ելանէ (Եղնիկ). Այլ ես դիտեմ, դի նոյն ամենասրան ածէ զԱբշակ (Փ. Բիւզ). Ապա դիտացես դու, ... թէ կա՞յ յուխտի քում և պահէ դպաչինս քո (Փ. Բիւզ.). Զայս արարէք և ապրիք. Զի եթէ վաղ, եթէ անագան՝ սակայն քակտի հնացեալ մարմինն (Ագաթ.). Պինդ կաց և այժմ սեռսինես զքրիստոս (Ագաթ.). Բայց եթէ նա առեաց, նոյն ուեսուրանն ածէ դնա առ ոտս ձեր (Փ. Բիւզ): Վասնզի այր քաջ էր՝ առիւզք լծանեն և յարուցանեն զդա (Փ. Բիւզ.): Այսպես և ապառնի նշանակութեամբ՝ Թշնամիք այսու դամապիւռ լինին. Զքո բանս ուադանին հաստատեն. Զայս տեղի, և բաց քակեմք (Փ. Բիւզ.). Ոչ տամ քեզ գայդ պարգև (Ագաթ.). Յոճախեմ քեզ նեղութիւնս (Ագաթ.):

Սահմանական այս նոր կերպաւորութիւնն իրրեւ ստորադասական, անշուշտ, մի անգամից չի առաջ գալիս. ուստի շատ անգամ այս կերպու յեղանակը դեռ խառն փոխնիփոխ գործ են ածվում, ինչպես՝ Թէ ոչ ջրտնեսցի, ... ոչ ըմբռնէ (Ագ.). Եթէ ապրեսցի անօրէնն, ... տամ ըմպել նմա (Եղիշէ). Յորժամ հատուցէ ... քեզէ (Ագ.). Յորժամ առցէ Աբշակ կին, ... ասիպգի դուստր նորա (Փ. Բիւզ.). Ոչ ոք լիցի մեր հովիւ ... և ոչ ոք ճնտի յամեմ աթոռ (Փ. Բիւզ.):

Սահմանական ներկայի և անկատար անցեալի այս նոր նշանակութեամբ գործածութիւնը իրրեւ ստորադասական, սկսվելով իրրեւ ըղձական կերպաւորութիւնից, վերջնականը այն հետևանքն է ունենում, որ գրաբարի ստորադասականները լեզվից դուրս ընկնելով մեռնում են, և մեզնից հայերենում նրանց փոխանակում են Սահմանական ներկան և անկատար անցեալ իրրեւ ըղձական յեղանակի, ըղձականի և ստորադասականի բոլոր կերպաւորութիւններով, թէ իրրեւ ցանկութեան, կարելիական ու պատվիրական Ըղձական և թէ իրրեւ կամական, խորհրդակցութեան ու նախատեսական ստորադասական:

253. ՀԱՎԵԼՎՈՐ ԲԱՅԵՐԻ ՍԱՀՄ. ՆԵՐԿԱ ՑԵՎ ԱՆԿԱՏԱՐ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ՑԵՎ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԸ:—Մի անգամ վոր հին Սահմանական ներկա և անկատար անցյալ ժամանակները

անցնում են մեռնող ստորադասականների տեղ, առաջ և գալիս յապառնիների չփոթութիւն. գնամ ձևը միաժամանակ նշանակում է՝ գնում եմ, գնամ, կը գնամ. իսկ գնայի նշանակում է՝ գնում էի, գնայի, կը գնայի: Բնականաբար լեզուն ձգտում է այս յերեք տարբեր նշանակութիւնների համար առանձին ձևերը առաջ բերելու, այն էլ միքանի միջոցներով:

Հին լեզվի մէջ արդեն կան բայեր միաժամանակ թէ «իլ» և թէ «ենալ» կազմութեամբ՝ մերձիմ—մերձենամ, մօտիմ—մօտենամ, յաղիմ—յաղենամ, արբիմ—արբենամ և այլն, վորոնք նշանակութեամբ նուն են: Յերբ հին ստորադասականը սկսում է մեռնել, այս կրկնակները նշանակութեամբ տարբերակման են յենթարկվում. ձգտում է յերևում յերկրորդները ստորադասականի նշանակութեամբ գործածելու, և դրանց անալոգիայով առաջ են գալիս նոր բայեր «ենամ» ձևով՝ կամիմ—կամենամ, կալեմ—կարենամ, ուզեմ—ուզենամ, պարտիմ—պարտենամ, արժեմ—արժենամ, վախիմ—վախենամ, հաչտիմ—հաչտենամ, պարծիմ—պարծենամ, դիտեմ—դիտենամ, լինիմ—լինենամ և այլն: Սակայն այս «ենամ» բնի ձևը իրրեւ ստորադասական՝ ծավալ չի առանում. դրանով կանգ չի առնում լեզվի հնուց սկսած գործացումը, վորով սահմանականը կերպաւորում է իրրեւ ստորադասական:

Այս նոր «ենամ» բունը միայն այն ապրելութիւնն է ունենում, վոր սակավաթիվ բայերի համար, այս նոր ստորադասականի պատճառով, մեր նոր լեզվի մէջ մնում են հին լեզվի Սահմ. ներկան և անկատար անցյալը իրենց հին նշանակութեամբ և դրանց համապատասխան առանձին ձևով ստորադասականը: Այդ բայերն են՝ եմ, կամ, դիտեմ, ունիմ, արժեմ: Սահմ. ներկա՝ եմ, ես, է, ենք, եք, են. դիտեմ, դիտես, դիտէ (դիտի), դիտենք, դիտէք, դիտեն. արժեմ, արժես, արժէ (արժի), արժենք, արժէք, արժեն. ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին. այժմ ավելի՝ ունեմ, ունես, ունէ, ունենք, ունէք, ունեն. կամ, կաս, կայ, կանք, կաք, կան: Անկատար անցյալ՝ էի, էիր, էր, էինք, էիք, էին. այսպես նաև՝ դիտէի ... արժէի ... ունէի. կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային: Այս բայերից եմ. կամ ունին միայն վերևում դրված ձևերը. սրանց Ստորադասականի համար առնվում է լինիմ բայը, ինչպես և «պետք է», «հարկ է»

և այլ բայերի համար՝ «պետք լինել», «հարկ լինել»: Կարող եմ բայի առարկայական իրանում և կապնել և կարողանալ բայերով· իսկ գիտեմ, ունեմ, արժեմ բայերի համար կան՝ գիտենամ, ունենամ, արժենամ, գիտենայի, ունենայի, արժենայի ձևերն իրենց առարկայական: Ուզել–ուզենալ կրկին ձևերն ևս մեկ մեկ անթափոր գործ են ածում:

Առարկայականի այս «ենալ» ձևից առաջ են դնել նոր Սահմանական ներկա և անկ· անցյալ, վորով և այլ բայերն այլ ժամանակների համար ավելի ձևեր ունեն կամ հարմարավոր են· այսպես՝ եմ, կամ բայերի համար կան՝ լինում եմ, լինում եյի, իսկ ունիմ, գիտեմ, արժեմ բայերի համար՝ ունենում եմ (եյի), գիտենում եմ (եյի), արժենում եմ (եյի): Համարյալոր բայերի այս յերկու ձևերն էլ, թե հինը և թե նորը, հավասար գործածվում են· գրանց կիրառությունն ու նշանակությունը, սակայն, լեզուն արդեն սահրեցակման և յենթարկել· հին ձևերը գործածվում են սահմանական յեղանակի բուն նշանակությամբ, իրենց անկատար կամ սեռական ներկա և անցյալ, իսկ նոր ձևերը՝ նույն յեղանակի նույն ժամանակների յերկրորդական բնավորությամբ՝ իրենց պատմական, սովորության և կրկնության ներկա և անցյալ:

Բարբառների մեջ համարյալոր կամ կրկին ձևեր ունեն նաև՝ պիտիմ–պիտենալ, վորի ներկա յեզ· 3–րդ դեմքը՝ պիտի կա նաև գրական լեզվի մեջ: Այսպես նաև՝ կարծել-կարծենալ, կ'ասես-կ'ասենամ և այլն, վորոնք մեկ–մեկ բարբառային ձևով յերևում են գրական լեզվի մեջ ևս: Դրանցից կարծեմ. կարծես ձևերը գործնեն ածվում կարծում եմ, կարծում ես սովորական ձևերի հետ: Կամիմ, կամեյի ձևերն արդեն մեռած են, ինչպես և բուհանրապես «կամիլ» բայը, վորի փոխանակ գործածվում է նոր կազմություններ՝ կամենալ: Նույնպես կան միայն՝ պարծենալ, հարգենալ, մոռանալ, վախենալ (նաև՝ վախել՝ վախում եմ...). արբել կամ հարբել և արբեցնալ յերկուսն էլ ամբողջական բայեր են, նշանակության տարբերությամբ: Ունիմ բայը «մեր ունել» բայագրությամբ խոնարհվում է՝ վեր եմ ունում... կատարյալը՝ վեր կալա..., մինչդեռ նույն բայը ունենալ նշանակությամբ՝ ունեմ, ունես, ունի... կատարյալը՝ ունեցա, ունեցար, ունեցավ: Բարբառների մեջ կան նաև՝ պետում եմ... պետամ, պետաս,

պետա... կատամ, կատաս, կատա... կարենում եմ... կարացի, կարացիր, կարաց և այլն:

254. «ԿԱՄ»—«ԿԵՆԱՄ» ԲԱՅՈՎ ԲԱՂԱԴՐՎԱԾ ՍԱՀՄ. ՆԵՐԿԱ ՅԵՎ ԱՆԿ. ԱՆՅՅԱԼ ՅԵՎ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ:—Հին ժամանակից «կամ» բայի ձևերը «ե» չպակասով, կամ առանց չպակասի, մեկ–մեկ իրենց ավելորդությունն պրծում են համանիշ բայերի առաջից, որինակ՝ կայ մնայ, կայ և մնայ, կանն և մնան, եկայ և եպես: Այս «կամ» բայը մեկ–մեկ պրծում է նաև ուրիշ բայերի հետ, բուն լրեվույթին, առանց վրան հատուկ նշանակության, այլ միայն պատկերավոր արտահայտության համար, որինակ՝ կայ ասկն ունել, կան և ունեն, կայր ցուցանել, յայն և կայնե: Ձևը սահմանականը կիրառվում է իրենց առարկայական, «կամ» բայի այս կրկնություններ հաջորդ բայից առաջ՝ խոսքն ապատ ևր պահում վորևե լրեվույթից· վորովհետև «կամ» բայը հենց այն բայերից է, վորոնց Սահմ. ներկան և անկ· անցյալը չեն պրծանվել իրենց առարկայական, ուստի այդ բայի այդ յերկու ձևերից հետո յեկող բայն ևս միայն սահմանական կարող ևր հետևցվել: Այսպես որինակ՝ 12–րդ դարում Մխիթար Հերացու պրակի մեջ (Ջեմանց Մխիթարություն) գտնում ենք՝ կայ և պիտի, կայ և շարժի, կանք և տեսանենք: Կեսդ Շապուհ Բագրատունու պատմության մեջ՝ կամ և յարօթս առնեմ, կամ և տեսանեմ, կամ ու պատ (յեր· 35· 61· 74):

Յերբ այս «կամ» բայի համար առաջ և գալիս նոր առարկայական ձևի՝ «կենամ», այս վերջինն «ու» չպակասով դրվում է հին սահմանականի հետ՝ բայի առաջից իրենց մի ավելորդություն, վորով և «կենամ» բայի առարկայական ձևի պատճառով հաջորդ բայի սահմանականն իրենց առարկայական և բուհանրանում, որինակ՝ Որ յերկրէն ի դուրս կենայ ու երթայ ի վտհան· Որ կենայ ու գանկաի· եթէ կենայ ու գայ· Որ կենայ ու առ· Թէ կենան ու կռվին (որինակներ՝ կարատ· կիլ· հայ· քեր· յեր· 300): Բայց այս բարդ առարկայականը,—վորի համար համեմատաբար ավելի վկայություններ կան մեջքին հայերենից, քան վերոհիշյալ «կամ» բայով բարդ սահմանականի համար,—չի տարածվում և հարատևվում, քանի վոր հին սահմանականն ինքն ևր անցնում առարկայականի տեղ: Դա, ինչպես և բարդ

և այլ բայերի համար՝ «պետք լինել», «հարկ լինել»: Կարող եմ բայի սաորադասականը լրանում և կարենալ և կարողանալ բայերով· իսկ գիտեմ, ունեմ, արժեմ բայերի համար կան՝ գիտենամ, ունենամ, արժենամ, գիտենայի, ունենայի, արժենայի ձևերն իրրեվ սաորադասական: Ուզել–ուզենալ կրկին ձևերն ևս մեկ մեկ անխտիր զոր են ածում:

Սաորադասականի այս «ենալ» ձևից սաաջ են յկկել նոր Սահմանական ներկա և անկ· անցյալ, վորով և այլ բայերն այլ ժամանակների համար ավելի ձևեր ունեն կամ հավելյալոր են. այսպես՝ եմ, կամ բայերի համար կան՝ լինում եմ, լինում եյի, իսկ ունիմ, գիտեմ, արժեմ բայերի համար՝ ունենում եմ (եյի), գիտենում եմ (եյի), արժենում եմ (եյի): Հավելյալոր բայերի այս յերկու ձևերն էլ, թե հինը և թե նորը, հավասար զորձածվում են. զրանց կիրառությունն ու նշանակությունը, սակայն, լեզուն արդեն սաորբերակման և յենթարկել· հին ձևերը զորձածվում են սահմանական յեզանակի բուն նշանակությամբ, իրրեվ անկասար կամ սեվմական ներկա և անցյալ, իսկ նոր ձևերը՝ նույն յեզանակի նույն ժամանակների յերկրորդական բնավորությամբ՝ իրրեվ պատմական, սովորության և կրկնության ներկա և անցյալ:

Բարբառների մեջ հավելյալոր կամ կրկին ձևեր ունեն նաև՝ պիտի–պիտենալ, վորի ներկա յեզ· 3–րդ դեմքը՝ պիտի կա նաև զրական լեզվի մեջ: Այսպես նաև՝ կարծել-կարծենալ, կ'ասես-կ'ասենամ և այլն, վորոնք մեկ–մեկ բարբառային ձևով յերևում են զրական լեզվի մեջ ևս: Դրանցից կարծեմ, կարծես ձևերը զորձեն ածում կարծում եմ, կարծում ես սովորական ձևերի հետ: Կամիմ, կամեյի ձևերն արդեն մեռած են, ինչպես և բուհանրապես «կամիլ» բայը, վորի փոխանակ զորձածվում է նոր կազմություններ՝ կամենալ: Նույնպես կան մեզանում՝ պարծենալ, հարգենալ, մոռանալ, վախենալ (նաև՝ վախել՝ վախում եմ...). արբել կամ հարբել և արբեցնել յերկուսն էլ սովորական բայեր են, նշանակության սաորբերությամբ: Ունիմ բայը «մեր ունել» բայագրությամբ խոնարհվում է՝ վեր եմ ունում... կատարյալը վեր կալա..., մինչդեռ նույն բայը ունենալ նշանակությամբ՝ ունեմ, ունես, ունի... կատարյալը՝ ունեցա, ունեցար, ունեցավ: Բարբառների մեջ կան նաև՝ դիտում եմ... դիտամ, դիտաս, դիտա... կարամ, կարաս, կարա... կարենում եմ... կարացի, կարացիր, կարաց և այլն:

254. «ԿԱՄ»—«ԿԵՆԱՄ» ԲԱՅՈՎ ԲԱՂԱԴՐՎԱԾ ՍԱՀՄ. ՆԵՐԿԱ ՅԵՎ ԱՆԿ. ԱՆՅՑԱԼ ՅԵՎ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ:—Հին ժամանակից «կամ» բայի ձևերը «ե» չափակսվ, կամ առանց չափակսի, մեկ–մեկ իրրեվ ավելսպրություն զրվում են համանիշ բայերի առաջից, որինակ՝ կայ մնալ, կայ և մնալ, կանն և մնան, եկաց և եզիվ: Այս «կամ» բայը մեկ–մեկ զրվում է նաև ուրիշ բայերի հետ, բուս յերևույթին, առանց վորևե հատուկ նշանակության, այլ միայն պատկերավոր արտահայտության համար, որինակ՝ կայ ակն ունել, կան և ունին, կայր ցուցանէր, լային և կային: Ձևը առհմանականը կերտվում է իրրեվ սաորադասական, «կամ» բայի այս կրկնությունը հաջորդ բայից առաջ՝ խոսքն ավսա ևր պահում վորևե յերկիմաստություններ· վորովհետև «կամ» բայը հենց այն բայերից է, վորոնց Սահմ. ներկան և անկ· անցյալը չեն զորձածվել իրրեվ սաորադասական, ուսսի այդ բայի այդ յերկու ձևերից հետո յեկող բայն ևս միայն սահմանական կարող ևր հետևել: Այսպես որինակ՝ 12–րդ դարում Մխիթար Հերացու զորքի մեջ (Զեմանց մխիթարեան) գտնում ենք՝ կայ և գիպի, կայ և շարժի, կանք և սեսանեմք: Կեղծ Շապուհ Բագրասունու պատմության մեջ՝ կամ և յայօթս առնեմ, կամ և սեսանեմ, կամ ու պատ (յեր· 35· 61· 74):

Ձևը այս «կամ» բայի համար առաջ և գալիս նոր սաորադասական ձևի՝ «կենամ», այս վերջինն «ու» չափակսով զրվում է հին սահմանականի հետ՝ բայի առաջից իրրեվ մի ավելսպրություն, վորով և «կենամ» բայի սաորադասական ձևի պատճառով հաջորդ բայի սահմանականն իրրեվ սաորադասական և բոլոր հաջորդ բայի սահմանականն իրրեվ սաորադասական զրվում, որինակ՝ Որ յերկրէն ի դուրս կենայ ու երթայ ի վաճառ· Ոս կենայ ու գանկար· եթէ կենայ ու պայ· Որ կենայ ու ուսակ· Թէ կենան ու կռվեն (որինակներ՝ Կարսս· Կիլ· Հայ· քեր· յեր· 300): Բայց այս բարդ սաորադասականը,—վորի համար համեմասարար ավելի վկայություններ կան մեջքին հայերենից, քան վերոհիշյալ «կամ» բայով բարդ սահմանականի համար,—չի սարածվում և հարսսևում, քանի վոր հին սահմանականն ինքն ևր անցնում սաորադասականի տակ: Դա, ինչպես և բարդ

սահմանականը, յեղել են միայն ժամանակավոր պարձվածներ և վոչ բայի խոնարհման ձևվեր:

256· ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅՈՎ ՅԵՎ «ԵՄ» ԲԱՅՈՎ ՍԱՀՄ· ՆԵՐԿԱ. ՅԵՎ ԱՆԿ· ԱՆՑՅԱԼ :—*Սահմ· յեղանակի ներկա և անցյալ ժամանակներն իրենց բնավորությամբ ցույց են տալիս կատարվող կերպի մի գործողություն, վորի մեջ հաբակացում և յենթական: Այս պատճառով այդ ժամանակները հնչաւորությամբ կարող էլին փոխանակվել «ի» նախդիր ունեցող մի բայանունով կամ մի անորոշ դերբայով՝ «եմ» և «կամ» բայերի հետ իրենց առանձին պարձվածներ: Այսպես օրինակ՝ կեզծ Շապուհ Բագրատունու մեջ կա՝* 36· «*Մինչդեռ ի հակման էին*», *որ նշանակում է՝ «հակման մեջ էին»—հակում էին: Ագաթանգեղոսի մեջ տրվեն փոխանակ «հալածէր» ձևի՝ պահում ենք «ի հալածել կայր», վոր բառացի նշանակում է՝ «հալածելու մեջ եր», «հալածելում եր»: Նույնպես Յովհան Մամիկոնյանն ունի՝ «Յոմնք են ի գալ», «հույները գալու մեջ են», «գալում են»· նույնպես Գր· Նարեկացին՝ «ի համաոսան եմ ի փութալ», «պհամատան եմ յախորժել»: Այս ձևերը, վոր հների մեջ մեկ–մեկ յերևվում են, հետագա դարերում ավելի հաճախված են տրվեն սահմանական ներկայի նշանակությամբ· որինակ՝ 13–րդ դարում վանական վարդապետից՝ «Այժմու մարդիկ խոցած են յասել»· Վարդանի պատմության մեջ՝ «Թէ չատ էք ի հարցանել»· «Մօտ մի են յասել»· «Հաւատալ եմ»· «Մեկ հետ վան այն են ի կռվիլ»· «Հայոց հանթեղն է ի վառել»: Այսպես նաև Կոստանդին Երզնկացուց՝ «Ես չեմ ի հավատալ» և այլն:*

Այս պարձվածները ընդհանրապես՝ մինչև հայերենում պահում են Սահմանականի խոնարհման ձևվեր· բայց վորովհետև միաժամանակ ընդհանրանում և նաև «կու» մասնիկով ձևը ղրական բայերի համար, այս անորոշ դերբայով կազմություններ հետագայում մնում և միայն բացառական ձևի համար, ինչպես՝ կու երթամ, չեմ յերթալ· կու վճարէ, չէ ի վճարել· կու խօսիլիր, չիր ի խօսել: Սակայն քանի դեռ այդ կազմությունները «ի» (ե) նախդրով են յեղել և այս նախդրի կիրառությունը կենդանի յի յեղել լեզվի մեջ, դրանք դեռ պահվել են իրրեվ լուկ պարձվածներ և արտահայտության առանձին յեղանակներ· իսկ յերբ «ի» նախդիրը մեռնում է՝ լեզվից դուրս ընկնելով, այն ժամանակ

«հնավատալ եմ», «չեմ երթալ», «չեմ գրել» ձևվերն այլևս չեն պահպանում իրրեվ ներգոյականից կազմված, և դրանք դառնում են բայական բաղադրյալ ձևվեր, մանավանդ յերբ վերջի «լ» տառն արևմտյան բարբառների մեջ դառնում է «ր» (չեմ երթար, չեմ գրեր), և արևելյան բարբառների մեջ «և», վերջը դառնում է «լը», իսկ «Չի ի» կապակցությունը դառնում է «Չի» այսպես՝ չեմ գրիլ, չես գրիլ, չի գրիլ, չենք գրիլ, չեք գրիլ, չեն գրիլ· չիլի գրիլ, չիլիր գրիլ, չիր գրիլ և այլն: Այժմ այս ձևվերի վերջի «լ» տառն էլ դուրս է ընկնում՝ չեմ գնա, չես գնա, չի գնա և այլն· չեմ գրի, չես գրի և այլն, և այդ ձևվերն այլևս բնավ չենք մտածում անորոշ դերբայի ներգոյականի նշանակությամբ:

Այս անորոշ դերբայով կազմությունը ղրական ձևով ևս մնում և պարսկահայ բարբառների մեջ միայն ներկա: Այստեղ էլ «եմ» բայի ձևվերը միանում են դերբային և նույնիսկ չեշտվում· վորով դարձյալ վոչնչանում և սկզբնական ներգոյականի նշանակությունը և առաջ են գալիս խոնարհման ձևվեր, որինակ՝ ասել է՛մ, ասելի՛ս, ասելի՛, ասելի՛նք, ասելի՛ք, ասելի՛ն, (հին՝ յասել եմ): Այսպիսի բարբառների անցյալ անկատար ժամանակը լինում է՝ ասելի՛մ եր, ասելի՛ս եր, ասել է՛ր, ասելի՛նք եր, ասելի՛ք եր, ասելի՛ն եր:

257· «ՈՒՄ», «ԻՍ» ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅՆԵՐՈՎ ՅԵՎ «ԵՄ» ԲԱՅՈՎ ՍԱՀՄ· ՆԵՐԿԱ. ՅԵՎ ԱՆԿԱՏԱՐ ԱՆՑՅԱԼ :—*Արևելյան բարբառների մեջ հին «ի» նախդրով ներգոյականին փոխանակել է «ՈՒՄ» վերջավորությամբ ներգոյականը: Յեվ վորովհետև «ի գալ եմ» ձևին անորոշ դերբայի մի ներգոյական է միայն, ուստի և բնականորեն այդ ձևվի հետ միաժամանակ գործածվել է՝ գալում եմ, գալում ես, գալում է, գալում ենք, գալում եք, գալում են, և նրանց նման՝ ասում եմ· ·գալում եմ, գալում ես և այլն, վոր սովորական են վորոշ բարբառների մեջ: Կան նաև՝ գնալում եմ· · և նմանները: Սակայն այս նոր ձևվի ամենավաղ շրջանից սրվեն սեռնում ենք, վոր անորոշ դերբայի այս ներգոյականն իրրեվ սահմանական ներկայի մի բաղադրիչ մաս՝ կրել է վորոշ փոփոխություն, այն է՝ «ում» վերջավորությունը դրվել է անորոշ դերբայի «ալ», «ել» վերջերի փոխանակ, ուրեմն գնալում եմ, բերելում եմ, զարմանալում եմ*

ձևերի փոխանակ՝ գնում եմ, բերում եմ, գարմանում եմ: Այս կազմությունը դանում ենք արդեն Վարպանի պատմության մեջ 13–րդ դարում. «Ինչ ապրի՛ն են առնում» (=ինչ ապրանք են առնում), փոխանակ «են առնում» ձևի: Դա ցույց է տալիս, որ արևելյան բարբառների մեջ 13–րդ դարից առաջ արդեն այդ ձևը հաճախված պիտի լինեը իրենի Սահմ. նեղիակի մի բազադրիչ մաս, որտեղից «առնելում եմ» ձևը դառնար «առնում եմ»: Ձևի «յառնել եմ», «առնելում եմ» ձևերը դեռ կարող էին պահպանվել իրենի մի դարձված, «առնում եմ» ձևին այլևս դարձված չէ, այլ լոկ խոնարհման մի բազադրյալ ձև. վերոհիշյալ դա այլևս չի կարող պահպանել իրենի անորոշ դերբայի նեղոյական «եմ» բայով:

Այսպես արևմն առաջ և դալիս Սահմանական նեղիայի բազադրության համար մի դերբայական ձև «ՈՒՄ» վերջավորությամբ, որ «ԵՄ» բայի հետ հարմար էր ցույց տալու մի տեւական, անկատար իրական գործողություն և առաջ է բերելու մեր բայերի խոնարհման մեջ կատարվող կեղծ նեղիա՝ գնում եմ, գնում ես, գնում է, գնում ենք, գնում եք, գնում են, և անկատար անցյալ՝ գնում էի, գնում էիր, գնում էր, գնում էինք, գնում էիք, գնում էին:

Այս անկատար դերբայը բոլոր «եմ» բայի հետ միանալուց՝ ուրիշ պարզաձևություն չունի. բարբառների ձևով միայն առում է՝ «գնում ժամանակը», «գնում տեղը», փոխանակ առնում՝ «գնալու ժամանակ»: Այս վերջին նշանակությամբ անկախ պարզաձևության համար նույն արևելյան բարբառների մեջ կա մի գործածական անկատար դերբայ՝ անորոշ դերբայի վրա ավելացրած «ԻՄ» վերջավորությամբ, որինակ՝ գնալիմ, տեսնելիմ: Բարբառների մեջ սրա համապատասխանն է՝ գնալուս, այլև՝ գնալուդ; գնալուն, որոնց վերջի Ս, Դ, Ն հոդեր են, որոնք անորոշ դերբայի տրականի վրա են և նշանակում են՝ իմ գնալու ժամանակ, քո գնալու ժամանակ, իր գնալու ժամանակ. ինչպես պրպտում՝ ի գնալս, ի գնալդ, ի գնալն: Ասում են՝ գնալուս տեսա, գնալուդ կանես, գնալուն կտեսնի: Բայց «գնալուս» ձևին արդեն պրեիի կորցրել և իր վերջի Ս հոդի նշանակությունը և գործ է ածվում բոլոր դեմքերի համար, ինչպես նաև միշտ «գնալիս» ձևը: Այս կերպով էլ, «գնալուս» և «գնալիս», տարբեր բարբառային ձևերը են, անորոշ դերբայի «գնալու և «գնալի» տրականից կազմված նեղոյական են «Ս» հոդով. բայց վերոհիշյալ «Ս» հոդը կորցրել է իր նշանակությունը, դրանք դարձել են «գնալ» բայի մակբայական ձևերը միայն:

Արևելյան գրական լեզվի մեջ կերեք միավանկ բայերի խոնարհման համար միայն «ԵՄ» բայի հետ առնվում է այս անկատար դերբայը՝ «ԻՄ» ձևով՝ գալիս եմ, տալիս եմ, լալիս եմ. բարբառային են՝ գալում եմ, տալում եմ, լալում եմ: Կան դեռ բարբառային ձևեր բազմավանկների համար, ինչպես՝ գնալիս եմ, գնալիս ես և այլն: Տես § 243 անկատար դերբայի կազմությունը:

258. «ԿՈՒ» ՄԱՍՆԻԿՈՎ ՍԱՀՄ. ՆԵՐԿԱ ՅԵՎ ԱՆՑՅԱԼ. ԱՆՑՅԱԼ: Նեղոյան Շնորհալու ժամանակից արդեն (12–րդ դար) գործում ենք Սահմ. նեղկա և անկ. անցյալ ժամանակները կազմված «ԿՈՒ» նախամասնիկով, որինակ՝ Շնորհալու, «Ասացինք»–ի մեջ՝ գան գծերանի ծով կու ծիայ. Հետ կու կանչէ գետ ըղհետ. Գարնի ի փորն կու աճե. Պարան գնահեն ի քարչ կու գայ: Անդ կու ճեմի և չոայ քարտէզ. Ձորտն պատահեցի կու քաշէր. Ու կու լշնայր ի հորսատան:—Այս մասնիկը հետագայում ընդհանրանում է և անցնում նոր ըղհիմն. դրանով սակայն դալիս հին Սահմ. նեղկա և անցյալ անկատար ժամանակներից նոր կերտուածքներ, վորանք այլևս չեն չինվում իրենի հետ: Այս «կու» մասնիկով կազմված նեղկան և անցյալը, սակայն, դառն են ամբողջ մերոյան գրական ձևով: Դրա գործածությամբ լեզվից դուրս է ընկնում «ի» նախդրով և անորոշ դերբայով կազմված գրական ձևը, ինչպես՝ «եմ ի հաւատալ», «եմ ի պրպտել»: Այս վերջիններս մնում են միայն իրենի բացատական, և առաջ է դալիս այսպիսի խոնարհում, գրական՝ կու տամ, կու տաս, կու տայ... բացատական՝ չեմ ի տալ, չես ի տալ, չէ ի տալ:

Այս «կու» մասնիկի ծագման համար ընդհանրապես ընդունված է Ա. Այտնյանի բացատրությունը (Քննական քերակ. էջ 75 հա.): Ինչպես տեսանք, «կամ» բայի ձևերը «ս» չպիտպով, կամ առանց չպիտպի, գրվելով իրենի ավելագրություն հանդիսող բայից առաջ, պահում եղեն վերջինիս տահմանական բնավորությունը: Արդ, քանի Այտնյանի «կամ» բայի էկ. 3–րդ դեմքը «ու» չպիտպով՝ «կայ ու»

ձեվով ընդհանրացել է թե՛ ներկայի և թե՛ անկ. անցյալի բոլոր դեմքերի համար. այսինքն՝ վոխառնակ ասվելու, որինակ՝ կամ ու ցուցանեմ, կաս ու ցուցանես, կայ ու ցուցանէ և այլն. կայք ու ցուցանէք, կայիք ու ցուցանէիք, կայը ու ցուցանէը և այլն. ասվել է՝ կայ ու ցուցանեմ, կայ ու ցուցանես, կայ ու ցուցանեմք և այլն. կայ ու ցուցանէի, կայ ու ցուցանէիը և այլն: Ապա «կայ ու» կապակցությունից ազատով առաջ է գնում «կու» ձեվը, վոր և իրրև մասնիկ ընդհանրացել է լեզվի մեջ:

Այս բացառությունը, սակայն, հավասար հիմնավորված չէ: Դա յենթադրում է լեզվի զարգացման յերկար ընթացք, վոր չեր կարող իր խոշոր հետքերը չթողնել հին կամ մեջին հայերենում և արդի բարբառներում. բայց «կամ» բայով կազմված Սահմանական ձեվերի համար ասկավաթիվ որինակներ միայն կան (Տես § 254). ուսանի իրավամբ գրում է կարասը (յեր. 309). «Այս բացառությունը հավասար կարող եր լինել, յեթե ապացուցվեր, վոր 1) կայ ու իրրև նախաձեվ կու ձեվի՝ մի ժամանակ ընդհանրապես և կանոնավորապես, կամ գոնե հաճախ, գործածվել է Սահմանականի հիշյալ ֆունկցիայով և վոչ թե լոկ հատ-հատ դեպքերում... և 2) կայ ու ձեվից հնչյունափոխության կարող եր կու ձեվն առաջ գալ»: Պետք է ավելացնել նաև, վոր նույնիսկ մի որինակ չկա բերված, վորի մեջ «կայ ու» ձեվը գրված լիներ վոչ թե ներկայի յեզակի 3-րդ դեմքի հետ, այլ ներկայի մյուս դեմքերի հետ, ինչպես և անկ. անցյալի դեմքերի հետ, թե՛ յեզակի և թե՛ հոգնակի, դիցուք այսպիսի ձեվեր՝ կայ ու ցուցանեմ, կայ ու ցուցանես, կայ ու ցուցանեմք և այլն. կամ՝ կայ ու ցուցանէի և այլն: Բանի վոր զարգացման այս մեջին ձեվի համար վկայություններ չունենք և «կամ» բայով կազմված ասկավաթիվ վկայություններ միայն կան, վորոնց մեջ այս բայը դեմքով ու ժամանակով համաձայն և հաջորդ բայի հետ, Այանյանի յենթադրությունը ապացուցված չի կարելի համարել: Պետք է կարծել, վոր այդ «կամ» բայի գործածությունը Սահմ. յեղանակը վորոշելու համար՝ լոկ աւանձնացած գործածներ են յեղել և այդպես էլ մնացել են ու չեն վերածվել խոնարհման ձեվերի:

«կոհ» մասնիկի հին ձեվն է «կոճ», վոր յերեվում է ձևափոխությունների մեջ, ինչպես՝ Այդ գործելի ճանապարհ, որ դու կոյ հասնես, ոչ ի սպասման կայ... Թպատուրին վեհապետ թժկութիւնն կոյ առնէ

և գնա հանէ: Այս քանի՞ տարի կայ վոր կոյ վարեմ և կոյ վաստակեմ—գնան դու կոյտես և գործդ լինի կոյ կերցնես. Գոհ կամ

նախորդ «ն» հնչյունի անմանուշով «կ» դառնում է «Գ»: Նման յերևույթ դառնում ենք է հետևյալի մեջ. Սկո՛, ըկո՛, ընգո բառերի համապատասխան ձևով կան «առեգ» բառից՝ առեղ, ըտեղ, ընդեղ. Սալմասեցոց բարբառով՝ առադ. ըտադ, ընդադ («ա» ձայնավորն արտասանվում է յերանի առաջակողմամբ, ինչպես «է» ձայնավորը, միայն առաբին բարձրությամբ, մինչդես «է» ձայնավորը՝ մեջքին բարձրությամբ և արտասանվում): «Ընդեղ», «ընդադ» բառերի մեջ անձայն «ա» հնչյունը «ն» հնչյունի ազդեցությամբ դառնում է ձայնեղ «Դ»: Արդ, նույն Սալմասեցոց, ինչպես և Մոկեցոց բարբառում առաջաբար գործածվում են նաև՝ սադ (այստեղ, այդտեղ), դադ (այնտեղ: եմբնդան ազդագր. Ժողովածու Դ. էջ. 344—350): Այս վերջին «դադ» ձևը պարզ կերպով ծագած է «ընդադ» բառից, որի «ընդ» մասը դարս է ընկել, բայց պահվել է «դ» հնչյունը, որով և պահվում է այդ «դադ» ձևի «այնտեղ» նշանակությունը: Այսպես և «ընդո» ձևից ծագել է «դս» ձևը: Այդ է պատճառը, որ յերբեմն մինչև յերբարի մեջ ևս կո և ևս գո ձևով է յերեվան գալիս այդ բառը:

259. «ԱՀԱ», «ՆԱՅ», «ԿՈՅ» ԲԱՌԵՐՈՎ ՍԱՀՄ. ՆԵՐԿԱ ԳԵՎ ԱՆԿ. ԱՆՑՅԱԼ.—«Ահա» բառը Հայկ. լեզվի նոր բառգրքի մեջ բացատրված է՝ «Զայն նշանակ ցուցման առաջիկայ կամ մերձակայ իրաց և գործոց, որպէս և անցելոց իրաց ներկայ առաջի եղելոց»: Սուրբ տեղում 13-րդ գլուխ հեղինակ Գէորգ վարդապետի մի գրվածքից բերված վկայության մեջ ասված է. «Ահա բառ առաւելության և մատնացույց առնելոյ է... Ահա ձայնէ առ այնոսիկ պատչաճի, որք ակն ունին և սպասեն ահասնել գոք»: «Ահա» բառի, ինչպես և համանիշ բարբառային «իրես», «իրեն», «կո՛», «նայ» բառերի նշանակությունն, ուրեմն, այնպիսի է, որ գրվելով ներկա ժամանակի մի բայի վրա՝ ցույց է տալիս խոսելու վայրկյանին խոսողի աչքի առաջ կատարվող մի գործողություն, մերթ մատնացույց է տալիս խոսողը. օրինակ՝ «Հայր Տիգրանը գնում է», «կո Տիգրանն եվում է», այս խոսքն ասելիս՝ խոսողը ցույց է տալիս, և խոսակիցը նայում, տեսնում է, որ Տիգրանն իրոք գնում է: «Կո եվասեն վարժատուներ». «Կո տրտնես ես մեչեն» (Եմին. Ազգ. ժող. Դ. 345. 347): (Պապիկը իր բեռ բռնեց, գնաց ու գնս կո (գել գյո) կերթա» (Շերենց, Վանա Սազ. Ա. 119): Գրվելով ապառնի ժամանակի բայի վրա՝ այս բառերն ակնարկում են մի գործողության, որ կատարելի է

չատ չուտով, իսկույն եկավ, ինչպես թե ներկայում աչքի առաջ, օրինակ՝ «Մի քիչ կաց, իրես կրգա». «Դե՛ դու գնա, զո ես քի կը հասնեմ» (Արմանճա. Մանանայ, էջ. 205). «Մնաս բարի, կյո գես եվատ եմ» (Եմինյան Ազգ. ժող. Դ. 343): Այսպես և անցյալ ժամանակի մի բայի հետ՝ այս բառերը գործողություններ պատկերացնել են տալիս իրրեվ խոսելու վայրկյանին կատարված կամ կատարվող, կարծես, խոսողի և խոսակցի աչքի առաջ, օրինակ՝ «Ահա գիշավ և նա». «Գո քի անմահության Ջուր բերիր» (Գյոլանճ. Ման. 211). «Կյո գյո Ֆելասըմ եկավ» (Գ. Հովսեփյան, Ուռատամ Զալ, Մոկաց բարբառ. էջ. 22. 24): «Կո եկավ տարին պոլը-չավ». «Կո տլանք ել պերիմ» (Տ. Ավետիքյան Ն. Կիրակոսի հարսանիքը, Մոկեցոց բարբառով. էջ. 30. 60. տես և էջ. 44. 53. 61):

Մի անգամ վոր ահա, կոյ և նման բառերը գործողությունը ցույց են տալիս իրրեվ խոսողի և իր խոսակցի աչքի առաջ, բնականաբար այդ բառերը նույնպես պետք է ղրվեին հին լեզվի Սահմ. Ներկա ժամանակի հետ, սրա հին նշանակությունը իրրեվ անփոփոխական հատուկ և առանց յերկդիմության պահելու համար. «Ահա գայ», «կոյ գայ» կապակցությամբ «գայ» ձևը կարող եր հասկացվել միայն «գալիս է»: Բացի այդ, ինչպես աշխարհաբարում և ուրիշ լեզուների մեջ Սահմ. ներկան գործածվում է և իրրեվ ապառնի, յերբ գործողությունը մտածվում է իրրեվ մի ապագա ժամանակակետում խոսողի ու խոսակցի աչքի առաջ կատարվող,— օրինակ՝ ասում ենք՝ «դու գնա, յես ել հրես գալիս եմ», «յես ել կո իկյատ եմ», «յես ել կո կիգամ»,—նույնպես և հին լեզվի մեջ «ահա գայ» կապակցությունը, ինչպես և համանիշներով՝ «նայ գայ», «կոյ գայ», կարող եր գործածվել և գործածվել է նաև իրրեվ ապառնի: Բերենք մի քանի օրինակներ թե ներկայի և թե ապառնու համար: Ահա այժմ սկսանիմ.—Ահա սկիզբն առնում բանից և խրատ տամ հասարակաց.—Ահա կամիս զարթչիլ դու.—Ահա գան և պիս քաշեն: Ահա մահն գայ և գտնու չատք ի քուն, չիմայ յինք ի մօտ իրք ծածուկ կամ թագուն (վերջին յերկուսն ապառնի. կոստանդին Երզնկ. էջ. 68. 74. 104. 118. 130):—Եւ ահա գամ, անառնեմ, թէ պիթէ պիս առաւածն քո (Կեդ Շապուհ Բագրատունի, էջ. 22. ապառնի ժամանակ.):—Ահա երթնում ի պուխ

քո։—Փախիր և դու. դի ահա գայ մարդն... թէ գայ ահանու գքեզ, վայ լինի քեզ։ Եւ ահա գայ հողագործ մարդ մի (ապառնի և ներկա։—Վարխանան «Ի՞նչ կու վախչիք.—և ասացին, թէ մարդ կու գայ»)։Ահա երեվի հետո (ժող. առակ. Վարդանայ, յեր. 4. 113. 114. 115)։

«Կայ» բառի համար հին գրականութիւնից որինակ չունենք, որովհետեւ ընդհանրապես հին բարբառներով գրված քներ չկան. բայց մեր ժամանակի բարբառներում շատ կը գտնենք այդ բառը «կո» (կյո) կամ «գո» (գյո) ձեւով գրված Ներկայի կամ իրրեւ ապառնի գործածված ներկայի հետ. «Կո ասու յես ասելի՞ Յես կո քնես եմ». «Կո առնցմէնն արկի բլի». «Կո բանից կրլի» (Տ. Ավետ. Կիրակոսի հարսանիքը, 48. 37. 78. 35. այլև 40. 48. 85։ «Մարդ մի գո... ոա մի կըբալա Մխեան, ոա մի Մասուրու». «Գո յոճն ջազացի քար կ'ադա, մեկ մարդ կ'ուսա, չէ կշուանա. «Գո մարդ մի... բարահի մը ջուր կը խմա». «Գո մարդ մարդահոտ կը գա» (Սրմանճա. Մանանայ յեր. 194. 195. 204)։ «Կը սեանան, վար գյո նոա կամիչ կը բաղի». Գյո սարսափելի մուտ քաշե կ'երթա վեր գնչմգախաց (Նավ. Հնե. Զ. յեր. 46 հա)։ »Ծիկ (լինե) ինչի կը կանչես կյո քյո մոա».—«Կյո են մարդին ի վար չուր մկոյ ել կյո կը մխաճէ. «Կյո նոա մեր գառատան ըսկնա կը մնա».—«Տել կյո կերթա. (Ա. Տ. Սարգս. Պանդ. Վանցին, յեր. 32. 64. 78. 81.) «Աչքեր կյո կը պապան». «Կյո խարանիս կանեն» (Եմինյան ապր. ժող. Բ 434, 449)։

Ահա և նայ բառերը մէջին հայերենում, համառօտ կրկնված, ինչպես մի բարհյուսական չափական գրվում են պատմվածքի մէջ խոսքերի սկզբում վոչ միայն խոսքերն երար հետ կապելու համար, այլև առանձնապես աստղութեամբ և ուժով արտահայտելու։ Հին Ահամ. ներկայի նշանակութիւնը այս գեպքում էլ բնականաբար ապառնից յերկդիմութեան մնում է։ «Ահա», միաժամանակ և «նայ» բառերի այս գործածութեան համար որինակ բերենք կատարելին Եր-զնկացու մի քերթվածից (յեր. 112 հան.) կրճատումներով. Ահայ զնան խնդիր հօրօտ մօրօտ ու ձունձատիկին. ու գրկեն և ձկնեն դշուշան». Նա խնդալով ցնծայ այն մասրենին... Նայ լսէ գմայն բլբուլին վարդն.... Նայ ծաղկունքն թաւմեցան... նայ վարդն գարդարեց... նայ բլբուլն երկկ նրատաւ... Նայ բլբուլն ուրա-

խանայ... նայ դառնայ վարդն ի բլբուլն... Ահա կամ ես գարդարած, ՚ւ իմ սերնիս գերդ հուբ վառին... Ահա գան և գիս քաշին... Նայ գնեն գիս և տանին (ապառնի)։—Այս բոլոր դեպքերում էլ բարբառային ձեւով կարող էր «կայ» գրվել, քանի վոր սոսկ բարբառ, բնականաբար, իր բառն և գործածում. այսպես որինակ՝ Այգեստանի բարբառում ասվում է՝ Տեսնում են ի՞նչ. իրանց հարսը հրեն ապաքներին մեկ-մենակ երում ա[1]։—Մայեցին ասում է՝ կրախանա՝ կո մեկ պառաւ թխնդլրը վռաելի, չէ կպնելի[2]։—Վանեցին՝ կը սխռնան վոր գյո մեկ գարգարան ձիավոր մ'ալ կուգա[3]։—Մոկացին ասում է՝ Տեսավ՝ գլոխ գյո մաչ ամպահարուս երկու վառե[4]։ Տեսավ կո մեկ բադչի մեջ ի՞։ Կո յես էլ կերթամ[5]։ Խոյանցին ասում է՝ «կաւաջանա, կը սխռնա որ ի՞նչ. գո մեկ գև մը... կը բնի, ապջիկ քարկահ կանի»։—Այս մեկնուշն հետքամի մեջ քիչ հետո՝ «կաւաջանա, սխռնա ոա՛ հա՛ (=ահա) մեկ գև մը... քնե. եկ ապջիկ քարկահ կըքանի»[6]։—Արարանհամատ

մեր օրերում. ուսում և հին Սահմ. ներկայի հետ սիա և նայ բառերի վոխանակ «կոյ» պիտի կիրառվեր վերեվում դրված խոսքերի և նմանների մեջ՝ կոյ այժմ սկսանիմ.—կոյ սկիզբն առնում: կոյ կամիս.—կոյ մահն գայ.—կոյ գամ.—կոյ երդնում.—կոյ գայ.—կոյ երևի.—կոյ գնաս խնդիր.—կոյ խնդալով ցնծայ.—կոյ լսե.—կոյ բլրուն ուրախանա.—կոյ դառնա վարդն.—կոյ կամ ես պատճառած և իմ սերևնիս վերջ հուր վառին.—կոյ գան և պիս պատճեն.—կոյ գնեն պիս և տանին:

Այսպիսի մի խոսքը՝ «Տես, հրեն գալի՛ս է նա», գրաբար՝ «Տես, ահա գա՛յ նա», բարբառային ձևով պիտի տայիր՝ «Տես, կոյ գա՛յ նա»: Բայց բոլորն է միայն, որ «կոյ» բառը նշանակություններ մինի, և այն ժամանակ այդ բառը կըզտանա Սահմ ներկա կազմող մի մասնիկ: Իսկ այդ լինում է այն պատճառով, որ անմիջապես բայի վրա դրված կոյ բառը անընդհատ մնալով իրրեվ նախադաս՝ արտասանվում է բայի հետ իրրեվ մի բառ՝ կոյ-գա՛յ. և ապա՝ ձայնափոխությամբ պատճառում է կու-գա՛յ. մինչդեռ նույն «կոյ» բառն իրրեվ անկախ բառ մնալով՝ ձայնաչրջությամբ դառնում է վոչ թե «կու», այլ «կո» (կյո), ճիշտ ինչպես այս «կո» բառն ունեցող բարբառների մեջ (Վան, Սալմաստ, Խոյ, Մոկք) հին «ֆոյ» բառը դարձել է «քո» (քյո), և վոչ թե «ֆու», ինչպես է՝ ուրիշ բարբառների մեջ: Հնչյունական տարբերության պատճառով «կու» ձևն այնպես չի նույնացվում կոյ, կո =ահա բառի հետ. բայց դրվելով բայի վրա՝ դեռ չարունակում է ավելի պարզ արտահայտել հին Սահմ. ներկայի կատարվող կամ սեփական նշանակությունը: Հետագայում, ինչպես նման յերևույթներ հաճախ լինում են, «կու» —«կը» մասնիկով կազմած ձևի վրա կրկնվում է նույնը «կո» ձևով՝ «կո կ'երթամ»:

«Կոյ» բառն ունեցող բարբառներից ներկայի վրա դրվող այս «կոյ» բառը կամ «կու» մասնիկը, այն չրջանում յերբ կարիք կար նոր Սահմ. ներկա առաջ բերելու, անցել է նաև ուրիշ բարբառների, վորոնք չունենալով «կոյ» բառ՝ բայի վրա դրվող այդ բառը հենց սկզբից իրրեվ մասնիկ պետք է ըմբռնելին: Թե վորտեղ է սկիզբն առել դրա կիրառությունը, դժվար է վորոշել: 19-րդ դարում Վանա լճի չուրջն յեկած բարբառներին, ինչպես և պարսկահայոց՝ Խոյի, Սալմաստի բարբառների մեջ և յերևում

կո— ահա բառը, այն էլ, ինչպես կարելի յե տեսնել այդ բառբառներով գրված բանահյուսություններից, այդ «կո» բառը այդ տեղերում չատ ու չատ ավելի սերված և հաճախակի գործածություն ունի, քան նրես, հրեն բառերն արևելյան բարբառների մեջ, գոմ ահա բառը գրական լեզվի մեջ[1]): Պետք է յենթադրել, որ Վանա լճի չուրջն յեկած գոմ պարսկահայոց բարբառներից էլ ծագում է «կու» մասնիկը:

Մեր այժմյան լեզվի մեջ «կու» ձևն ոգված է և դարձած է կը, ձայնավորից առաջ «կ», ուսում և դա, ավելի հետացած լինելով «կոյ» բառից, կրկնվում է իրար հաջորդող բայերի վրա: Բայց հին ժամանակ, մինչև անգամ Նաղաշ Յովնաթանի տաղերի մեջ (այժմ էլ այս ու այն բարբառների մեջ), բավական եր համարվում մեկ անգամ միայն կոյ գոմ կու դնել բայերից առաջինի վրա, ինչպես և ահա բառը, որինակ՝ Փեսայի թժկությունն կոյ առնէ և պես հանէ (Ժող. Յա. Վարպ. Ա. յեր. 135.).— Ահա մահն գայ և գտնու... (Կոստ. Երզն. 130): Ելել կուգայ վարդն ի նորու և մեզ բանայ դռվի սերու (Կոստ. Երզն. 120): Արդի բարբառների մեջ ևս «կո» (գո, գյո) բառը սովորաբար չի կրկնվում. ինչպես պատմական ներկայի հետ՝ «Գո կը հանիս, կրնամքնա արեվմտոց թագավորին»: Տեվական ներկայի հետ՝ «Գո հավիս մի վոզ կը միչա, ու սար ու ձոր... կը խաղաղ (Սրվանձտ. Մանանայ, յեր. 193. 195):

Կան բարբառներ, վորանց մեջ «կը» մասնիկը դրվում է բայից հետո, այն էլ յերբեմն մի քանի իրար հաջորդող բայերից վերջինից հետո, կամ թե կրկնվում և մեկնումն բայի վրա առաջից և յետևիից. որինակ, «Կոստաչանները բանեն եղիսկին յամ մ' ուտեն կ' ու կրանն կը... Եղիան նոր գլխա կը, գարկե կը հերոնը աչքը, յերկու լուսն ա կըհանե, բանի կը աչկերըմին ձեռքին... Եղիան ճատի, հարբառնա կը (Յեղիս. Լալայանց, «Զալալեթի բուրմունք», յեր. 43): «Կը» մասնիկի այս յետադասությունն ու կրկնվելը մինուճար բայի վրա՝ ծագում է «կոյ» բառի յետագա, ինչպես և

[1]) Այսպես որինակ՝ Եմինյան Ազգագր. ժողովածու Բ. 371. Ալթիի բարբառով. «Մեկ որ Սայթի կընկե, կերթա բազար, կրտանի մեկ պաճիկ ազա կա թալուկ եր ենտիզ. կըվերցնե, կա տուն կըգերե, կըսա.—կա. կնի՛կ, մեկ ազա իմ գտեր, բերեր իմ»: Այսպես չատ հաճախ նաև Վանի, Խոյեցոց և այլ բարբառների մեջ: Տես հենց նույն տեղը յեր. 434. 435. 437. 440. 441.

«կը» մասնիկն ունեցող բայերից հետո ևս գրվելուց, օրինակ՝ հետևյալի մեջ· «Ծիկ (ինձ) ինչի՞ կը կաւչես կյա քյո մոտ» (Տ· Սարգսենց Ա· «Պանդուխտ Վանցին», յեր· 32·), որ կարող է դառնալ «կը կաւչես կը»:

Վերևում տեսանք, որ հին Սահմ· ներկան «ահա», «նայ» բառերի հետ՝ կարող է թե՛ ներկա և թե՛ ապառնի ժամանակների նշանակությամբ գործածվել· ինչպես՝ «Ահա երևի հետո»: —Ահա կերևում է հետքը·— «Ահա գան և պես քաղեն... նայ գնեն պես և տանին»—Ահա կը գան և ինձ կը քաղեն...կը գնեն ինձ և կը տանեն: Արևմտյան բարբառներին հատուկ այս «նայ» բառը մինչև հայերենում (որը արևմտյան բարբառ է) շատ հաճախ գրվում է թե, ինչ որ, ով որ, երբ, յոլժամ, բանի և նման բառերով սկսվող պարզմանական, ժամանակական և այլ բերկրորդական խոսքերից հետո յեկող գլխավոր խոսքի սկզբում, գործ ածել «ահա» նշանակությամբ: Օրինակ՝ Կոստ· Երզնկացին (յեր· 88·) նման կապակցություններից մեջ մի դեպքում «նայ» է գնում և բոլոր հետ մի ուրիշ խոսքի մեջ՝ «ահա»· «Ջինչ որ ի բանդ կայնի և ի խաւսք ի խոր գնդան, նայ լույս ծագից նոցա յաբեգականն ի մեծ լուսոյն... Ջինչ որ կայ արարած ու անհոգի մեռած կայնի, ահա կենդանացան յարեգական ի մեծ լուսոյն»: «Ջինչ որ» բառի տեղ, հատկանալի է, կարելի է դնել «ով որ», ինչպես և բայերի անցյալ ժամանակի վրահանակ՝ ներկա· «Ջինչ որ (ով որ) ի բանդ կան, նայ (ահա, կոյ) լույս ծագէ նոցա· ջինչ որ (ով որ) կայ արարած ու անհոգի մեռած կան, ահա (նայ, կոյ) կենդանանան»: Այս նշանակում է՝ «ինչ վոր (ով որ) բանդում կա, ահա (կոյ) «լույս է ծագում նրանց»· կամ՝ «լույս կը ծագե նրանց»· «ինչ արարած վոր կա, ով վոր անհոգի մեռած կան, ահա (կոյ) կենդանանում են», կամ՝ «կը կենդանանան»: Մի քանի օրինակներ ևս. Ով որ ինձ միտ դնէ ու ջինչ խոսիմ՝ ինձ հասկանա, նայ ես իր տարի նշան, թե այս շնորհիս որպէս հասայ:—Թէ դիտաս յանպէտ ծառայ, նայ ես գայս կենքս ունայն ուրանամ:—Երբ որ գայս մեծ պարգևքս ի յայն լուսոյն ես ընկալայ, ևս մարմինս հոգովս իր սուրբ տեառն գրեմ ծառայ:—Յով որ սէր կայ յիր սրտին, նայ գիս նորա համակ տանին: Ու թէ սէրն կինէ զատ, նայ գիս տանի հողմ ու քամին· (Կոստ· Երզնկ· յեր· 98· 99· 101· 116· 117): Յորժամ մարդն հիւանդանա, նա բերեն գնան մօտ ի հավանդն· թէ ունիցի հիւանդն դարձ, որ առողջանայ, նա հատն քաղցրութեամբ հայի ի հիւանդն և դիրկ արկանէ և գհով հարու թևովն (Ժող· Ա· Վարդ· յեր· 81): Ով երնէկ և այրէ գրաբանն, նա տամ իւրեան շատ ոսկի և արծաթ (Մխիթար Սպաթ· յեր· 169): Թէ գաս դիշերն ի մօտիս, նա դնեմ գերեզ երեսիս (Նահատակ Բուչակ· Դիվան, յեր· 119):

Այս բոլոր, ինչպես և բազմաթիվ այլոցիսկ կապակցությունների մեջ՝ նայ բառից հետո յեկող խոսքի բայն ունի կամ Սահմ· ներկայի, կամ ապառնի գործածության ներկայի նշանակություն: Այդ բոլորի մեջ ևս «նայ» բառը բարբառային ձեվով կարող էր փոխանակվել համանիշ «կոյ» բառով, ինչպես, օրինակ, վերևվի վերջին խոսքերը կարող եյին ասվել՝ Ով երնէկ և այրէ գրաբանն, կոյ տամ (=կու տամ) իւրեան շատ ոսկի·— Թէ գաս դիշերն ի մօտիս, կոյ դնեմ (=կու դնեմ) գերեզ երեսիս:— Այսպես՝ մեր ժամանակի բարբառներում գոնում ենք՝ «Թա չերթես գո տը մեռնիմ» (Սրմանճա· Մանանա, 203), որ միջին հայերեն լինում է՝ Թէ չերթես, նայ մեռանիմ—«Թէ չերթես՝ կոյ մեռանիմ»: Ահա և մի ուրիշ խոսք, որի մեջ «գո» բառը գրված է ուղղակի հին Սահմ· ներկայի վրա, որ իրրեվ ապառնի է առնված· «Ձեվարին ինչ կանչեն կերթան, մենն էլ գո մրկինի» (Սրմանճա· Մանան· 197): Ձևրևկյան յերբ ասեն կերթան, մենքն էլ կոյ մրկինի (=կու մրկին—կայրվին): Այս միևնույն խոսքը հինդ տոդ վերեվում ասված է այսպես՝ «Ձեվարին ինչ կերթան ներս, չրթոս մենն էլ տը գան և ասեն՝ «Ձեվարին ինչ կերթան ներս, չրթոս մենն էլ տը մրկինի»· ուրեմն գո մրկինի=տը մրկինի, այսինքն գո—կո—կոյ =ահա բառը նույնպես և նույն իմաստով գրվում է հին Սահմ· ներկայի վրա, ինչպես և տը—տի—պիտի բառը, ինչպես և «նայ» բառը: Համաձան է վոր «կոյ» բառի նշանակությունն այս դեպքում էլ մի փոքր մինի, այն ժամանակ ասոջ կրկա խոնարհման մի ձեվ· ինչպես օրինակ՝ այս հայրենի տողերը՝ «Մանրիք ի յանդէն երթամք, նայ ևստիճ գան գմեզ մ'այլ իրիք» (Նահ· Բուչ· Դիվ· յեր· 92) փոխանակ ունի՝ «Մանրիք ի յանդէն երթամք, ևս ևստիճ գան մեզ այլ ի վեր» (Կոստ· Նոր· Ժող· Ա· 69), որ հին ձեվով է...կոյ ևստիճ:

Ձևրը «կու» մասնիկն ասոջացած տարածվում է, բնականորեն բռնում է ինչպես այս վերջին օրինակի մեջ է; վերջապես գլխավոր խոսքի սկզբում գրված համանիշ «նայ» բառի տեղը, այն ժամանակ սրա ֆունկցիան ամբողջ է դառնում· ուստի և այդ «նայ»

բաար կամ դուբա է ընկնում, կամ արտասանությամբ մեծապես առաջադաս խոսքերի հետ՝ դառնում է մի շատ սովորական վերջաբար մասնիկ պատմական և նման խոսքերի համար և մինչեվ այժմ «նա», «նը», «նե» ձևերով ապրում է Նոր Նախիջևանի և այլ բարբառներում.—[ինչպես՝ ասդ մնամ նե, կը մնամ չմնամ նե, ինչ անիմ (Նավ. հնբ. է. 64):—Այդ այս կերպասությունն անցնում է և այնպիսի կապակցություններին, որոնց վերջացաս խոսքի բայը «կու» մասնիկով չե. որինակ՝ եկիք նե՝ բարով եկիք.—Ով քուն էր նը՝ արթնցավ (Ճանիկյան, Հնութիւնք Ակնայ, յեր. 494. 486), հին ձևով՝ «Ով քուն էր, նա՛ (ահա) արթնացաւ»:

Լեզվական այս փոփոխությունը տեսնում ենք համանիշ «ահա» բառի համար ևս: Այսպիսի մի խոսքը՝ «Յորժամ նա զայս ասաց, նայ աղին աչքն բացաւ», «ահա» բառով լինում է՝ «Յորժամ նա զայս ասաց, ահա աղին աչքն բացաւ»: Արդ, այսպիսի խոսքերի «ահա» բառը «հա» ձևով դեռ ապրում է բարբառների մեջ առաջադաս խոսքերի վերջում, որինակ՝ Նրանք վոր սրան տեսան հա՝ մինմնու ասին.—Հենց վոր քաղաքիցը մոտացան հա՝ մին էլ են տեսան... Մոռնաթ եմ անում, վոր ձեի ըրեքեն ըլի հա, թոզուս՝ ինքսիրս չես իրմ (Նավ. Հնբ. ժ. Լուսա Ոձուն գյուղի բարբառով):

Մի անգամ վոր լեզվի մեջ առաջ է եկել «կուգան» ձևը թե իբրեվ տեղական ներկա և թե իբրեվ նախատեսական ապառնի ու կարելիական, այս ձևի անալոգիայով «կու» մասնիկը հեշտությամբ պիտի գրվեր նաև Սահմ. անկ. անցյալ ժամանակի վրա, ինչպես՝ եթե գաս, կուգամ, նաև ինպես՝ եթե գայիր, կուգայի: Սակայն անցյալի վրա, ներկա ժամանակից անկախ եղ, գրվում է «ահա», «կոյ» և ցույց է տալիս խոսելու վայրկյանից անմիջապես առաջ կատարվող հարաձիգ գործողություն, վոր անցյալից տևում, հասնում է մինչեվ խոսելու ներկան. որինակ՝ Ահա հոան գար գարնան (Կոստ. Երզնկ. 173). Ահա ցնծայր ծովն ու ծփայր. ահա խաղայր նավն ի ծովուն (Կոստ. Նոր. ժող. Դ. 59): Այս խոսքերը համանիշ «կոյ» բառով կը լինեն՝ կոյ հոան գար. կոյ ցնծայր. կոյ խաղայր: Բերենք յերկու որինակ եղ բարբառներից. «Մնում է մի յերկու բան, հիես են եղ կասեմ... (առում է այդ յերկու բանը, ասա). Հրես ես յերկու բանն եյի ուզում քեզ ասել» (Նավ. Հնբ. Դ. 24): «Իրիկ չաս վախկաս կենի... Որ մ'իրիկուն կերթա վաղց, կը տեսնա վոր փուղցի մեջ գյո ասան մ'կանչե ոսկու կը

կրծի. ճիպով կը փախնի կը մտնի տուն: Կնիկ կը հարցու՝ Քա՛ ի՞նչ եղավ քեզ... Կասի՝ գյո մեջ վաղցին ասան մ'կանչե որ ոսկու կը կրծեր» (Նավ. Հնբ. Զ. 45): «Գիտես կյո պառվու աղջիկնիկ չաճ մ' եյնեի պատյմած» (Եմին Ագ. ժող. Բ. 435): «Կու տար իմա լեմ եր ասելի» (Տ. Ալեա. կիր. հարս. 66):

260. ՅԱՆԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՐԵԼԻԱԿԱՆ ԸՂՁԱԿԱՆՆԵՐ ԿԱՄ ԸՂՁԱԿԱՆ ՈՒ ՅԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ

—Հին լեզվի մեջ արդեն, ինչպես տեսանք (§ 252) ձգտում է լրևվում յերկու տարբաստասականներից մեկը պրձանձելու ցանկությանն ու կամք ցույց տալու համար, մյուսը՝ լոկ հնարավորության: Լեզվի այս ձգտումը ցանկության բղձականը կարելիականից տարբերելու՝ չի բռնակվում և և այն ժամանակ, յերբ Սահմ. ներկա և անկ. անցյալ ժամանակները կատարում են նաև տարբաստասականների ֆունկցիան: Սկզբում, սակայն, մինուչն ձևը՝ գնամ, գնայի գործ և ածվում յերեք նշանակությամբ էս՝ Սահմ. գնում եմ, գնում եյի. ցանկության բղձական՝ գնամ. գնայի. կարելիական՝ կը գնամ, կը գնայի: Այսպիսի մի խոսքը՝ «Յերբ պիշնամիս բռնեն՝ չսպանեն, այլ ծառայ առնեն» կարող է նշանակել՝ 1) Յերբ պիշնամիներին բռնում են՝ չեն սպանում, այլ գերի յեն առնում. 2) Յերբ պիշնամիներին բռնեն՝ չսպանե՞ն (իմց), այլ գերի առնեն. 3) Յերբ պիշնամիներին բռնեն՝ չեն սպանել, այլ գերի կը առնեն: Խոսքի բնորոշող բովանդակությունից միայն պետք է իմացվեր, թե ինչպես պետք է հասկացվեին այդպիսի խոսքերը, ինչպես որինակ՝ Մատոքիս Արեպացի այս խոսքը՝ «Թե պիս բռնեն՝ սպանեն ոչ, այլ առնեն ծառայ» նշանակում է՝ Թե ինձ բռնեն՝ չեն սպանել, այլ գերի կը առնեն: Յերբ ասաջ են գալիս «կու» մասնիկով ձևերը, այն ժամանակ խոնարհման ձևերը բաժանվում են յերկու խմբի, 1) Գնամ, գնայի—ցանկության արտահայտող, վորի մեջ մտնում են՝ հնդեվրոպական ցանկության բղձականը, ինչպես և պատմական բղձականը, վոր ցանկություն և արտահայտում, այլ և տարբաստասականի հիմնաստությունը համական և խորհրդակցական նշանակությամբ. ուրեմն մի ձևի, վորի մեջ կա միշտ կամք ու ցանկության պատասխար. և, ինչպես տեսանք, Սահմ. «գնամ», «գնայի» ձևերն բարբառներում հենց բղձականի նշանակությամբ են անցել հին տարբա-

դասականի տեղ · 2) կը գնամ, կը գնայի,—ցանկութեան չարաճճահայտով, որուն մէջ մտնում են՝ Սահմ. ներկան և անկատար անցեալը, (=գնում եմ, գնում էի), հին աւորակատականի կիրառութիւնը նախաեռեսական ապառնու նշանակութեամբ, երբ կամական տարրը չունի մէջը, կարելիական ըղձականը, այլ և՝ անիրական, ինչպես և մասամբ պատվիրական ըղձականն իրրեւ կարելիութեան արտահայտող (Տես § 251) · ուրեմն մի ձեւ, առանց վրան եւ ցանկութեան կամ կամքի մտածակցութեան, լինի սահմանական, թէ աւորական կամ ըղձական, կարելիական թէ անիրական լեզուական օրինաւորութեամբ, ներկա, անցեալ թէ ապառնի ժամանակով: Այսպես ուրեմն ԿՈՒ (կը) մասնիկը ծառայել է վոչ-ցանկութեան խոսքերը ցանկութեան խոսքերից վոտրշելու · այդ և յետոյ պրա Ֆունկցիան մէջին հայերենում, ինչպես և ե՛ մէնչև այժմ արևմտեան բարբառների մէջ:

Աբեվելեան բարբառների և պահլաւեան գրական լեզուի մեջ, սակայն, Սահմ. ներկայի և անկ. անցեալի համար, ինչպես ապառնի, կազմվել են գնում եմ, գնում եյի ձեւերը · ուսում «կու» (կը) մասնիկով կը գնամ, կը գնայի ձեւերի կիրառութիւնը սահմանափակվել և իրրեւ կարելիական ըղձական (մոր բնականաբար հաճախ ապագային և վերաբերում) և իրրեւ նախաեռեսական ապառնի, կը գնայի անցեալը նաև իրրեւ անիրական: Այս յետքն ևս, իրենց բնութեամբ, կազմում են յենթադրական խոսքեր, այդ պատճառով «կը գնամ», «կը գնայի» ձեւերը կոչում ենք յենթադրական յեղանակ, իսկ «գնամ», «գնայի» ձեւերը՝ ըղձական յեղանակ: Բայց կարելի է նաև պահել ընդհանուր ըղձական յեղանակ կոչելը և այնուհետեւ այս յեղանակն աւորաբաժանել՝ 1) ցանկութեան ըղձական–գնամ, գնայի, և 2) կարելիական ըղձական, որ արտահայտում է ըղձականի վրա «կը» մասնիկը դրվելով՝ կը գնամ, կը գնայի, ճիշտ ինչպես որ հունարենում ըղձականի և Սահմ. անցեալի վրա an կամ ke, ken, ka մասնիկներից մեկը դրվելով՝ արտահայտում և կարելիութիւնը և անիրականութիւնը:

261 · ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿԻ «ՊԻՏԻ» ՅԵՂԱՆԱԿԻՔԸ պարզապես պիտիմ բայի յեզուկի 3–րդ դէմքն է և մէնակ իրրեւ անկախ բայ էլ և գործածվում, ինչպես՝ Աստղին էլ լաւ պիտի · Այսոր պիտի գնալ: Դա նշանակում է՝ հարկավոր է, պետք է, ուսում պի-

տի գնամ, պիտի գնաս · · · կապակցութիւններով տեղ և երանց նշանակութեամբ գործ են ածվում նաև՝ պետէ է գնամ, պետք է գնաս և այլն: «Պիտի գնամ», «պիտի գնաս» · · · ձեվերը ծագած են պիտի որ գնամ, «պիտի որ գնաս» · · · ձեվերից, ինչպես՝ «թէ ամերուկն էլ յընկուզենին, դիս պիտի որ սպանանէր» (Մաս. Ժող. Առակ. վարդ · II · եր · 149): Դրանից սկսում առաջացել է բարբառային «պիտար գամ» ձեվը, և, ինչպես սովորական և ժողովրդական լեզվի մէջ հազկատնելը չգործածել, պիտի գնամ, պիտի գնաս, պիտի գնա և այլն · պիտի գնայի, պիտի գնայիր և այլն:

Սակայն ինչքան էլ այս վերջին ձեվը ծագած և «պիտի որ գնամ» կապակցութիւնից, այժմյան լեզվի մէջ այս յերկուսը տարբեր են. «Յես այսոր յերեկոյան պիտի գնամ» խոսքի և համանների մէջ «պիտի» բառն այլեվս չունք կրում իրրեւ մի բայ իր լրացումներով՝ նուիրացնելով «Պիտի՛ վոր յես այս յերեկոյան գնամ» խոսքերով՝ նուիրացնելով «պիտի» վոր յես այս յերեկոյան գնամ» խոսքեր հետ: Մյուս կողմից՝ պիտի գնամ ձեվի մէջ, «պիտի» բառը չի պահում իր նշանակութիւնը՝ «հարկավոր է». «Յես պիտի տուն գնամ» խոսքն այլեվս չունք մտածում իրրեւ՝ «Հարկավոր է, որ յես տուն գնամ», այլ պիտր գնամ կապակցութիւնը ցոյց է տալիս լոկ անհրաժեշտ, հարկադրական գործողութիւն, այսինքն՝ «պիտի» բառը դարձել է լոկ մի յեղանակիչ բառ: Այս պատճառով և այդ բառը խոսքի մէջ վոչ միայն բայից առաջ և գոնեպան անդրադառնում է, այլ յերբեմն նաև առանձնապես չնչամած բայից հետո՝ գնա՛ պիտի: Բացի այդ՝ «պիտի» բառը նուիրակ սկզբում և գոնում է ՊԻՏ, բարբառների մէջ նաև «ՏԻ», «ՏԸ», «Տ՚», որոնք ինչպես «կը» մասնիկը, բայից առաջ և անրաժան են մնում, որ-նակ՝ ան բերեմ, որ բերեմ, ա՛սաեմ: Մարդ մի անգամ պիտ մնանի:

Այսպես ուրեմն, այսօրվա լեզվի պիտի գնամ, պիտի գնայի կապակցութիւնների մէջ «պիտի» բառը մի քարացած բայական ձեվ է, ճիշտ ինչպես գուցե բառը, որը հին լեզվի «գամ» բայի աւորաժամանակի յեզակի 3-րդ դէմքն է: Ձեվ ինչպես գուցե գործում կապակցութեան մէջ գուցե բառով «գնամ» ըղձականը առանում է կարելիական նշանակութիւն, բայց ձեվով մնում է ըղձական, նուիրպես պիտի բառը նուիրն ըղձականին տալիս է անհրաժեշտութեան կամ հարկադրական նշանակութիւն, բայց գնամ բայն իր ձեվով մնում է ըղձական (Տես · § 250):

185

262· ՆԵՐԿԱՅԻ ԲՆԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ.—Ինչպես դրաբարում նույն պես և աշխարհաբարում խոնարհման ձևվերը կազմվում են յերկու բնի վրա՝ ներկայի և կատարյալի բնից: Ներկայի բնին պատկանում են՝ ըղձական ներկա ու անցյալ և սրտնեական, իսկ կապայականը բնին՝ Սահմ. անցյալ կատարյալ և հրամայական: Այս բոլոր ձևվերը ծագում են դրաբարից հնչյունական մեծ փոփոխություններով:

1) Ըղձական ներկան, ինչպես ասացինք, ծագում և դրաբարի սահմանական ներկա ժամանակից:

Դրաբար		Աշխարհաբար
Սահմ. ներկա		Ըղձ. ներկա
Գնամ	Գրեմ	Գնամ Գրեմ
Գնաս	Գրես	Գնաս Գրես
Գնայ	Գրէ=Գրեյ	Գնա Գրե, Գրի
Գնամք	Գրեմք	Գնանք Գրենք
Գնայք	Գրէք=Գրեյք	Գնաք Գրեք
Գնան	Գրեն	Գնան Գրեն

Հնչյունական փոփոխությունների մասին տես § § 46· 51, 1· 54·

2) Ըղձական անցյալը ծագում և դրաբարի Սահմ. անկատար անցյալից:

Դրաբար			Աշխարհաբար	
Անկ. անցյալ			Ըղձ. անցյալ	
	հին ձև	միջին ձև		
Գնայի	Գրեի	Գրէի	Գնայի	Գրեյի
Գնայիր	Գրեիր	Գրէիր	Գնայիր	Գրեյիր
Գնայր	Գրէր=Գրեյր	Գրէր	Գնար	Գրեր
Գնայաք	Գրեաք	Գրէաք	Գնայինք	Գրեյինք
Գնայիք	Գրեիք	Գրէիք	Գնայիք	Գրեյիք
Գնային	Գրեին	Գրէին	Գնային	Գրեյին

Հնչյունական փոփոխությունների մասին տես § § 44· 51, 1· 54· 55·

3) Արգելականը ծագում է դրաբարի արգելականից:

Դրաբար		Աշխարհաբար			
Մի՛ գնար	Մի՛ գրեր	Մի՛ գնար	Մի՛ գրեր	Մի՛ գնալ	Մի՛ գրել
Մի՛ գնայք	Մի՛ գրէք	Մի՛ գնաք	Մի՛ գրեք	Մի՛ք գնալ	Մի՛ք գրել

Հնչյունների փոփոխությունների մասին տես § § 47· 54·

Հոդնակի 2-րդ դեմքի «ԱՅՔ» վերջը դառնում է «ԱՔ» և ԻՔ=ԵՅՔ դառնում է ԵՔ: Աշխարհաբարի 1-ին ձևվերը (մի՛ գնար, մի՛ գրեր) արեվմտյան բարբառներն են, բայց մտել են նաև արեվելյան գրական լեզվի մեջ· այժմ, սակայն, հետզհետե ծավալվում և արեվելյան բարբառների հատուկ ձևը, ըստ որում վերջի «Ր» հնչյունը դարձել է «Լ», ինչպես և միջին հայերենում է՝ «մի՛ գնալ», իսկ «ե» բնի այս «ե» ձայնավորը դարձել է «ի» ինչպես՝ «մի՛ գրիլ»· բացի այդ, հոդնակի «Ք» վերջավորությունը, բարբառային ձևով, դրվում է «Մի՛» արգելականի վրա և վերջի «Լ» հնչյունը այսօրեղ ևս, ինչպես և բացառական յենթադրականի մեջ, հաճախ դուրս է բնկնում, որինակ՝ մի՛ գնա, մի՛ք գնա· մի՛ դրի, մի՛ք դրի (ինչպես և չեմ գնա, չես գնա, չի գնա և այլն):

Մի նոր յերեվույթ է գրական հրամայականի վրա «մի՛» դնելով կազմել արգելականը, որինակ՝ կարղացիք—մի՛ կարղացիք· մոռեցիր—մի՛ մոռեցիր, ասա—մի՛ ասա: Այս ձևվերը ծագում են մոռեցիր—մի՛ մոռեցիր, գրի՛ր— մի՛ գրիր ձևվերի նմանությամբ: Այս վերջիններները, որ ծագում են հին մի՛ կարդար>մի՛ նարդա, մի՛ գրեր> մի գրիր ձևվերից, հնչյունորեն նույն լինելով գրական հրամայականի կարդա՛, գրի՛ր ձևվերի հետ ըմբռնվել են երբեմն գրականի վրա «ալի՛» դրված ձևվեր, և գրանց անալոգիայով առաջ են յեկել նաև «մի՛ մոռեցիր», «մի՛ կարղացիք», և նույնիսկ «մի՛ տես», «մի՛ բեր»: Այս փոփոխությունը, սակայն, գրական լեզվի մեջ ընդունված չե:

263· ԿԱՏԱՐՅԱԼԻ ԲՆԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ:—Գրաբարում կատարյալի բունը յերկու տեսակ է՝ 1) պարզ կամ արմատական բուն, որ բոլոր արմատն է, որի վրա ուղղակի ավելանում են դեմքի վերջավորությունները, որինակ՝ տես-ի, տես-եր, տես, տեսաք և այլն:

2) Ածանցական բուն, *վոր կազմվում է «ց»–ով, Ա3 ձևով՝ ար, աւառ վերջացած բայերը՝ դնամ—դնաց, գարմանամ—գարմացրաբար՝ ԵԱՅ, աշխարհաբար՝ ԵՅ ձևով՝ եմ, իմ, եանամ վերջացած բայերը՝ առնամ—առեաց, աչխ. առեց, հայիմ—հայեաց, մերձենամ—մերձեց: Կատարյալի այս յերկու տեսակի բունն էլ մնում են աշխարհաբարում. բայց այդ՝ արեվելյան աշխարհաբարում պատճառական բայերի համար առաջ է յեկել մի նոր ածանցական բուն «ացնել», «եցնել», «ցնել» վերջերի համապատասխան՝ ԱՅՐ, ԵՅՐ, ՅՐ ձևերով:*

Կատարյալի վերջավորություններն աշխարհաբարում, ինչպես գրաբարում, յերկու տեսակ են՝ Ի և Ա ձայնավորներով:

1) «Ի» ՁԱՅՆԱՎՈՐՈՎ ԿԱՏԱՐՅԱԼ

Գրաբար	Աշխարհաբար		
Անցյալ կատարյալ			
Գնացի	Գրեցի	Գնացի	Գրեցէ
Գնացեր	Գրեցեր	Գնացիջ	Գրեցիր
Գնաց	Գրեաց	Գնաչ	Գրեց
Գնացաք	Գրեցաք	Գնացինք	Գրեցինք
Գնացէք, գնացիք	Գրեցէք, գրեցիք	Գնացիք	Գրեցիք
Գնացին	Գրեցին	Գնացին	Գրեցին
Հրամայական			
Գնա՛	Գրեա՛	Գնա՛	Գրե՛ Գրի՛ Գրի՛ր
Գնացէ՛ք	Գրեցէ՛ք	Գնացի՛ք	Գրեցի՛ք

Հնչյունական փոփոխությունների մասին տես § § 44. 51, 6. 54: Առանձին ուշադրություն պիտի դարձնել, վոր «եմ» տիպի բայերի յեզակի հրամայականը՝ «գրեա» հնչյունների փոփոխությամբ դառնում է «գրե՛», ապա «գրի» և վերջն ուրիշ բայերի նմանությամբ ավելանում է «ր»՝ «գրիր», վոր և ընդունված է գրական լեզվի մեջ: Այսպես և պատճառական բայերի հրամայա-

կանն է կազմվել. օրինակ՝ հին մեծացո՛ հրամայականը դարձել է մեծացո՛ւ, ապա ավելացել է Ր՝ մեծացո՛ւր, ինչպես է՛ արեվմտյան բարբառում. իսկ արեվելյան բարբառում յեռեվանաջությամբ՝ մեծացրո՛ւ: Հետագայում այս նոր հրամայականը դարձել է կատարյալի և հնդնակի հրամայականի բուն և կազմվել են՝ մեծացրի՛ք. մեծացրի, մեծացրիր, մեծացրից, մեծացրինք. մեծացրիք, մեծացրին: Յեզակի 3–րդ դեմքը՝ բնի վրա ունի «ԵՅ» վերջավորությունը, վոր «եմ» կազմության բայերի յեզ. 3–րդ դեմքի վերջն է՝ «գր-եց» և ըմբռնվելով իբրեվ վերջավորություն՝ ավելանում և պատճառական և մի քանի ուրիշ բայերի 3–րդ դեմքի վրա: Այս 3–րդ դեմքի անալոգիայով կազմվում են նորաձևությամբ և մյուս դեմքերը՝ գարմացրեցի, գարմացրիր, գարմացրեցինք և այլն, վորոնք գրական լեզվի մեջ ընդունված չեն: Նույն ձևով հարցնել բայն ունի՝ հարցրի, հարցրիր, հարցրեց, հարցրինք, հարցրիք, հարցրին. հարցրո՛ւ, հարցրի՛ք, դարձնել՝ դարձրի, դարձրիր, դարձրեց, դարձրինք, դարձրիք, դարձրին. դարձրո՛ւ. դարձրի՛ք. անցնել (անց կացնել) անցրի, անցրիր, անցրեց, անցրո՛ւ, անցրի՛ք և այլն:

Աշխարհաբարում արմատական բնի կատարյալը չկա և մնում են միայն մի քանի անկանոն բայեր՝ դնել՝ դրի, դրիր, դրեց (դրավ), դրինք, դրիք, դրին. բայց արդեն նաև՝ դրեցի, դրեցիր, դրեց և այլն. հրամայական դի՛ր, դրի՛ք: Տալ՝ տվի, տվիր (տվեց), դրեց և այլն. հրամայական դի՛ր, դրի՛ք: Տալ՝ տվի, տվիր (տվեց), տվավ, տվինք, տվիք, տվին. կա նաև՝ տվեցի, տվեցիր և այլն: Հրամ. տո՛ւր, տվի՛ք: Անել՝ արի, արիր, արավ, արինք, արիք, արին և արեցի, արեցիր. հրամ. արա՛, արի՛ք: Թողնել՝ թողի, թողիր, թողից, թողինք, թողիք, թողին, բայց արդեն ավելի՝ թողեցի, թողեցիր, թողեց և այլն. հրամ. թո՛ղ, թողի՛ք: Բերել՝ բերի, բերիր, բերից, բերինք, բերիք, բերին, բայց ավելի՝ բերեցի, բերեցիր, բերեց և այլն. հրամ. բե՛ր, բերի՛ք: Լալ, լացի, լացիր, լացից, լացինք, լացիք, լացին. կա նաև՝ լացեցի և այլն. հրամ. լա՛ց, լացի՛ք, բայց գործածվում է ավելի լաց լինել: Բանալ՝ բացի, բացիր, բացից, բացինք, բացիք, բացին. բայց ավելի՝ բաց անել. հրամ. բա՛ց, բացի՛ք: Ասել՝ ասացի, ասացիր, ասաց և այլն. բարբառային՝ ասի, ասիր, ասավ, ասինք, ասիք, ասին. ասա՛, ասացի՛ք կամ ասի՛ք. կա նաև՝ ասեցի, ասեցիր, ասեց և այլն:

2) «Ա» ՁԱՅՆԱՎՈՐՈՎ ԿԱՏԱՐՅԱԼ

Անցյալ կատարյալ

Գրաբար	Աշխարհաբար
Հեռացայ	*Հեռացա*
Հեռացար	*Հեռացար*
Հեռացաւ	*Հեռացավ*
Հեռացաք	*Հեռացանք*
Հեռացայք, Հեռացարուք	*Հեռացաք*
Հեռացան	*Հեռացան*
Փախեայ	*Փախա*
Փախեար	*Փախար*
Փախեաւ	*Փախավ*
Փախեաք	*Փախանք*
Փախեայք, Փախերուք	*Փախաք*
Փախեան	*Փախան*

Հրամայական

Հեռացի՛ր	*Հեռացի՛ր*
Հեռացա՛յք, Հեռացարո՛ւք	*Հեռացե՛ք*
Փախի՛ր	*Փախի՛ր*
Փախա՛յք, Փախերո՛ւք	*Փախե՛ք*

Հնչյունական փոփոխությունների մասին տես §§ 44· 51,1· 52· 51,6·

Այսպես խոնարհվում են «անալ», «ենալ», «չել», «նել» վերջացած բայերը, ինչպես՝ մոտենալ–մոտեցա, մոտեցար և այլն: Դրանցից «չել», «նել» վերջացածները արմատական բնով են խոնարհվում, այսինքն վերջավորություններն ավելանում են բայարմատի վրա· այսպես են՝ փախչել, թռչել, կպչել և այլն· գտնել, մտնել, հասնել և այլն: Վերջին տիպի բայերը դրաբարում խոնարհվում են «ի» ձայնավորով, որինակ՝ մտանել–մտի, մտիր, մտաւ, մտայք, մտէք, կամ մտիք, մտին· մո՛ւտ, մտի՛ք: Կան և «անել» վերջացած բայեր, որոնք «Ա» ձայնավորով են խոնարհվում, որինակ՝ անկանիլ (ընկնել)–անկայ, անկար, անկաւ և այլն· աշխարհաբար՝ ընկա, ընկար, ընկավ:

Անկանոն ձևվով հրամ· չեզ· 2–րդ դեմք կամ կատարյալ ունեն հետևյալ բայերը՝ տեսնել, տե՛ս· առնել, ա՛ռ· չելնել, չի՛ր· կալնել, կալի՛ր· ուտել, կերա, կե՛ր· գալ, չեկա, չի՛կ· տանել, տարա, տա՛ր· դառնալ, զարձա, զարձի՛ր· բարբառային՝ զառա, զառի՛ր (զատ)· համբառնալ–համբարձա, համբարձի՛ր· բառնալ, բարձա, բարձի՛ր, այլև բարձել, բարձնել, բարձի՛ր· լինել, չեղա, չեղի՛ր:

264· ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ:—*Հայերենում բայերի պարզ կերպերն (§ 249) արտահայտում են բայերի պարզ ժամանակներով, որոնք են՝ Ըղձական ներկա և անցյալ (ընդամ, ընդայի), Սահմ· անցյալ կատարյալ (ընդայի), Հրամայական և արդելական (ընդա՛, մի՛ ընդալ)· իսկ կատարվող, կատարված և կատարելի կերպերն արտահայտվում են բաղադրյալ ժամանակներով, որոնք կազմվում են մի դերբայից և «եմ» կամ «լինեմ» բայերի ձևերից· դերբայը ցույց է տալիս կերպը, իսկ բայը՝ ժամանակը, այսպես՝*

1) *Կատարվող կերպի ներկա—ընդում եմ, անկատար անցյալ—ընդում էի·*

2) *Կատարված կերպի վաղակատար ներկա՝—ընդացել եմ, վաղակատար անցյալ— ընդացել էի· Հարակատար ներկա—ընդացած եմ, հարակատար անցյալ—ընդացած էի:*

3) *Կատարելի կերպի ապառնի—ընդալու չեմ, ապառնի անցյալ—ընդալու էի:*

(Բայերի խոնարհման մասին տեսնել՝ Մ· Աբեղյանի «Աշխատությունների», հտ· 224–269):

Բ.

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

265· ՀՈՒՈՎ ՑԵՎ ԹԻՎ:—*Գոյական ձևերը ցույց են տալիս՝ 1) զանազան լրացական հարաբերություններ, որոնք գոյականը խոսքի մեջ ունի բայի, ածականի կամ մի ուրիշ գոյականի նկատմամբ և 2) գոյականի դաղափարի պատկերացումը իրրեև իրրեև լրացում և 2) գոյականի դաղափարի պատկերացումը իրրեև մեկ կամ չատ: Գոյականի ձևերն առաջին տեսակետով կոչվում*

են հոլով ըստ հոլովական ձեվ, իսկ յերկրորդ տեսակետով դոյականի թիվ:

Հնդեվրոպական նախալեզվի մեջ, ինչպես ընդունում են, թիվը յեղել է յերեք՝ յեզակի, հոգնակի և յերկակի, իսկ հոլովական ձեվերի քանակը յեղել են ութ՝ ուղղական (անվանական), հայցական, սեռական, տրական, բացառական, ներգոյական, գործիական և կոչական: Հոլովական կազմութիւնների այս կոչումները արդում են ավանդաբար՝ մոչ թե բուն ձեվի, այլ բուն նշանակութեան: Հոլովական ձեվերն ունեցել են բնիկ տարբերվող առանձին թեքման վերջավորութիւններ:

Հայոց հին լեզվի մեջ կան՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, գործիական, բացառական և ներգոյական հոլովները:

266. ՀՈԼՈՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԻՄԸ:—Ինչպես լեզվական բոլոր իրականութիւնները, նույնպես և հոլովական ձեվերը չափազանակ փոփոխութեան ենթակա են. դրա հետևանքն այն է եղել, վոր մեր լեզվից դուրս և ընկել յերկակի թիվը և մնացել են միայն յեզակին և հոգնակին: Մի քանի դարերում, սակայն, դեռ կա մարդու զույգ անդամների կամ ուրիշ զույգ իրերի միամանակ անուանների համար յերկակի թիվ «ուի» կամ «վի» ձեվով, ինչպես են՝ աչուի, յոնքուի (ընքուի), ոտուի, ձեռվի, դռվի, կամ թե հոգնակի «ներ», «նի» մասնիկով աչվրներ, աչվրնի. ձեռվրնի, ոտվրնի և այլն:

Հոլովական ձեվերի փոփոխութիւնը կատարվում է յերկու ուղղութեամբ. 1) Տարբեր կիրառութիւն ունեցող յերկու կամ ավելի հոլովական ձեվերի տեղ անցնում է մի հատ ընդհանուր ձեվ, կա՛մ այն պատճառով, վոր հնչյունական փոփոխութեամբ տարբեր հոլովական ձեվերը նույնանում են, կա՛մ թե յերկու (կամ յերեք) ձեվերից մեկը յետ է մղվում և մեռնում է՝ տեղի տալով մյուս մեկ (կամ յերկու) ձեվին, վոր իր վրա է առնում և այդ մեռած ձեվի նշանակութիւնները. դրա հետևանքով յերկու (կամ յերեք) հոլովական ձեվի տեղ մնում է միայն մեկը (կամ յերկուսը), բայց ավելի ընդարձակ նշանակութեամբ: 2) Տեղի է ունենում և հակառակ յերևույթ, այն է՝ տարբեր կիրառութիւններ կամ ֆունկցիաներ ունեցող մեկ հոլովական ձեվի մոտ առաջ է գալիս մի նոր հոլովական ձեվ, վոր այդ կիրառութիւններից մեկն

իր վրա է առնում, և հին հոլովական ձեվը դործածվում է այնուհետև միայն մեկ նշանակութեամբ. հետևանքն այն է լինում, վոր հին մեկ, բայց ընդարձակ նշանակութիւն ունեցող հոլովական ձեվի տեղ բռնում են յերկու հոլովական ձեվեր, բայց ավելի նեղ կիրառութեամբ: Հնդեվրոպական լեզուների զարգացման ընթացքում յերևում է հոլովական ձեվերի այս յերկու տեսակի փոփոխութիւնն էս:

Հայերենում էս առաջ են յեկել նման փոփոխութիւններ. իրար հետ նույնացել են՝ 1) ուղղական, հայցական ու կոչական հոլովները և 2) սեռական ու տրական հոլովները, բայց այդ՝ առաջ և յեկել մի նոր ներգոյական հոլով:

267. ՈՒՂՂԱԿԱՆՆ ԻՐԻՎ ԿՈՉԱԿԱՆ ՅԵՎ ՀԱՅՑԱԿԱՆ:—Գրաբարում բառի չեշտը մեծ մասամբ վերջին վանկի վրա է. նախադրության չընդունում, սակայն, բառերը չեշտվել են վերջընթեր վանկի վրա: Շեշտի այս դրութեան պատճառով բառերի վերջը շեշտի ապրելութեամբ դուրս է ընկել, և հետևանքն այն է յեղել, վոր յեզակի ուղղական, կոչական և հայցական հոլովները, վորոնք սկզբնապես տարբեր ձեվեր, այսինքն տարբեր վերջավորութիւններ են ունեցել, մնացել են առանց վորևե վերջավորութեան ու բոլոր ձայնավորի և նույնացել են իրար հետ. միևնույն ձեվը՝ «քուն», «սիրտ» դործածվում է յերեք հոլովի՝ ուղղական, կոչական, հայցական հոլովների նշանակութեամբ: Այս յերեք հոլովից, սակայն, դրաբարում միայն կոչականը չունի առանձին դոյութեան և դուռ հոլով չէ, վորովհետև հոգնականում էլ նույն ձեվն ունի, ինչ վոր ուղղականը. իսկ հայցականը հոգնականում պահել է դեռ իր հատուկ վերջավորութիւնը՝ «Ս» հնչյունը՝ սիրաս, մինչդեռ հոգնակի ուղղականի վերջավորութիւնն է «Ք» հնչյունը՝ սիրաք:

Այսպես, տեսնում ենք, դրաբարի հոլովումը ուղղականի և հայցականի նկատմամբ չունի դուզակշիռ դրութիւն. յեզակիում հայցականի նկատմամբ չունի դուզակշիռ դրութիւն. յեզակիում ուղղականն և հայցականը նույնացել են, իսկ հոգնակիում տարբեր են: Այսպիսի դրութիւնը, սակայն, կայուն չի կարող լինել «ֆունկցիայով տարբեր ձեվերի՝ հնչափոխութեամբ առաջացած նույնացման հետևանքներից մեկն այն է լինում, վոր մարդ այնքան վարժվում է հնչյունական նույնութեանը, վոր այդ հնչյունական նույնութեունն անց է կացնում և այնպիսի դեպքերի վրա, վորոնց մեջ հնչափոխութեամբ առաջ չէ յեկել նույնութեուն»:

Այսպես՝ մեր հին լեզվի մեջ արդեն, քանի վոր յեզակի ուղղականն ու հայցականը հնչափոխությամբ նույնացել են, ձգտում կա դրանց անալիտիկով հոդնակի ուղղականի ու հայցականի տարբերությունն ևս վերացնելու։ Այս հոլովները չիոթվում են իրար հետ. պատահում են ուղղականի «Ր»-ով դործածություններ իրրեվ հայցական և, ընդհակառակն, հայցականի «Ս»-ով դործածություններ իրրեվ ուղղական. «վհատատացեալքս», «ոչ դայր ընդ նոսա ատուածս օտարս». «եղև հարսանիս», և նմանները։ Լեզուն ձգտելով հոդնակի ուղղականն և հայցականն մեջ ևս ձևական նույնություն առաջ բերելու, սկզբում դեռ ատատանվում է յերկու ձևերի մեջ ընտրություն անելու/ տարբեր ձևերի նույնացումը հենց սկզբից վորոշ ուղղությամբ չի կատարվում, այլ նախ յերկու ձևին էլ խառն՝ մեկը մյուսի տեղ դործ են ածվում, ուղղականը՝ հայցականի տեղ, հայցականը՝ ուղղականի տեղ, մինչեվ վոր վերջապես հայցականի ձևը յուր է մղվում և լեզվից դուրս է ձգվում թողնելով միայն հետքեր, ինչպես՝ պաս (հին՝ պահս), երկու, բայց՝ յերկուսը, յերկուսի (յերկսի), արեվմտյան բարբառում՝ յերկուքի. մի քանի, բայց՝ մի քանիսը. մի քանիսի. ծախս (այլև ծախք), վորոնց մեջ հին հայցականի ձևն այլևս իրրեվ հայցական չի ըմբռնվում և դործածվում է նաև իրրեվ ուղղական։ Ուղղականի ձևին, ընդհակառակն, հետզհետե դործածվում է իրրեվ հայցական, մինչեվ վոր վերջապես այդ ձևն իշխող է դառնում։ Հետևանքն այն է լինում, վոր հին հայցական հոլովն իսկ ձևի դուրս է ընկնում, և մնում է միայն ուղղական հոլովը, բայց ընդարձակված կիրառությամբ, այն է՝ աշխարհաբարում ուղղականն իր վրա չ՝ առել մասամբ նաև հայցականի ֆունկցիան, այնպես վոր ուղղականն է ուղղական–հոլական–հայցական։

268. ՀՈԴՆԱԿԻ ԹՎԻ «ԵՐ», «ՆԵՐ» ՄԱՍՆԻԿՆԵՐ։—Հոդնակի ուղղականի և հայցականի այս նույնացման ընթացքում յեղան առաջ և մղվում և հավաքական նշանակությամբ ԵՐ (հին՝ ԵԱՐ) և ՆԵՐ (հին՝ ՆԵԱՐ) մասնիկները, վորոնք հին լեզվի սահմանափակ բառերի մեջ մի ընդհանուր ձև են ուղղականի և հայցականի համար (վանեաս, իշեաս, քաղաքնեաս, բարձկնեաս). ուստի և ավելի հեշտությամբ ընդհանրանում են նոր լեզվի մեջ հոդնակի թիվ կազմելու համար։ Այս մասնիկների առաջ հետզհետե յուր են մղվում վոչ միայն հոդնակի ուղղականի և դործիականի «Ր», հայցականի «Ս», այլև սեռականի, տրականի ու բացառականի «Ց» հնչյունը,

այնպես վոր նոր լեզվի մեջ հոդնակի թիվը միակերպ բոլոր հոլովների համար կազմվում է միանականների վրա ԵՐ ավելանալով, իսկ բազմանականների վրա՝ ՆԵՐ, միայն պետք է նկատի ունենալ հետևյալ յերկու պայմանը. 1) Մի քանի բառեր հին լեզվի մեջ վերջանում են «Ն», վոր նոր լեզվի մեջ դուրս է ընկել. դրանց հոդնակի թվի մեջ այդ «Ն» հնչյունը վերականգնվում է. օրինակ՝ մատ–մատներ, ձեռ–ձեռներ (այս բառերը և սրանց հոդնակին տես §§ 94, 3. 272, 2)։ 2) Բարդ բազմավանկ բառերը, յերբ յերկրորդ բաղադրիչ մասը միավանկ է և պահում է իր նշանակությունը, ընդունում են ԵՐ. դասապրքեր, վառելափայտեր, անձրևվաջրեր, դասակարդեր։ Բայց յերբ յերկրորդ մասը բազմավանկ է, կամ նոր նշանակությամբ մի բառ է կազմվում, այս դեպքում ավելանում է ՆԵՐ. մարդասերներ, մատենադիրներ, խոտակերներ, մեծասիրտներ, ձեռագիրներ։

Հոդն. ուղղականի «Ր»-ն և «Ց»-ն այժմ մնում են միայն դերանունների և վորոշ ածի բառերի համար, ինչպես՝ ինձանք, ինամանց, նրանք, նրանց, այսպես և «Ի» վերջացած անունների համար, ինչպես՝ քաղաքացիք, վորդիք, բարբառային՝ փեսիք, (հին փեսայք), ճամբիք, սովորական «քաղաքացիներ», «վորդիներ» ձևի հետ։ Ուրիշ բառերի վերջում, ինչպես՝ աչք, ձեռք, կառք, պլուք, յուղ, մուտք և այլն, «Ր»-ն այլևս վոչ մի թվական նշանակություն չունի և դարձել է մի մասնիկ, վոր վոչ թե թվական ձևերին է վերաբերում, այլ բառակազմությանը։

269. ՏՐԱԿԱՆՆ ԻՐԲԵՎ ՀԱՅՑԱԿԱՆ։—Ուղղական և հայցական հոլովների ձևական նույնացումը մի անհարմարություն է առաջ բերում. վորովհետև հայերենում վորոշ հատատուն բառատություն չկա, ուստի խոսքը հաճախ յերկիմաստ յե մնում. «Տիգրանը տեսավ Վարդանը» խոսքի մեջ, օրինակ, չի հասկացվում, թե վո՞րն է յենթական և վորը կրող ընդհերը։ Այս յերկիմաստությունը նոր արեվելյան բարբառները նրանով են այժմ ազատ մնում, վոր մարդկանց անունների համար, յերբ վորոշ են, իրրեվ հայցական դործածում են տրականը՝ «Տիգրանը տեսավ Վարդանին» կամ «Վարդանին տեսավ Տիգրանը», «Վարդանին Տիգրանը տեսավ», «Տիգրանը Վարդանին տեսավ» և այլն։ Հայցականի փոխանակությունը տրականով, անշուշտ, սկսվել է դերանուններից, և դրա քարտում արդեն տեսնում ենք դրա սկիզբն անձնական դերանուն–

ների մեջ՝ պ-մեզ, պ-քեզ, պ-ձեզ· սրանց նմանությամբ ասվել են նաև՝ ինձ, սորան, դորան, նորան, միմյանց և այլն· ապա վարպա-նին, աշակերտին և այլն: Բայց մի ծանգամ վոր սրականն սկսել է անցնել հայցականի տեղ, այդ կիրառությանը հետզհետե ծավալվում է, և սրականը հայցականի իմաստով գործածվում է նաև ա-նորոշ անձի անունների և նույնիսկ անշունչ առարկաների անուն-ների համար: Դա առաջանում է լեզվի բնական ձգտումից, այն է՝ հայցական հոլովի նշանակության գործածությանը միակերպա-նյան վերածել լոա ձևի, և վոչ թե միտնաց բոլոր համար մի դեպքում ուղղականը գործածել իրրև հայցական, ուրիշ դեպքում՝ սրականը: Այսպիսով սրականի կիրառությունն էս բնդարձակ-վում է և այս հոլովն էս սասնում է նաև հայցականի ֆունկցիա-ների մի մասը:

